Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

3183

28
9-39

R 313

Ex 2001

ՃԱՆԱՊԱՐՀ ԵՐԿՆԻՑ

ԿԱՄ

ՈՒՂՂՆԾՈՑՑ ԱՐՓԱՑՈՒԹԵԱՆ

1881 / 5181

220
Կ. 103
568-9կ
220
5 + ա - 9
28
գ - 39

ՃԱՆԱՊԱՐՀ

ԵՐԿՆԻՑ

ԿԱՄ

ՈՒՂՂԱՓԱՌՈՒՑ ԱՐՔԱՑՈՒԹԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ

ՎԻ


ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԱՀԱՅՈՑ

ԸՆԴ ՎԿԱՅԻՒՔ ՍՈՒՐԲ ԵՐԻՑ

Ն. Ս. Ր. Ա. Պետական Հանրային Գրադարան
Государственная Библиотека
7/XI 1922
Имена, Мясницкая
Ս. ՅԱՄԱՆԻՑԵԱՆԻ ԱՆՎԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ի ՑՈՎՍԵՓԱՅ ԳԱՖԱՖԵԱՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՖԱՖԵԱՆ

— 1871 —

1123

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՑ

ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

եւ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑ

ՏԵԱՌՆ ԵՍԱՅԵԱՑ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

եւ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ

ՏԵԱՌՆ ՄԿՐՏՉԻ

ՍՐԲԱԶԱՆ ԱԶԳԱԱՆԱՄ ՀԱՑՐԻԿԻ ԽՐԻՄԵԱՆ

ԾԱՌԱՋԱԲԱՆ

Ասկէց քանի մը տարի յառաջ կխրխունցի Արդ Մանուկ Պատուելին ՁԱՆԱՊԱՐՀ ԵՐԿՆԻՑ անուանով դիրք մը հանած էր, որն որ մեր Գաւառական սիրելի եղբարց շատ հաճոյ եղաւ իր մէջը պարունակած օգտակար խրատներովը։ Բայց շատ մը բարեպաշտ անձինք խնդրեցին մեզմէ որ ջանք ընենք և անանկ դիրք մը հրատարակենք որ՝ Քրիստոնէական Ս. Կրօնքին պատմութիւնը, Աստուածաշունչին և Աւետարանին հանուօտ պատկերը, և ուրիշ շատ կարեւոր բաներ մէջը պարունակուի, և զանիկայ կարդացողը՝ Քրիստոնէութիւնն տրվելու համար տեւ րիչ դրքեր կարդալու կարօտ չ'ըլլայ։

Նաւսի քանի մը կրօնապէտ անձանց խորհրդով ներկայ ՁԱՆԱՊԱՐՀ ԵՐԿՆԻՑը 'ի լոյս կ'ընծայենք, որն որ շատ մը կրօնական դիրքերէ ծաղկաքաղ եղած է, այս դիրքերուն գլխաւորներն են. Ա. Աստուածաշունչ. Բ. Աւետարան. Գ. Գործք Առաքելոց. Դ. Մաշտոց. Ե. Քննութիւն խնդրոց, այս դիրքերէն շատ մը կարեւոր բաներ հոս աւելուցինք, անանկ որ ուշադրութեամբ կարդացողը բոլոր կրօնական ուսումը իր մտքին մէջ պիտի աւելուցէ, և այլոց ալ բացատրութեամբ կարող պիտի ըլլայ պէտք եղած հարցմանց պատասխանել։

Այս Ուղեցոյց արքայութեան դրքոյկիս վեց մասի բաժնեցինք, որք կ'պարունակեն,

Ա. Մասին մէջ աշխարհիս ստեղծումն մինչեւ Քրիստոսի ծնունդը գրված է։

Բ. Մասին մէջ Քրիստոսի ծնունդէն մինչեւ անոր առաքելոց քարոզութեան վերջը գրված է :

Գ. Մասին մէջ Քրիստոսի Ս. Եկեղեցին եւ անոր օրէնքներուն վրայ խօսված է :

Դ. Մասին մէջ ապաշխարող Քրիստոնէին վրայ խօսված է եւ երկար կերպիւ գրված է նաեւ եօթն առաքինութիւններուն եւ եօթն մեղութիւններուն վրայ :


Ե. Մասին մէջ գրված են , Քննութիւն խընդրողէն հաւաքված շատ մը հարցումներ ու պատասխաններ :

Զ. Մասին մէջ Ս. Պատարագի խորհուրդին մեկնութիւնը կը գտնէք :

Վերջապէս կրնանք ըսել որ մինչեւ հիմայ մեր ազգին մէջ հրատարակուած եկեղեցական ու կրօնական գիրքերուն մէկն ալ սա ներկայ ՁԱՆԱՊԱՐՀ ԵՐԿՆԻՑԻՆ կատարելութիւնը չունի , բնաւր ամեն կարդացողներն ալ պիտի վկայեն :

Այս պատուական գիրքը մեր սիրելի գաւառացի եղբարց նուիրելով յոյս ունինք որ անոնք ալ մեր կրած աշխատութիւնը պիտի քաջալերեն , և իրենք իրենց զգալով որ Ճշմարիտ Քրիստոնեայ մը առանց գրքի մը պէտք ունի , պիտի փութան մէկ մէկ օրինակ առնելու , և այս կերպիւ՝ չնչին դրամով մը երկնից արքայութեան ճամբան առջեւնին բաց պիտի տեսնան :

ԱՇԽԱՏԱՍԷՐՆ



ԵՍ ՓՈՂԿԵՑԻՑ ՁԵՑԱՃԱՐՍ ԵՒ ՁԵՐԻՍ ԱՒՈՒՐՍ

ՇԻՆԵՑԻՑ

ՃԱՆԱՊԱՐՀ ԵՐԿՆԻՑ

ԿԱՄ

ՈՒՂՂԵՑՈՑՑ ԱՐՔԱՑՈՒԹԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ

ԳԼՈՒԽ Ա.



ԴԱՍ Ա.

Ս. Երրորդութեան երկը անձանց վրայ։

ՀԱՐՑ. Սիրելի Հայ եղբայր, հաւատքով ինչ ես։

ՊԱՏԱՍԽԱՆ. Առաւծոյ չնորհօքը քրիստոնեայ եմ։

Հ. Ես ալ քրիստոնեայ եմ, բայց չ'եմ գիտեր որ քրիստոնեայ ինչ ըսել է, դուն կրնաս ինծի սովրեցընել։

Պ. Շատ աղէկ, եղբայր, ես սիրով պատրաստ եմ ամէն ուզածդ սովրեցնելու, քրիստոնեայ ըսելը Քրիստոսի հաւատացող և անոր սուրբ պատուիրանքները պահող ըսել է։

Հ. Քրիստոս ով է եղբայր։

Պ. Քրիստոսի ով ըլլալը գիտնալու համար՝ առաջ պէտք է գիտնաս որ, ով ստեղծեց այս աշխարհս և մէջի բոլոր եղածները, երկինքը, Արեւը, Լուսինը, աստղերը, պէտք է գիտ-

նաև ալ որ սուրբ երրորդութիւնը ինչ է։

Հ. Ա՛ս ըսածդ Աբեւը, Լուսինը, Աշխարհ.քը և ուրիշ բաներըը դիտեմ որ Աստուած ստեղծեր է. բայց սուրբ երրորդութիւն ըսածդ ինչ է։

Պ. Եղբայր, ասոնց համար հարցուցածներդ սովրելու համար, պէտք է որ ամէն օր մէյմէկ դաս առնես ինձմէ, և կամաց կամաց ուղածներդ սովրիս։

Հ. Շատ աղէկ սիրելի եղբայր, ուրեմն կ'աղաչեմ որ այսօրուընէ ինձի դաս մը տայիր ու հասկցունէիր թէ սուրբ երրորդութիւն ըսածդ ինչ տեսակ բան է։



Պ. Անանկ է նէ մօիկ ըրէ. սուրբ Երրորդութիւնը Աստուած է, որ երեք անձն (անուն) ունի, ու կ'ըսեն.ք Հայր Աստուած, Որդին Աստուած, Հոգին Սուրբ Աստուած, այս երեք.քը մէկէն առնելով սուրբ երրորդութիւն կ'ըսեն.ք։

Հ. Անանկ է նէ երեք.ք հատ աստուած կայ։

Պ. Ոչ. Աստուած մէկ է, բայց անձը երեք է, և այս երեքին ալ, զօրութիւնը մէկ, կամքը

մէկ, ու բնութիւնը մէկ է։

Հ. Ասոր խելքս չը հասաւ եղբայր, Հայր Աստուած՝ բաւեմնէ կ'ըլլայ մէկ, Որդին Աստուած՝ երկու՞ք, Հոգին սուրբ Աստուած՝ կ'ըլլայ երե՞ք. Ինա՞րի երե՞ք Աստուածը մէկ կ'ըսես։

Պ. Ա՛ս բանը լաւ մը հասկցնելու համար աղաւոր օրինակ մը տամ քեզի. ահա Արեը՝ որ մէկ հատ մըն է, բայց երե՞քի կը բաժնուի. մէյ մը իր գունը. մէյ մը իր լոյսը. մէյ մըն ալ իրեն տաքութիւնը. ըսել է որ Արեը երե՞ք անուն ունի. բայց ինքը մէկ հատ մըն է. և ինչպէս որ Արեւ ըսելով անոր լոյսը, տաքութիւնը և գունը մէկէն կը հասկընանք՝ անանկ ալ Աստուած ըսելով՝ Հայրը, Որդին և սուրբ Հոգին երե՞քը մէկէն կ'իմանանք, անոր համար սուրբ Երրորդութիւն կ'ըսենք։

Հ. Հիմայ սուրբ Երրորդութեան ինչ ըլլալը հասկըցայ. հապա Քրիստոս ո՞վ է։

Պ. Սուրբ Երրորդութեան երե՞ք անձերէն մէկը՝ այն է Որդին Աստուած՝ Քրիստոս կ'ըսուի։

Հ. Ըսել է որ Քրիստոս Աստուա՞ծ է։

Պ. Այո՛. կատարեալ Աստուած է. և ինքը՝ իւրաքանչիւր այլևայլ գործերէն առեղծուածներէն առաջ Հօր Աստուծմէն ծնած ըլլալով Որդի Աստուծոյ կ'ըսուի։

Հ. Կեցիր եղբայր, առանկ է նէ Հայր Աստուած Որդիէն մեծ կ'ըլլայ։

Պ. Ոչ. Ս. Երրորդութեան մէջ մեծ ու պզտիկ չկայ և չը կրնար ըլլալ. որովհետև Հայր Աստուած ինչ է նէ, Որդին Աստուած այնինքն ինչ-

բնաւոս ալ ան է , ինծոր որ Քրիստոս իր բերնովը ըսաւ , « ես ու իմ Հայրս մէկ ենք »

Հ. Քրիստոս այդ խօսքը ո՞ր տեղ ըսաւ որ լսեցինք ։

Պ. Ա.յդ կըսուըը հոգի ձգէ , ես տեղը գայ նէ քեզի կը հասկըցունեմ, հիմայ ուրիշ բաներ հարցուր ։

Հ. Հոգին սուրբ ալ Հօր Աստուծոյ և Քրիստոսի հաւասար է ։

Պ. Ա.յո , որովհետև ինծոր որ Քրիստոս Հօր Աստուծմէն ծնաւ, անանկ ալ Հոգին սուրբ Հօր Աստուծմէն կը բղխի . և այս երեքը անբաժանելի են . ու իրենց կարօղութիւնը մէկ է ։

Հ. Ինչո՞ւ համար Քրիստոսի անունովը մեր.ք.ը.ըն.ը.ս.ա.ն.ե.ա.յ կ'ըսուինք ։

Պ. Որովհետև Քրիստոս Որդին Աստուած մարդկային ազգը սատանային ձեռքէն ազատելու համար երկինքէն իջաւ , մարմին առաւ , մարդ եղաւ և աշխարհքիս վրայ շատ հրաշքներ գործեց և շատ քարոզութիւններ ընելէն ետքը մեզի համար խաչին վրայ մեռաւ , և սատանայի բոլոր մարդիկները սատանային դերութենէն խլելուց ։

Հ. Եղբայր , ես կը զարմանամ այդ բաներուդ վրայ . խելքս չը հասնիր որ ինծո՞ր այդ բաները եղեր են ։

Պ. Այս հրաշալի բաներուն .քու խելքդ չհասնիր , ինծոր որ իմ խելքս ալ չը հասնիր . բայց Քրիստոսի աշխարհք գալը , մեռնիլը և սատան-

կուլ մեզի սատանային դերութեւնէն ազատելը առաջուց Ս. Մարգարէները ըսած էին։

Հ. Ս. Մարգարէները ի՞նչ տեսակ մարդ էին։

Պ. Անոնք կըսուին ալ քեզի հասկցունելու համար վարը եկու որ աշխարհ.քին լինուր ստեղծուելուն պատմութիւնը քեզի ընեմ, դուն ալ ազէկ մը մտիկ ըրէ որ եաքէն ըսելիքներուս խելքդ հասնի։



Պ. Քանի որ աս Աշխարհս ստեղծուած չ'էր, լինուր որ էրեկ քեզի ըսի, սուրբ Երրորդութիւնը կար, ամենէն առաջինը դաս լուսաւոր հրեշտակները ստեղծուեցան, և անոնք միշտ կը փառաւորէին զԼրեւնք ստեղծող Աստուածը ու կ'ըսէին. սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրու-

Թեանց. բայց ան հրեշտակներուն ամենէն մեծը այնչափ հպարտացաւ որ Աստուծոյ նման ըլլալ ուզեց. ու ըսաւ.

«Ելից յ'երկինս՝ ի վերոյ քան զաստեղս երկնից. արկից զ'ամպս իմ . . . եղէց նմանող բարձրեալն» (Եսայի ԺԴ. Գլուխ. 13 Համար)։

Թարգմանութիւն. «Երկինքին աստղերէն աւելի վեր երթամ, հոն հիմնէ ամպս ունենամ . . . ու Աստուծոյ նման ըլլամ։

Այս չար հրեշտակը երեն հետ միացող ուրիշ հրեշտակներ ալ, բայց Աստուած՝ մեծ զօրութեամբ անոնց որ բոլորն ալ խաւարչյան ու երկինքէն դժոխքը թափելցան, և բանտեցան Տարտարոս, իրենց մեծն ալ կաշկանդեցաւ ճեղքեր, կամ Տարտիկ, և կամ Արատեակ։

Հ. Եղբայր ես կը տեսնամ այս եղածները ընթերցող, այդ ճեղքերը հապա չը մտածեր որ տանկ բան մը միտք բերելը մահացու մեղք է։

Պ. Այո՛ մտածեց, որովհետև շատ խելացի էր. բայց ինծոր որ մարդիկ Աստուծոյ կամքին դէմ շատ հեղ մեղք կը գործեն ու կը պատժուին, տանկ ալ ճեղքեր և իր ընկերները դիտնալով մեզանչելեն ու պատժուելուն։

Հ. Աստուած այդ պահած հրեշտակներուն տեղը լեցնելու համար նորէն հրեշտակներ ստեղծեց։

Պ. Ոչ, լեցիր որ պատմեմ եղբայր. Աստուած ուզեց որ իր հրեշտակայ թիւը լեցնելու համար մարդս ստեղծէ, ու ամենէն առաջ այս աշխար-


հըս ստեղծեց եւտքն ալ մարդս ։

Հ. Ի՛նչպէս, սիրելի եղբայր, որովհետեւ դուն ամէն բաներըը գիտես, ուրեմն այս աշխարհքին ինտր ստեղծուելը ինծի պատմէ ։

Ա. Առաջ առաջին օրը ստեղծեց երկինքը, երկիրը ու լոյսը. երկրորդ օրը, երկինքին Ջուրըը, ու երկրիս Ջուրերը մէկ մէկէ զատեց ու երկինքը երկիրքէն զատուեցաւ՝ որ Հաստատութիւն կ'ըսուի ։

Երրորդ օրը աշխարհիս ամէն կողմը եղած Ջուրըը տեղ տեղ ժողվեց ուրիշ ծովը ու գետերը եղան, և ցամաքը երեւցաւ, ու Ադամած Հրամայեց որ ցամաքին վրայ ծառեր ծաղիկներ, խոտեր և ուրիշ տեսակ տունկեր բուսանին ։

Չորրորդ օրը Արեգակը, Լուսինը և աստղերը ստեղծեց ։



Հինգերորդ օրը, ծովուն մէջի ձուկերը և օդին մէջի թռչուններըը ստեղծեց ։

Վեցերորդ օրը, նախ անասուններըը ստեղծեց. և Ադամած տեսաւ՝ որ աս ամէնը բարի են, հարկ դեռանէն հոգ առաւ, մարդը շինելոյ ու աշխարհքին ծաւերէն վերցուել իր Ադամայէն

ջունչէն անոր տուաւ։ Աստուած այս առաջին մարդուն անունը դրաւ Ադամ, ու զինքը ամէն արարածներուն թագաւորը ըրաւ։ Վերջը երբոր Ադամ քնացաւ, Աստուած անոր կողէն առնելով շինեց Եւա կինը, և կողէն պակասած տեղը մարմին լեցուց։

Եօթնեորդին օրը Աստուած հանգչեցաւ։

Հ. Կեցիր եղբայր որ այդ բաներուն վրայ քանի մը բան հարցունեմ։



Ըսէր որ՝ Աստուած՝ Արեւը չորրորդ օրը ստեղծեց, հապա առջի երեք օրերուն գիշերն ու ցորեկը ինսո՞ր կը գիտցուին։

Պ. Ըսէ որ Աստուած առաջին օրը լոյսը ստեղծեց, ապա գիտնալու է որ նոյն օրը լոյսը խառնարէն զատուեցաւ, և Աստուած լոյսին անունը դրաւ ցորեկ, խաւարին ալ անունը գիշեր, ասկէ կը հասկցուի որ արեգակը առաջին օրը ստեղծուած էր, ու ասոր իրիկուններէն մարը մտնել և առաւոտները ծագիլ։

Բայց գիտեմ ասոնց ետեւ որ հապա ինչո՞ւ արեւը չորրորդ օրը ստեղծուեցաւ ըսէր, ասոր ալ պատասխանը տամ։ Արեգակը թէպէտ առ-

Չի օրը եղաւ, բայց Աստուած չորրորդ օրը հրամայեց որ կենդանակերպերն կամարին վրայ դառնալ սկսի. որպէս զի օրերուն՝ ամիաներուն ու տարիներուն լինելը ցուցընէ, ահա այս բանին համար չորրորդ օրը ստեղծուեցաւ կ'ըսուի:

Հ. Ընդհակառակ ևս եղբայր, որ լինձն առանկ աղէկ բաներ կը տրվելցընես, բայց կը խնդրեմ ըսէ լինձն թէ Աստուած այս ամէն բաները ըստեղծեց նէ, ձեռքովը ըրաւ թէ չէ բերնովը հրամայեց:

Պ. Ոչ ձեռքովը ստեղծեց, ոչ ալ բերնովը հրամայեց, հապա մի միայն խորհեցաւ և ուղեց որ աշխարհս ստեղծուի. ահա այս է հրամայեց ըսածս, բայց երբոր կարդը Աղաւին եկաւ, այն առեն Աստուած խորհեցաւ ու ըսաւ. «Արտացուք մարդ ըստ պատկերի և ըստ նմանութեան մերում»:

Թոպէ. Մեր պատկերին ու մեր նմանութեանը պէս մարդ ստեղծեր.ք.

Եւ դեռևէն հոդը առաւ անանկ չինեց:

Հ. Իրաւ է որ մարդս Աստուծոյ պատկերին նման ստեղծուեցաւ:

Պ. Մեր պատկերին ու նմանութեանը պէս ըսածը, պէտք է հասկնանք թէ, ինչպէս որ Աստուած երկինքը բազմելով ամեն արարածներուն թագաւորն է, անանկ ալ մարդս աշխարհի մէջ գտնուելով բոլոր աշխարհի թագաւորն է, և սանկով Աստուծոյ կը նմանի:

Հ. Աղաւին ու Եւային բնակարանը ո՞ւր էր:

պ. Ասուած երբոր Ադամն ու Եւան առեղծեց նէ՝ մէկ գաւարճալի պարտէզի մը մէջ դրաւ զանոնք. ուր տեղ ամէն տեսակ պտուղներ, ծառեր ու ծաղիկներ կային, և այդ Դրախտին մէջէն չորը չատ անուշ էր։ Ասուած բաւ իրենց որ Դրախտին մէջ եղած ամէն ծառերուն պտուղէն ուտեն. բայց հոն տեղը երկու ծառեր ալ կային, մէկուն անունն էր Ծառ գիտութեան բարւոյ և չարի, մէկալին ալ անունն էր ծառ կենաց այսինքն՝ որ ասոր պտուղը ուտողը միշտ պիտի չմեռնի։ Ասուած իրենց ըսաւ որ՝ եթէ այդ երկու ծառերուն պտուղէն ուտեն նէ կը մեռնին։ Սատանան՝ որուն չար նախանձութենէն օձի կերպարանքը մտաւ ու գնաց Եւային ըսաւ որ, ան ծառերուն պտուղէն ուտէ նէ աստուած կ'ըլլայ. Եւայ ալ գիտութեան բարւոյ և չարի ծառին պտուղէն վրցուց ու կերաւ, և Ադամին ալ կերցուց։

հ. Եղբայր այս ինչ բաներ կը լսեմ. Ադամ ու Եւայ մեռա՞ր Աստուծմէ չէ վախցան և անոր պատուիրանքը ոտքի տակ առին, Աստուած ետքէն բան մը չ'ըրա՞ւ իրենց։

գ. Ով մեղաւոր քրիստոնեայ հոգի, մեռնիք ալ շատ հեղ Ադամին ու Եւային պէս Աստուծոյ պատուիրանքը ոտքի տակ կ'առնեն. և մտաքսիխա կ'ըսեն որ Աստուած բան մը չ'ընէր, բայց ետքը ետքը կը պատժուինք, մեռար որ Ադամ ու Եւայ պատժուեցան։

հ. կարշեմ սիրելի եղբայր, պատմէ մեզի որ Աստուած Ադամին ու Եւային ինչ պատիժ տուաւ։

գ. Ադամ ու Եւայ Դրախտին մէջը որքան որ մերկ էին նէ՝ այն պատուղը չը կերած իրենց մերկ ըլլալը չ'էին գիտեր. ու չորս բոլորնին լուսով ծածկուած էր. բայց երբոր պատուղը կերան՝ աչքերնին բացուեցաւ ու մէկէն մերկ ըլլալնին տեսնելով գային Դրախտին ծառերուն մէջ պահուըտելու եւ ծածկուելու ծածկուեցան. երբոր լսեցին զԱստուած Դրախտը եկած, Ադամ ուր ես, պատաց. ան ժամանակ Ադամ ծառերուն մէջէն կամաց կամաց դուրս երթալով ըսաւ որ «ձեր, մերկ էի եւ ամչնալուս պահուըտեցայ». Աստուած հարցուց, ինչո՞ւ իմ արդելած ծառս պատուէն կերար. Ադամ յանցանքը Եւային վրայ ձգեց, Եւայ ալ օձին վրայ. ան առաւ Աստուած օձը անիծեց, որ իր փորին վրայ քալէ ու հող ուտէ եւ ամէն կենդանիներէն ցած ըլլայ: Եւան անիծեց եւ ըսաւ որ ցաւով ու տրտմութիւնով զաւակ բերէ եւ իր երկանը հնազանդ ըլլայ: Ադամն ալ անիծեց ու ըսաւ որ ճակտին քրտինքովը իր ուտելիքը ճարէ. նաեւ երկուքին ալ սա անէծքը տուաւ՝ որ մեռնին ու բաւ, հող էիր ու հող դառնաս: Եւ Աստուած սա ամէնը ընելէն ետքը Ադամը ու Եւան Դրախտէն դուրս վռնտեց. եւ հրեշտակներուն պատուիրեց որ Դրախտին պահպանութիւն ընեն:

Հ. Ներէ ինծի քանի մը պիտի հարցնեմ. Աստուած որ ամէն բան կը տեսնէ ու գիտէ, Ադամին ուր պահուըտած ըլլալը չ'գիտէր որ «Ադամ ո՞ւր ես» հարցուց:

Պ. Այո՛ գիտէր, բայց այնպէս կանչելովը կ՚ուզէր որ Ադամ զեղչի պայ ու մեղայ ըսէ, սակայն երբոր անիկայ յանցանքը իր վրայէն նետեց ու չը զղջաց, այն ժամանակ Աստուած բարկացաւ ու պինքը անիծեց։

Հ. Վայ ինծի եղբայր, աս ի՞նչ պատիժ էր որ Աստուած Ադամին ու Եւային տուաւ, որ թէ որ Աստուծոյ պատուիրանքը պահէին՝ Դրախտէն չ՚էին վռընտուեր։

Պ. Թէ որ Ադամ ու Եւայ մեր նախածնողքնեըը այն մեծ մեղքը չը գործէին նէ, հրեշտակի պէս պիտի ապրէին և երեսնց համար մեռնիլ չը կար, խեղճ ու թշուառ չ՚էին ըլլար, աստանային ձեռքը մեղ ալ՝ պ՚իրեն՛ք ալ դերի չ՚էին ձգեր. բայց եղբայր, դուն Աստուծոյ մեծ ողորմութիւնը նայէ որ, Ադամին ու Եւային խեղճ վիճակը տեսաւ նէ մեղքցաւ և առաջուց բուռ երեսնց, որ ժամանակէ մը եռքը իր Որդին աշխարհ պիտի ղրկէ բոլոր մարդկիկը աստանային դերութենէն ազատելու համար։

Հ. Աստուած Ադամին պիտի մեռնիս ըսաւ նէ, Դրախտէն դուրս վռնտուելէն եռքը Ադամ մեռաւ։

Պ. Ոչ, շուտով չը մեռաւ, առաջ Ադամ ու Եւայ երկու տղայ ունեցան, մեծին անունը՝ կայէն էր պզտիկին ալ անունը Աբէլ էր. Աստուած Աբէլը շատ կը սիրէր բարի ըլլալուն համար. կայէն սրտին նախանձէն Աբէլը զարկաւ մեռցուց, անոր համար ինք ալ Աստուծմէ անիծուեցաւ, և

Ադամ ուրիշ տղայ մըն ալ ունեցաւ Սէթ անուանով որ Աստուծոյ սիրելի եղաւ, ասով կայէնին յետը Որդիք Մարդկան բաւեցան, Սէթին յետեն ալ Որդիք Աստուծոյ, Ադամ ուրիշ շատ տղայներ ու աղջիկներ ալ ունեցաւ և 837 տարու մեռաւ։

Հ. Ի՞նչ կ'ըսես եղբայր, աս ինչ շատ տարի ապրեր է. մեզի հիմայ ինչո՞ւ քիչ կապրինք։

Պ. Հին առեն մարդիները շատ կ'ապրէին, որովհետև՝ երկիրը այն ժամանակ շատ զօրաւոր էր, բայց հոգը Աստուած ապրելու տարիքը քիչցուց որ մարդիկ շատ ապրելով շատ դէշութիւն չ'ընեն ինատը որ վաղը պիտի պատմեմ։

ԳԱՍ Գ.

Ջրհեղեղէն մինչեւ Աբրահամոս կոչումը։

Հ. Պիտի ըսէիր ինծի եղբայր Թէ մարդոց, տալ ըելու տարիքը ինատո՞ր քիչցաւ։

Պ. Երբոր աշխարհիս ստեղծուելէն երկու հարիւր տարի հոգը, կայէնին զաւակները Սէթին զաւկներուն հետ խառնուեցան, ալ ամէնքն ալ անանկ դէշցան որ չը կրնար ըլլալ. վերեն ը ստեղծող Աստուածը մոռցան. կ'ուտէին կը խըմէին ու ամէն տեսակ չարիքը անվախ համարձակ կը գործէին. աշխարհիս մէջ մին մինակ մէկ բարի մարդ մը միացեր էր Նոյ անուանով, Աստուած սորըջացաւ մարդը ստեղծելուն վրայ

ու հրամայեց Նոյին՝ որ մեծ նաւ մը շինէ վրան
դոյ, որ Տապան կ՚ըսուի։ Նոյ՝ հարիւր տարի աշ-
խատեցաւ և Աստուծոյ հրամանը կատարեց.
այն ժամանակ Աստուած Նոյին ըսաւ որ՝ աշխար-
քիս մէջ գտնուած ամէն կենդանիներէն առնէ
տապանին մէջը պահէ, ու երբոր Նոյ ալ իր կե-
նակիցը՝ երեք տղաքներովը ու երեք հարսե-
րովը ան տապանը մտաւ, Աստուած տապանին
դուռները գոցեց ու երկինքին պատուհանները
բացաւ. քառասուն օր քառասուն գիշեր այնչափ
անձրեւ եկաւ որ բոլոր աշխարհ, մինչեւ բարձր
լեռները ջուրով ծածկեցան և տապանի մէջ գտ-
նուողներէն զատ մէկն ալ չը խնայեցաւ ամէնքն
ալ մեռան։ 150 օրէն ետքը՝ ջուրերը դադար-
ցան՝ ու տապանը դնաց մեր Հայաստանին Մասիս
լեռանը վրայ նստաւ, և Նոյ երեններուն հետ
մէկտեղ տապանէն ելաւ Աստուծոյ պօղծ ընե-
լով շնորհակալ եղաւ որ՝ գինքը ան մեծ պատ-
ժէն ազատեց. ան ժամանակ Աստուած ըսաւ որ
ասկէ ետքը մարդիկ հարիւր քսան տարիէն ա-
ւելի չ՚ապրին։ Այս պատիժը Ջրհեղեղ ըսուեցաւ։

2. Ես կը սոսկամ այդ Ջրհեղեղին պատիժէն եղ-
բայր, հիմայ ալ աշխարհիս մէջ շատ դէշ մար-
դիկներ կան, չ՚ըլլայ որ Աստուած հիմայ ալ ատ
Ջրհեղեղին պատիժը մեզի տայ։

3. Ո՛չ եղբայր, որովհետեւ Աստուած Նոյին
խօսք առաւ որ ասկէ ետքը Ջրհեղեղի պատիժ
պիտի չը տայ, և իր խօսքին նշան ըլլալու հա-
մար՝ երկինքին մէջ Ծիրանի գօտին դրաւ, որ

Աստուծոյ մէջէ հետ հաշտուած ըլլալուն նշանն է։

Հ. Բան մը պիտի հարցնեմ եղբայր, ըսէր. քէ Աստուած մարդոյ գէշութիւններուն համար բարկացաւ, և ջրհոյ մարդիկը սրեղծելուն վրայ. ինսո՞ւ կ'ըլլայ տակայ, Աստուած առաջուց չ'ներէր որ մարդիկ շատ յանցանքներ պիտի գործէին։

Պ. Ա՛ն հարցումդ շատ երկայն պատասխան մը կ'ուզէ որ խնդիրդ աղէկ մը հասնի. անոր համար ուրիշ օր մը քեզի կը հասկցնեմ. հիմայ ատչափ մինակ կ'ըսեմ որ՝ երբոր Աստուծոյ համար բարկացաւ համարձացաւ կ'ըսուինէ՝ նշանակուէ որ Աստուած մեղաւորները կը պատժէ, կամ երբեմն խնամքը մերին վրայէն վերցուցեր է, և առանձ բառերը մեր մարդկային սկարութիւնովը կը գրուցենք, չ'է նէ Աստուած ինչ որ կ'ընէ նէ արդարութեամբ կ'ընէ. ոչ թէ կիրքով։

Հ. Ընդհակառակ եմ, սիրելի, հասկցայ. նոյնն վրայ կը պատմէիր կոր, եարքը ինչ եղաւ։

Պ. Նոյ նահապետին մեռնելէն եարքը մարդիկ նորէն չատցան ու սկսան շատ չարիք գործել, ան առեն երկու քաղաքներ կային Սոդոմ, Գոմոր անուններով. սոնց մարդիկները անկարգ դէշ էին որ՝ չը լսուած չը տեսնուած չարիքը կը գործէին. անոր համար Աստուած ալ աղերկու քաղաքները երկնքէն իջած կրակով այրել ուզեց։ Ան ժամանակը Սոդոմէն հետու տեղ մը Աբրահամ անունով մէկը կար որ շատ աստուածավախ էր, ու Աստուած ալ ղինքը շատ կը

ալրէր. Աբրահամ զաւակ չ'ունէր, բայց Աստուած բաւ էրեն որ իր ցեղին մարդիկը ծովուն աւազին հատէն շատ պիտի ըլլան, օր մը էրիկ ման դէմ Աբրահամ էր վրանին դուռն աւչքը նստէր էր, նայեցաւ որ հեռուէն երէք կարճատներ կուգային՝ շուտ մը աւչևնին վազեց, հրամցուց զանոնք, ոտուընին լուաց ու կերակուր հանեց, ան երէք կարճատները՝ հրեշտակ էին որ Սոդոմ գոմորը կործանելու կ'երթային. Աբրահամ շատ ազաչեց որ ատ բանը չ'ընեն՝ բայց ճար չ'եղաւ, որովհետև ան քաղաքներուն մէջ հիչ մէկ աղեկ մարդ մը չիկար. միայն Աբրահամին Ղոտ անունով եղբայրը կար որ հոն դայեր նստեր էր, ու հրեշտակները պիտի երթային զինքը դուրս հանէին։

Հ. Կաղաչեմ եղբայր այդ հրաշալի պատմութիւնը լմնցուր, որ աղէկ մը հասկնամ Սոդոմ գոմորին կործանուիլը. այն երէք հրեշտակները ի՞նչ ըրին։

Պ. Ա պատմութիւնը քեզի աղէկ մը հասկցունելու համար, սա ալ ըսեմ որ Աբրահամ ինը 110 տարու էր, և էրեն Սառա անունով 90 տարեկան կնիկն ալ ամուլ էր այսինքն զաւակ չ'էր բերէր. ան երէք հրեշտակներէն մէկը՝ ըսաւ որ «Աբրահամ, դալ տարի քու կնիկդ մանչ տղայ մը պիտի բերէ»։ Սառա՝ դրանը եռանէն աս խօսքը լսեց ու խնդաց, որովհետև էրեն զաւակ բերու վախիճը անցեր էր. բայց Աստուած պատիժ տուաւ էրեն աս ըրածին համար. ինսոր

որ եւս.քը պիտի պատմեմ։ Երկրորդ օրը՝ երիկ-
ուան դէմ այն երկու հրեշտակները Սոդոմ քա-
ղաքը Ղովտին տունը գացին. բայց երբոր չար
քաղքացիք իմացան նէ՝ գիշերով Ղովտին տանը
դուռը ախ առին. Ղովտ անճըրկեր ճնայեր էր,
և կ'աղաչէր քաղքացւոց որ ան երկու կարճնե-
րուն առղը երեն երկու աղջիկները տայ. բայց
անոնք ատ.ք կոխեր ան կարճները կ'ուզէին.
հրեշտակները երբոր աս բանս տեսան՝ մէկէն
հրաշքով ան չար մարդիկներուն աչուքները
կուրցուցին, ու տուներնին դրկեցին։ Ան գի-
շերը լուանալուն պէս, Ղովտ իր կնիկովը ու եր-
կու աղջիկներովը քաղքէն դուրս փախչիլ սկսաւ.
հրեշտակներն ալ ապսպրեցին որ չ'ըլլայ քի ե-
տեւնին դառնան նային, և ահա երկինքէն
սոսկալի ձայներով կրակ թափեցաւ ու ան եր-
կու մեծ քաղքները երեցան մոխիր դարձան.
Ղովտին կինն ալ ճամբան երթալու ատեն նայե-
ցաւ որ քաղքին նայի, ինքն ալ մոխիր դարձաւ։

Հ. Եղբայր այդ սոսկալի պատմութենէ ան-
մը մտիկ ըրի, և հիմայ բանը հասկնալով
ուզէ ըսիր որ Աբրահամին տունը հրեշ-
տաններ եկան ետքն ալ ըսիր որ եկուր հրեշ-
տաններըը Սոդոմ քաղաքը գացին. մէկ հատը
ինչ եղաւ։

Պ. Ան երեք հրեշտակները որ Աբրահամին տու-
նը եկան նէ, կը նշանակէին մէկը Աղարմութիւնն.

մէկը Աբրահամին, մէկն ալ Դաւթին։ Երբոր Սողոմ քաղաքը մնաննէ մէկ հատը պահեցաւ. ան մէկ հատը ողորմութիւնն էր։ որովհետև Աստուծոյ ողորմութիւնը ան քաղաքներէն վերցեր էր. Դաւթին և Աբրահամին որ ներս մնան նէ, Դաւթինը ան չար մարդերը դատեց, Աբրահամին ալ արժանի պատիժը տուաւ առանց ողորմելու։

Հ. Ըսիր որ Աստուած Սատանին պատիժ տուաւ. ինչ պատիժ էր անիկա։

Պ. Աստուած Սատանին պատիժ տուաւ ըսինէ, պիտնալու ես որ այն պատիժը Սաւա չը կրեց. հապա անոր թոռները. ինտոր որ եաքը պիտ՞ որ պատմեմ։

Հ. Սաւա մանչ զաւակ մը պիտի բերեր նէ բերաւ։

Պ. Այ՛, հրեշտակին ըսածին պէս Սաւա տարիէ մը եաքը Աստուծոյ ողորմութեամբը մանչ զաւակ մը բերաւ և Աբրահամ անոր անունը Իսահակ դրաւ. այս տղան մեծնալէն եաքը Աստուած ուզեց որ Աբրահամը մէյ մըն ալ փորձէ և նայի որ իրաւցնէ Իրեն կը հաւատայ կոր մի. ուստի հրաման ըրաւ որ Իսահակ տղան առնէ հեռու տեղ մը տանի և հոն Իրեն (Աստուծոյ) պղծակէզ ընելու համար մորթէ. Աբրահամ շուտով մը Աստուծոյ հրամանին կ'օրէ պատրաստութիւն, և Իսահակը Աստուծոյ ցուցուցած տեղը տարաւ. բայց երբոր սուրը վերցուց քի

Իսահակը ալեւտ մորթէր նէ, մէկէն հրեշտակ ամենակալին անոր ծեռքը բռնից ու ոչան խա-
լեցց. ան ժամանակ Աբրահամ աչքերը դար-
ձուց և մօտիկը ծառէ մը վար կախուած ոչխար
մը տեսաւ. Աստուծոյ հրամանով զանիկայ մոր-
թից, ու մեծ ուրախութիւնով տուն դարձաւ
Իսահակին հետ. Աբրահամին աս հնազանդու-
թեանը համար, Աստուած ալ շատ սիրից զին-
քը. օրհնից ու ըսաւ որ իր զաւկներէն բոլոր
աշխարհի մէջ մէկ հատիկ ալիւր ըլլան:

ԴԱՍ Դ.

Աբրահամայ կոչումէն մինչեւ Իսրայէլացւոց Ասիտեաց երկիրը մտնելը:

Հ. Եգիպտոս, այդ ըսած հրաշալի պատմու-
թիւնները քանի կը լսեմ նէ, էվելօք սիրտս կ'ե-
լի Աստուծոյ հնազանդ ըլլալու. և կ'ուզեմ
գիտնալ քի, տակա ուրիշ ինչեր եղած են ինձ
պէսկս:

Պ. Սիրելի քրիստոնեայ, ես առաւաձա-
ուելութեան համար պէտք եղած ամէն բաները
պիտի ըսեմ. սակայն համար հին պատմութիւն-
ը կ'ընեմ կոր քի խելքդ ալեկ մը հասնի և
հասկնաս որ Քրիստոս ինծի աշխարհք եկաւ
ու ինչքեր ըրաւ. ան ժամանակը Աստուծոյ հը-
հնազանդելուն համար պիտի տակիս ու
ճշմարիտ քրիստոնեյ մը պէս ապրելդ ես-

մեռած ժամանակը ալ Աստուծոյ անճառելի սուրբ արքայութիւնը պիտ՚որ ժառանգես. հիմայ մեր պատմութիւնը շարունակենք։

Հ. Շատ աղէկ, ընդհակառակ եմ եղբայրը, պատմէ որ Աբրահամ Աստուծմէ օրհնուելէն ետքը ի՞նչ ըրաւ։

Պ. Աբրահամ Աստուծմէ օրհնուելէն ետքը իր նահակ տղան կարգով խելացի ու պարկեշտ աղջկան մը հետ. ու ինքը շատ մը տարի ալ ապրելէն ետքը խաղաղութեամբ մեռաւ. բայց նահակ իր ինիկէն երկու մանչ տղայ ունեցաւ, որ երկուսուկես այսինքն է քիլ ծնան. մեծին անունն է Եսաւ ու պզտիկինը Յակոբ. Աստուած Յակոբը սիրեց ու օրհնեց. որովհետև բարի տղայ մըն էր. իսկ Եսաւը ատեց չար ըլլալուն համար. նահակ երբոր ծերացաւ նէ աչքները կուրցան. այն ժամանակ Յակոբ իր հօրը ուտելիք տարաւ և անոր օրհնէնքը առաւ եւ առէն գաղտուկ. Եսաւ երբոր Յակոբին առ ըրածը լսեց նէ անանկ բարկացաւ որ իր եղբայրը սպաննել կ՚ուզէր. բայց Յակոբ՝ մօրը հրամանովը եղաւ հեռու երկիր մը իր ազգականներէն Լաբան անունով մէկուն քով գնաց որ շատ ունեւոր մարդ մըն էր և հոխտութիւն կ՚ընէր։

Հ. Յակոբ Լաբանի քով ի՞նչ ըրաւ։

Պ. Յակոբ Լաբանին քովը հովիւ այսինքն չոպան եղաւ և տասնուչորս տարի աշխատելով Լաբանին երկու աղջիկները իրեն կնիկ առաւ

և անոնցմէ 12 մանչ ու մէկ աղջիկ զաւակ ունեցաւ. Աստուծոյ օրհնէն.քովը շատ ջենկընցաւ ոչխարներու ու ծառայներու տէր եղաւ և 14 տարիէն ետքը նաև իր հօրը .քովը երթալու. ճամբան եսաւ եղբօրը հանդիպելով, դրկեց ու պատուհցաւ. ետքէն երկու.քը մէկտեղ իրենց ծրնեական տունը գացին և իսահակ հայրերնին թաղեցին որ մեռեր էր։

Հ. Յակոբին տղաքները ի՞նչ ըրին։

Պ. Յակոբին տասնևերկու զաւկներուն մէջ Յովսէփ տղայ մը կար որ շատ աղուոր էր ու Յովսէփ դեղցիկ կ'ըսուէր. եղբայրները նախանձեցան ատոր վրայ և օր մը դաշտին մէջ մինակ տեսնելով բռնեցին խորտնկ փոս մը նետեցին. ետքը անկէց ալ հանեցին ու իսմայելացի վաճառականներուն այսինքն թխուճկարներու ծախեցին. Յովսէփ այս վաճառականներուն հետ մէկտեղ եգիպտոս գնաց ու մեծ իշխանի մը ծառայ եղաւ. բայց սա իշխանին գէշ կինը Յովսէփի վրայ զրպարտութիւն մը ըրաւ որ, իշխանը գինքը մութ բանտի մը մէջ դրաւ, ինչուկ որ Աստուծոյ ողորմութիւնովը Յովսէփ եգիպտոսի փարաւոն թագաւորին տեսած երազները մեկնեց ու փարաւոնն ալ Յովսէփը իրեն մեծ իշխան ըրաւ։

Հ. Կեցցէ եղբայր, բան մը պիտի հարցունեմ. Յակոբ սա եղածները չը լսե՞ց։

Պ. Ո՛չ, որովհետև Յովսէփին եղբայրները դա-

ցին իրենց հայրը խաբեցին ու ըսին որ Յովսէփ դաշտին մէջ պրտտըելի քէն դազան մը վրան վաղեր փարատեր է, Յակոբ իր տղոյը խօսքերուն հաւատայ ու շատ լացաւ. բայց ետքը անոնց աոուխիւնը հասկցաւ։

Հ. Յակոբ ընտրի հասկցաւ որ Յովսէփ ողջ մնացեր է։

Պ. Յովսէփ երբոր Եգիպտոսի իշխան եղաւ նէ, առաջուց դիտցաւ որ մեծ սով մը այսին քէն խըթելու մը պիտոր ըլլայ. անոր համար շատ ցորեն ժողվեց. երբոր սովին տարին եկաւ, բոլոր աշխարհ.ք Եգիպտոս վաղեցին ցորենի համար. Յակոբ նահապետ ալ իր տղայքը դրկեց շատ ըտրկով. սոն.ք Յովսէփին առջևը գլան նէ իրենց եղբայրը չը կրցին ճանչնալ. բայց Յովսէփ իր եղբայրները ճանչցաւ ու իրեն ով ըլլալը չը դիտցուց միայն թէ անոնցմէ սուակ չ'առաւ. երբոր երկու տարի անցնելով իր եղբայրները նորէն եկան, ան ատեն Յովսէփ ին.քզին.քը ճանչցուց ու ապսպրեց որ երթան չուտով իր հայրը Եգիպտոս բերեն. Յակոբ շատ ուրախ եղաւ ու բոլոր ընտանի.քովը որ 75 հոգի էին Եգիպտոս գնաց ու Յովսէփին խօս.քովը գեռևս ըսուած երկիրը բնակեցաւ ու հոն մեռաւ 175 տարուան. իսկ եետքը մեռաւ նաև Յովսէփ գեղեցիկ 110 տարեկան։

Հ. Երբոր Յակոբ նահապետ ու Յովսէփ մեռան նէ իրենց գաւկներըը Եգիպտոսի մէջ ի՞նչ ըրին։

Պ. Այսուամբ առաջուց Յակոբ նահապետը օրհներ էր որ իր զաւակները երկնքի աստղերէն ալ շատ պիտի ըլլան, և անունը Իսրայէլ դրեր էր որ այսուամբառս ըսել է այսինքն Այսուամբ տեսնալ. որովհետև Այսուամբ քանի մը անգամ Յակոբ նահապետին երևցաւ երազի մէջ. անոր համար Յակոբին սերունդը Իսրայէլացի ըսուեցաւ. Իսրայէլացիները շատ մը տարի խաղաղ ապրեցան Եգիպտոսի մէջ. ետքերը ուրիշ փարաւոն մը սկսաւ շատ նեղութիւն տալ երեցց մինչև անգամ հրաման եղաւ որ Իսրայէլացւոց մանչ տղաքները ծնածնուն պէս խղդուին. բայց Այսուամբ օրհնութիւնովը անոնք օրէ օր կը շատնային ու Յակոբ նահապետին Եգիպտոս երթալէն 400 տարի ետքը Իսրայէլացիները վեց հարիւր հազար հոգի եղեր էին. ան ատենը Այսուամբ Մովսէս մարգարէն ղրկեց որ երթայ Իսրայէլացիները փարաւոնին ձեռքէն խլէ և Եգիպտոսէն հանէ:

Հ. Մովսէս ինչ էր, ու ընտոր Իսրայէլացիները փարաւոնին ձեռքէն խլեցաւ և Եգիպտոսէն հանեցաւ:

Պ. Մովսէս Եգիպտոսի մէջ եղող Իսրայէլացիէն մը տղայ էր որ հրաշքով մեռնելէ ազատեցաւ և փարաւոնի թագաւորին աղջկանը որդեգիր այսինքն օղուլուխ եղաւ. ասիկայ 40 տարու ըլլալէն ետքը, օր մը տեսաւ Եգիպտացին մէկը Իսրայէլացի մը կը ծեծէ, մէկէն վազեց ու ան



Մալէ՛ս • կոչիմներդ հանէ • կայնած տեղդ տուր ք •
եղիսպատցին սպաննեց • բայց շատ վախնալով որ
իր ըրածը կ'իմացուի, երբ Եգիպտոսէն վա-
խաս հեռու տեղ մը գնաց ու կարդուեցաւ.
հոն 40 տարի ապրեցին ետքը, Աստուած հրա-
ման տուաւ իրեն որ Եգիպտոս երթայ և իր եղ-
բայրները դերուխթեւնէն ազատէ: Գնաց Մալէք
փարաւոնին առջևը շատ հրաշքներ գործեց
բայց փարաւոն մտիկ չ'ըրաւ. ան առներ Աս-
տուծոյ հրեշտակը մէկ դիշերուան մէջ փարա-
ւոնին առջևինէն ազէն մինչև էն աղբատ եղ-

այլին առջևնէն տլան ջարկաւ մեռցուց, ու ասանկով Իսրայէլացիք փարաւոնին ձեռքէն խալըսեցան ու եգիպտոսէն ելան։

Հ. Մովսէս Իսրայէլացիները ո՞ր տարաւ։

Պ. Մովսէս Աստուծոյ հրամանովը Իսրայէլացիները 40 տարի անապատին մէջ պըտըտցուց օրէնքներ դրաւ. տասնպատուհաս պատուէրանքը գըրեց Աստուծոյ հրամանովը, ու ետքը մեռաւ. իրեն օգնական եղող Յեսու զօրապետը շատ պատերազմներ ըրաւ հեթանոս կուապաշտներուն հետ և Աստուծոյ թշնամիները կոտորելէն ետքը, բոլոր Իսրայէլացիները Աբեռեայ երկիրը տարաւ որ երուսաղէմին մօտ էր։



ԴԱՍ Ե.

Իսրայէլացւոց Աբեռեայ երկիրը մտնելէն մինչեւ Բաբելոնի գերութիւնը։

Հ. Երբայր, այդ Իսրայէլացիները որ Աբեռեայ երկիրը գացին նէ, ինտո՞ր ապրեցան։

պ. Յետու Իսրայէլացիները Ա.Հառաց երկիրը տանելուն պէս, բոլոր երկիրը 12 մեծ կտորներու բաժնեց. և Յակոբ նահապետին 12 տղոցը ցեղերուն տուաւ. ինքը մեռնելէն առջը Իսրայէլացիք քիչ մը տաճն խաղաղ ապրեցան. բայց առջը կամաց կամաց Ա.տուծոյ հրամանները ոտքի տակ առին. Ա.տուած ալ պատիժ ըղուաւ իրենց ու երբեմն երբեմն հեթանոս ազգերը վրայնին կը խրկէր որ զանոնք նեղեն. առջն ալ երբոր կը տեսնէր որ խելքերնին գըլուխնին ժողվեցին ու կ'ապաշխարեն կտոնէ մէկ մէկ զօրաւոր մարդ կը հանէր, և այն հեթանոսները կը հալածէր Ա.հառաց երկիրէն. ասանկով շատ մը տարիներ անցուցին մինչուկ որ ժողովուրդին ուղեղովը Սաւուղ անունով մէկը թագաւոր եղաւ Սամուէլ մարգարէին ձեռքովը. բայց ալ Ա.տուծոյ խօսքը մոխիկ չ'ընելուն համար, Սամուէլ մարգարէն դնաց Յակոբ նահապետին ցուղա տղուն ցեղէն Դաւիթ անուն կարիճը բոլոր Իսրայէլացւոց վրայ թագաւոր օծեց Սաւուղ չը մեռաձ:

Հ. Սաւուղ Դաւիթին բան մը չ'ըրաւ:

պ. Սաւուղ շատ եաւէն ինկաւ Դաւիթին որ զարնէ մեռցնէ, բայց չը կրցաւ. Իսրայէլացիները ալ Դաւիթը կը սիրէին. որովհետև շատ խելացի ու քաջ և Ա.տուծոյ սիրելի էր. ասոր Դաւիթը հետ մը հեթանոսներուն գոլիաթ անունով ճանապարհ պէս մէկ մարդը մեռցուց

քարով մը եռքը երբեր Սաուղ պատերազմի
մէջ ինքզինքը զարկաւ մեռցուց նէ, Դաւիթ մի-
նակ թագաւորից Իսրայէլացւոց վրայ որ Հրեայ
ալ կ'ըսուէին : Այս Դաւիթը եռքը մարգարէ
եղաւ ու Սաղմոսը գրեց :

Հ. Դաւիթ ինսո՞ր թագաւորութիւն ըրաւ ու
ինչպէս ապրեցաւ :



Պ. Դաւիթ Սաուղոյ չնորհքուկը չաս աղեկ ու
չաս փառաւոր թագաւորութիւն ըրաւ բոլոր
հեթանոս ազգերը վախցուց. բայց ինք ալ մէկ
երկու պակասութիւններ ըրաւ ու Աստուծմէ
պատժուեցաւ անանկ որ մէկ անգամուն իր Ա-
բիսողոմ տղան վրան ծեծի եկաւ ու եռքը ըս-
պանուեցաւ. մէկ անգամուն ալ Սաուղոյ հե-
րեշտակը մէկ օրուան մէջ եօթանասուն հազար
Հրեայ կարդեց. Դաւիթ չուտ մը ապաշխարեց
և Աստուծոյ բարկութիւնը ինչեցուց. Դաւիթ

Սողոմոն տղայ մըն ալ ունեցաւ և ինքը տղէն զանխնայ երեն տեղը թագաւոր դնելէն ետքը, ինք մեռաւ 70 տարու 40 տարի թագաւորու-թիւն ընելէն ետքը։

Հ. Սողոմոն դաւթին տեղը նստաւ նէ ինչո՞ւ ըրաւ։

Պ. Սողոմոն 12 տարու էր երբոր հօրը տեղը թագաւոր եղաւ. բայց Աստուած անոր անանկ խոստանալու մը տուաւ որ ամէն-քը երկնչին Թային խրատ կ'առնէին, և Սողոմոն խոստումը քաւեցաւ. ասկէ երեսուներեմ քաղքին մէջ Աստուծոյ տաճարը չկար անանկ մեծ ու գեղանիկ տաճար որ աշխարհքին մէջ անոր նման շէնք մը չը կար. Աստուած Սողոմոնին բարի սիրտը տեսնելով նորէն օրհնեց զինքը և ըսաւ որ աշխարհքին ամէն թագաւորներէն հարուստ այնքան զինուին ըլլաս։ Բայց ետքերը Սողոմոն գէշացաւ ու մինչև անգամ իր այրերուն կնիկներուն խօսքէն դուրս չ'ելլալու համար կռապաշտ եղաւ. Աստուած ալ բարկանալով իր մեռնելէն ետքը թագաւորութիւնը երկու-քի բաժնեց և Սողոմոնին տղան իրեն շատ մը տեղերը կորսընցուց. Սողոմոն 40 տարի թագաւորեց ու 52 տարուան մեռաւ։

Հ. Սողոմոնէն ետքը Իսրայէլացիները ինչո՞ւ ապրեցան։

Պ. Սողոմոնէն ետքը, Իսրայէլացիները շատ գէշցան. որովհետև թագաւորութիւնը երկու-

քի բաժնուեցաւ Սողոմոնին տալն Երուսաղէմի մէջ թագաւորեց, և Յերոբոամ անունով մէկն ալ Սամարիայի մէջ թագաւորեց. այս երկու թագաւորներըը իրարու հետ անդադար կռիւ կ'ընէին. Յերոբոամ կռապաշտ եղաւ. իսկ ետքը Սամարիայի մէջ նստող թագաւորներն ալ կռապաշտ էին. անոր համար Աստուած ետքը ետքը այլազգիները Սամարիայի վրայ խրկեց, և այն տեղի թագաւորութիւնը կործանեց. բայց Երուսաղէմի մէջ նստող թագաւորներուն մէջ պատի աղէկներ ելան ու Աստուծոյ սիրելի եղան. անոր համար աս թագաւորութիւնը քիչ մը աւելի դիմացաւ. բայց երբոր անոնք դէշցան նէ, ան ատենը Աստուած այլազգիները Երուսաղէմի վրայ ալ ղրկեց. որոնք գացին ան մեծ ու տուրբ քաղաքը կործանեցին. թագաւորութիւնը վերուցին ու բոլոր Հրեայները Բաբելոն այնինքն Պաղտատ քաղաքը գերի տարին։

ԴԱՍ Զ.

Մարգարէից պատմութիւն։

Հ. Եղբայր աս ինչ խեղճութիւն է որ եղեր է. հիչ ան ժամանակը մարդ մը չիկար որ աս Հրեայներուն խելքը գլուխը բերէր ու ղիրեն քան չար գործ բերէն ետ կեցընէր։

Պ. Ասուած ուզեց որ Հրեայները իրենց չար գործքերէն ու կռապաշտութենէն ետ կեցընէ. որովհետեւ անոնք այլազգիներուն նայելով իրենց Աստուածը կը ձգէին ու կ'երթային կռապաշտ կ'ըլլային. Աստուած իր կողմէն շատ մարգիկներ ղրկեց որպէսզի անդին ճշմարիտ աստուածպաշտութիւնը կը քարոզէին ու շատ ալ հրաշքներ կ'ընէին. եւ քանի ըլլալուն համար կ'ուտային. բայց Հրեայները այնքան չարացեր էին որ այն մարգարէներուն ամէն գէշութիւն ըրին և մէջերնէն քանի մը հատն ալ մեռուցին. աս մարգարէներուն ամենէն մեծերը եղան, Եղիա մարգարէն. Եղիսէ մարգարէն. Եսայի մարգարէն. Եղեկիէլ մարգարէն ու Երեմիա մարգարէն:

Հ. Կ'ախորժեմ երգայր. այդ սուրբ մարգարէներուն պատմութիւնը գոնէ գոնէ ինծի ընէիր որ Աստուծոյ մեծութեանը ու կարողութեանը աղէկ մը հասնի խելքս. Եղիա մարգարէն ինչո՞ւ երաւ և ինսո՞ր մեռաւ:

Պ. Աս մարգարէներուն գործերը այնչափ շատ են որ տասը պէրք ըլլայ քիչ է. բայց ես քեզի համառօտ մը պատմեմ անոնց էն մեծ գործերը. Եղիա մարգարէն անգամ մը Աստուծոյ կողմանէ եկաւ Իսրայէլացիներուն քառ որ ձեր բաժ չարին համար երկիրնիդ երեք տարի անձրեւ պիտի չիգայ ու սով (խրխըլիս) պիտի ըլլայ. ինք ալ Աստուծոյ հրամանով դնաց Քրէթ

մը քով բնակեցաւ հոն ազատները (խարտեաշները) իրեն ուսուցիչ կը բնտրէին. ան չուրին ցամքելէն ետքը որբեւարի կնկան մը քով գընաց ու անկէ կերակուր ուղեց. կինը բաւ որ քիչ մը ալուր ու եղ միացեր է ան ալ ուսունք ու մեռնիլ պիտի. Եղիա ան ալուրն ու եղը օրհնեց ու երեք տարի կերան չը լմնցաւ։

Բ. Հրեաներուն մէկ կռապաշտ թագաւորը հիւընդցեր էր. Եղիա մարդու ձեռքով ան թագաւորին բաւ քի պառկած տեղէդ պիտի չ'ելլաս ու մեռնիս պիտի. թագաւորը յիսուն մարդ ղրկեց որ երթան Եղիան իրեն բերեն. Եղիա լեռան վրայ նստած էր քէն աս մարդիկը եկան ու մէջերնէն մէկը բաւ քի «մարդ Աստուծոյ, թագաւորը քեզ կ'ուղէ». Եղիա ալ բաւ որ էկեր ես մարդ Աստուծոյ եմ նէ հիմակ երկինքէն լոզ կրակ իջնայ ու ամէնքնիդ ալ երկ. մեկէն կըրակ իջաւ, ամէնքն ալ երեցան. նորէն մարդիկ գացին, անոնք ալ երեցան. թագաւորը նորէն մարդ ղրկեց. աս մարդը ծունկի վրայ եկաւ ու եղիային աղաչեց որ վինքը չ'երէ, հապա երթ հետը գայ. ան առեն Եղիա Աստուծոյ հրամանով գնաց թագաւորին կռապաշտութիւնը երեսին զարկաւ ու պիտի մեռնիս բաւ. թագաւորը քիչ օրէն մեռաւ։

Գ. Եղիա չը մեռաւ երբոր, մտիկ երէ որ ըսեմ. աս տեր մարդ պէն եղիաէ անունով աշկերտ մը առաւ քովը. որ մը երբոր ասանք մեկ

առղ կ'երթային, եղիա իրեն վերարկուովը (ճիւ-
պէովը) Յորդանան գետին (չային) զարկաւ ու
ջուրը երկու բաժնուեցաւ. երբոր ասոնք
գետին մէկալ կողմը եկան, ան առենը եղիա
եղիսէին ըսաւ քի, Աստուծոյ հրամանովը ես
երկինք պիտի վերնամ. ուստի ինչ կ'ուզես
նէ ըսէ որ տամ. եղիսէ ալ ըսաւ որ, քու հո-
գիդ գործելու կարողութիւնդ ու մարդարէ-
ութիւնդ ինծի տուր: Դժուար բան կնդրեցիր
ըսաւ եղիա. բայց երկինք երթալու տեղս կ'ու-
տամ. մէյ մըն ալ յանկարծ կրակէ կառքերով
(առապաներով) ու կրակէ ձիերով սկսաւ վեր
երթալ. եղիսէ սկսաւ պոռալ. «Հայր, Հայր, ու-
կերթաս, դուն Իսրայէլացւոց կառավարն էիր»
ան առենը եղիա երկինքէն իր վերարկուն եղի-
սէին նետեց. ա՛ա ալ տրտմած տրտմած ետ դար-
ձաւ. ա՛ս եղիային ինչու համար երկինք երթալը
ետքը քեզի կը ցուցնեմ:

2. Եղբայր, ես ատանկ հրաշալի բաներ հիչ
լսած չ'ունէի, քանի որ դուն կը պատմես նէ
կամաց կամաց խելքս Աստուծոյ կարողութեանը
կը հասնի կոր, և կը հասկնամ կոր քի տուրբ
երթալը շատ սովոկ բան է երեր:

3. Աչխարհին մէջ Աստուծոյ կարողութեանը
հիչ մէկուն խելքը չը հասնիր, եղբայր, ատանկ
մի ըսեր. ա՛ս պատմածներս մեր աչքին մեծ
կերեւան բայց Աստուծոյ համար բան մը չ'են.
ես ատոնք կ'ըսեմ կոր նէ, միտքս ան է որ քու

առելծողը ճանչնաս անոր ուզածը կատարես. ու հետ աս աշխարհիս մէջ հեմ մեռնելէդ ետը անոր սիրելի ըլլաս. աստր ճամբան ալ ետը պիտոյ տալերցուանիս քեզի։

Հ. Եղիսէ մարգարէին իր կենդանութեանը ի՞նչ ըրաւ. ու ընտո՞ր մեռաւ։

Պ. Ա. Եղիայեն երկինք երթալէն ետքը Եղիսէ ետքը մը պնաց որուն չուրը շատ լեղի էր. քաղքացի՛ք ըսին որ ան չուրը անուշցունէ. Եղիսէ մէջը աղ լեցուց ու չուրը անուշցաւ։

Բ. Եղիսէին դուխը կնատակ այսինքն (տաղ) էր. օր մը ճամբան շատ մը տղաք եկուէն վարեցին և ինդը ծաղր ըրին. Եղիսէ զանոնք անիծելուն պէս, ծառերուն մէջէն երկու արջ (այր) վրանին վարեցին ու քառասուն վերկու տղայ վնասաւորելով մեռուցին։

Գ. Բարեպաշտ կնիկ մը կար որ զաւակ չ'էր բերեր, Եղիսէ աղօթից ու կնիկը տարի մը եկաքը մանչ զաւակ մը ծնաւ, տակաւ մեծնալէն եկաքը երթար մեռաւ, Եղիսէ աղօթքով տղէն ցուց ինդը։

Դ. Անգամ մը սրբեւարի կին մը շատ պարտականն ինկեր էր ու պարտքընտէրները պարտքի տեղ երկու տղաքը առնել կ'ուզէին, կնիկը եկաւ Եղիսէին տաքը ինկաւ ու հալը հասկցուց. հարցուց Եղիսէ, իմացաւ որ քիչ մը եղ ունի, «գնա՛, ըսաւ, դրացիններէդ վոխ առնաներ աւ, ու ան եղն ամէնուն մէջը լեցու». կնիկը Եղիսէին

ըսածին պէս ըրաւ, ու ան ունեցած քիչ մը երկը անչափ չատցաւ որ անով պարտքէն խալսեցաւ։

Եղիսէ մարգարէն ողջութեան առնելէ ետքը տան անհատներ հրաշքներ գործելէն և իր մեռնելէն երկու տարի ետքը, օր մը մեռած մարդ մը գերեզմանոց կը տանէին թաղելու համար, պայլերը աս մարդուն վրայ վազեցին, անոնք ալ մեռելը Եղիսէ մարգարէին գերեզմանին վրայ ձգեցին ու փախան, մեկէն աս մեռած մարդը հրաշքով ողջնցաւ ու երաւ իր ընկերներուն եաւեէն քալաք դնաց, բոլոր տեսանողները զարմացան Եղիսէի այս մեծ հրաշքին վրայ։

Հ. Եսայի մարգարէն ինչ մեծագործութիւններ երր ըրաւ ու ընտրի մեռաւ։

Գ. Եսայի մարգարէն ալ մեկալ մարգարէներուն պէս շատ հրաշքներ ըրաւ, և բոլոր Հրէայներուն մարգարէացաւ որ ժամանակէ մը ետքը Բրիստոս Որդին Աստուծոյ աշխարհք պիտի գայ հրաշալի ծնունդով ու մեզի համար եաչին վրայ պիտի մեռնի. աս եսային անգամ մը տեսաւ որ տաճարին մէջ Աստուած բարձր ու վառաւոր աթոռի մը վրայ նստեր է, հրեշտակները չորս դին կեցած վեց վեց թեւերով, որ երկու թեւով երեսնին կը ծածկէին, երկու քովնին ալ ոտքնին կը ծածկէին, մեկալ երկու քովնին ալ կը թռչցնէին ու կ'ըսէին, «Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց, լի է ամենայն երկիր փառօք քովք. այսինքն, Սուրբ, սուրբ, սուրբ, ալ զօրութիւն-

ներու Տէրը, բոլոր աշխարհք քու վառքովդ
լեցուն է». եսային, վայ ինծի կըսէր, որ Տէր ը-
բուխեանցը կը սեռանեմ ու լուռ կեցեր եմ,
պինդ բերանով ըլլալուս համար. ան առենը Սե-
բուխէներէն մէկը ունեցած այծին (մաշայով)
կրակ մը առաւ սեղանին վրայէն, բերաւ մար-
գարէին բերնին դպցուց ու ըսաւ, ահիկայ քու
պակասութիւններդ կը սրբէ, եւ քը Աստուած
եսային հարցուց թէ ալ պիտի խոյակալուդ
ժողովրդեանը որ մարգարէութիւն ընէ. եսայի
ալ պատասխան տալով ըսաւ, Տէր Աստուած, ինչ
պիտի. Աստուած ալ պիտի. ու եսայի անկէ ե-
տը քարոզել սկսաւ, բայց Հրէայներուն Պաղա-
ստէ չար թագաւորը եսային բռնեց ու սղոցով
(թէաւերէյով) մէջքէն երկու-ք կտրել տուաւ ու
մեռցուց:

Հ. Մեկալ մարգարէները ինչ մարգարէու-
թիւններ ըրին. ու ինսոր մեռան:

Պ. Երեմիա մարգարէն միշտ կուլար կ'ողբար
հրայէլացիներուն չարութեանը համար և կ'ը-
սէր որ թագաւորութիւնը պիտի կործանի. ա-
նանք մեկ չէին ըներ ինչուկ որ թագաւորու-
թիւնին հրաւիրէն կործանելուս, ու ամէնքն ալ
բաբելոն այսինքն Պաղեստ քաղաքը երթալ ը-
ցին, Երեմիա ալ հոն գնաց. եւ քը Հրէայները
առ քարոզութիւններուն չը դիմանալով քա-
կոծելին մեռցնելը ընդը: Եղեկիել ալ հրայէ-
լացւոց գերութիւններուն վրայ կը լսուէր և Յե-

սէր որ Աստուած Ադլադներուն ձեռքը պիտի տայ զիրենք, բայց անոնք մոխիկ չ'ելլին ըներ ու վրան կը խնդային. աս մարդարէն անդամ մը ուրախական առիթը մը տեսաւ. որովհետև օր մը Աստուած եղեկիելը դաշտ մը տարաւ որ ոսկորներու չորցած ոսկորներով լեցուն էր, և ա- նոր ըսաւ. հրաման ըրէ որ աս ոսկորները պ- ՀԸննան. ու երբոր հրամայեց, բոլոր դաշտը շատ մը մարդերով լեցուեցաւ, աս առիթը մարդոց վերջին դառնալուն յարութեան նշանն էր: Աս առիթէքէն զատ եղեկիել ուրիշ շատ մը հրաշալի առիթներ ալ առած է:

Հ. Երբայր, աս հինգէն զատ մարգարէներ չ'եկա՞ն աշխարհ.ք:

Պ. Այո, եկան, ինչպէս, Յոելեան, Ովսէէ, Յովէլ, Ամոս, Աբդիու, Միքիա, Նահում և ուրիշ մարգարէներ ալ եկան ու շատ բաներ խօսեցան. աս Յոելեան մարգարէին վրայ զարմանալի պատ- մութիւն մը բաներ ու մոխիկ ըրէ. Աստուած օր մը բաւ երեն որ երթայ Նինուէ այսինքն Մուսուլ քաղաքը երթայ ու խնդացնէ քաղքեցւոց որ եթէ չ'ապաշխարեն, երեք օրէն Նինուէն պիտի կոր- ծանի. Յոելեան վախնալով որ, թէ որ Նինուէացիք ապաշխարեն ու չը պատժուին ինքը սուտ ըսած պիտի երևնայ, անոր համար նաւ մտաւ որ հե- ռու տեղ մը վազէ, բայց Աստուած մեծ ալե- կոծութիւն մը ըրաւ. անանկ որ նաւը ծովին տա- կը կ'երթար կոր. մէջը եղող ուղեղիները սկսան

էրեկոյ կուռ.քերան աղաչել որ գիրեն.ք ազատեն. Էակ Յովհան մէկ կողմը քաշուած կը քնանար, մարդիկը քովը գային արմնցուցին գին.քն որ առնի.ք ընէ, բայց ճարերնին հատնելով, ըսին որ վիճակ ձգեն, հասկնան թէ որուն մեղացը համար է աս ալէկոծութիւնը. Երբոր վիճակը Յովհաննին եկաւ, հարցուցին երեն թէ ալ է ինչը, ան կ'երթայ. ու խնդրելով որ Ցաւուծմէ կը վախչի, ուզան մոմնալ թէ ինչ ընեն, ետքը Յովհաննին խօսքին մարկ ընելով բռնեցին գին.քը ծովը նետեցին, հովը մեկէն դադրեցաւ։

Հ. Ինչ կ'ըսես եղբայր Յովհան խղճուեցա՞ծովուն մէջը։

Պ. Ոչ, որովհետև մէկ մեծ ձուկ մը կլեց գին.քը. և երե.ք օր անոր փորին մէջը ողջ կենալով իր մեղացը վրայ ապաշխարեց, ետքը ձուկը գին.քը ցամա.քը տարաւ բերնէն դուրս հանեց. ան ժամանակը Յովհան նկնուէ վազեց և Ցաւուծոյ հրամայածին պէս քարոզել սկսաւ. շուտ մը թաղը ու բոլոր ժողովուրդը մեծ ու պզտիկ ծամ պահեցին, լայնը ըրած մեղքերնուն վրայ և ապաշխարեցին. Ցաւուած ալ բաց պատիժը վրանին չը խրկեց. անատեն Յովհան տրամեցաւ և գնաց քաղքին դիմացը նստաւ և Ցաւուծոյ բաւ եղաւ թէ դիտեմ որ ատո.ք ապաշխարեցին մէյլ հինգ քառասնից պիտի չը վերցունես, ու ես ամէնուն աւետ պրուց պիտի երևնամ. աղէկ է որ իս մեռցնես, խալասիմ. Ցաւուած մեկէն

Յովնանին քովը դղմեն մը բուսցուց որ ազատ շուք մը կուտար Յովնանին վրայ. Յովնան առաջ ուրախացաւ, բայց մէկալ օրը առաւօտուն իւրաւ սեռաւ որ ծառը չորցեր էր, շատ տրտմեցաւ. Աստուած ըսաւ նրան, թէ որ դուն մէկ ատ դղմենիին չորնալուն համար կը ցաւիս, հապա ես սանկ մեծ քաղքի մը ինսոր չ'ողորմիմ, ուր սեղ շատ մը անմեղ տղաքներ կան։ Յովնան ձայնը քաշեց և Աստուծոյ ըրածին հաւնեցաւ։

ԴԱՍ Է.

Հրէից Բաբիլոն քաղաքը գերի երթալէն, ինչուան Յիսուսի Փրկաւոյն ծնունդը։

1. Եղբայր, հիմայ Իսրայէլացիներուն թագաւորութեան ինսոր կործանուիլը և գլխաւոր մարգարէներուն վարքը սովրեցայ. կ'ազաչեմ որ ինձի պատմես թէ ետքը Աստուած ատ Իսրայէլացիներուն ի՞նչ ըրաւ։

2. Հիմայ ընելիք պատմութիւնս աղէկ մը քեզի հասկըցունելու համար պէտք է ըսեմ որ Իսրայէլացւոց թագաւորութիւնը կործանուելն եղաւ Բաբիլացւոց այսինքն Պաղտասարներուն նաբուզոդոնոսոր թագաւորը որ շատ ուժով մարդ մըն էր, ասիկայ իր մարդիկներովը Երուսաղէմի վրայ եկաւ ան տեղի Հրէից թագաւորը գերի

բառնայ. Սողոմոն թագաւորին Աստուծոյ հաճար չինած մեծ տաճարը կործանուց. քաղքին բնակիչները չարդուց ամէնուն ունեցածը առաւ ու բոլոր Հրէայները Բաբելոն տարաւ, հոն հրամանը ըրաւ իր իշխաններուն որ Հրէից մէջ եղող խելացի ու շնարհալի տղաքներէն քանի մը հատ առնեն և անոնց ուսումնք սովրեցունեն. ատ տղաքներէն եղան Դանիէլ, Սեդրաք, Միսաք, ու Աբեդնագով. ատոնք Աստուծոյ շնորհքովը մեծացան և ամէնուն սիրելի եղան, մանաւանդ Դանիէլ տղան որ պղտիկուց հրաշքներ գործեց, մարգարէութիւններ ըրաւ և Նաբուգոդոնոսորին տեսած երազները մեկնեց, անոր համար մեծ իշխան եղաւ, իսկ մեկալ ընկերներն ալ իրենց Աստուածպաշտութեամբը երևելի եղան։

Հ. Դանիէլին ընկերներն իրենց Աստուածպաշտութեամբը ընտիր երևելի եղան։

Պ. Նաբուգոդոնոսոր իր թագաւորութեանը տասնըմեկերորդ տարին ոսկիէ արձան մը անկեց Տէրեկա ըսուած դաշտին մէջ. վեթասուն կանգուն երկայն ու վեց կանգուն լայն, հրաման ալ հանեց, որ ամէն տեղայ մեծամեծները ժողվըվին ու հաւաքուիլ ան արձանը Աստուծոյ տեղ պաշտեն. անոր քովը հնոց մըն ալ շինել տուաւ ոչ չը հնազանդողը հոն ձգեն երթեն, ատ բանի՞ դնիէլի երեք ընկերները յանձն չ'առին, ոչ յորդորանք մոխիկ ըրին ու ոչ վախ։ Նաբուգոդոնոսոր ալ սաստիկ կատղեցաւ ու հրամայեց որ հնո-

ցը վառեն և ան տղաքը մէջը ձգեն ։

Հ. Աստուած առ անմեղ տղաքներըը չազատի ։

Պ. Այո , եղբայր . երբոր այներէք տղաքը հնոցին մէջ նետուելան , սկսան Աստուծոյ օրհնութիւն տալ ու ըսել , օրհնեալ է աչր Աստուած հարցըն մերոց , այսինքն մեր հայրերուն աչր Աստուածը օրհնեալ է ։ Թագաւորը բարկանալով հրամմեց որ կրակը տաքցնեն , նոյնչափ որ անոր բոցը քառասունըմնը կանգուն վեր ելաւ ու չորսին կայտղներըը երեց . բայց անոնց քովը հրեշտակ Աստուծոյ իջաւ ու չթողուց որ ան տղաքը այրին . Թագաւորը տեսաւ որ հնոցին մէջի երեք տղաքը , չորս հոգի եղեր , պարսնալով պտուց , Սեդրա՛ք , Միսա՛ք , Աբեդնագո՛ւ դուրս եկէ՛ք , անոնք ալ ելան ու երեցան . Թագաւորը տեսաւ որ մազերնին անդամ չ'է խանձեր . բայց հպարտ մարդ մը լսելով չ'ուզեց ճշմարիտ Աստուծոյ հաւատալ , անոր համար ալ Աստուած զին.քը պատժեց ։

Հ. Աստուած նարուգոնոսորին ի՞նչ պատիժ տուաւ ։

Պ. Օր մը նարուգոնոսոր իր պալատին վրայ պըտըտելով կը հպարտանար ու կը պարծենար Բաբելոն քաղքին ազատրութեանը և իրեն հաստատութեանը վրայ , մէյ մըն ալ երկինքէն ձայն եկաւ թէ՝ նարուգոնոսոր քեզի կ'ըսեմ , Թագաւորութիւնդ ձգէ , ու դուրսը գազաններուն հետ , գնա , բնակէ . ան ալ շուտ մը անասունի

ակս լեռները վազց ու հոն կեցաւ ճօմը տալէ և խոս կ'ուտէր, ինչուան որ Աստուծոյ պղտմութեամբը նոքեն թագաւոր եղաւ, և դանիէլ շատ խրատներ կ'ուտար իրեն։

Հ. Դանիէլ մարդարէն ետքերն ինչ եր ըրաւ։

Պ. Դանիէլ ուրիշ շատ բաներ ալ ըրաւ նախադատոնարին մեռնելէն բաւական ժամանակ ետքը։ Դանիէլ իրեն թշնամիներուն ձեռքովը, առանց նեղութ մը մէջ նետուեցաւ, բայց Աստուծոյ հրաշքովը ազատեցաւ, ու թագաւորը Դանիէլին թշնամիները մեռուց։ Դանիէլ մեռնելու օրերը մարգարէացաւ որ Հրէաները քիչ տարինէն գերութեան պիտի ազատին ու երուսաղէմ դառնան, մարգարէացաւ ալ որ Քրիստոս աշխարհ.ք պիտի գայ ու բոլոր մարդիկը առանց գերութեան ազատէ։

Հ. Հրեաները Բաբելոնի գերութենէն ինչո՞ւ ազատեցան։

Պ. Երբոր Հրեաները հօրմանատուն տարի բաբելոնի մէջ գերի մնացին, նիւթոս անունով պարսից թագաւորը ան քաղքին տիրեց և Աստուծոյ հրամանովը թողուաւ որ բոլոր Հրեաները երուսաղէմ երթան, Աստուծոյ տաճարը շինեն ու հոն նստին, ուսոր յիսուն հազարէն աւելի Հրեաներ երան երուսաղէմ գացին տաճարը շատ մը նեղութիւններով շինեցին ու հոն բնակեցան և սկսան ճշմարիտ Աստուածը պաշտել։

Հ. Հրէայները կրցա՞ն հանդիսաւ ժամանակ անցանել Երուսաղէմի մէջ։

Պ. Ոչ, Հրէայք Երուսաղէմ գառնալէն ետքն ալ չատ հանդիսաւ չ'ունեցան. Ա.յլապիները պիտի ամէն անգամ կը նեղէին, և չատ մարդիկ հատատքի համար կը մեռնէին, մինչև որ Մակաբայեցի ըսուած կորիճները ատք ելան, ան ամէն Ա.յլապիները վռնտեցին ու իրենք Երուսաղէմին տէր եղան. ետքերը Հրէայները Թագաւոր ալ ունեցան. բայց միշտ տկար էին, ուստի ճշմարիտ աստուածպաշտութիւնը չատ պակեր էր իրենց մէջ, և չատերը կեղծաւորութիւնով պարզամիտ ժողովուրդը կը խաբէին և անոր վրայ կ'իշխէին. աս տեսակները Սադուկեցի ու փարիսեցի կ'ըսուէին։ Վերջապէս Հրէից գերութենէն գառնալէն 537 տարի ետքը Ա.աուած հաճեցաւ որ իր միածին Որդին աշխարհք ղրկէ. և ահա աշխարհքիս աստեղծուելէն 4053 տարի ետքը ծնաւ Բեթղեհէմ Երուսաղէմին քովերը Բեթղեհէմ ըսուած գիւղին մօտ մսուրի մը մէջ, ուսուն պատմութիւնն ալ դրքիս մեկալ մասերը պիտի ընեմ։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

ԳԻՏԵԼԻՔ

Ա. ՄԱՍԻՆ ՎՐԱՅ

Հ. Ադամ ինչպէ՞ս առաւ Դրախտին մէջ կեցաւ։

Պ. Ադամայ Դրախտին մէջ ոչինչ կեանքը յայտնի չ'է. ոմանք երեսուն տարի կ'ըսեն. ոմանք երեք տարի. ոմանք քառասուն օր. ոմանք մէկ շաբաթ մը. ոմանք ալ օր մը. բայց ամենէն աւելի հաւանական է որ Ադամ քառասուն օրէն մը չափ Դրախտին մէջը կեցած ըլլալու է։

Հ. Աստուած չը մեղքցա՞ւ Ադամին ու Եւային, երբոր զանոնք պատժեց ու դժուխեան նշան մը չը ցուցուց։

Պ. Այ՛ն, մեղքցաւ, և իր աստուածային ան-չափ գիտութիւնը յայտնի երևցուց. անոր համար կանչեց. Ադա՞մ ուր ես. որպէս զի Ադամ իր մեղացը վրայ ապաշխարէ. բայց երբոր անիկայ չը զղջալով յանցանքը Եւային վրայ ձգեց, ու Եւան ալ օձին վրայ՝ ան առնը երկուքն ալ պատժուեցան. բայց դարձեալ սիրտերնին մխիթարեց խոստանալով որ որդին Աստուած երեսնց համար աշխարհ պիտի գայ, մարմին պիտի առնէ և վերնը ու երեսնց գաւիներն ազատէ։

Հ. Դրախտը աշխարհի՞ս մի՞ կողմն է։

Պ. Աստուածաշնչին պատմութենէն յայտնի է որ, Դրրախտը մեր Հայաստան երկրին մէջն է նախ ան խօսքէն որ կ'ըսէ Աստուածաշունչը.

«Եւ անկեաց Աստուած զԴրախտն յԵդեմ ընդ արեւելս» . այսինքն եւ Աստուած Դրախտը Եդէմին մէջ արեւելքին կողմը անկեց » . որ ըսել է Մովսէս մարգարէին գրածած տէղերուն արեւելեան կողմն էր , այսինքն Հայաստանի մէջ : Երկրորդ որ Դրախտին մէջ չորս գետեր կային . առնց երկուքը այն է Եփրատ ու Տիգրիս մինչև հիմայ երեսնց անունները Հայաստանի մէջ կան, առնցմէ զատ ուս գետերուն մօտ տէրերուն գրածած տէղերուն մէջն ալ ոսկի մարգ մը չը գտնուելուն որ Աստուծոյ գիրքն ըսայ :

Պ. Այո գտնուելու , և ասիկայ էր Յակոբ Նահապետին եաս երթալը Եդեսիոյ ձեղէն Յոբ անունով մէկը, որ Յոբ երանելի ըսուելու , ու համբերութեան օրինակ եղաւ : Ասիկայ խիստ հարուստ Աստուածապահ և արդար մարդ մըն էր . տասը զաւակ ունէր , աստանան եոևէն ինկաւ որ Յոբին դեշաւթիւն ընէ և ինքը խաբէ . անոր համար Աստուծոյ առջին երաւ ու հրաման ուզեց . Աստուած ալ Յոբին արդարութիւնը գիտնալով

ուղեց տատանան խոյտառակ ընել. անոր հա-
մար Աստուած հրաման տուաւ տատանային որ
երթայ ուզածը ընէ Յոբին, միայն թէ մարմինին
չը դպչի. մէյ մըն ալ Յոբ լսեց որ իր բոլոր զաւ-
կներն ու ծառաներն մեռեր են ու ունեցածը
պղտեր է, իսկ Յոբ երանելին մէկէն Աստուծոյ
երկրպագութիւն ընելով ըսաւ. մերկ աշխարհ.ք
եկայ ու մերկ պիտի դառնամ, Աստուած ինծոր
որ կամեցաւ անանկ ըրաւ, Աստուած օրհնեալ
ըլայ. տատանան երբ տեսաւ որ խաղք եղաւ,
հրաման առաւ Աստուծմէ որ Յոբին մարմինին
ալ դպչի բայց չը մեռցնէ. և Յոբ տաքին մին-
չև գլուխը անանկ խոցոտեցաւ որ ապիւտի մը
մէջ նստած խեցիի կտրով թարախները կը սբր-
էր. երեն կինը կը դանդատէր Աստուծմէ որ
պիրոն.ք ան խեղճութեան հասուց, բայց Յոբ
միշտ վառ.ք կուտար Աստուծոյ ու իր կինին կը
խրատեր ըսելով որ բարի.քը վայելեցինք, հապա
չարի.քին չը համբերե՞նք: Ան ատեն տատանան
խաղք խայտառակ եղած եռ.քաշուեցաւ, Աս-
տուած ալ Յոբը առողջացուցնելէն առաջ զաւա-
կի տէր ըրաւ. հարստութիւն, ոչխարներ ու
ծառաներ տուաւ, և Յոբ անկէ եռ.քը հարիւր
հօթանասուն տարի ալ ապրելէն եռ.քը Աստու-
ծոյ վառ.ք տալով մեռաւ:

Հ. Եղբայր, կեցիր բան մը հարցունեմ, ա-
տանան ինչ համարձակութիւնով Աստուծոյ առ-
ջին երաւ ու անկէ հրաման ուզեց:

Գ. Շատ անգամ երբոր Ս. Գաւմուխեան մէջ Աստուած երևեցաւ ու խօսեցաւ ի՛րաւունք, նա խակապէս Աստուած չ՚է, հապա Աստուծոյ հըբեշտակը, և երբ վոխանորդ Աստուծոյ ըլլալով, Աստուած կը կոչուի. ատանկ ալ ատանան այն հրեշտակը տեսաւ, որ Աստուծոյ կողմանէ հրամայեց ատատային ուղածը ծոբին ընելու։

Հ. Հրեշտակը ինչո՞ւ համար ետայի մարդարէին բերանը կրակի կայծ խոթեց։

Գ. Անոր համար որ ետայի մարդարէին լեզուին ու բերնին մեղքերը այրէ մաքրէ։

Հ. Ի՞նչպէս կրնայ ըլլալ որ Սողոմոնին պէս իմաստուն մարդ աշխարհք չ՚է եկեր ու պիտի չ՚ի գայ։

Գ. Որովհետև Սողոմոնին իմաստութիւնը սովրական մարդկիններուն իմաստութեանը հետ բաղդատելուն էրեն պէս ոչ եկեր է ոչ ալ պիտի գայ. բայց մարգարէներուն և առաքեալներուն, մանաւանդ Քրիստոս Փրկուողին և Ս. Աստուածածնի իմաստութիւնը, բնականէն վեր ըլլալով Սողոմոն չը կրցաւ անոնց հաւասարիլ. որովհետև էրեն իմաստութիւնը բնական էր։

Հ. Եղիա մարգարէն ինչո՞ւ թագաւորին խրկած մարդիկը երկու հեղուն ալ կրակով այրեց։

Գ. Որովհետև ծաղր ընելով մարդ Աստուծոյ կ՚ըսէին էրեն, և հապարա կերթալով մը կը հրամայեն որ՝ երկնքէ հեռերնին գ՚այ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Քրիստոսի աշխարհ գալէն մինչեւ երկինք համբառնալը, առաքելոյ քարոզութիւնն եւ քրիստոնէութեան տարածութիւնը։

ԴԱՍ Ա.

Քրիստոսի ծնունդն ու տաճարն ընծայութիւը

Հ. Քրիստոս ինչ աշխարհ եկաւ։

Պ. Ինսոր որ Աստուած իր սուրբ նահատակներուն ու մարգարէներուն բերնով մարդկային ազգին խոստացեր էր, աշխարհս առեղծուածէն չորս հազար յիսուն եւ երեք տարի ետքը Քրիստոս Աստուծոյ որդին աշխարհ եկաւ որպէս զի բոլոր մարդիկը սատանային դերութենէն փրկէ։

Հ. Երբոր Քրիստոսի աշխարհ գալուն ժամանակը մօտեցաւ նէ, առաջուց նշան մը չը տուաւ Աստուած։

Պ. Այո, որովհետեւ երուսաղէմի Հերովդէս թագաւորին նշանութեանը երեսունը հինդերորդ տարին ան քաղքին մէջ Զաքարիա անուանով ծեր սուրբ քահանայ մը կար, որ Եղիսաբէթ անունով կնիկ մը ունէր, և սոնք զաւակ չ'ունենէին. որովհետեւ Եղիսաբէթ ամուլ էր. սա քահանան երբոր օր մը տաճարին մէջ խունկ կը մատուցանէր, հրեշտակ մը երեւցաւ նրան ու բաւ.

«Զաքարիա, ասօթ.քդ լսեց Աստուած, եղիսա-
«բեթ կնիկդ քեզի որդի մը պիտի ծնի, ան-
«նը Յովհաննէս դնես. ասիկայ շատերուն ու-
«րախութեանը պատճառ պիտոր ըլլայ. չը ծնած
«սուրբ հոգիով պիտի լեցուի, ու Աստուծոյ
«առջևէն երթալով ժողովրդին սիրտը անոր դի-
«տի դարձնէ, զգոյշ եղիր, չ'ըսեսյ որ պինդ և
«օղի խմէ»: Զաքարիա մէկէն տանն ու վրայ
եղաւ, ու հրեշտակին ըսածին վրայ տարակու-
սեցաւ, որովհետև կնիկը ծեր էր և իր կնկանն
ալ ծնելու օրերը անցած էին. հրեշտակը դար-
ձաւ ըսաւ. «Ես Գաբրիէլ հրեշտակն եմ, Աս-
տուած ինծի ղրկեց. հիմայ ինծի չը հաւատա-
լուդ համար համր պիտի ըլլաս մինչև
որ ան տեղն ծնի»: Մէկէն Զաքարիային լեզուն
բռնուեցաւ, ետքը երբեք ոտն դնաց, եղիսա-
բեթ յղի եղաւ, ու Աստուծոյ փառք կուտար.
ահա այս ժամանակը ամէն մարդ կ'ուզեր որ
Աստուծոյ ընելիք մեծ հրաշքը տեսնէ:

Հ. Ցիսուս Քրիստոսի աշխարհ գալն ինչպէս
էաւ:

Պ. Եղիսաբէթին յղանալէն հինգ ամիս ետքը
Գաբրիէլ հրեշտակը Երուսաղէմի մօտ Նազարէթ
քաղաքը Մարիամ անուն աղջկան մը դնաց, որ
Յովսէփ անունով արդար մարդու մը հետ նշա-
նած էր. հրեշտակը Մարիամին ըսաւ. «Ուրախ
եղիր Մարիամ, Աստուած քեզի հետ է». Այդ
Մարիամ հրեշտակին ան խօսքը որ լսեց շփոթե-

ցաւ, հրեշտակը դարձաւ ըսաւ անոր. մի վախնար Մարիամ, ՏԷրն մեր Աստուած, քեզմէ գոհ է. ահա ծնիր. բայց Մարիամ նորէն կը տարակուսէր աս խօսքին վրայ ու կ'ըսէր որ աս բանը ինծո՞ւ կ'ըլլայ քանի որ ես էրիկմարդ չեմ ճանչնար,



ան առեղը Հրեշտակը ըսաւ անոր որ, հոգւով սրբով ելիր յղանայ, և խնայուց որ իր եղիսաբեթ ազգականն ալ որ ամուլ էր, հիմայ հինգ ամիս է որ յղի է. Մարիամ ալ ըսաւ. ահա ես Աստուծոյ աղախինն եմ. ինչ որ ինծի ըսիր թող անանկ ըլլայ: Ա խօսքովը Մարիամ Յիսուս Քրիստոսը իմացաւ:

2. Մարիամ յղանալէն ետև ինչ ըրաւ:

Պ. Մարիամ հրեշտակէն իմանալով որ իր եղիսաբեթ ազգականն ալ յղացեր է, երթալ անոր աչքի լուսի գնաց. ու երբոր բարեւեց, եղիսաբեթի ալ պատահեցաւ մէջ վեց ամսուան մանուկը շարժեցաւ. եղիսաբեթ ալ հոգւով սրբով լցե-

ուած Մարիամին ըսաւ. «դուն կնիկներուն մէջ օրհնուած ես. և քու որովայնիդ պտուղը օրհնեալ Աստուածն է. աս ինչ մեծ պատիւ է որ Աստուծոյ մայրը ինծի պայ, երնէկ հաւատացողին. Մարիամ ալ սկսաւ ըսել «Մեծացուսյէ անձն իմ զտէր ևայլն. ու երեք ամիսէն իր տունը դարձաւ»:



Հ. Զաքարիա քահանային լեզուն կնաւր բացուելուն:

Պ. Երբոր Եղիսաբէթ հինն ամիս յղի ծնալէն ետքը ծնաւ, դրացիանները իրեն հետ ուրախացան. և ութը օրէն երբ տղան տաճարը տանելին թլփատելու համար ու ի՛ուղէին որ անունը Զաքարիա դնեն. իսկ մայրը կ՚ըսէր որ Յովհաննէս դնեն. երբոր խօսքերը շատցան, Զաքարիա ձեռքը տախտակ մը առաւ և Յովհաննէս անունը գրեց. ան ատենը լեզուն ալ բացուելու ու կսկսաւ «օրհնեալ է Աստուած» ըսել: իսկ Յովհաննէս պզտիկուց անապատը քաշուելու ու հոն կը

ճգնէր ինչուան իր քարոզութեան սկսելու ա-
ռնել ։

Հ. Եղբայր այդ հրաշալի պատմութիւնները քա-
նի լաւ, կը զարմանամ. բայց խելքս չը հասնիր
որ կոյս Մարիամ երբոր տուրբ հոգիով յղացաւ
նէ, իր Յովսէփ նշանածը ինչո՞ւ հաւատաց ա-
նդրանիս ։

Պ. Յովսէփ դրախ նշաններէն տեսնելով Մա-
րիամին յղանալը, և չը գիտնալով որ Հոգւով
Սրբով եղեր էր, տարակուսանքի մէջ ընկաւ. և
կուզէր որ Մարիամը թուլէն ճամբէ. բայց Ա-
ստուծոյ Հրեշտակը դիշերուան երազին մէջ երև-
ցաւ անոր ու ըսաւ որ, Մարիամին յղութիւնը
Աստուծոյ հրաշքովն է. ծնած տղուն անունը
Յիսուս դնել պիտի կոչեն. որ ըսել է Աստուած մե-
զի հետ, ատոր վրայ Յովսէփ շատ ուրախացաւ ։

Հ. Յիսուս Քրիստոս ո՞ր և ինչո՞ւ ծնաւ ։

Պ. Յիսուս Քրիստոսի ծնանելու առեններէն,



հրաման եղեր էր ու ամէն մարդ իր ծնած քա-
ղաքը երթայ նահ, Յովսէփ ալ Բեթղեհէմ քաղ-
քէն ելլալով Մարիամին հետ Նազարէթէն ելաւ
ու երբոր Բեթղեհէմին քովերը հասան, հոն գի-
շերը ախոռի մը մէջ մնան, քնանալու համար.
և ահա այն տեղ ծնաւ Յիսուս Քրիստոս Աստու-
ծոյ որդին. Մարիամ Աստուածածին ալ
վաթսուց ու մսուրի մը մէջ դրաւ: Ան ախոռին
քովերը հովիւներ կային, որ իրենց ոչխարները
կ'արածէին. Աստուծոյ Հրեշտակը առնոց երև-
ցաւ ու ըսաւ. Մի վախնաք. ուրախացէք. որով-
հետև այսօր ձեր Փրկիչը ծնաւ, մսուրին մէջը
տեսէք. ան խօսքին առնը, շատ մը հրեշտակ-
ներ ալ երևցան. ու սկսան ըսել, փառք՝ ի
բարձունս Աստուծոյ և յ'երկիր խաղաղութիւն,
՝ի մարդիկ հաճութիւն: Երբ հովիւները վաղե-
ցին եկան. գտան Յիսուսը մսուրին մէջ. իննկան
անոր առջևը երկրպագութիւն ըրին, ու գայլին
ապրին անդին ան մեծ հրաշքը պատմեցին. և
որոնք որ կը լսէին կը զարմանային. ուխտ օրէն
երբը Յիսուս Տաճարին մէջ ներկայացաւ:

Հ. Հովիւներէն գատ որո՞նք եղան որ Քրիստո-
սի ծնունդը տեսնելու եկան:

Պ. Հետու աշխարհքէ երեք Մոգեր, որ թագաւո-
րի պէս մարդիկ էին. Աստղին նշանէն հասկը-
նալով Յիսուսի ծնունդը՝ ելան երուսաղէմ եկան.
ու սկսան հարցունել թէ ո՞ր է Հրէից թագաւո-
րը որ ծնաւ. Հերովդէս ան խօսքը լսելուն պէս

շատ վախցաւ. ու Հրէից կարդացողները կան-
չէր որ աս բանը անոնցմէ իմանայ. անոնք ալ
ըսին իրեն թէ Միքիայ Մարգարէն կը դրէ որ
Բեթղեհէմ քաղաքը պիտի ծնի. ան առենը Հե-
րովդէս գաղտուկ կանչեց մոգերը և ապսպրեց
անոնց որ երբ Յիսուսը գտնան, գան իրեն ալ
ըսպյեն որ ինք ալ երթայ անոր երկրպագու-
թիւն ընէ. եւ քը ան աստղը նորէն երեւցաւ մո-
գերուն և տարաւ զիրենք մինչև Քրիստոսի ծը-
նած տեղը. անոնք ալ մտան երկրպագութիւն



ըրին ու շատ ընծաներ տալէն եւքը, հրեշտակէ
խարհուրդով երուսաղէմ չը հանդիպեցան. հա-
պա ուրիշ ճամբայէ իրենց երկիրը գացին:

Հ. Հերովդէս երբոր տեսաւ թէ Մոգերը իրեն
չ'եկան նէ, ինչ ըրաւ:

Պ. Հերովդէս Մոգերուէն խաբուելը տեսնելով
բարկացաւ ու իր մարդիկներուն հրամայեց որ
երթան Բեթղեհէմին և անոր քովի գեղերուն

երկու տարուընէ վար եղած բոլոր մանչ տղայքը մեռցնեն. անոնք ալ շատ մը իրենց թագաւորին հրամանը կատարեցին. բայց Աստուծոյ հրեշտակը առաջուց Յովսեփայ երազին մէջ երևնալով



Յիսուսը Եգիպտոս փախցնել տուաւ. ու հոն մնաց մինչև որ Հերովդէս մեռաւ. ան ատեն Յովսէփ՝ հրեշտակին հրամանովը նորէն Յիսուսը առաւ ու նազարէթ քաղաքը բերաւ:

Հ. Յիսուս հին օրէնքին ամէն պատուիրանքնե-

րըն ալ կատարեց:

Պ. Այո. որովհետև երբոր Յիսուս քառասուն օրուան եղաւ, ինսորը որ օրէնքը կ'ապսպրէր Աստուծոյ ընծայելու համար. տաճարը տարին զինքը. երկու տատրակ ալ հետերնին. ան ատենը հոն էր ծերունին Սիմէոն, որուն Հոգին տուրբ յայտներ էր որ ինչուան փրկիչը չը տեսնէ նէ մեռնի՝որ չը մեռնի. Սիմէոն ուրախութեամբ գիրկը առաւ Յիսուսը և ըսաւ. ինծի ըրած խոստ-



մուն քեզ կատարեցիր ամէն, ալ թող մոռնիմ, եւ քը Աստուածածինին ալ ըսաւ. տիկնայ շատ ցաւն վրկութեանը շատերուն ալ կորսուելուն պատճառ սխտոր ըլլայ. և քու սիրտդ ալ սխտէ լեցեալ է, Աննա մարգարէ անուանուիլ կինիկ մըն ալ կար տաճարին մէջ որ ութսունը չորս տարեկ ի վեր հոն էր ու պաքով և աղօթքով կանցուներ իր օրերը. տիկնայ ալ սկսաւ փառք տալ և Յիսուսին փրկիչ Աստուած ըլլալը քարոզել: Ա ընծայումէն եւ քը սուրբ կոյս Մարիամ ամէն տարի Յիսուսը տաճարը կը տանէր ինուոր որ օրէնք էր. և մէկ անգամ մըն ալ Յիսուսը կորնցուց:

Հ. Յիսուս ինչո՞ւ համար շատերուն կորսուելուն պատճառ սխտոր ըլլար:

Պ. Մեր վրայ ունեցած անհուն սիրտը չափէ դուրս խոնարհութիւն ընելուն համար. շատերը պիտ'որ արհամարհէին Աստուծոյ անբաւ խաստութիւնը. ու չարանալով պիտ'որ չը հաւատային Քրիստոսի Աստուածութեանը. ինչպէս որ եղաւ ալ:

Հ. Հրէայներն այսչափ հրաշքները որ տեսան ինչո՞ւ Քրիստոսի Աստուածութեանը չը հաւատային ։

Պ. Հրէայները թէպէտ Մարգարէներուն գրածները կարդալով, կ՚ապաւէին որ Քրիստոս Աստուծոյ որդին աշխարհ.ք պիտի գայ. բայց անոնք կը կարծէին որ թագաւորական փառքով պիտի գայ և պիրոնք հետևողէպի բռնութենէն խալըսէ, ու բոլոր աշխարհ.ք տիրէ. անոնք չը կրցան հասկընալ որ Մարգարէները Քրիստոսի խոնարհութեամբ աշխարհ.ք գալուստը կը գուշակէին. անոր համար ոչխարի որ հրաշք տեսան չը հաւատացին. որովհետև իրենց մտքին աչքը կուրցեր էր ։

Հ. Ցիսուս Քրիստոս ինսո՞ր կորսուեցաւ տաճարին մէջ ։

Պ. Անգամ մը երբոր Ցիսուս տաներիկու տարեկան էր, Մարիամ Աստուածածին ու Յովսէփ ղինքը տաճարը տարին. երբ դառնալու տանեն, առանց իրենց դիտնալուն Ցիսուս տաճարը մնաց. իրենք կարծելով որ ուրիշ ճամբորդներուն հետ մէկտեղ կուգայ, հոգ չըրին ։ Օրուան մը ճամբայ ընելէն ետև, երբոր փնտռեցին ու չը գտան, ան տեղը նորէն երուսաղէմ դարձան, և երեք օր չորդին պրտըտելէն ետքը՝ տաճարին մէջը գտան որ վարդապետներուն հետը կը խօսէր և զամէնքը կը զարմացնէր իր խելքովը. Ծնողք կոյսը երբոր տեսաւ, որովհետև ըսաւ, ա



ինչ լրիւ մեղի. Յիսուս ալ պատասխանեց. չէ՞ էր դիտեր որ ես իմ Հօրս տաճարին մէջ պիտի ըլլամ: Եւ քը նպաստէի դայն. ու Յիսուս երեսուն տարի հնազանդութեամբ տունը մնաց. և Հայր Յովսէփին հետ հիւանութիւն (տիւրիէրութիւն) կ'ընէր. ինչուան քարտուղութեան տարեկը. և ամէնուն ալ սիրելի էր:

ԳԱՍ Ը.

Քրիստոսի մկրտութիւնը, իր քարոզութիւններն ու հրաշքները:

Հ. Յիսուս Քրիստոս ե՞րբ մկրտուեցաւ:

Պ. Երբոր Յիսուս երեսուն տարու եղաւ, Յովհաննէս մկրտիչ անապատէն գալով սկսաւ ժողովուրդին քարոզել ու ըսել. Ապաշխարեցէ՛ք, ո՞



ըսվեռաև երկնքի թագաւորութիւնը մօտեցեր է. ան առեն չատ մը մարդիկ երթնց մեղքերը ւկսան ապաշխարել, ծովհաննէս ալ զանոնք կը մկրտէր Յորդանան գետին մէջ. այն միջոցներըը Քրիստոս ալ եկաւ որ Յովհաննէսէն մկրտուի. բայց Յովհաննէս ըսաւ անոր. Տէր, ես պէտք է որ քեզմէ մկրտուիմ. Քրիստոս պատասխան տըւաւ Թէ, հիմայ Թող որ օրէնքին ամէն պարտքերը կատարենք. առանկով մկրտուեցաւ Քի-



առաս Յորդանան գետին մէջ. ու երբոր չուրէն դուրս ելաս, չուտ մը Հոգին Սուրբ աղաւնիի կերպարանքով Յիսուսի գլխուն վրայ եջաս. ձայն մըն ալ եկաւ երկինքէն որ կ՚ըսէր. «Սո՛ւկայ իմ սիրելի որդիս է. աստր հաւնեցայ»։

Հ. Ընկէ ետև ի՞նչ ըրաւ։

Պ. Յիսուս մկրտուելէն ետքը անապատը գնաց ու հոն քառասուն օր քառասուն գիշեր ծոմ պահելէն ետև անօթեցաւ. ան ատենը սատանան գալը եկաւ փորձելու համար և ըսաւ, «Թէ որ Աստուծոյ որդին ես, ըսէ որ աս քարերը հաց ըլլան» Յիսուս ալ պատասխանեց. «մարդս վինակ հացով չապրիր, հապա Աստուծոյ պատուիրանքներով պահելով», ետքը սատանան Յիսուսը առաս սաճարին աշտանակին վրայ տարաւ ու ըսաւ, «Թէ որ Աստուած ես ինքզինքդ ակէ վար ձգէ, որովհետև գրուած է Թէ Հրեշտակները քեզի իրենց Թևերուն վրայ պիտի բռնեն որպէս զի ոտքդ քարին չը զարնես». Յիսուս ալ ըսաւ, «գրուած է որ քու Տէր Աստուածդ չը փորձես», անկէց ետքը սատանան գինքը բարձրը լեռան մը վրայ տարաւ ու աշխարքիս ամեն Թագաւորութիւնները անոր ցուցունելով ըսաւ. «Թէ որ առջիս իյնաս ու ինծի երկրպագութիւն ընես, աշխարքիս ա՛ս ամեն Թագաւորութիւնները քեզի կուտամ». ան ատենը Յիսուս ըսաւ անոր «կորսուէ քովէս սատանայ, գրուած է որ միայն քու Աստուծոյդ պէտք է երկրպագութիւն ը-

նեա» . ասոր վրայ ատանան հեռացաւ , ու հրեշտակները եկան Յիսուսի ծառայելու ։

Հ. Յիսուս ատանային վորձուելէն ետքը ինչ ըրաւ ։

Պ. Անապատէն դարձաւ որ , քարոզելու սկսի ու աշակերտներ ժողվէ . Յովհաննէս Մկրտիչ գինքը հեռուէն տեսնելով աշակերտներուն ըսաւ . «ահա իմ ձեզի քարոզած Աստուծոյ Գառը՝ Քրիստոսը» . ան ատեն երկու հոգի , Յիսուսի ետեւէն գացին . անկէ ետքը սկսաւ Յիսուս հրաշքներ գործել . քարոզութիւններ ընել . առակներ խօսիլ և սուրբ Գրքայութիւնը ճառել ։

Հ. Յիսուսի առաջին հրաշքը ո՞րն է ։

Պ. Անգամ մը Յիսուս կանա Գալիլեացւոց հարսանիքը գնաց իր աշակերտներուվը . երբոր գինին պակսեցաւ Աստուածածին ըսաւ Որդին թէ գինի չ'ունին . Յիսուս պատասխանեց թէ , ատենս եկած չ'է . բայց Աստուածամայրը գիտնալով որ Յիսուս իր խօսքը չը կոտրեր , ծառաներուն պատպրեց որ Յիսուս ինչ ըսէ նէ ընեն , Յիսուս հրամայեց որ տանը մէջ գտնուած վեց հատ ժակոյինները ջրով լեցնեն , ան որ ըրին , հաստը նայեցան տեսան որ պատուական գինի եղեր է ։

Հ. Յիսուսի երկրորդ հրաշքը ո՞րն է ։

Պ. Յիսուս երբոր Նազարէթ գաղաթը եկաւ , հոն սինագոկան մտաւ . ու երբ մարգարէին գիրքը առաւ որ կարդայ . և երբոր ան խօսքին հանդիպեցաւ որ կ'ըսէ Հոգի Տեառն ի վե-

ւոյ է՛ն, իրեն վրայ մեկնեց, ու Հրէից կուրա-
թեանը դէմ խօսեցաւ. աս որ լսեցին Հրէայնե-
րը՝ կատղելով բռնելին ձին ու քաղքէն դուրս
լեռան մը գլուխը հանելին որ անկէ վար ձգեն
մեռցունեն. Յիսուս մէջերնէն երթաւ գնաց, ու
անոնք չը կրցան տեսնել։

Հ. Յիսուսի երրորդ հրաշքը ո՞րն է։

Պ. Գալիլեայի մէջ մեծ մարդու մը զաւակը ծա-
նր հիւանդ ըլլալով, հայրը եկաւ կ՛աղաչէր Յի-
սուսին որ կախառնաւսմ դայ իր որդին բժ-
շկէ, երբոր Յիսուս կամաց կամաց սկսաւ եր-
թալ, անիկայ կ՛արտորցնէր որ տղան չը մեռած
հասնի. Յիսուս դարձաւ ըսաւ անոր «գնա՛, որ-
դիդ ըրբնացած է». մարդն ալ հաւատաց ու երթաւ
գնաց, ճամբան ծառայները դիմացը երթան և
աւետիս տուին թէ որդիդ ապրկցաւ, ան տես-
նը մարդը հարցուց իմացաւ որ Յիսուս ողջ է
ըսելուն պէս տղան բժշկուեր է. անոր համար
անուլ տեղուլ հաւատաց Քրիստոսի Աստուածու-
թեանը։

Հ. Յիսուսի չորրորդ հրաշքը ո՞րն է։

Պ. Ընգամ մը գեննեսարեթի լսուած տեղը ծո-
վուն եղերքը Յիսուս ժողովրդին քարոզ կուտար.
հոն երկու պարապ նաւեր կային, մէկը Սիմոն
Պետրոսին, մէկալն ալ Յակոբոսին և Յովհաննէ-
սին որ երկու եղբայր էին. Յիսուս Պետրոսին
նաւը մտաւ ու անկէ սկսաւ քարոզել. որովհե-
տև ժողովուրդը ցամաքին վրայ այնպէս շատ

էր որ տեղ չ'էր ճնացեր. եւ թէ Սիմոնին ըսաւ որ նաւը քիչ մը բացը տանի եւ ուռկան ձգէ ձուկի համար. անոնք ալ ըսաւ թէ «վարպետ ամբողջ գիշերը աշխատեր ենք ու բան մը չ'ենք բռնած, բայց հիմայ քու խօսքիդ կը հնազանդինք» ու երբոր ուռկանը ձգեցին, անհատար ձուկ ժողվելնուն որ ուռկանը քիչ ճնաց պիտի պատռէր, եւ երկու նաւ ձուկով լեցուեցան։ Հոն եղողները սկսան վախնալ, Յիսուս անոնց սիրտ տուաւ ու ըսաւ, —եւեր ենք ու առնէ եւ թէ մարդիկները պիտի որսաք. անոնք ալ ամէն բաներնին հոն ձգեցին ու Յիսուսի եւեր էն գացին։

Հ. Յիսուսի հինգերորդ հրաշքը ո՞րն է։

Պ. Ինչամար մը գալիլեայի ծովէն գերդեստացոց երկիրը անցնելու առնը Յիսուս սկսաւ նաւուն մէջը քնանալ, յանկարծ սաստիկ աղկոծութիւն մը վրայ եկաւ, ու նաւին մէջ եղողները լեղապատառ եղած գինքը արթնցուցին, Յիսուս ալ հրամայեց հովերուն, —Խիւրհատասաներ, ըսաւ, լինչու այդպէս կը վախնաք. եւ թէ, —դադրիչ— ըսաւ ծովուն. որ մեկէն հանդարտեցաւ, ան տեղն ամէնքն ալ սկսան զարմանալ, ու իրարու կը հարցունէին թէ սա ո՞վ է որ մեկ խօսքով ծովը կը հանդարտեցնէ։

Հ. Յիսուսի վեցերորդ հրաշքը ո՞րն է։

Պ. Յիսուս Գերգեստացոց ըսուած երկիրը հասնելով դերեզմաններէն երկու կատղած դեւա-

հարներ դիմացն էլան ու կը պօռային. —Ցիսուս որդի Աստուծոյ ինչու մեզ կը տանջես. վասն զի Ցիսուս կը հրամայէր որ սատանաներն ան մարդիկներէն էլլան. անոնցմէն որ հարցուց. —Էդէն է ըսին. եւ քանի Ցիսուսին աղաչեցին որ զիրենք դժոխքը չը խրկէ. հապա հրամայ որ ան կողմերը արածուող խոզերուն վրայը մտնեն. Ցիսուս ալ հրամայելուն պէս, դացին. ու ան խոզերն որ երկու հազար հատ էին, դիւահարեցան ու վազելով ծովը թաւնեցան ու խըղդուեցան. խոզերուն պահապաններն ատ որ տեսան՝ վախնալով քաղաք վազան ու եղածը ամէնուն պատմեցին. քաղքցիք ալ եկան տեսան ու վախնալով աղաչեցին Ցիսուսին որ գլխէ երթայ:

ԴԱՍ Գ.

Ցիսուսի հրաշքները:

(Շարունակութիւն)

Հ. Ցիսուսի հօմներէրդ հրաշքը ո՞րն է:

Պ. Օր մը Ցիսուս երբոր տան մը մէջ նստած կը քարոզէր, անդամալոյծ մը բերին. տեսան որ այնչափ բազմութիւնէն չեն կրնար ներս խոթել, տանը տանիքէն կտոր մը տեղ քակեցին ու անկէ անդամալոյծը Ցիսուսի առջին իջեցուցին.

Յիսուս տեսնելով առնոյ հաւատքը. — որդեակ, քսաւ անդամալոյծին. թողութիւն ըլլայ մեղքերուդ. հոն գտնուող կարգապետները սկսան դանդաղիլ Յիսուսին վրայ թէ՝ հայհոյութիւն ըրաւ Աստուծոյ դէմ. Յիսուս անոնց միտքը իմանալով հարցուց. «Մեղքերուդ թողութիւն «ըլլայ ըսելը դիւրին է, չ'է նէ երկր անկողինդ «առ ու գնա ըսելը»։ Անոնք ալ պապանձեցան. ետքը անդամալոյծին ըսաւ. երկր — մահիճդ առ ու գնա. անդամալոյծը մեկէն ըռընալով երթալ մահիճը չուկեց ու տունը գնաց։ Յիսուս տուալ իմացուց որ հրաշքով մարդ բժշկողը կրնայ մարդուս մեղացը թողութիւն տալ։

2. Յիսուսի ութերրորդ և իններորդ հրաշքները որո՞նք են։

3. Անգամ մը Յորդան անունով Հրեայ մը երկաւ Յիսուսի տիքը իմկան ու կ'աղաչէր որ իր տանեկու տարու մէկ հատիկ հիւանդ աղջիկը որ մեռնելու մօտ էր, գայ ու բժշկէ. Յիսուս մեկէն ճամբայ երաւ, երթալու տանը տեղատեղ կին մը որմէ միշտ արիւն կ'երթար ու տասներկու տարի այս հիւանդութենէն ապառելու համար բոլոր ունեցածը բժիշկի տուեր և ճար մը չ'էր գտեր, երկաւ գաղտուկ Յիսուսի հանի կողմէն անոր լաթերուն դպաւ ու շուտ մը բժշկուեցաւ. Յիսուս դարձաւ ու հարցուց թէ ով իմծի դպաւ. աշակերտները զարմանալուն ատ-

ան թէ բաղմութիւնը քեզ կը սիրէ • բայց հիւանդ ինիկը Յիսուսի բաժը հասկնալով, մէկէն Յիսուսի տարբը ինկաւ ու երազը պատմեց • Յիսուս անոր սիրտ տուաւ ու ճամբեց : Մէյ մըն ալ Յայրոսին անէն մարդ- եկաւ ու բաւ որ աղջիկը մեռեր է • Յիսուս բաւ Յայրոսին — դու մի վախնար— երբեմ տունը հասան • Յիսուս աղջկան ծնողքը և իր երեք աշակերտները հետն առած մեռելին սենեակը մտաւ , բռնեց անոր ձեռքէն ու բաւ —աղջիկ , քեզի կ'ըսեմ , ելիր • մէկէն աղջիկը ոտքնցաւ ու Յիսուս հրամայեց որ կերակուր տան :

Հ• Յիսուսի տաներրորդ հրաշքը ո՞րն է :

Պ• Անոր համ մը դառկի ծօնին Յիսուս երեսաղէմ որ դնաց , հոն Պրոպատիկէ բուած Աւազանին քովը շատ հիւանդներ կ'սպասէին • որովհետև տարին մէյ մը Հրեշտակ Աւուծոյ ան ջուրը կը խառնէր • ու ով որ առաջ մէջը լինար՝ անիկայ միայն կը բժշկուէր , հոն մէկը կար որ երեսուն ուէթը տարիէնէ'ի վեր կ'սպասէր • Յիսուս հարցուց անոր թէ —կուզե՞ս ողջնալ • ան ալ բաւ • Տէր , —մէկը չունիմ որ դիս աւազանը ձգէ ու բժշկուիմ • Յիսուս բաւ • —ելիր առ անկողինդ ու դնա՛ • ան ալ շուտ մը բուընացաւ , անկողինը շալկեց ու կ'երթար • օրն շաբաթ էր • Հրեայները երբոր տեսան բսին • թէ —ինչո՞ւ շաբաթ օրով մահիճդ շալկեր ես • մարդը պատասխանեց որ —ինձ բժշկողը բսաւ հրամայեց

և չ'էր դիտեր որ պինդը բժշկողը Յիսուս է. երբ որ երբեմն Յիսուս ան մարդը Տաճարին մէջ տեսաւ, ըսաւ անոր ու ըսաւ.—Ահա դուն առողջ մի ըներ որ նորէն հիւանդութիւն չի պայ վրադ. մարդը գնաց Հրէաներուն ըսաւ որ պինդը որ ժըշկողը Յիսուսն էր. անոր համար Հրէայները սկսան պինդը հալածել. բայց Յիսուս չէր վախնար. հապա՝ սկսաւ քարոզել նորը թէ Աստուծոյ որդին է. անով աւելի կը կատղէին Հրէաները և կ'ուզէին պինդը մեռցնել:

2. Յիսուսի առաքելութիւնը հրաշքը ինչ է:

3. Շաբաթ օր մը Յիսուս արտերուն մէջէն կ'անցներ իր աշակերտներուն հետ, սոնք անօթեցած ըլլալով. ցորենի հասկերը փըցուցին և ափերնուն մէջ շփելով կ'ուտէին. փարիսեցիները սա տեսնալ նեղացան՝ բայց Յիսուս զօրաւոր պատասխաններ տալով զանոնք պատնէշեցուց խոկ մէկալ շաբաթը երբոր Սինագոկային մէջ կը քարոզեր, փարիսեցիները եկան ու կը հարցունէին երեն թէ, —շաբաթ օրով բժշկուիլն կ'ըլլայ ինչ հոն ձեռքը չորցած մարդ մը կար. Յիսուս զանի առջևը կանչեց ու փարիսեցիներուն հարցուց թէ՝ շաբաթ օրով բարի գործելը ին աղէկ է, չէ նէ չարութիւն ընելը. —թէ որ շաբաթ օրով ոչխար մը փոսը կիյնայ նէ չ'է՞ք ին հաներ. ու բնին շաբաթ օրը մարդ բժշկել ալ կ'ըսայ ըլլալ. եւ քը գարձաւ ան մարդուն —ձեռքդ երկնցու ըսաւ. ան ալ երկնցուց ու բժշկուեցաւ:

Հ. Ցիտուսի տաններկու երրորդ հրաշքը սին է։

Պ. Ինչամա՞ր մը Ցիտուս շաբաթի օրով Սինուվային մէջ հիւանդ կնիկ մը բժշկեց ձեռքը վրան դնելով, որ տաներտումը տարի տառապեր էր. ան առնը Սինուվային վերակացուն ժողովրդին սրբոտիքցաւ ու լաւ թէ՝ —շաբթու մէջ քանի օրերը երէք ըլլան ժըշկուելիք ու չէ թէ շաբաթի օրը. Ցիտուս պատասխանեց թէ —շաբաթ օրը ձեր անասուններըը կ'արձկէք ու չուր կը խմցունէք. հապա Աբրահամու աս գաւառին որ տաներտումը տարի տառապեր կապված էր, պէտքը չ'էր արձկել շաբաթի օրը. աս որ ըսելին ամէնքը՝ սկսան Աստուծոյ մեծութիւնը փառաւորել։

Հ. Ցիտուսի տասներերք երրորդ հրաշքը սին է։

Պ. Օր մը Ցիտուս ժողովրդեան շատ խրատներ տալէն ետքը երբոր լեռնէն վար կ'իջնար, բորոտ մը մօտենալով երկրպագութիւն ըրաւ ու ըսաւ անոր. —Տէր՝ թէ որ ուզես, կրնաս զիս բժշկել. Ցիտուս ալ —ուզեմ ըսելուն պէս բորոտը ըստինքեայ։ Ցիտուս ապատրեց անոր որ ասոր եղածը մէկու մըն ալ չ'ըսէ, հապա երթայ օրէնքին ապատրաժին նման իր պարտքերը հոգայ։

Հ. Ցիտուսի տասներչորս երրորդ հրաշքը սին էր։

Հ. Ցիտուս երբոր կապհառնաում քաղաքը մտնել պիտայ, հոն հարիւրապետ մը ծառան մեռնելու վրայ ծանր հիւանդ էր. հարիւրապետը Աստղէն ըլլալուն համար չը համարձակեցաւ Ցի-

առաին առջևը երևնալ. հապա մարդ պրկեց, Յիսուս եկաւ որ անոր առունը երթայ, հարիւրապետը նորէն մարդ պրկեց և ազաչեց որ չը հոգնի չը պայ. բայց երբ տեսաւ որ Յիսուս իր առնը մօտիկցեր է մէկէն առաջ.քը վազեց ու բսաւ. —արժանի չ'եմ որ իմ առունս մտնաս Տէր, խօսք մը ըսէ ու իմ ծառաս բժշկուի. ան առունը Յիսուս դարձաւ իր .քովը գտնուղ ժողովուրդին բսաւ, երաւ կըսեմ որ Իսրայէլացւոց մէջ առանկ հաւատք չը տեսայ. եւ.քը հարիւրապետին ըսաւ. —գնա, հաւատացածիդ պէս թող ըլլայ. առանկով հիւանդը բժշկուեցաւ:

Հ. Յիսուս ուրիշ ինչ հրաշքներ դործեց:

Պ. Յիսուս առնցմէ զատ խիստ շատ հրաշքներ դործեց. որբևարի ինկան մը մեռած տղան տղջընցուց. երկու անգամ ալ անապատին մէջ անօթի եղող հաղարներուն ժողովուրդը .քիչ մը հացով ու ձրկով կշտացուց. անգամ մըն ալ երբոր աշակերտները նաւով տեղ կերթային՝ Յիսուս դիշերանց ծովուն վրայէն .քալելով անոնց երեցաւ. և Պետրոս առա.քեալը Յիսուսի հրամայելովը ծովուն վրայէն .քալեց ու .քովը հասաւ. ան ամենէն զատ Յիսուս իր բոլոր կեանքին մէջ անթիւ անհամար հրաշքներ դործեց. կոյրերուն աչ.քը բացաւ, խուլերուն լսել տուաւ, կաղերը և դեւահարները բժշկեց, և երեն եւ կտղ բոլոր ժողովուրդը շատ մը առակներով կը .քարոզէր:

ԴԱՍ Գ

Յիսուս Քրիստոսի խօսած առակները։

Հ. Յիսուսի խօսած առաջին առակը ո՞րն է։

Պ. Օր մը Յիսուս Սիմոն փարիսեցիին տունը ճաշի գնաց. հոն մեղաւոր կին մը եկաւ, Յիսուսի ոտքն ինկաւ, լուալ և արցունքներովը ոտները կը թրջէր. մազերովն ալ սրբելէն ետքը կը համբուրէր ու ազնիւ եղ կը քսէր վրան. Յիսուս ալ Թոզ կուտար որ ընէ։ Երբոր Սիմոն զարմացաւ՝ Յիսուս անոր միտքը իմանալով —Սիմոն. ըսաւ. —երկու հոգի մարդու մը պարտք ունէին մէկը հինգ հարիւր, մէկալն ալ հիսուն դահեկան. պարտքին տէրը երկուքին ալ Թողուց. հիմայ ատ երկուքէն ո՞րն աւելի կը սիրէ զպարտքին տէրը. Սիմոն ըսաւ. —որն որ շատ պարտք ունէր նէ, անիկայ աւելի կը սիրէ զպարտքն տէրը. Յիսուս ալ պատասխանեց. —ես քու տունդ եկայ դուն Ջուր ոտքս չէ լուացիր. ասիկայ մէշտ ոտքերս լուաց ու մազերովը կը սրբէ. դուն պէս չէ համբուրեցիր, ասիկայ ոտքերս համբուրելէն չէ դադրիր. դուն եղով գլուխս չ'օծեցիր, ասիկայ օծեց. ուստի ես շատ սիրելուն համար Թողութիւն տուի իր մեղքերուն. ետքը կնկանը դարձաւ ըսաւ. —ուրախ եղիր քու հաւատք քեզ փրկեց։

Հ. Յիսուսի երկրորդ առակը ո՞րն էր։

Պ. Սերմանողականին այսինքն հունտ ցանողին մէկը իր հունտերը ցանելու ժամանակ անոնց մէկ մասը ճամբուն վրայ ինկաւ թռչունները կերան. մէկ մասը ապառաժ քարերու վրայ ինկաւ արմատ չը բռնելուն՝ ու տաքէն չորցան. որն ալ փշերու մէջ ինկան ու խղդուեցան՝ պտուղ չը տուին. մէկ մասն ալ աղէկ հողի մէջ ինկան ու պտուղ տուին մէկէն տեղ երեսուն կամ վաթսուն կամ հարիւր։

Հ. Երբայր ես որ առակէն բան մը չը հասկըցայ, կ'աղաչեմ միտքը ինծի հասկցուր։

Պ. Ա՛ս առակին միտքը ան ատենը աշակերտներն ալ չը հասկցան. ու երբոր Յիսուս միտքը հարցուցին նէ, Յիսուս ատանկ ըսինեց.—հունտերը Աստուծոյ խօսքերն են. ցանուած տեղերն ալ մարդոց սիրտերն են. աղէկ սիրտ չ'ունենալը Աստուծոյ խօսքը լսէ ալ նէ պտուղ չի տար. բայց թէ որ մէկը աղէկ սիրտ ունենայ նէ, Աստուծոյ խօսքերը սիրով կ'ընդունի ու համբերութեամբ շատ պտուղ կուտայ։

Հ. Յիսուսի երրորդ առակը ո՞րն է։

Պ. Թագաւոր մը ըսինեց իմացաւ որ իր ծառաներէն մէկը տասը հազար քանքար պարտք ունի. ապսպրեց որ գինը տալով տեղով ծախեն որ պարտքը վճարուի. ծառան թագաւորին պաղատելով խնդրեց որ երկնատեն տայ պարտքը վճարելու. թագաւորին սիրտը չարժելով բոլոր առնելիքը պարգեւ ըրաւ անոր. աս ծառան

ասելն մարդէ մը հարուր դահեկան առնելուն առնելը. պարաբկանը ազաչեց որ իրեն առնէ այդ ու պարտքը կը վճարէ. անիկայ. չէ կ'ըսեր. չ'ըլլար, ու բռնաց բանտը դնել տուաւ։ Ուրիշ ծառաներէն խեղճ մարդուն վրայ մեղքցան և գային Թագաւորին ըսին այս բանը. անառնը Թագաւորն ալ բարկանալով կանչեց պինդը. չար ծառայ, ըսաւ. ես քու ազաչանքիդ համար տասը հազար քանքար պարտքդ քեզի Թողուցի. պէտքը չ'ԷՒր որ դուն ալ հարկաւ դահեկան առնելուդ ան խեղճ մարդուն պարզևէիր. եսքը հրամայեց որ ան անիրաւ ծառան բանտը դնեն մինչուկ որ բոլոր պարտքերը վճարէ։ Այս առակով Յիսուս խմացնել ուզեց որ եթէ մենք իրարու յանցանքները չը նեղենք նէ, Աստուած ալ մեր յանցանքը չը նեղէր։

Հ. Յիսուսի չորրորդ առակը ո՞րն է։

Պ. Օր մը Յիսուս. մարդուն մէկը երուսաղէմէն Երիքով երթալու առեն ճամբան աւազակներէ ինկաւ. ան ալ ամէն ինչը տուաւ ու

որ խարճես ետ դառնալուս ամբողջ կը վճա-
բեմ։ Ցետոյ ան առակով հասկնալ ուզեց
թէ մարդիկ պէտք է որ իրարու ամէն կերպով
օգնեն. և թէ բարեգործութիւն ընելու կարո-
ղութիւն ունեցող մարդ մը, թէ որ ձեռքէն ե-
կածը ընել չ'ուզէ՝ մեղք գործած կ'ըլլայ։

Հ. Ցետոյ հինգերորդ առակը ո՞րն է։

Պ. Ցետոյ սեռնալով որ մեղաւոր մարդիկները
սիրելուն համար Հրէայները իրեն վրայ կը նե-
ղանան, անոնց ան առակը ըսաւ. —մարդ մը
թէ որ հարիւր ոչխար ունենայ ու մէկ հատը
կորնչի նէ, իննսուն և ինը ոչխարը լեռը կը
թողու ու ան կորսուածին ետևէն կ'երթայ կը
գտնէ ու թէ որ գտնայ նէ, շատ կուրախա-
նայ։

Հ. Ցետոյ վեցերորդ առակը ո՞րն է։

Պ. Մարդ մը երկու զաւակ ունէր. որ մը պըղ-
տիկ տղան իր ժառանգութեան բաժինը ուզեց
առաւ հօրմէն. հետո քանի մը դնոյ. բո-
լոր ունեցածը մսխեց. ու երբ մէկու մը քով
ծառայութեան մնաւ, և խոզ կ'արածէր. ին-
ալ անանկ անօթի էր որ շատ հոգ խոշորնե-
կերածէն ուտել կ'ուզէր բայց չէին տար։ Ա-
խեղճութեանը մէջ միտքն եկաւ որ իր հօրը
տանը մէջ ծառաները հանդիստ կ'ապրին ու
բանի մը կարօտութիւն չ'ունին. սիրտ ըրաւ
ճամբայ երթալ որ հօրը տունը երթայ և ապաչէ
որ ծառաներուն կարգը անցնի. երբոր հայրը

զինքը հեռուէն տեսաւ, մէկէն վազեց ու ըլ-
ղուն վիզը պլուեցաւ. տղան ամչնալով, —մեղայ
հայր, ի՛մսէր, արժանի չ՚եմ քու տղադ կոչ-
ուելու, զիս ծառայ տեղ քովդ ընդունէ.
բայց հայրը անանկ ուրախ էր որ մէկէն հրամ-
մելուն պէս ծառայները շուտ մը տղուն առջի
պուտր լաթերը բերին հագուեցուցին. փառա-
որ տեղան գրին և գիրցած եղը մորթեցին։ Ան
միջոցին տղուն մեծ եղբայրը տուն որ կուգար,
հարցուց ծառային թէ ատ ինչ ուրախութեան
ձայներ են որ կը լսեմ կոր, ու երբոր պատճա-
ռը իմացաւ, շատ նեղացաւ. վազեց հօրը քովը
և լաւ անոր. աչալուն տեսեր է որ քեզի հնա-
զանդեր եմ. ու ինծի բան մը չը տուիր, ու
դէշ եղբօրս այսչափ պատիւ կ՚ընես։ Հայրն ալ
լաւ անոր. —որդեակ իմ. ամէն ունեցածներս
քուկդ են, բայց ասիկայ կորսուած էր ու գըտ-
նուեցաւ. անոր համար պէտք է ուրախանալ—։
Ցետոս ատոր առակով Տասկցուց որ Աստուած
այնչափ սորմած է որ մեղաւոր մարդուն կոր-
սուիլը չ՚ուզեր. հապա անոր դարձի գալուն կը
նայի, և որոնոյ դիջում ընող մեղաւորին յան-
ցանքը կը ներէ։

Հ. Ցետոյ հօմնեղրորդ առակը ո՞րն է։

Պ. Հարուստ մարդ մը լսելով որ իր անառակ
մխիթարութիւն կ՚ընէ, ուզեց քովէն ճամբել, որ-
ոեսը ատ բանս լսելուն պէս մոմիտալով որ հա-
քը ապրուստ պիտի չը գտնայ. խելք մը գտաւ

որ անոր չատ բարեկամներ վաստկի. իր տիրո-
ջը պարտկան եղող մարդուկը կանչուց ու անոնց
պարտքերը մէյմէկ կտոր պահանջուց. տէրը
երբոր անտեսին աս խնդայութիւնը լսեց, շատ
հաւնեցաւ. ու գովեց զանիկայ: Ասոր վրայ Քրիս-
տոս իրեն մոխիկ ընտնեցուն ըսաւ. —Դուք ալ
ան անտեսին պէս մէկուն մէկալին մոլացը նե-
րեցէք, որ անոնք ալ ձեր Ս.Քրիստոսութիւն երթա-
լուն օգնեն:

Հ. Քիստոսի ուխտերցորդ առակը ո՞րն է:

Պ. Մեծատուն մարդ մը հոգված կտպված ա-
մէն օր ուտելու խմելու եռանէ էր. անոր գրանը
քովը ալ Ղազարոս անունով ողորմելի աղքատ մը
կը նստէր. որ ան մեծատունին սեղանէն ին-
կած հայի փշրանքներուն կարօտ էր. շներն
ալ կուգային անոր վէրքերը կը լզեին. երբոր
աս երկու մարդիկը մեռան, մեծատունը դժո-
քին մէջէն տեսաւ որ աղքատ Ղազարոսը Ս.Ք-
րիստոսութեան մէջ Աբրահամու գիրկը նստած էր.
ակաո կանչել, —Հայր Աբրահամ, ողորմէ ինձի
ղրկէ Ղազարոսը որ մատնին ծայրովը ջուր
տայ ու լեզուն պաղչկի և ծարաւը անցնի. Աբրա-
համ ալ —չ'լսեր ըսաւ. —մէյ մը միտքդ բեր
աշխարհին մէջ բրածներդ և Ղազարոսին քաշած-
ները: Ան առնիլ մեծատունը նորէն ապաղա-
չեց ու ըսաւ. —Կ'աղաչեմ քեզի հայր Աբրահամ
հիչ չ'ես ուղ մարդը հօրս տունը ղրկէ որ եր-
թայ եղբայրներուս խնդայունէ, չ'ըլլայ որ անոնք

ալ այս տանջանքին մէջը գան։ Աբրահամ պա-
տասխանեց ,—Թէ որ անոնք լսած ու կարդա-
ցած խրատներնին չ'ունի պահեր նէ , մեռելներէն
մէկն ալ յարութիւն առնէ , երթայ իրենց ըսէ
նէ. մոխիկ չ'ունի ըներ։ Յիսուս ատ առակով
հասկցուց որ աշխարհիս ամէն վարդերը և վա-
յելչութիւնները ոչինչ բաներ են՝ հապա պէտք
է որ մարդ անդիմի աշխարհքը միտքը բերէ և
աղքատներուն ողորմի։

Հ. Յիսուսի ննջեցրած առակը ինչ է։

Պ. Յիսուս ուզելով հասկցնել Թէ աղօթքը ո՛ր-
չափ պէկ է. ատ առակը բաւ. —Դատաւոր մը
կար որ Աստուծմէ չ'էր վախնար ու մարդկինե-
րէն ալ չ'էր ամչնար. Որբևարի կնիկ մըն ալ
կուգար ամէն օր իրեն կ'ապահէր որ իր դատա-
ստանը կտրէ. օր մը դատաւորը ինքնիրեն ըսաւ
—Ես Թէպէտ Աստուծմէ չ'եմ վախնար՝ ու մարդ-
կիկներէն ալ չ'եմ ամչնար. բայց ատ որբևարի-
ն դատաստանը առանեմ, ապահիմ ձեռքէն։
Թէ որ, ըսաւ Յիսուս. անիրաւ դատաւորը կըն-
կանը չատ ապահրուն չը կրցաւ դէմդնել նէ,
հապա Աստուած ինծոր չողորմի իրեն ապահ-
ղին։ Ասոնցմէ զատ Յիսուս շատ առակներ ալ
խօսեցաւ և անոնցմով ժողովուրդը կը խրատէր.
բայց Հրեայները իրեն հաւատալ չ'էին ուզեր։

Քրիստոսի ուրիշ խօսքերը ու ըրածները։

Հ. Ընչա՞յդ ա.քանչելի հրաշ.քները և ա՞ռակները որ քեզմէ կը լսեմ, ինծի յայտնի հա՞մարձակ ըսել կուտան որ, Քիւրս Քրիստոս ճըշմարիտ Աստուած ու Աստուծոյ որդի է։ արդ՞ւօք Հրէայները ինչու չը հաւատացին իրեն Աստուածութեանը։

Պ. Նախանձոտ ու չար սիրտ ըլլալուն համար։ մէյ մըն ալ որ Քիւրս միշտ իրենց կ'ըսէր—Դու.ք մեղաւոր էք։ ապաշխարեցէ՛ք որ Աստուծոյ Ա.ր.քայու.թիւնը մոնալու արժանի ըլլա.ք—։ առիթը անոնց ձեռք կ'ուզար։ Անդամմըն ալ Տաճարին մէջ Քիւրսի ըսին թէ —դուն կ'ըսես որ իրաւցնէ Մեսիան այսինքն Քրիստոս ես նէ, մեզի ըսէ։ Քիւրս ալ պատասխան տուաւ թէ,—ես ձեզի ըսեր եմ։ բայց դու.ք չ'էք ուզեր հաւատալ։ որովհետև իմ ոչխարներէս չ'էք։ և Հօր Աստուծոյն ալ չ'էք, վասն զի ես ու Հայրս մէկ ենք։ Սա խօսքին վրայ Հրէաները մեկէն ինքը քարկոծել ուզեցին, բայց անկայ մէջերնէն խոյսեցաւ։

Հ. Քրիստոս այնչափ հրաշ.քները և կարողա.թիւնները ինչը մինակ կ'ընէր։

Պ. Այ՛ն, բայց իրեն եկող ժողովուրդին մէջէն տասն երկու հոգի ընտրեր իրեն աշակերտ ըրեր էր։ ա՛ս տասն երկու.քին անուններն՝ Պետրոս,

Պետրէաս, Յակովբոս, Յովհաննէս, Փիլիպպոս, Բարթողիմէոս, Թովմաս, Մատթէոս, Յակոբոս Ալփեան, Թադէոս, Սիմոն կանանացի, Յուդա Իսկարիովթացի. Յիսուս ասոնց շատ մը պատուիրանքներ տուաւ ու ապին անոնք ղրկեց քարոզելու համար. ասոնք առաքեալ ըսուելան, որ ղրկուած ըսել է. ասոնք շատ տեղեր պըտըռեցան Հրէաստանի մէջ. և Յիսուսի անունովը քարոզութիւններ ու հրաշքներ ըրին: Ասոնցմէ եօթը Յիսուս եօթանասունները հատ ալ ուրիշ աշակերտներ ունեցաւ, և անոնց ալ ապրանքները ընել տուաւ:

2. Յիսուս իր քարոզութիւններուն մէջ ժողովուրդին ինչ սովրեցուց:

3. Յիսուս իր քարոզութիւններուն մէջ սովրեցուց, ճշմարտութիւնը սիրել. սուրբ և ուղիղ պատուի Աստուած ճանչնալ և պահիկայ մարդուր խղճմտանքով պաշտել. հեղ, խոնարհ, ընկերասէր, եղբայրասէր ու մարդասէր ըլլալ. կեղծաւորութենէ փախչիլ. հպարտութիւն չընել. քէն չը պահել. բանբասանք չընել. սուտ չի խօսիլ. երդում չընել. աշխարքի վրայ աւելորդ հոգեր չունենալ. և ուրիշ ասոնց նման բաներ:

4. Յիսուս իր Աստուածութիւնը յայտնի նշանով մը Աւազեաններուն ցուցուց:

5. Յիսուս իր քարոզութեանը երկրին տարին Պետրոս, Յակոբոս ու Յովհաննէս առաքեալները հետը առած թափոր ըսուած լեռը երաւ.

հան Յիսուսի կերպարանքը բոլորովին փոխուեցաւ. երեսը արեւի պէս փայլուն ու հագուստը ձիւնի պէս ճերմակ եղան. ան առեղը Մովսէս ու Եղիա մարգարէներն ալ երեւցան՝ ու Յիսուսին



հետ խօսելնան թէ պիտի չարչարուի ու մեռնի. երբոր Մովսէս ու Եղիա գացին՝ Պետրոս ակաւ ազաչել որ հոն մնան. ան առեղը մէկ լուսաւոր ամպ մը եկաւ ծածկեց զիրենք. ձայն մըն ալ եկաւ որ ի՛ըսէր. «ասիկայ իմ սիրական որդիս է, ատոր մտիկ ըրէք» . առաքեալները վախցան ու պառկիլը բնկան. Յիսուս գիրենք ատք հանեց և ազատրեց որ ան եղածնները մէկուն ալ չըպատմեն, մինչև որ ինք մեռելներէն յարութիւն առնէ:

Հ. Առաքեալները ինչ կարծիք ունէին Յիսուսի Աստուածութեանը վրայ:

Պ. Անդամ մը Յիսուս առաքեալներուն հարցուց թէ՝ ժողովուրդը երեն հոմար ինչ ի՛ըսէ. անոնք

ալ ըսին որ , որը Յովհաննէս Մկրտիչն ես կ՚ըսեն . որը եղիան . որը երեմիան . կամ ալ ուրիշ մարգարէներէն մէկը . ան ատոնը Յիսուս անոնց հարցուց . —հապա դուք ինծի համար ինչ կ՚ըսէք . Պետրոս Սիմէն պատասխան տուաւ՝— դուն ես Յիսուս Քրիստոսը կենդանի Աստուծոյ որդին ։ Յիսուս երանի տուաւ Պետրոսին ու ըսաւ անոր —թէ այդ խօսքին վրայ պիտի հաստատէ իր տունը եկեղեցին որ դժոխքէն ալ չը յաղթուի պիտի . ամէն հոգը Յիսուս սկսաւ պատմել երեն քահանաներէն չարչարանքներէն մեռնիլը ։

Հ. Յիսուս իր աշակերտներուն ինչ զգուշացուց խմոր տուաւ ։

Պ. Յիսուս իր աշակերտներուն զգուշացուց խմոր տուաւ խոնարհութենէն . անգամ մը ճամբան երթալու ատեն , աշակերտներուն մէջ խօսք եղաւ թէ՝ Յիսուս երբոր թագաւոր ըլայ նէ երեսունմէկ ալ պիտի մեծ ըլայ . Յիսուս ան խօսքը լսելով ըսաւ անոնց . —Ձեր մէջէն մեծ ըլալ ուզողը պզտիկ պիտի ըլայ . պզտիկ տղայ մըն ալ առաւ գիրկը և ըսաւ . —ըսի որ ան տղուն պէս խոնարհ ու անմեղ չ՚ըլաք , Աստուծոյ չ՚երթաք երթալ ։ Ուրիշ անգամ մըն ալ մանր տղաք բերին Յիսուսի առջեը որ օրհնէ . ու երբոր աշակերտները թող չ՚էին խոտոր որ Յիսուսի նեղութիւն չ՚ըլայ . Յիսուս ըսաւ անոնց ,—թողէք որ գան , արքայութիւնն ասոնկ պզտիկներուն

է. Եւ զանազ դէրքը առնելով սկրեց ու օրհնեց։



Հ. Եղբայր մեծցար ինձի ըսելու որ Յովհաննէս Մկրտիչ Յիսուսը մկրտելէն ետքը ինչ ըրաւ։

Պ. Յովհաննէս Մկրտիչ Յիսուսը մկրտելէն ետքը երբոր Հերովդէս Թագաւորին բրած չարութիւնները երեսին կը պարնէր ու զանիկայ կը խրատեր, Հերովդէս բռնոց գինքը բանտը դրաւ երկու տարի հոն պահելէն ետքը Հերովդիա անուն կնկան մը ազդիկը, որ մը Հերովդէսի ա-

չևը խաղաց. Հերոդէս ալ աղջկանը խաղալուն շատ հաւնելով երբար անար ընծայ մը տալ կ'ուզէր, աղջիկը իր մօրմէն խրատուած ըլլալով, ծալհանիէսին գլուխը ուզեց։ Հերոդէս իր խօսքը տեղը տանելու համար մարդ խրկեց ծալհանիէսին գլուխը կտրել բերել տուաւ։ Եւ գնաց կերտանելը եկան մարմինը թաղեցին ու եկան Յիսուսին լսեց տուին աս եղածը. բայց Յիսուս համարձակ տալին անդին կ'երթար, Աստուծոյ Արքայութիւնը ամենուն կը քարոզէր. և երբար հրեն չարչարուելու օրերը մօտիկցան, առաքեալներուն հետ Բեթանիա գնաց տեղէն եւ որ երուսաղէմ գայ. աս բանը Քրիստոսի քարոզութեան երրորդ տարին պատահեցաւ. այսինքն Քրիստոսի մկրտուելէն երեք տարի հետը։

Հ. Եղբայր կ'ապաշխեմ որ աս գործը չը լմնցուցած ինձի ըսես թէ Քրիստոս իր աշակերտանեըուն ինչ աղօթք սորվեցուց քի, ես ալ ան աղօթքը ընեմ ամէն օր։

Պ. Քրիստոս իր աշակերտանեըուն աս աղօթքը սորվեցուց. Հայր մեր. որ յ'երկինս, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի. ընդհայր մեր հանապազորդ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ'ի փորձութիւն. այլ փրկեա զմեզ'ի չարէ. զի քո է

արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն։

Թոփտ. Ո՛վ մեր Հայրը, որ երկինքին մէջն ես, քու անունդ սուրբ ըլլայ. քու թագաւորութիւնդ գայ. կնատր որ երկինքին մէջ, անանկ ալ աշխարհիս վրայ քու սուրբ կամքդ ըլլայ. մեր ամէն օրուան հացը այսօր ալ մեզի տուր. ու մեր մեղքերը մեզի ներէ՝ կնատր որ մենք ալ մեզի դէմ մեղք գործողներուն կը ներենք. ու մեզի փորձութեան մէջ մի ձգեր, հապա մեզի ազատէն չարէն վրկէ. որովհետև յաւիտեանս յաւիտենից քունդ է արքայութիւնը, զօրութիւնը և փառքը. ամէն։ Ես կ'ուզեմ որ դու ինծի քիչ մը ուրիշ բան ալ ըսես. ինչո՞ւ որ Տէրունական աղօթքը կ'բսվի։

ԴԱՍ Դ.

ԾԱՂԿԱԶԱՐԴ

Քրիստոսի մատնուելէն մինչեւ Յարութիւն առնելը։

Հ. Քրիստոս ի՞նչպէս երեւցաւ մեռած։

Պ. Երբոր Բեղեմական գալով Զեբեդեայ որդիները հասաւ՝ երկու աշկերտ երկուց դիմացի գեղն ու ըսաւ որ հոն կապուած էշ մը կայ իր քովը, առէք, առնեն բերեն. և մէկ որ հարցընող մը ըլլայ, իր տիրոջը պէտք է ըսեն. աշակերտ-

Ներըը գային ու Յիսուսի ըսածը կատարեցին, և լաթերնին ան կենդանիին վրայ ձգելով Յիսուսը հեծցուցին. ու ահաւասիկ երուսաղէմ մեծաժողովուրդն ալ ասմաւենիի ու ձիթենիի ճիւղեր բռնած դիմացը գան ու հարցնել պետիմ



փռելով ամէնքը միասին մեծ ու պզտիկ սկսան աղաղակել. — Դաւիթին որդին օրհնեալ է. օրհնեալ եկեալ յանուն Տեառն. օրհնեալ է բարձունս — : փարիսեցիներն ու կարգապետները սասիկ նախանձելով Յիսուսի ըսել թէ՝ — տեսնե՞ր որ ասոնք չը պոռան—

Յիսուս ալ բսաւ • — Թէ որ սոսնք չ'լսեն , քա֊
բերը կը կանչվըտաեն • — եւ.քը երուսաղէմին
մօտենալով Յիսուս լացաւ ան քաղքին վրայ •
— վայ քեզի երուսաղէմ — • ըսաւ • — որ չը
ճանչցար քեզի եղած բարկ.քը , անոր համար
պիտի կոտրուիս — ։

Հ• Յիսուս երբոր այս հանդէսով երուսաղէմ
մտաւ նէ՝ ինչ ըրաւ ։

Պ• Մտաւ տաճարը և հոն տեսաւ որ շատ մը
մարդիկ առուտուր կ'ընէին • զամէնքը դուրս
վռընտեց ըսելով Թէ՝ — իմ Հօրս տունը աւա֊
զակներու այր այսինքն մաղարայ մ'ընէք — •
եւ.քը շատ կոյրեր ու կաղեր բժշկեց , և երկ֊
ուան դէմ նորէն բնթանիս դնաց • բայց փարի֊
սեցիները եւևէն լնկան որ զինքը բռնեն մեռ֊
ցընեն ան շաբթուն ։


Հ• փարիսեցիները և կարդացողները Յիսուս ին֊
սո՞ր բռնել ուզեցին ։

Պ• Յաւկէն երկու օր առաջ ամէնքն ալ կա֊
յիափա անունով քահանայապետին տունը խոր֊
հուրդ ժողվեցան ու խօսք դրին որ Յիսու֊
սը մեռցընեն • բայց կը վախնային որ Յաւկի օ֊
րեր ըսելով ժողովուրդը ոտք կ'ելլայ ։ Ան աոե֊
նը սատանան՝ Յիսուսի աշակերտներէն Յուդա
Իսկարիովտացին վորը մտաւ • ու դնաց քահա֊
նայից • — Յիսուսը ես կը մատնեմ, ինձի ինչ
կուտաք — • անոնք ալ ուրախացան ու երե֊
սուն արծաթ տալ խոստացան ։

Հ. Յուդա ինչը մատնեց Յիսուսը ։

Պ. Բաղարջակերաց ըսուած ոճնին առջի երեկոյնը, որ զատկին գառը Յիսուսին հետ ուտելէն և Յիսուսի Մարմին ու Արեանը պատարագը սեռնալէն ու ճաշակելէն ետքը, դնաց իր Տէրը Ծատուածը մատնեց ։

Հ. Յիսուս զատկին գառը ո՞ր կերաւ ։



Պ. Երուսաղէմին մէջ, և առանկ եղաւ. Յիսուս առաջ Պետրոս ու Յովհաննէս առաքեալները ղրկեց ու ըսաւ. — քաղաքը մտնալնուդ պէս՝ կռնակը չուրկ կուժ մը առած մարդու մը կը հանդիպիք. անոր երթայք դայէք և անոր մեծ ուժ ունին սիրտը ըսէք. «Վարդապետին «առնը հասեր է, կ'ուզէ որ զատիկը քու «տունդ ընէ» ։ Ան ալ ձեզի պզուր զարդարուն վերնատուն մը պիտի հանէ, հոն պատրաստուցէք սեղանը — ։ Եարը երթալու դէմ ինք ալ երթալ դնաց. ու երթալ ուրիշ նատան Յիսուս ըսաւ. — շատ կ'ուզէի որ աս ժամը հասնի. և իր աւարքեալներուն շատ մը սիրոյ

խօսքեր ընելէն եւս քը բաւ ար՝ — Ձեր մէջէն մէկը իս պիտի մատնէ : Այս խօսքին վրայ ամէն քն ալ խռոված սկսան իրարու հարցունել Թէ արդեօք ես եմ. Յիսուս բաւ . — Ինծի հետ ձեռք կերակուրին երկնցրածը պիտի մատնէ զիս . Յուդան ալ հարցուց . — Թէ ես եմ. Յիսուս ըսաւ . — դուն ըսիր : Կերակուրին ըլլալու ատենը Յիսուս հաց մը առաւ օրհնեց , կտրեց և իր աշակերտներուն բաժնելով ըսաւ . — Առէք կերէք այս է մարմին իմ : Եւ գինի ալ պատմ մը դինի առաւ օրհնեց ու աշակերտներուն տալով ըսաւ . — Խմեցէք ասկէ , որովհետև ասիկայ իմ արիւնս է , սուրբ Գառնարարը հաստատելու ու ապաստերց որ ան խորհուրդը իր յիշատակին համար ամէն առնն ընեն :

Հ. Կերակուրէն ետև Յիսուս ինչ ըրաւ :

Պ. Եւ քը Յիսուս աշակերտներուն ոտքերը լուաց , բայց Պետրոս Թոյլ չի տուաւ . Յիսուս ըսաւ անոր . — Թէ որ չը լուամ նէ՝ ինծի հետ տնան չ'ես ունենար . Եւ քը ամէնուն ալ ըսաւ . — Ինտրէ որ ես խոնարհութիւն ընելով ծառայի պէս ձեր ոտքերը լուայի՝ անանկ ալ դուք մէկ մէկու ոտանկ ընէք :

Հ. Յիսուս առաքեալներուն ոտքերը լուալէն ետև ինչ ըրաւ :

Պ. Առաքեալներուն ոտքերը լուանալէն ետ քը , Յիսուս նստաւ քիչ մը խօսքեր ըրաւ խոնարհութեան , սիրոյ և աստուածպաշտութեան

վրայ. Եւս դարձաւ Յուդային ըսաւ. Ինծոր որ պիտի ընես նէ, դնա շուտով ըրէ. Յուդա ըստ ըրածին սատանային բռնուած ըլլալով մէկէն եւ ըսաւ Յիսուսը մատնելու դնաց. Մէկալ առաքեալները անանկ դիտցան որ Յիսուս պէնիքը բանի մը կը խրկէ, անոր համար ձայն չը հանեցին. անկէ Եւս Յիսուս շատ խօսքերով հասկըցուց թէ ինքը մեղի շատ կը սիրէ. և թէ քիչ ժամանակէն պիտի բաժնուի: Երբոր առաքեալները սիրտերնին Եւս աւծ անոր ամէն խնդիրները պիտի կ'ընէին, իրենց ըսաւ. — Դուք պիս երեսէ վրայ պիտի ծորիք ու հեռանաք. բայց անոնք Չէ կ'ըսէին. ամենէն էվել Պետրոս առաքեալը կ'ըսէր որ — կը մեռնիմ քեզի հետ ու չ'եմ բաժնուիր: Յիսուս ալ ըսաւ անոր. — Պետրոս դիտցած որ աս գիշեր դուն երեք հեղ պիտի ուրանաս. բայց անիկայ, չ'ե կ'ըսէր. անկէ Եւս գիշերանոց եկան Գեթսեմանէ կոչուած պարտէզը մտնելու գացին:

Հ. Յուդա ինչո՞ր Յիսուսը մատնեց:

Պ. Յուդա Յիսուսին քովէն երթալուն պէս հասակ Հրէայներուն քովը գնաց, անոնք ալ հեռուէնին գինուորներ առած գիշերանոց լապտերներ վառեցին՝ սուրերով ու բիրերով եկան Յիսուսը գտան որ պարտէզի մը մէջ աղօթք կ'ընէր. Յուդա նշան տուեր էր որ ինչ որու որ մօտենայ համբուրէ նէ անիկայ է Յիսուսը. ու երբոր Յիսուսը կը համբուրէր, Յիսուս ըսաւ

անոր ։ — Յուդա՛, համբուրելո՞վ ինձ կը մատնես ։ ան խօսքէն մատնիչ Յուդային սիրտը տակն



ու վայ եղաւ և ըրած դէշութիւնը վրայ պըղ-
չաց ։ բայց ինչ օգուտ որ ամէն բան ըընծեր
էր ։ գինուորները Յիսուսը առին տարին Անան
բուռած քահանայապետին տունը ։ իսկ առա-
քեալները ամէնն ալ ձգեցին փախան ինտոր որ
Յիսուս առաջուց բաժ էր ։ միայն թէ Պետրոս
ալ ետ եկած հետևէն Յիսուսի եռևէն կ'երթար ։

Հ. Հրէաները Յիսուսը ինսոր չարչարեցին ։

Պ. Անան քահանայապետին տունը որ տարին ,




հան մէկը Ծիտուն երեսին ապտակ մը զարկաւ. եաքը կախուելա ըսուած քահանայապետին տունը տարին ու սկսան նախատել, զարնել, երեսին թ.քնել, գլուխն ալ լաթ մը ձգելին ու զարնելով կ'ըսէին. — Թէ որ Քրիստոսը դուն ես նէ ըսէ նայինք քեզի զարնողը ո՞վ է. ասիկա ժամանակս Պետրոս ալ գուրսը սրահը կրակին քով նըստած էր. մէկը եկաւ երեն հարցուց Թէ՝ — դուն ալ Ծիտուին հէնց էիր. անիկայ վախնալուրացաւ ու ըսաւ. — ոչ. քիչ մը եաքը ուրիշ մըն ալ եկաւ հարցուց. Պետրոս նորէն ուրացաւ. եաքը ուրիշ մըն ալ այնպէս ըսաւ. Պետրոս երբ նորէն ուրացաւ, այն ատեն Ծիտուս իր չարչարուած տեղէն գլուխը Պետրոսին դէմ դարձուց. մէկէն Պետրոսին միտքը բնկաւ Ծիտուին այն խօսքը որ ըսեր էր Թէ՝ — աս գիշեր երեք հեղ դիս պիտի ուրանաս. ու դնաց շատ արցունք Թափեց ու գիշայ լռութին վրայ. նոկ առին կայիափա քահանայապետը հրամմեց որ Ծիտուը ըլ սպաննեն։ Ընոր համար առին Պիղատոս ըսուած դատաւորին տարին։

2. Պիղատոս Ծիտուին ինչ ըսաւ։

3. Պիղատոս ուզեց ջնորհ Ծիտուը. բայց ժամա անար հարցմանքներուն պատասխան չ'ելր խաւար. Պիղատոս Ծիտուին անմեղ ըլլաը հասկըցաւ. և երբոր ազատ Թող տալ կ'ուզէր, հրեաներըը ատ կոխեցին ու կ'ըսէին. — 'ի խաչ հան, 'ի խաչ հան զը։ այսինքն այդ մարդը



խաչը հանէ. ան առնն Պիղատոս իր ձեռուըներըը չուրսյ լուայ ու ըսաւ. — Ես այս մարդուն արիւնէն անպատճառ եմ. ետքը իր զինուորներուն ձեռնել տուաւ Յիսուսը, և Հրէայներուն ըսաւ որ երթան ուզածնին ընեն. անոնք ալ խաչ մը դրին Յիսուսի կռնակը և գողդոթա բլուրը տարած ըլլալով անոնցով խաչը հանեցին. երկու կողմն ալ մէյմէկ աւազակներ խաչեցին։




Հ. Եղբայր, կ'ուզեմ որ ինծի ըսէ որ մանուկ Յուդան Յիսուսի աս խեղճութեանը պատճառ դուս մայաւ։

Պ. Յուդա Ճիտասին քաշած աս խեղճութիւնները տեսնելով և գիտնալով որ պատճառը ինք եղեր է. մտայ ըսելու տեղ դնայ ինքզինքը կախեց. Թէ որ պատանդ մտայ ըսեր նէ Ճիտաս Քրիստոս անոր Թողութիւն կուտար ու մեղքերէն կ'ազատէր։

Հ. Հրեաները Ճիտասը խայտ հանելով սիրտերնին հանգիստ եղաւ։

Պ. Ջ'է, հապա ամէն կերպով կը նայէին որ սիրտը կրակծցունեն. անոր համար խաչին վրայ եղած տեղը պիտի, գինքը կը հայհոյէին ու կը ծաղրէին. — Թէ որ աստուած ես նէ, կըսէին ինչո՞ւ առանկ կեցեր ես. վար իջէր որ քեզի հաւտանք. ուրիշներն ալ կ'ըսէին. — աս նայեցէք, ուրիշները կ'ազատէր, ինքզինքը ինչո՞ւ չը կրնար կոր ազատել. մէկն ալ կ'ըսէր. — Թէ որ աստուած քեզի կը սիրէ նէ՝ Թող ազատէ մեր ձեռքէն. երեն հետը խաչուած աւազակներէն մէկն ալ առանկ կծու խօսքեր ըսեց ու դարձաւ Ճիտասին մեղայ կանչեց. ան տեղը Ճիտաս ալ աս աւազակին ըսաւ. — այսօր դուն ինծի հետ պիտի ըլլաս դրախտին մէջը. Ճիտասին խաչին տակը կայներ էին Մարիամ Աստուածածինը և Յովհաննէս առաքեալը. Ճիտաս Յովհաննէսը ցուցընելով Մարիամին ըսաւ. — ահա տակէ քոյրը, քու որդիդ աս է. անոր համար անկէ ետքը Յովհաննէս միշտ Աստուա-



ժամային հետը բնակեցաւ ։

Հ. Յիսուս խաչին վրայ իր Աստուածութեանը յայտնի քանի՞ նշան ցուցուց ։

Պ. Երթը. առաջին՝ որ աջակողմեան աւազակը դարձաւ իրեն մեղայ ըսաւ. երկրորդ՝ որ խաչելչին երեք ժամ հետը ժամը վեցէն մինչև ինը արևը խաւարեցաւ ու երկինքը դիշերուան պէս մթնեց. երրորդ՝ տաճարին վարագոյրը վերէն ի վար պատռեցաւ. չորրորդ՝ ապառաժ քարերը ինքնիրեննուն ճեղքուեցան. հինգերորդ՝ դերեզմաններէն մեռելներ ողջնցան եկան. վեցերորդ՝ Յիսուս ինքը մեռնելու առեն Հօր Աստուծոյ ակաու աղաչել թէ՝ ինչու զինքը թողուց. եօթերորդ հոգիս քու ձեռքդ կուտամ բսելով մեռաւ. անանկ որ խաչին քովը կայնողները վախնալով իրարու կ'ըսէին. — Իրաւցընէ սա Աստուծոյ որդին է եղեր. եօթնեորդ՝ երբոր մեռնելէն ետքը փորձի համար նիզակով կողին բարկին, կողէն արիւն ու ջուր վազեց. Յիսուսի մեռնելէն ետքը Յովսէփ և Նիկոդեմոս

անուանուլ Հրէայ իշխաններըը որ շատ բարեպաշտ էին. պիղատոսէն հրաման առնելուլ եկան Յի-



սուսը խաչէն վար առնեն ու թաղեցնեն դերեզմանի մը մէջ, ուրկէ երեք օրէն յարութիւն առաւ:

Հ. Յիսուս ինչպէս յարութիւն առաւ:



Պ. Յիսուս Քրիստոսի մեռնելէն երեք օր ետքը այնքան կիրակի առաւոտ, քանի մը բարեպաշտ կիներ երան անոր դերեզմանին վրայ գացին. մէյ մըն ալ երկինքէն հրեշտակ եկաւ.

ղերեզմանին. քարը մէկդի գլորուց. ու եկած
հնիկներուն ըսաւ. — Ճիտասը կը վրնտրուէք,
բայց անիկայ հոս չէ. հապա յարութիւն ա-
ռաւ. հնիկները վախցան, ու զարմացած իրա-
րու կը նայէին. մէջերնուն մէկը Մարիամ, ե-
ռելը դարձաւ ու տեսաւ Ճիտասը, և պարտիզ-
պան կարծեց. բայց Ճիտաս իր ձայնը հանելով
Մարիամ դանիկայ ճանչցաւ ու վազեց որ ոտք-
բուն պաուի. Ճիտաս թող չը տուաւ. — դնա»
ըսաւ. աս եղածը ուրիշներուն պատմէ։



Հ. Ճիտաս յարութիւն առնելէն ետքը քանի
ըրաւ։

Պ. Քառասուն օր կեցաւ աշխարքի վրայ, շատ
անգամ աշակերտներուն երեւցաւ ու հրաշքներ
գործեց. քառասուն օրէն ետքը գամէնքն ա-
ռաւ Հիմեոնեայ լեռը տարաւ. հոն օրհնեց
գերեզնք, լոսք տուաւ որ Հոգին Սուրբը խրկէ
իրենց. ու ինքը անոնց աչքին առջեւ ամպերուն
մէջ վեր եղաւ. և երկինք համբարձաւ. երբոր

Ա.ռաքեալներէն աչքերնին անկած՝ կը նայէին երկու Հրեշտակ երեւցան ու ըրին ըսին. —Ի՞նչ ղարմացած երկինք կը նայիք. դիտցէք որ Յիսուս ինչպէս հիմայ համբարձաւ, նոյնպէս ալ օր մը պիտի գայ. անոնք ալ Աստուծոյ գաւաք առին և ուրախութեամբ երուսաղէմ դարձան։

2. Յիսուս ինչպէս Հոգին Սուրբը ետք պիտի տայ Ա.ռաքեալներուն։

Ա. Ա.ռաքեալները Ծուղային տեղ Աստուածամօր



վիճակով երկնից ընկեր ընելէն ետքը, երբոր համբարձման տասներորդ օրը մէկտեղ ժողվուած աղօթք կ'ընէին, յանկարծ երկինքէն աստիճ հոլի ձայն գալով տունը լեցուեցաւ, և ամէն մէկուն վրայ կրակէ լեզուներ երեւցան. երկնքէ ալ սկսան ամէն տեսակ լեզուներէն խօսել. ասոնց ըլ տեսնալուն օրը երկ.ք հազար երուսաղէմացիներ Յիսուսի Աստուածութեանը հաւատացին ու մկրտուեցան. բայց չար սիրտ Հրեայները ամէն

առեալ նեղութիւն ու հալածանք կ՚ուտային ան քրիստոնեայներուն ։

Հ. Աւազակներըը Հոդին Սուրբ առնելնուն ետքը ի՞նչ ըրին ։

Պ. Ամէն օր աղօթք կ՚ընէին , քարոզներ կը լսէին , հիւանդներ կը բժշկէին , չար մարդիկներ կը խրատէին , անզգամներըը կըպատժէին ու աշակերտներ կ՚աւելցնէին . Հրէաներըը կատաղած Ստեփաննոս անունով Ս. սարկաւագը քարկոծեցին . Պօղոս անունով Հրէայ մըն ալ նախ հակառակ էր քրիստոնեայներուն որ սեսածը կը ծեծէր ու կը բռնէր բանտը կը դնէր . բայց Աստուած սեսիլով մը Պօղոսը իր չար ճամբէն ետ դարձուց և իրեն առաքեալ ըրաւ . ասոնք առաքեալներըը աշխարհիս չորս կողմը գացին Քրիստոսի Սուրբ Աւետարանը քարոզեցին և իրենք ալ մէյմէկ տեղ կատարեցին սպանուելցան . բայց քրիստոնէութիւնը օրէ օր ծաղկեցաւ . Ս. Հայրապետներ , վարդապետներ և լան եկեղեցիներ շինեցին , օրէնքներ դրին , ու մինչև ասօր մեզի բերին Հասուցին Քրիստոսի Ս. Աւետարանը ։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՔՐԻՍՏՈՍԻ Ս. ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԱՆՈՐ ՕՐԷՆՔՆԵՐԸ

ԳԱՍ Ա.

Հինն ու նոր ևկեղեցիներուն պատուիրանքները։

Հ. Եղբայր, աշխարհիս ստեղծուելէն մինչև քրիստոս և առաքելոց ըրածները պատմեցիր, Աստուծոյ մեզի համար գործած ամէն պէտքերը հասկցուցիր. հիմայ այս ամէնը գիտնալէս ետքը՝ երբոր քրիստոս Աստուածը թեւանն հաւատամ ևէ, ճշմարիտ քրիստոնեայ չ'ևմ ըլար, ու մեռնելէս ետքը Ս. Արքայութիւն չ'ևմ երթար։

Պ. Ոչ՝ մարդ մը աշխարհիս մէջ բոլոր եղածները գիտնալով և քրիստոսի Աստուածութիւնը հաւատալով, ոչ ճշմարիտ քրիստոնեայ կ'ըլայ, ոչ ալ մեռնելէն ետքը Ս. Արքայութիւնը կ'երթայ. որովհետև հինգր որ պօղոս առաքեալը կ'ըսէ, «հաւատք առանց գործոց մեռեալ է. և գործք առանց հաւատոյ»։

Թոմաս. Առանց գործքի հաւատքը մեռած է. անանկ ալ առանց հաւատքի գործքերը։

Հ. Այդ ըսածիդ միտքը չը կրցայ հասկնալ. կ'աղաչեմ որ կրնայր ինծի աղէկ մը բացատրէ։

Պ. Այս բանը քեզի ապէկ մը հասկցանելու համար օրինակ մը տամ. սեպհնք որ հեթանոս մարդուն մէկը որ Քրիստոսի Աստուածութեանը չը հաւատար. ի՛նչպէս չաս ապէկութիւններ կընէ. աղքատներուն ողորմութիւն կուտայ. մարդ չը բամբասեր. մէկու մը պէշութիւն ընել չ՚ուզեր. արբշռուն վրայ կը խղճայ. չը հայհոյեր. իր բարեկամները և ընկերները կը սիրէ. բայց աս մարդը մեռնելէն ետքը Ա.Ր.քայութիւն չ՚երթար, որովհետև դուժ.ք ունեցաւ՝ հաւատ.ք չ՚ունեցաւ. ուրիշ մարդ մըն ալ ամէն բան պիտէ ու Քրիստոսի Աստուածութեանը կը հաւատայ. բայց ձեռ.քէն եկած ապէկութիւնը ուրիշին չ՚ընելէն զատ՝ իրեն շահուն համար ամէն բան կ՚ընէ. զոր օրինակ կեղծաւորութիւն, սուտասութիւն, անիրաւութիւն, նախանձութիւն, բամբասանք և այլ ուրիշ ատոնց նման բաներ. այս մարդն ալ մեռնելէն ետ.քը Ա.Ր.քայութիւն չ՚երթար. որովհետև՝ հաւատ.ք ունեցաւ բայց դուժ.ք չ՚ունեցաւ. սիտ պօղոս առաքեալին լաւ.բին միտքը աս է։

Հ. Ուրեմն ճշմարիտ քրիստոնեայ ըլլալու և մեռնելէս ետ.քը Ս. Ա.Ր.քայութիւն երթալու համար ի՞նչ ընելու եմ։

Պ. Պէտ.ք է որ եղբայր. սրտով ու դուժ.քով ին.քդին.քդ. Քրիստոսի հաւատա, անոր ամենասուրբ լաւ.քերը մէկիկ մէկիկ կատարես, և եկեղեցւոյ սրբազան հայրապետներուն ու վար-

Գաղեռաներուն դրած կարգերն ու կանոնները պահես։

Հ. Քրիստոս ինչ պատուիրանք տուաւ մեզի։

Պ. Քրիստոսի մեզի տուած պատուիրանքին առաջինը սա է. «Ինչ որ կ'ուզես քի մարդիկներ քեզի ընեն, դուն ալ անանկ ըրէ ուրիշներուն, և ինչ որ չ'ուզես ուզեր քի ուրիշները քեզի ընեն, դուն ալ ուրիշներուն մ'ըներ» զոր օրինակ. ըսենք որ ճամբան տեղ մը երթալու առնդեղ տաքուան մարդ մը քենէ պարմանութիւն կ'ուզէ. մտածելու ես որ երթէ դուն ըսայիր ան պատասխանէ, չ'ելնիր ուզեր քի դէմդ երկարը քեզի պարմանութիւն մը տայ. Հարկաւ կ'ուզէիր. ուրեմն պէտք է որ ան պատասխանութիւնը մը տաս. ասանկ ալ երբ մէկը երկար ուրիշի մը տալ քեզ բամբասէ. քեզի համար տուած խօսքեան. դուն կ'ախորժիս առ երկնին վրայ. հարկաւ չ'ես ախորժիր. ուրեմն դուն ալ ուրիշը մի բամբասեր։

Չ. Երբայր այլ բացատրութիւնը շատ կարևոր մանկ էրէ. ու ասկէ վերջը ես ալ ուրիշին պատկառութիւն պիտի ընեմ չատ. ուրախանալ կ'ուզեմ որ ուրիշներն ալ իրենց ձեռքէն եկածին չատ ընեն. ասանկ ալ ես ասկէ ետքը միտքս դրի որ մէկու մը դէշութիւն չընեմ. որովհետև չ'եմ ուզեր քի ուրիշներն ալ ինծի դէշութիւն ընեն. այս առնել ճշմարիտ քրիստոնեայ չ'ենք մի ըսեր։

պ. կեցիր. ճշմարիտ քրիստոնեայ ըլլալու համար աս չափը բաւական չ'է, որովհետեւ ըսին՝ք թէ ամէնուն աղէկութիւն կ'ընես. ու մէկուն մըն ալ գէշ ըլլալը չ'ես ուզեր. բայց օր մը կը բարկանաս ու կ'ուզես ինքզինքդ կը մոռնաս. կամ թէ հպարտութիւն մը կուգայ վրադ ու անանկ կը կարծես որ ուրիշ մարդերը քեզի հաւասար մարդ չ'են. կամ թէ այնչափ շատ կ'ուտես անչափ շատ օղի ու գինի կը խմես որ կը հիւանդանաս. ան ժամանակը դուն դարձեալ Աստուծոյ առջեւը մեղաւոր ես. ու ճշմարիտ քրիստոնեայ չ'ես սեպուիր: Ուստի քանի որ Աստուծոյ ամեն պատուիրան՝քներըը պահել կ'ուզես. ահա ես զանազ՝ք քեզի կ'ըսեմ. Քրիստոսէ առաջ Աստուած Մովսէս մարգարէին ձեռքովը տասը պատուիրան՝քներ տուաւ և ասոնց կով Հրէից եկեղեցին հաստատեց:

Հ. Մովսէսին ձեռքովը Աստուծոյ տուած տասը պատուիրան՝քներըը որո՞նք էին:

Պ. Ա. Հաւատալ, Աստուած ժողովուրդին կ'ըսէ.

Ա. Ինձմէ զատ ուրիշ Աստուած չը ճանչնաս:

Բ. կուռք չը շինես:

Գ. Պարապ բաներու համար Աստուծոյ անունը բերանդ չ'առնես:

Դ. Շաբաթ օրը սուրբ պահէ:

Ե. Քու հայրդ ու մայրդ պատուէ:

Զ. Մի սպաններ:

Է. Շնութիւն մ'ըներ:



Ը. Գողութիւն մ՚ըներ։

Թ. Սուտ վկայութիւն մ՚ըներ։

Ժ. Քու ընկերիդ կամ դրացիիդ և կամ մէկ ուրիշին ունեցածին աչք մի տնկեր։

Ա. Եղբայր, Աստուած պատուէր ըրեր է որ չաբաթ օրը սուրբ պահեն.ք. ինչո՞ւ համար հի՛մայ մեն.ք կիրակի օրը սուրբ կը պահեն.ք։

Պ. Քրիստոս կիւրակէ առաւօտ յարութիւն առաւ. առաքեալներն ալ Քրիստոսի յարութեան սուրբ յիշատակը պահելու համար սուրբ պահելու օրը չաբաթէն կիրակիի փոխեցին. սանկ ալ երբեր Քրիստոս աշխարհ եկաւ, տասն պատուիրան.քները սեղ սեղ փոխոխեց ու կատարեալ ըրաւ։

Հ. Մովսէս մարգարէին ձեռ.քով որուած տասը պատուիրան.քները Աստուծմէ էին նէ. ինչպէս կ՚ըսայ որ Քրիստոս կուգայ զանոնք կը փոխէ։

Պ. Քրիստոս երբեր քարոզելու սկսաւ նէ. ըսաւ. —ոչ եւս լուծանել ը՛օրէնս, այլ ընուլ.

Թուէ. Օրէն.քներըը, այսինքն պատուիրան.քներըը քակելու կամ ապրելու չ՛եկայ, հապա կատարելու ընելու. հին այսինքն Հրեից եկեղեցին՝ նիւթական եկեղեցի էր. Քրիստոս վոխեց պանիկայ. որով նոր եկեղեցին՝ հոգեւոր եկեղեցի եղաւ. այս կատարը լմն որ կ՛ուզես նէ ապէկ մը բայատրեմ քեզի։

Հ. Կաղաչեմ, եղբայր. բայատրէ որ խելք. թեղ ընէ ապ ըսածիդ։

Պ. Որովհետեւ հին օրէն.քին ամէն խոստուն.քներն ալ նիւթական էին. Քրիստոս աշխարհ.ք չ՛եկած. մարդիկ ապականի մեղ.քին տակ ըլլալով, արդիւնաւած էր անոնց մեռնելէն ետը Ս. Ս.ը.քայութիւն երթալը. անոր համար երբոր Աստուած սուրբ մարդու մը ապէկութիւն ընել ուզեր նէ, մարմնաւոր բարի.ք կը խոստանար անոր. ինչպէս որ Աբրահամ նահապետը օրհնելու ժամանակը ըսաւ. «քու զաւկներդ երկինքի աստղերէն աւելի պիտի շատցնեմ. ու ամէն ազգերէն եւս մեծ պիտոր ընեմ. անանկ ալ Յակոբ նահապետը օրհնեց նէ ըսաւ որ «քու զաւկներդ անանկ ուժով պիտի ընեմ որ, բոլոր հեթանոսները անոնցմէ վախնան ու անոնց ծառայ ըլլան». անանկ ալ Սողոմոն իմաստունը օրհնեց նէ՝ ըսաւ, անանկ հարուստ ու անանկ խելացի ըլլաս, որ աշխարհիս մէջ քեզի նման մէկը

ոչ եկած ըլլայ, ոչ ալ առկէ նայելը դայ. առանց ալ ուրիշ տուրք մարդիկներուն ունայց մարդասիրութիւն ընել կուտար, առանց ալ մեծութիւն կուտար. առանց ամէնքն ալ մարմնաւոր աշխարհի մէջ վայելելիք անյատուր շնորհքներ էին. պատմեսուր հիչ մէկը չէր կրնար մեռնելուն պէս արքայութիւն երթալ. ահա տար հաստ բերեսուր ըլլար. ինչուան որ մարդ մը չը պաշտէր՝ կռապաշտութիւն երած չէր անապատէր. ինչուան որ մարդ մը չը մեռցներ, մարդասպանութիւն երած չէր ըլլար. առանց ալ մէկալ պատուիրանքները. շաբաթ օրը միայն աստուած կը պահէր, ուրիշ. բայց Քրիստոս երբոր եկաւ այս պատուիրանքները նուիլակեցին հոգեւոր փոխոց. պատմեսուր երեք խոստումնքներն ալ նուիլակեցին այսինքն մարմնաւոր չէին հոգեւոր: Քրիստոս ըսաւ թէ կռապաշտութիւն է, հպարտութիւնը. փառքի ու հարստու-

Հ. Ա. Ոչ, երբայր. քիչ մըն ալ բացատրէ այդ բաներդ. որ երթի ըսելովքներդ ալ աղեկ մը հասկընամ:

պ. Ամեն մարդ ալ կը փափաքի երջայր, բայց աշխարքիս յոյն փափաքը անոր վրայ է. այն ա- ռաքեալները և մարտիրոսները անոր համար սեռակ սեռակ չարչարանքներով արիւն թաբ- ցին. և նոյնպէս ճգնաւորները իրենց տանը և հայրենեացը ծնողաց և բնաւանեաց. զաւակնե- րէն և կնոջմէն, երջայրներէ, բարեկամներէ, ազգականներէ ու բոլոր աշխարհէն հե- ռանալով անապատ երթալով դնացին լեռները աւազակներուն մէջ. անօթի ծարաւ, մերկ, արևին առքին և ձմեռուն սաստիկ ցուրտերուն համ- բերելով իրենց անձը մաշեցուցին Ա.Ր.քայութիւն երթալու համար: Բայց կերևի որ քիչ մարդ պիտի մնայ այնտեղ, ինչպէս որ Քրիստոս կ'ը- սէ «բազումք են կոչեցեալք, այլ սակաւք են ընտրեալք»: որովհետև թէպէտ Ա.առաքեալները շատ մարդիկ հրաւիրեցին Ա.Ր.քայութեան սե- պանին, և շատ մարդիկ կը սկսուին ու Քրիս- տոնեայ անուն կ'առնան Ա.Ր.քայութիւն երթա- լու համար. բայց իր կամքը գործով չեն յաղթել և Աստուծոյ բոլոր պատուերները ան- թերի կատարել քիչ մարդ կ'ըլլայ, անոր համար Քրիստոս ըսաւ, «ոչ ամենայն՝ որ ասէ ցիս, տէր տէր մտանէ յԱ.քայութիւն երկինից, այլ՝ որ առ- նէ զկամս Հօր իմոյ որ յերկինս է»:

Թող, ինձի տէր կանչողին ամենուն Ա.քայու- թիւն չը պիտի մտնեն, հապա՝ ով որ իմ երկ- նաւոր Հօրս կամքը կը կատարէ նէ անկայ պի-

ան մանայ» Մատթ. Է. Գլ. 21 համար։

Հ. Արդեօք այս Ս. Աբգարեմիանը մոռնալ արքայարներուն վատը կրնար պիտի ըլլայ։

Գ. Անիկայ լեզուով չը ճառուիր, որովհետև մեր խելքէն միտքէն շատ վեր բան է. բայց գօրաս Աստուած մեզի քիչ մը հասկցնելու համար՝ տրեը, Լուսինը և աստղերը իբրև օրինակ ցոյց կուտայ. որովհետև մեր աչքը առնչէ պայծառ բան մը տեսած չ'է. բայց Աբգարեմիանէն մէջի եղելութիւնը վատը անոնցմէ երեմն աղօտ տեսնի է. և ինքը գօրաս Աստուած տալ, տասնչորս ամսոց ժէ. գլուխ 41 համար ին մէջ այսպէս կը գրէ, «Ամէն վատ Աբգարեան կան, այլ վատ Լուսին է, և այլ վատ Աստղայ, և Աստղ քան զԱստղ աստուիր է վատօք երևնալէս և ծայրութիւն մեռելոյ»։

Թուէ. Աբգարեանին վատը ուրիշ է. Լուսինին վատը ուրիշ է. Աստղերուն ալ վատը ուրիշ է. և աստղ աստղի վրայ վատով տեսնի է. և առանկ է նա և մեռելոյ ծայրութիւնն ալ։ Եւ երկրորդ Դանիէլ մարգարէն կը գրէ «և իմաստունք ծագեսցին իբրև Լուսատրութիւն՝ և հաստատութեան, և բազումք յարդարոց իբրև զաստեղս յաւիտեան և աս։

Թուէ. Մարգարէները երկինքին լուսատուներուն պէս պիտի ծագին, և Աբգարեանէն շատերը աստղերու պէս պիտի ըլլան յաւիտեան» կըսէ Դանիէլ ԺԲ. Գլ. 3 համար։

Եւ երրորդ Քրիստոս ալ ըսաւ «Յայնժամ Արքայն ձախակողմեայնն իրրև ղ՚արեգականն յ՚արքայութեան երկնից»։

Թոփչ. Ան առեղը՝ արդարները արևի պէս ալիտի ծագին երկնքին Արքայութեանը մէջ, կ՚ըսէ» Մատթ. ԺԳ. Գլուխ 43, հոմոլ։ Ա՛ս դիրքերուն խօսքէն կ՚երևայ որ Արքայութեան մէջ արդարները խելքէն մտքէ դուրս անճառելի փառքեր պիտի ունենան։

Հ. Արդարներուն այդքան փառաւորութիւնը՝ մեղաւորները որ տեսանան նէ, ինչ կ՚ըսեն արդեօք։

Պ. Սողոմոն խնատուն՝ անոնց ինչ ըսելիքը առաջուց կը դրէ. «յայնժամ արդարն կայցէ բազում՝ հանդարձակութեամբ հանդէպ նեղչաց իւրոց, և որոց անզոանէին զվաստակս նորա, տեսեալ զնա խառնակեալն անհնարին երկիւղիւ, և զարհուրեալն՝ ի վերայ սքանչելի փրկութեան նորա, և զղջասցին ընդ միտս իւրեանց՝ և առնեղութեան անձանց հոգւոց հանիցեն և ասիցեն, այս՝ այն այր է, զոր երբեմն մեք ծաղր առնէաք և յ՚առակս նախատանաց. մեք անմիտք զվարս զորա մոլորութիւնն համարէաք, և վախճան զորա անարգանս. զիարդ հաշուեցաւ յաւրդիս Աստուծոյ։

Թոփչ. Սա՛ն առեն արդարը շատ հանդարձակ կերպով պիտի կայնի իր թշնամիներուն դէմ, որ անոր հոգւոյն համար քաշած աշխատանքները

՝ի՛ր քահանային, զանիկայ այնքան վառաւոր առանելով պիտի վանական անոր զարմանալի վերաբերմունքը վրայ։ Եւ իրենց սրտին մէջէն պիտի պղչան ու հառաչելով պիտի ըսեն, մեր անմիտ նենք եղեր որ ատոր բարի վարքը մոլորութիւն կը սեպէինք և ատոր վերջը կորուստ, հլմայ ինչո՞ւ Աստուծոյ զաւկընեբուն կարգը անցաւ։ Սահատիկ եղբայրը, տեսը Ա.քոյսթինան ինչ ըլլալը և հոն տեղը եղող տուրքերուն և հրեշտակներուն վառաւորութիւնը և մեղաւորներուն ալ ատ բանին վրայ ունեցած մտածումը որչափ որ կարելի էր նէ բացատրեցի։

Հ. Հիմայ Ա.քոյսթինա՞ինչ ըլլալը քիչ մը հասկցած եմ, և թէ որ այդչափ բաներդ մէկ քիչն են նէ, յիսուի Ս. Ա.քոյսթինը անճառելի է, արեւօք դժոխքը հնարո՞ւ տեղ է, այն ալ լինձի բացատրէիր։

Պ. Դժոխքին հնարաւ տեղ ը ըլլալը բացատրելու համար երկար բարակ խօսիլ պէտքը չ'է, Աստուած իր արդարներուն համար, հնարաւ որ անհաւատները Ս.քոյսթինան պատրաստեր է նէ, անանկ ալ մեղաւորներուն համար դժոխքին տակաւին պատիժը պատրաստեր է, և տես նայէ, դժոխքը ոչչափ դէշ տեղ մըն է. Յիսուս Քրիստոս Աստուծոյ մարդիկներէրը անկէ ազատելու համար, մարմին առաւ մարդ եղաւ, խաչը եկաւ ու մեռաւ, այլ դուն հասկըցիր, եղբայր, դժոխքին հնարաւ տեղ ըլլալը, Յիսուս Քրիստոս կ'ըսէ որ,

դժոխքին մէջ մեղաւորը յաւիտենական տան-
ջանքով կը տանջուի. կ'ըսէ նաև որ հոն գայո-
ղը պիտի լայ ու իր ականջները պիտի կրճտէ։



Մէյ մըն ալ որ չաստուծոյ, մարդ արէներ եայլն
դժոխքին ինսոր գէշ տեղ մը ըլլալը հասկըցու-
նելու համար, կրակի բոյին նմանցուցեր են.
որուն մէջը մեղաւոր խղճալի հոգին կը տանջուի
յաւիտեան, և աղաւաւելու ամենևին յոյս մը
չ'ունի, որմէ ցերը վրկէ մեղ ամէնքս ալ և ի-
րեն անվախճան փառքին արժանի ընէ։ Ընոր
հաճար, սիրելի եղբայր, այս աշխարքիս մէջ ա-
ղէկ նայէ որ քեզի համար աղէկութիւններ շա-
ցընես ու չ'ես լմէ հարստութիւն ժողվելու եռանդ
ինաս։ Ինչպէս որ Ցիսուս Քրիստոս իր Աւետա-
ծային Ս. բերնովը կ'ըսէ. «Մի դանձէք ձեզ
դանձս յ'երկրի ուր ցեց և ուտիճ ապակա-
նեն, և գողք պակս հատանեն և գողանան.
այլ՝ դանձեցէք ձեզ դանձս յ'երկինս՝ ուր ոչ

ցերց և ոչ ուսից ապականեն, և ոչ գողք ական հատանեն և գողանան, զի ուր գանձք ձեր են անդ և սիրտք ձեր իցեն։

Թուէ. Ձեր ապրանքը գետնեին մէջ մի ապահէք, ուր ցեցը և ուսից՝ կ'ապականեն, և կամ գողերը գետինը կը ծակեն ու կը գողնան, հապա՝ ձեր ապրանքը երկինքին մէջ պահեցէք, ուր ոտզ ցեցը և ուսիցը չ'են ապականեր, և գողերը չ'են կրնար գետինը փորել ու գողնալ. որովհետև, ձեր ապրանքը ուր է նէ, ձեր սիրտն ալ հոն պիտի ըլլայ։ Մատթ. Զ. Գլ. 11, համար։

Հ. Բայց երբայր, ես իմ ապրանքս ինտո՞ր երկինքը տանիմ պահեմ, մինչ երկինք գնացող կարաւան կայ։

Պ. Այ՛, երկինքը գնացող կարաւանը գետինին վրայէն շատ է. վասն զի երբեմն կ'ըլլայ որ քալելէ քալաք գնացող կարաւան չը գտնուիր, քայլ երկինքը գնացող ճամբորդը երբէք պակաս չ'է, որ ժամանակ վնատես՝ կրնաս պատրաստ գտնալ ու ապրանքդ դրկել։

Հ. Երկինքը գնացող ճամբորդները որո՞նք են։

Պ. Աղքատները, խեղճերը, կոյրերը, սնկիները և կաղերն են, ապրանքդ անոնց որ յանձնես, անվնաս կը տանին Քրիստոսի կը յանձնեն, որ այնտեղ կը պահէ. ու դատաստանին օրը Քրիստոսէն շահումը սիկտեղ կ'առնես։

Հ. Եղբայր, այդ կաղերը, կոյրերը, խեղճերը,

գեաղնին վրայ անգամ չիտակ քալելու կարող չ'են, վան զի ոմանց աչքը չը տեսնար, ոմանք կաղ են, և ոմանք մերկ են, ցուրտին վախէն դուրս չ'են կրնար ելլալ. և ոմանք ալ անօթի ծարաւ ծուռկերնին տկարացեր է. ասոնք ինչ պէս իմ ապրանքս երկինք պիտի տանին։

Պ. Այդ խեղճերը քու ապրանքդ չը պիտի շալկեն ու երկինքը ելլան, հապա այս տեղ կ'ուտեն կը հագուին, և Քրիստոս ալ այն աղքատներուն տուած պարմանիքներդ տեսնելով, իր տեսրակին մէջը կը գրէ, և դատաստանին օրը՝ այն խեղճերուն երած պարմանիքդ յիշելով անոնց վախարէնը բիւրատափիկ քեզի պիտի վճարէ։

Հ. Ըսել է որ, եղբայր, աղքատներուն պարմանիքն տալը այդչափ աղէկ բա՞նէ։

Պ. Ինչ կ'ըսես Քրիստոնեայ, Աստուծոյ սիրելի ընելու համար պարմանիքն տալէն աւելի աղէկ բան մը կա՞յ. և Քրիստոս ալ ուրախ պրտալ կ'ընդունի. որովհետև դնեն ք թէ դուն մէկու մը սաակ պրկես այն ինչ տեղը հասնելու, և այն մարդն ալ քու հրամայած տեղդ սաակը որ վճարէ, դուն չ'են ընդունիր քու երած այն յանձնարարութիւնդ ինչպէս որ Սողոմն կը գրէ, «որ ողորմի աղքատին՝ փոխ տայ Աստուծոյ քան զրոյ նորա՝ հատուցէ նմա. մի ասիցես թէ ոչ ճանաչեմ զնա, և ոչ նա զիս ճանաչէ. զի առաջիք զի տէր՝ զսիրտս ամենեցուն ճանաչէ և

որ առեղծ ղրուն ամենեցուն՝ նա պիտէ զամենայն և հատուցանէ իւրաքանչիւր ղպրծածսն»։

Թուէ. Ով որ աղքատին կողորմի, Աստուծոյ վրայ կուտայ, որ անոր տուրքին հատուցում կը վճարէ անոր. ու մի ըսեր թէ ես անիկայ չ'եմ ճանչնար, անիկայ ալ ես չը ճանչնար. պիտոյից եղիք, որ սէր Աստուած ամենուն սիրած կը ճանչնայ, և ամենուն շունչը առեղծող Տէրը՝ բոլորը պիտէ. և ամէն մէկուն գործքին համեմատ հատուցում պիտի ընէ։ Աւակ. ԺԹ. Գլ. 17 հատոր։

Ա. Հատատիկ Քրիստոս ալ այսպէս ըսած է մարդու մը որ Աստուածութիւն երթալու ճամբան կը հարցունէր և կ'ուզէր որ իր հարստութիւնները կընքին մէջ պահէ. «երթ՝ վաճառեայ զամենայն ինչս քո և տուր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս։

Թուէ. Գնա, քու ունեցած բոլոր ապրանքդ ծախէ ու աղքատներուն տուր, որ երկինքին մէջ ապրանք ունենաս։ Մատթ. ԺԹ. Գլ. 21 հատոր։ Հիմայ թէ որ մեռնիք իր հրամայածին պէս ընեռնք չ'ընդունիր, և անոր փոխարէնը մեզի չ'ուտար, ինչպէս որ ինքը խոստացեր է, անշուշտ կ'ընդունի։

Հ. Ա. Հա հիմայ խելքս աղէկ մը հասաւ, քայց վերը ըսիր թէ քու ապրանքդ աղքատներուն ձեռքովը երկինք որ դրկես, շատ ուրախ կ'ըլլաս, ես այսքան աշխատանքներով ձեռք բե-

ըած ապրանքս ինծի ազգականներուն ձեռքը տամ ու ես ուրախ ըլլամ, ես բոլոր յոյս այդ ապրանքիս վրայ դրեր եմ. ու գիշեր ցորեկ խեղքըս միտքս շարունակատոր վրայ է, ես ի՞նչպէս զանիկայ աչացս առաջէն հեռացնեմ և ուրախ ըլլամ եղբայր։

Գ. Ան ֆրխատս քու սիրտդ ու միտքդ ապրանքիդ հետ կապուած ըլլալը գիտնալով, քեզի հրամայեր է թէ՝ քու սիրած ապրանքդ երկինքը զրկէ որ քու սիրտդ ու միտքդ ալ անոր հետ երկինքը ելլան, որ միշտ երկինքին Աստուծոյ երեսին մտածես ու անիկայ գրուցես. ինչպէս որ Պօղոս կ'ըսէ. «զմերինն խորհեցարուք, մի՛ զայն՝ որ յերկրի ատա է։

Թուփ. Վերի բաներդ մտածենք, ատ երկրիս վրայի բաներդ չը մտածենք, կ'ըսէ, կողոսացւոց Գ. Գլ. 2. հատիկ։ Տեսնէ որ մեր միտքը միշտ երկինքը պիտի ըլլայ։

Հ. Եղբայր ատոր համ խելք չը հասաւ. իրաւ Աստուծոյ հետ կենալ մէկ ըլլալը ինծի զբաղցեցիր. բայց արդեօք ըլլայ նէ սեռած սեռը չ'է, հնարք կրնամ իմ ապրանքս հոն զրկել և ան սեղին վրայ շարունակ մտածել։

Պ. Ա. յդ բանդ չիտակ է. չը սեռած սեղը չ'ես կրնար մտածել. որովհետև դուն երկինքը չ'ես սեռած, ու ապրանք մինչ՛ալ չ'ես խըրկեր, որ ան ապրանքին պատճառաւ երկինքը միտքդ բերելիը լմէ արդիօք ապրանքս ի՛նչ եղաւ. ա-

հա քեզի աշխարհօրէն օրինակ մը ցոյց տամ. ղոր օրինակ, այս աշխարհիս մէջ շատ մեծ և շատ վտառաւոր քաղաքներ կան թէ Եւրոպայի մէջ և թէ Ասիայի մէջ, Լոնտրա, Բարիզ, Պօլիս, Ենիսատոս, Բաբելոն ևայլն։ Եթէ ան վտառաւոր քաղաքներուն մէջ առուտուր մը չ'ունենաս, և մէկ վտքր դիւղի մը մէջ շատ ապրանք և առևնելիք ունենաս քու մտքդ ուր տեղ կ'ելլայ, այն վտառաւոր քաղաքներուն վրայ կ'ելլայ թէ այն վտքրիկ աննշան դիւղին վրայ կ'ելլայ։

Հ. Ասիկայ հարցնել հարկ չ'է. յայտնի բան է որ իմ ապրանքս ուր տեղ որ ելլայ, մտքս ալ հոն տեղ կ'ելլայ, ապրանքս չ'եղած քաղաքները ինչո՞ւ մտքս պիտի բերեմ ու մտածեմ. բայց՝ վտքր դիւղի մը մէջ ապրանք որ ունենաս, դիշեր ցորեկ մտքս այն դիւղին մէջ կ'ելլայ, և կ'արտրամ ալ թէ երբ պիտի առնելիքս քիս օրերը լմննայ. և կամ ճամբայները բացուին որ երթամ առնելիքներս ժողվեմ։

Գ. Շատ աղեկ խօսեցար, նոյնպէս դուն ալ քու ապրանքդ ուրը որ տեղ ելլայ քաղաքներուս ձեռքովը եթէ երկինքը դրկես որ այն տեղ պահուի, նախ և առաջ քու բոլոր վախերդ կը վերնան վրայէդ. որովհետև այն ապրանքը քովդ եղած աւոնը շատ բաներէ վախ կ'ունենաս։ Թէ դողէն, թէ ցեցէն և թէ չուրէն և թէ կրակէն, և թէ բռնաւորներէն և թէ դրպարտիչ մարդկիններէն. և այլ շատ բաներէ վախ կը քաշես ապրանքդ

ՀԸ կրանցնեը. Համար ։ Բայց երկինքը որ խըր-
կես , այդ վախերը բոլորովին կը վերնան . ինչ-
պէս որ Քրիստոս ինքը վկայեց յմէ « Հան՝ ոչ ցե-
ղը կրնայ ուսել և ոչ գողերը կրնան գողնալ »
և երբոր երկինքին Արքայութիւնը միտքդ դայ ,
այն առեղ ունեցած ապրանքդ վրայ մտածելով
ուրախ կ'ըլլաս . և երկրորդ մեռնելէ ալ չ'ես
վախնար . որովհետև մեռնելէ վախցող մարդիկը
երկինքին մէջ ապրանք մը կամ մէկ յոյս մը չ'ու-
նին . հապա՝ ապրանքին ալ և յոյսերնին ալ այս
աեղ ըլլալով գիտէ թէ երբոր մեռնի , իր սիրե-
լի ապրանքէն պիտի բաժնուի և երթալիք աե-
ղին ալ իրեն համար բան մը չ'ունի , կը հասկը-
նայ որ ինքը մերկ պիտի երթայ . անոր համար
մեռնելու խօսք որ լսէ , աշխարհքը գլխուն մութ
կուգայ ։ Բայց եթէ դուն ալ այն խելօք մար-
դերուն դուռ ապրանքդ քեզնէ առաջ երկինքը որ
խրկես , այս աշխարհիս մէջ դուխդ ինչ
փորձանքներ ալ որ գան . թէ հիւանդութիւն
թէ աղքատութիւն , և թէ ձախորդութիւն և
կամ թէ ամէն տեսակ նեղութիւններ , ամենե-
ւին չ'ես տրտմիր . ինչու որ աս աշխարհիս թէ
առաջուածքը , թէ աղքատութիւնը , թէ ցա-
կամ տրտմութիւն և կամ ուրախութիւնը բոլորն
ալ անցաւոր բաներ են և շուտով կը վերջանան.
մահը կը խափանէ ասոնց ամէնը . բայց այն աշ-
խարհքը յաւիտենական է և վերջ չ'ունի . կը
սեռնաս որ այն յաւիտենականութեանը մէջ ա-

պրանք ունիս, զանիկայ մուտ ծելով կ՚ուրախանաս և կուզես որ օր մը առաջ մեռնիս երթաս վարձքըդ առնես, փառքդ վայելես ու ժառանգես ինչպէս որ Պօղոս առաքեալ կ՚ըսէ «Հաճելագոյն է մարմնոյ աստի և մտանել առ Աստուած»։

Թուփ. կուզեմ որ աս մարմինէն երթամ ու Աստուծոյ քով երթամ, կըսէ. բ. կորնթացւոյ ե. գլ. 8 համար. սեռ սիտ երկինքը յոյս ունեցող Պօղոսը մեռնելու կը բաղձայ. որովհետև ինքը առաջուց իր տպրանքը երկինք պրկէր էր։

Հ. Եղբայր, Պօղոս առաքեալ հարուստ մարդը նէր որ աղքատներուն այնչափ ողորմութիւն արար ու երկինքի մէջ տպրանք դնած ըլար։

Պ. Պօղոսին տպրանքը ամենէն շատ էր, վասն զի կը կարծես թէ երկինքը խրկելիք տպրանքը միևնակ ոսկի. արծաթ և կամ ուրիշ բաներ նե, որ աղքատ մարդիկը չ՚ունենալու. եթէ այդպէս ըլար, կարելի էր որ բոլոր հարուստ մարդիկ Աստուծմէն երթային, և աղքատներէն ալ բնաւ երթէք աստուծմեան երես առնուլ չ՚ըլար. բայց՝ այդպէս չ՚է. հապա՝ ուր հայի կարօտ աղքատներն ալ երկինքը խրկելիք տպրանք ունին։

Հ. Աղքատներուն երկինք պրկելիք տպրանքը ինչ է։

Պ. Նախ, երեն աղքատութեանը համար յոժա-

թուխեամբ ախրալ Աստուծմէ գոհ և յանձնառու ըլլալ, և չը նեղանալ ու չը դժգոհիլ թէ ինչո՞ւ Աստուած ինծի այսպէս ըրեր է։ Երկրորդ մեղքերէ զգուշանալ, երրորդ ծոմ և կամ պահք պահել, չորրորդ աղօթք ընել, հինգերորդ տգէտ մարդը խրատելով մեղքերէ զգուշացնել. վեցերորդ բոլոր նեղութիւններուն համբերել են. ահա սոնք բոլորը առանց սուակի երկինքը դրկելու բարեգործութեան ապրանքներ են. և ծօրս այս ապրանքները ունենալով մտնել կ'ուզեր։ Հիմայ թէ որ դուն ալ քու ունեցած ապրանքներէդ քսո կարեւոր կարօտներուն դրկես, մեղայ զգուշանաս, ժամանակ ժամանակ ծոմ և կամ պահք պահես և աղօթք ընես, մեղաւոր մարդիկը խրատելով իրենց չար ճամբէն դարձնես, և միշտ սասնկ բարեգործութիւններու պարապիս և Աստուծոյ ամէն պատուիրանքները անպակաս կատարես նէ, ծօրսդ պէս դուն ալ մտնելու կարօտաս. թէ երբ պիտի մտնեմ երթամ բարեգործութիւններուս վրայէն վարձք առնեմ, ու Աբրահամեան ծէջ ուրախանամ։

ՎԵՐՋ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻՆ

ՄԱՍՆ ՋՈՐՐՈՐԴ

ԱՊԱՇԽԱՐՈՂ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՆ

ԴԱՍ Ա.

Եօթն մահացու մեղքեր։

Հ. Երբայր, քանի որ քրիստոնեայ մը մեռնելէն ետքը թէ որ անիկայ իրեն կեանքին մէջը թեթեւ մեղք գործեր է նէ, անոր հոգիին համար աղօթք կ'ընեն եւ այն քրիստոնեային Աստուծոյ առջեւ թոլութիւն կը գանէ. այդ թեթեւ մեղք ըսածդ ինչ է ծանր մեղքը ըսա է. թեթեւ մեղքն ալ ըսա՞ է։

Պ. Այո՛. մեղքերը երկու են, ներելի մեղք եւ մահացու մեղք, ներելի կ'ըսուին ան մեղքերը որ թեթեւ յանցանքներ են, որ սկզբիկ ըլլալուն համար, անոնց թոլութիւնը շուտով կը գտնանք Աստուծմէ, իսկ մահացու մեղքեր ըսուածը եօթը մը գլխաւոր մոլութիւններն են իրենց մասերովը, որոնց համար պէտք է երկայն ատեն կատարեալ սրտիւ պղջալ եւ ապաշխարել ու այնպէս թոլութիւն գտնել։

Հ. Եօթն գլխաւոր մոլութիւնները որո՞նք են։

Պ. Եօթն գլխաւոր մոլութիւններն են։

Ա. Հպարտութիւն, իր մասերովը։

Բ. Նախանձ, իր մասերովը։
Գ. Բարկութիւն, իր մասերովը։
Դ. Ծուլութիւն, իր մասերովը։
Ե. Ագահութիւն, իր մասերովը։
Զ. Որկրամոլութիւն, իր մասերովը։
Է. Բնչախոհութիւն, իր մասերովը։
Հ. Կ՚ասեմ եղբայր, այս եօթը մեղքերուն վրայ ալ զատ զատ բացատրութիւն տուր ինծի, որպէս զի անոնցմէ հեռի կենամ։

Պ. Այս եօթն մեղքերուն առաջինն է հպարտութիւնը, այսինքն ինքզինքը անանկ կարծել որ այլ իրմէ վեր, իրմէ զօրաւոր, իրմէ խելացի և իրմէ հարուստ մէկը չը կայ, քրիստոնեայ մը որչափ աղէկութիւններ ալ որ ընէ, երբոր հպարտութիւն ունի, անիկայ Աստուծոյ Ս. Ա-քայութիւնը չը կրնար մտնել. հրեշտակը՝ հպարտութեամբ սատանայ եղաւ և անունը թեհոզերաւղ դրաւեցաւ. այս հպարտութեան մեղքերուն չատերուն վրայ կը տեսնուի. ասանկ կան որ ինքզինքնին մեծի աեղ դնելով իրենցմէ վար մարդիկներուն բարև չ՚են ըսար, անոնց հետ առնուիլ չ՚են ուզեր, անոնց տունը չ՚են երթար, և անոնց խօսքը անդամ բերաննին չ՚են առներ. ասկէ դէշ մեղք չը կրնար ըլլալ, և ասկէ կը ծագին ուրիշ չատ մեղքեր ալ, այսինքն անհնազանդութիւնը, ինչպէս որ հրեշտակը երբոր հպարտացաւ նէ, չ՚ուզեց որ ինքզինքը ստեղծող Աստուծոյն երկրպագութիւն ընէ և ա-

նոր հնարանդիւ . անհնազանդութիւնէն ալ առաջ կուգայ , Աստուծոյ դէմ ապստամբութիւն . ինչպէս որ Բելիաղ ըսաւ , ապստամբութիւնէն ալ կը ծագին ուրիշ շատ մեղքեր , որոնք մարդուս հոգին Աղքայութեան լուսեղէն վտակէն կը զրկեն և դժոխքին յաւիտենական բոցերուն ձեռքը կը մատնեն . անոր համար ճշմարիտ քրիստոնեայ եղողն մը առաջին պարտքն է հրապարտութենէ հեռու կենալ :

Հ. Ա. Ամէն դէշութիւններէն ըսել է որ հրապարտութիւնէն կը ծնին , հապա ըսիր որ գէշ խառն մեղութիւններէն եօթն են . ինչպէս հրապարտութիւն , նախանձ են . հապա ի՞նչ որ հրապարտութիւնը այդչափ դէշ բան մըն է նէ , նախանձը ի՞նչ է արդեօք :

Պ. Հպարտութիւնը որչափ դէշ է նէ , նախանձն ալ անկէ աւելի դէշ է , և մանաւանդ որ՝ հրապարտութիւնը նախանձէն կը ծնի . ըսել է թէ՝ թէ որ նախանձ չ'ըլլար նէ , հպարտութիւն ալ չ'եր ըլլար . զոր օրինակ . ըսեմ որ դուն քու մէկ բարեկամդ . ազնիւթիւնը տեսնելով ուրախանալու տեղ , ի'նչպես շատ աչքով անոր կը նախանձիս անոր ի'ըսուն նախանձ . դիշեր ցորեկ քունդ չ'ըլլար , քանի որ անոր օրէ օր առաջ երթալը կը տեսնէ , կը կարծես որ կրակ մը ինկեր սիրտդ ի'վերէ , և ի'սկսես մտածել որ ինչպէս ընէ որ բարեկամիդ ձեռս մը հասցնէլ առնը վերցունէլ , երկնրը ապականէլ , ազատուիլը

ձեռքէն առնէի որ անիկայ չը մեծնար, հապա
ես մեծնայի հարուստ ըլլայի, և կ'ախտս հը-
պարտանայ, թե ան բարեկամիդ բարև չը տալ
առնը չ'երթալ, չ'իջալ, և ձեռքէն եկած բա-
րիքը անոր չ'ընել, ուրիշներու առջև անանկ
ցույներ որ անիկայ քուկին ծառաս է, և դուն
անոր հետ խօսիլ անգամ չ'ես ուզեր։

Հ. Ո՞հ, եղբայր, աս նախանձը՝ հպարտութիւ-
նէն ալ գէշ է եղեր։

Գ. Երկուքն ալ մեկզմեկէ գէշ են, որովհետև
հպարտութիւնն ալ մարդը դժոխքը կը տանի,
նախանձն ալ. մեկու մը վրայ նախանձելուդ
պէս, ալ կ'ախտս անոր վրայօք չարախօսու-
թիւն, բամբասանք, սուտ յանցանքներ խօսիլ ա-
նոր անոր համ, թէ որ այն բարեկամդ իշնամիդ
մը դառնայ. ինչո՞ւ համար ըլլայ։ Դուն դանի-
կայ կոծանելու և խայտառակ ընելու կամ թէ
անկ բանի համ, որ նախանձութիւնդ առջը տանե-
լու համար կ'երթաս ան իշնամիդին հետ մեկ
կ'ըլլաս և դառնալին առջևը չը գիտցած բա-
ներ աչքալ տեսածի ու ականջալ լսածի պէս
վկայութիւն կ'ուտաս, որովհետև մեյ մը որ սուտ կը
խօսիս մեյ մըն ալ որ դառնալը կը խարես.
առանձներուն համար է որ գրուած է թէ «որ
սուտ խօսի, հայրն նրա սատանայ է»։

Թ-ԺԲ. Սուտ խօսելին հայրը սատանան է. առ-
ջի պատուիրանը անանկ գէշ մեղք մըն է
է որ, մարդը մինչև անձնասպանութեան կը տա-

Ես. անանկ մարդիկ եղած են որ իրենց դիմացինին վրայ նախանձելով և անոր ձկտաս մը չը կրնալով հացուներ՝ ինքզինքնին ապտնած են, և սանկով դժոխքին մէջ սատանային ձեռքը յաւիտենական տանջանքի մատնուած են։

Հ. Եղբայր, ախ մը կուդայ վրաս քանի որ աս խօսքերը կը լսեմ, իրաւ որ ես ալ երբեմն կը հպարտանամ ինքնիրենս եւ կը նախանձիմ ընկերոջս վրայ. ո՞ն, այս ինչ մեղք է որ գործեր եմ, ամեն առաւկ մըտածութիւնները ինծի կ'երեւան որ աս հպարտութենէն ու նախանձէն առաջ կ'ուգան. հապա բարկութիւնը ինչ է։

Գ. Դուն հպարտութիւնը և նախանձը այնչափ մեծ մեղութիւն ըլլալը գիտցար նէ, հապա բարկութեան ինչ ըլլալը թէ որ գիտնայիր ինչ ախտ ըլլաս. որովհետեւ բարկութեան մեղութիւնը՝ մէկալ բոլոր մեղութիւններէն շատ աւելի գէշ է. բարկացող մարդուն աչքին ոչ Աստուած կ'երեւայ, ոչ հոգի, ոչ Աւրհնութիւն, ոչ դրախտ, ոչ մեղք և ոչ ալ ուրիշ բան մը. որովհետեւ ինչ որ կ'ընէ նէ իրեն ձեռքը չ'է. դիմացինը ծեծելով կամ զանիկայ ապտնելով կը կարծէ որ իրեն սիրտը կը պաղչի. ալեւոր բանի մը համար իրեն շատ աղէկութիւններ ընող բարեկամը ատքին տակը կ'առնէ. թէ որ մէկը իրեն դատաստ մը տեսեր է նէ, ամենևին չը պահեր կ'երթայ ամէնուն կ'իմացունէ և ինքը պատճառ կ'ըլլայ ան մարդուն կորսուելուն։

Բարկութենէ առաջ կ'ուզան, մտանիշութիւնը, անմխաբանութիւնը, մարդասպանութիւնը և ուրիշատոնց նման մեղութիւններ. և բարկացող մարդը անանկ կը կարծէ որ իրեն ըրած առաջին բաները աղէկ են. բայց անդամ մը որ ընէ, ալ կ'ակսի ատոմիլ, ըրածին վրայ կը պղչայ. բայց չը յուսալով Աստուած իր գործած մեծամեծ մեղքերուն թողութիւն պիտի տայ՝ կը յուսահատի, սիրտը կը ծեծէ, կուլայ և վերջապէս իրեն յաւիտենական դժոխքին մէջ կորսուելուն պատճառ կ'ըլլայ. անոր համար, քրիստոնեայ մը, որչափ որ բարեգործութիւն ընէ, պահք պահէ, դիշեր ցորեկ աղօթէ, թէ որ բարկութեան մեղութիւնը ունենայ նէ, առանցքին ձեռքէն չը կրնար աղատիլ և առանիկով Աստուծոյ Ս. երեսը տեսնելու ու Ա.րքայութեան մէջ՝ վառելուն արժանի չ'ըլլար:

Հ. Ըսել է որ այդ եօթն մեղութիւններուն առաջինն ալ ուրիշ մեղքեր են՝ եղեր. առանոր համար կ'աղաչեմ մեկալ չարութիւններն ալ ինծի բայտարես. որպէս զի հասկնամ թէ անոնցմէ ինչ չարիքներ առաջ կուգան:

. Զորրորդ մեղութիւնն է ծուլութիւնը, որ իւրացընէ կրնամ ըսել թէ ամէն մեղութիւններէն առելի է. վասն զի, թէպէտ մէկ կողմանէ նայինք նէ ծուլութիւնը՝ գէշութիւն մը չէ կը կարծենք, բայց երբոր այդ ծուլութենէն առաջ գալիք մեկալ գէշութիւնները աչքերնուս առ-

Չևը բերնեք, ան առեղը առկալով ետ պիտի քաշուինք։ Ծոյլ երկար մարդ մը չ'է թե միայն աշխատելու համար ծոյլ կ'ըլլայ. հապա նա և չ'ուզեր ազօթք ընել, պահք պահել, առաքանները կանուխ երթալ. Յիսուս Քրիստոսի Ա. պատուիրանքները կատարել, ինքը ալ առողջ ըլլալով պատրաստ էր որ դէմ Ա. հետարանի խըրատին հետևելով կատարեալ աղքատի մը օգներ. կամ կոյրի մը ճամբայ ցուցնէր. կամ հիւանդի մը տեղ մատուցաներ կամ տպեռ ու մեղաւոր մարդ մը մեղքերէն դարձնէր և կամ ծարաւ եղող անկար մէկու մը բաժակ մը չուր տար. բայց ծոյլ մարդը որ տեղէն շարժիլ չ'ուզեր նէ, աս բաները ի՞նչպէս պիտի ընէ. ըսել է որ այնպիսի քրիստոնեայ մը, քրիստոնեայ չը սեպուիր. և Աստուծոյ արքայութենէն ալ զրկուի։

Աստղմէ զատ. ծոյլ մարդը իր կինը և զաւակները նայելու ալ ծուլութիւն կ'ընէ. և զանոնք երեսէ վրայ ձգելով պատճառ կ'ըլլայ որ անոնք ալ մեղայ մէջ իյնան. որով ծոյլ մարդ մը չ'է թե երեք անձին՝ հապա ութ շատերու ալ կորուստը պատճառ ըլլալով, դժոխքին մէջ երեք պատիժը հարիւր, նախանձ և բարկացող մարդ-կերներուն պատիժէն շատ աւելի մեծ պիտի ըլլայ։

Հ. Ո՞ր պատուիրանը ինչ է։

Պ. Ա. պատուիրան ինչ ըլլալը՝ Ս. աւաքելը

կարճ կերպով մը հասկցուցեր է. ըսելով որ ապահովութիւնը՝ կառավարութիւն է. որով կըր-
նանք մտածել որ եթէ կառավար մարդիկը Ա-
ստուծոյ արքայութիւնը չ'են կրնար մտնել նէ,
ապահ մարդիկներն ալ անոնց նման Աստու-
ծոյ արքայութիւնը պիտի չը կրնան մտնել. ա-
պահ մարդը դիշեր ցորեկ կը նայի որ չ'ուտէ
չը խմէ, հապա՝ միշտ ուտակ աւելցունէ. հա-
րստութիւն ունենայ. տուներ, խանութներ.
հղներ. դիւտրներ. ապարանիներ. ոսկի. ար-
ծաթ շատցունէ. և եռւէ վատկածն ալ ազ-
քատներուս բաժնելու. կամ եկեղեցիներ ու
դպրոցներ շինելու և կամ ինքը ուսելու տեղ
կը տանի առանց մէկու մը իմացունելու հոգին
ատկը կը պահէ. դիշերները ոսկին քովը կառ-
նէ. կը դրկէ և անանկ կը պառկի. ատկնե-
րուն համար խիստ ազատ իսօսած է Յովհան Ա-
կերբերան այսպէս գրելով. «Հիք և հիք ինչ ա-
նիմաստնապոյն քան զ'ընչից ծառայ. Թուի թէ
իշխեցոյէ, և իշխանութիւն ունի, Թուի թէ տէր
ևցէ. և ծառայութիւնք հարկանէ կապանս վա-
րակէ զ'անձամբն և ուրախ է, դրկէ զդատաւն
և բերելն. 'ի դերութիւն վարել. ցնծայ և
խայտայ: Շան կատղի տեսանէ դիմեալ 'ի վե-
րայ ոգւոյն, և յ'անհնազս է զոր պարտ էր խա-
ռանել և տխմանհ առնել, առաստղեալ յ'ան-
իրնոյ շունի առ կուրծն կուտէ, զի նա քանզե-
'ի վերայ խաղայցէ և անհոգ ինքն լինիցի:

թոռէ. Իր ապրանքին ծառայ եղողէն էւել անլսելք մարդ չը կրնար ըլլալ. անանկ մարդը կը կարծէ որ իր ապրանքին տէրն է, բայց ան ապրանքը իրեն տէր եղած է. կը կարծէ որ իշխան է, բայց ապրանքին ծառայութիւն կ'ընէ. լինքղինքը կապկպած է բայց ուրախ կ'ըլլայ այն գազանը այսինքն ապրանքը կը գրկէ ու կ'ուրախանայ. լինքը գերի եղած է, բայց կը խնդայ և կը ցնծայ. կը սեռանէ որ կատղած չունը՝ այսինքն ապրանքը՝ հարստութիւնը վերան կը վազէ բայց հոգը չ'ընէր. ու չ'ուզէր որ ան գազանը կապկպէ և անօթի ձգելով մեռցնէ. անանկ ադահ մարդը՝ իր ապրանքը օրէ օր աւելցնելով չան կերակուրի պէս կը ժողվէ որպէս զի միշտ ունեցած ապրանքը աւելնայ և աշխարքիս ամենէն հարուստ մարդը ըլլայ, բայց գարձեալ աչքը չը կշտանար. . . :

Ահա այսպէս կ'ըսէ Յովհան Ոսկեբերան Ս. Հայրապետը, և ասոնք խօսքերէն կը հասկցուի որ ագահութիւնը որչափ դէշ մեղութիւն է. և ասկից ալ ծուլութեան պէս դէշ հետևութիւններ կ'ելլեն. վասն զի ծոյլ մարդը՝ որ աշխատիլ չ'ուզեր, անօթեւնալու կամ բանի մը պէտք ունենալու ըլլայ նէ մինչև անգամ գողութիւն կ'ակսի ընել, և թէ որ գինքը բռնել ուզեն նէ, ձեռք չ'անցնելու համար կ'ելլայ դիմացինը կ'սպաննէ. որով մարդասպանութիւն ալ գործած կ'ըլլայ. սանկ ալ ագահութիւնը նոյն հետևութիւնը

ունի, որովհետև ադամ մարդը իր ունեցածնե-
րը չը խարճելու և օրէ օր աւելցունելու համար
վերջապէս կ'սկսի դողութիւն ընել և 'ի հարկին
մարդ ալ կ'սպաննէ, իսկ Ս. առաքեալին ադա-
հութիւնը կռապաշտութիւն է ըսածն ալ ան է
որ ադամ մարդը ոսկին իբրև Աստուած կը
պաշտէ, և անոր համար հոգին կ'ուտայ։ Ոսկին՝
ադամ մարդուն կուռքն է և զանիկայ պաշտողը
կռապաշտ կը սեպուի։ Ասանկ մարդիկը Աստու-
ծոյ Արքայութենէն վռնտուած են։

2. Որկրամոլութիւնը ինչ է։

3. Որկրամոլութիւնն անոր համար մահացու
մեղք է՞որ մարդուս հոգին ալ չափէն աւելի
ցաւակար է. որկրամոլ մարդը բնաւ երբէք ու-
տելով չը կշտանար, որչափ ալ որ ուտէ և ին-
չը ուտելնէ՝ դարձեալ սիրտը ուզած կերակուր
մը տեսնելուն պէս ծակ աչքով անոր վրայ կը
նայի և որչափ չատ ըլլայ իրեն առջևը բերուա-
ծը՝ ինքը անանկ կը կարծէ որ քիչ է և այնքա-
նով չը կշտանար. ասոր համար որկրամոլ մար-
դուն աչքը միշտ ուտելիք բաներուս վրայ հաս-
տատուած է և ամենևին համբերութիւն չ'ունի.
եթէ անանկ ուտելիք մը տեսնայ որ իրենը չ'է,
և դրամ չ'ունի որ առնէ, չը համբերելուն կ'ել-
լայ գողութիւն կ'ընէ. և գողութենէն ալ եաք
չը 'ի հարկին մարդասպանութիւն ալ կ'ընէ, այ
դնա համկյիր որ որկրամոլ մարդ մը Քրիստոսի
պատուիրածին համեմատ կրնայ պահք կամ ծոմ

պահել և Բրիտոմարի մեկ պատուիրանը առնել
առնողը միթէ մեկալ պատուիրանքներն ալ
չ՚կրնար առնել առնել. այդ ամէնուն
խելքը կը հասնի որ աստուած մերդ մը
ամենևին աստուծոյ դէմ չը գործեր, և անոր
մեկ պատուիրանը առնողը միւս-
ներն ալ հարկաւ կ՚առնէ. նաև պիրտալը մար-
դը ամէն ժամանակ հասնիլ և անուշ կամ՚ թթու
իր սրտին միտած կերակուրները չը յագենալու
կերպով ուտելու աստուած է իր խելքը մտքը. և
ահա աս պատճառաւ ոչ իրեն ընտանեացը և ոչ
ալ գաւակներուն վրայ սէր կ՚ունենայ և չը մե-
ռած աստանային որս եղած է, անոր համար
է որ աստուած իրեն տէրը Ադրայտմեանը մէջ
պիրտալը մարդիկը չ՚ընդունիր, կը մերժէ: Որկ-
րամոլութեան մարդուս հոգին այսչափ աստուծ
ձեռքերը պատմելէս ետքը, քիչ մը նայ խօսիմ
քեզի ես պիրտալը մարդը մարմինին կոպմանէ
ինչ ձեռս կը կրէ. դիտնալու ես որ երբ մարդ
մը չուզէն ուելի կերակուր ուտելու ըլայ նէ,
փորը կ՚ուռեցնայ, կը ցաւի և երբեմն ալ հի-
ւանդ կ՚ըլայ և ես որ պիրտալոմեանը այս-
պէս շարունակուի նէ, պիրտալոն ալ իրեն բո-
լոր կերակրին մէջ հիւանդութ, ախտ, վախտ,
ցաւ, սիրտը նեղ արտրած մը կ՚ըլայ և ետքէ
ետքէ ալ ցաւօք ու հեծութեամբ կը մեռնի,
խեղճ ըլալով այս աշխարհիս մէջն ալ անդին ալ.
այս ալ բաւ՝ քեզի որ նախանձը, բարկութիւնը,

ծուլութիւնը և ագահութիւնն ալ մարդուս
ինչպէս հոգին, անանկ ալ մարմինին մեծ վը-
նաս կուտան և գինքը հիւանդ կ'ընեն. վասն
զի մարդոյ հիւանդութիւններուն չատը աս ե-
ասկ մեղութիւններէն առաջ կուգան։

Հ. Բղջախոհութիւնը ի՞նչ է։

Պ. Բղջախոհութիւնը՝ եօթն մեղութիւններուն
ամենէն գեղջն է. և իրաւունք աս մեղութիւնը
մարդուս հոգիին ալ մարմինին ալ մեծ վեց
մեղութիւններէն շատ և շատ աւելի վնասա-
կար են։ Բղջախոհ մարդը՝ իր տարիներուն մէջ բա-
նաւ երբէք վայրկեան մը իր կեանքին տէրը չ'է.
գեղեցիկ որ և նայէ մեկը տեսնելուն պէս
անասնական ցանկութեան կիրքը կ'սկսի գինքը
տանջել, չարչարել և թէ որ ամուսնացած մարդ-
մըն է նէ, Աստուծոյ ցուցուցած ճամբէն դուրս
ելնելով կ'սկսի իր կնկանը հետ վարուիլ. քա-
ղաք, աշխատելու և ուրիշ ամէն բանի մէջ
ցանկութեան տտանան իր քովէն ամենևին չը
հեռանար. դիշերները մինչև անդամ երազին
մէջ իրեն անանկ կ'ուզայ որ կնիկներու և տը-
ղաքներու հետ անառակ կերպով խաղեր կը
խաղայ և շնութիւն կը գործէ. առանկով մար-
մինով և հոգիով մարդը ինքզինքը եր-
բոր աս մեղութեան գերի կ'ընէ, ալ Աստուծոյ
իրեն տուած ան գեղեցիկ կարողութենէն ու
շնորհքէն կը զրկուի. քրիստոնէի յատուկ պար-
տականութիւնները չը կատարեր. Աստուծոյ

խօսքերը մոխիր ընել և անոնց հնազանդիլ չ՚ուզէր։ Հապա գիշեր ցորեկ։ առուս իրիկուն չանք կ՚ընէ որ գեղեցիկ լամիերը հաղուի՝ ու բիշնեբուն ալէկ երևայ և երբոր ամէն կերպով կատարեալ բղջախոհ մը կ՚ըլլայ նէ՝ ալ ան ժամանակ մարմինը կը տկարանայ։ առաջ առաջ տոկալի ցաւեր կուգան երեն վրայ և վերջապէս անասունի մը նման կը սատկի։ բոլոր աշխարքի անէծքը ընդունելով։

Հ։ Եղբայր ես տոկայի առ մոլութեան խօսքերը լսելով, արդեօք աշխարհիս վրայ այսպէս բղջախոհ մարդիկներ կա՞ն։

Պ։ Յաւալին առ է որ եղբայր, աշխարհիս վրայ առ բղջախոհ մարդիկը խիստ շատ են։ և՝ բղջախոհութեան մոլութիւնը ալքոհոլ բանէ մը առաջ գալով, մեծամեծ չարիքներ կը հասցունէ։ վասն զի Քրիստոս ըսաւ որ՝ Ամենայն՝ որ հայի՚ի կին մարդ առ՚ի ցանկանալոյ նմա, անդէն չնացաւ ընդ նմա՚ի սրտի իւրում։

Թուփ։ Մարդ մը երբոր կնկան մը երես նայի անոր ցանկանալու համար, ան մարդը մէկէն իր սրտին մէջ չնութիւն գործած կ՚ըլլայ։ Որովհետև մէկ կնկան ցանկացողը երկու կնկան ալ կը ցանկանայ, երկու կնկան ցանկացողը երեք ալ կը ցանկանայ, ցանկութիւնը օրէ օր կը բորբոքի, գինքը խմողին ալէս արարած մը կ՚ընէ և կ՚ըլլայ բղջախոհ։ Ասանկ էին ահա Սոդոմ գոմոր քաղաքին բնակիչները՝ որոնց համար Աստուա-

ծաշունչ Ս. գիրքը այսպէս կը պրուչէ. «Ուտէին, ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին», և սանկ ըլլալուն համար էր որ Աստուած ալ ան երկու քաղաքներուն վրայ երկնքէն կրակ թափեց և մէջի բոլոր բնակիչները այրեց ու բոլոր ծնեցուածնին ալ մոխիր դարձուց։ Ըսել է որ բղջախոհութիւնը անանկ ծանր և մահացու մեղք մըն է եղեր որ՝ բղջախոհ եղող մէկու մը պատիժը՝ Աստուած չ'ապատեր որ անդին աշխարհին մէջը տայ, հապա հոս չը մեռած կը դատապարտէ զինքը և կը պատժէ։

Ահաւասիկ, եղբայր, եօթն գլխաւոր մեղքերուն վրայ համառօտ մը խօսեցայ քեզի. և անոնց ինչ ըլլալը կարճ կերպով հասկցուցի որ մարդուս հոգին ալ մարմինին ալ մահացու կերպով վնաս են. և մարդ մը որ սա մեղքերէն մէկը գործելու ըլլայ՝ Աստուծոյ գաւակ ըլլալէ դադրած է և սատանայի որդեգիր կը սեպուի։

ԳԱՍ Ը

ԵՕԹՆ ԳԼԽԱՒՈՐ ԱՌԱՔԻՆԱԲԹԻՒՆՔ։

Հ. Եղբայր, երբոր սա ամէն մեղքերը մէյմէկ անուն ունին նէ, հարկաւ ամէն առաքինութիւններն ալ մէյմէկ անուն ունին. ա՛նոնք ինչ կ'ըսուին։

պ. ինսոր որ դէշութիւններըը մըութիւն կ'ըսուին, անանկ ալ ազէկութիւններըը՝ առաքինութիւն կ'ըսուին. և ինսոր որ դլխաւոր մըութիւններըը եօթը հատ են նէ, անանկ ալ դըլխաւոր առաքինութիւններըը եօթը հատ են, և զանոնք սիրալ կատարողը անպատճառ Աստուծոյ Ս. ալքայութիւնը պիտի մտնէ մեռնելէն ետքը։

Հ. Այդ եօթը դլխաւոր առաքինութիւններըը որո՞նք են։

պ. Եօթն դլխաւոր առաքինութիւններն են։

Ա. Խոնարհութիւն իրեն մատերալ։

Բ. Եղբայրսիրութիւն. իրեն մատերալը։

Գ. Հեղութիւն ու համբերութիւն իրենոյ մատերալը։

Դ. Ակնութիւն ու աշխատասիրութիւն իրենոյ մատերալը։

Ե. Ողորմութիւն, ու աղքատասիրութիւն իրենոյ մատերալը։

Զ. Բարեխառնութիւն. իր մատերալը։

Է. Ողջախոհութիւն կամ ժուժկալութիւն, իրեն մատերալը։

Հ. կը խնդրեմ եղբայր, ինչպէս որ եօթն մահացու մըութիւններուն վրայ զատ զատ խօսեցար նէ, անանկ ալ այս եօթն դլխաւոր առաքինութիւններուն ինչ ըլլալը զատ զատ ինձ հասկըցուներ. որ ես ալ կարող ըլլամ դիտնալու թէ առաքինութիւնը ինչ է և մըութիւնը ինչ է։

Պ. Շատ անգամ ալ ես լսած եմ քեզի այս եօթն առաքինութիւններուն վրայ երգեալը. և կը յուսամ որ ես ալ ընծաներէս մեծ օգուտներ պիտի քաղես. ուստի ահա նախ ի՛սկսիմ խոնարհութեան վրայ խօսիլ և անոր ինչ ըլլալը և ինչու համար առաքինութիւն ըլլալը. քեզի հասկցունել. բայց թէ որ կուզես նէ, առաջ առաքինութեան ինչ ըլլալուն վրայ քիչ մը խօսիմ, և ինկալներն ալ կամաց կամաց կը բացատրեմ. անանկ որ բոլոր ըսելիքներուս միտքը աղէկ մը հասկընաս:

Հ. Շնորհակալ եմ. ուստի ըսէ ինծի ամենէն առաջ թէ առաքինութիւնը ի՞նչ է և ինչու համար ամէնուն և Աստուծոյ առջևը յարգելի է:

Պ. Առաքինութիւն ըսելը պարզ խօսելով բարեգործութիւն ըսել է. և բարեգործութիւնը Աստուծոյ ալ սիրելի է՝ մարդիկներուն ալ. մարդը մը ճշմարիտ քրիստոնեայ ըլլալու համար, մի միայն Քրիստոսի հաւատալը բաւական չ'է. մի միայն մեղքէ ղժուշանալը բաւական չ'է, հապա՝ պէտք է որ բարեգործութիւն ալ ընէ. և Քրիստոս անոր համար է որ կ'ըսէ «դանձերցէք ձեզ դանձս յ'երկինս», ահա ես խօսքին միտքը հիմակուան ըսելիքներուս աւելի աղէկ պիտի հասկնաս, երկինքին մէջ մեր տանելիք ապրանքը մեր առաքինութիւնն է. ինչպէս նաև տուբէն Աստուծոյ այսպէս կը խօսի, «մինչդեռ ժա-

մանակս ՚ի ձեռս է , գործեսցուք զբարիս »։

Թուէ . Քանի որ ժամանակ ունինք նէ , առաքինութիւն գործենք . և իրաւացունէ ալ , թէպէտ ասկի , արծաթ ևայլն եւէլցունելու եռևէ ըլլալ և ամենևին բարեգործութիւն չ՚ընելը գէշ է և ագահութիւն կ՚ըսեպուի , բայց կայ ագահութիւն մըն ալ որ առաքինութիւն կ՚ըսեպուի , և այս է ժամանակի ագահութիւնը . ժամանակի ագահ եղող մարդը՝ աշխարքիս ամենէն խելացի մարդն է . մենք ալ պէտք է որ ժամանակը չը կորսնցունելու համար ագահ ըլլանք և նայինք որ առաքինութիւն չը գործած վայրկեան մը չը կորսնցունենք , ամէն առեն մեռնիլը աչքերնուս առջևը բերելով խորհինք որ Յիսուս Քրիստոս որդին Աստուծոյ մի միայն առաքինութիւն գործողներուն և իրեն հաւատացողներուն պիտի բանայ Արքայութեան դռները . և Քրիստոս ինքը աւետարանին մէջ կ՚ըսէ թէ , « արթուն կացէ՛ք , զի ոչ գիտէք թէ երբ ծէր տանն գայցէ »։

Թուէ . Արթուն կեցէք , որովհետև չէք գիտեր որ տանուտէրը այսինքն Աստուած երբ պիտի գայ , ըսել կ՚ուզես որ մեռնելիք ժամերնիդ չէք գիտեր , անոր համար միշտ պատրաստ կեցէք Աստուծոյ դատաստանին երթալու , և առ ալ ուրիշ բանով չ՚ըլլար , հապա՝ մի միայն բարեգործութիւն ընելով այսինքն առաքինութիւն գործելով ։

Առաքինի մարդը Աստուծոյ սիրելի ըլլալէն զատ մարդոց ալ սիրելի կ'ըլլայ. որովհետեւ մարդ մը որչափ որ չար ըլլայ, միշտ բարեգործութիւնը կը սիրէ. և թէ որ այնչափ պէշ ըլլայ այն մարդը որ բարեգործութիւնը չը սիրեր նէ. անիկայ ալ չը կրնար ըսել որ առաքինութիւնը պէշ բան է. հապա կ'ըսէ որ աղէկ բան է, թէպէտ և ինքը չը սիրեր որովհետև չար է: Ասկէ ալ կրնաս հասկընալ որ առաքինութիւնը մոլութենէն ծրչափ. քաղցր և սիրելի է. խոնարհութիւնը ամէնն ալ կը դողէն և Աստուած ալ կ'ուզէ. և խոնարհութիւն ընող մարդուն խրճիթը միշտ հանդարտ է և սիրտն ալ ուրախ և ըրած խոնարհութեանը վրայ շատ գոհ է. բայց դողութիւնը որ մոլութիւն մըն է, թէ մարդոց առջև և թէ Աստուծոյ. քով գարշելի բան մըն է. և դող մարդուն խղճմտանքը աննեղին հանդարտ չ'է, սիրտը միշտ դողդ ի՛ջ է որ չ'ըլլայ թէ իր գործած չարութիւնը երեւան ելնէ. ինքը ուրախ չ'ըլլար և սիրտն ալ գոհ չ'է. բայց ծուլութիւնը կամ ապահութիւնը, կամ պարկրատութիւնը և կամ ըղձախոհութիւնը գին՝ քը դող ըրած են. ահա նզբայր, առաքինութեան ինչ ըլլալը հասկցուցինք. թեզի, և բայց յաւելցի ալ որ առաքինութիւնը և մոլութիւնը երբեմն որչափ տարբերութիւն ունին:

Հ. Հիմայ ուրեմն, եօթն առաքինութիւններուն վրայ ալ մէկիկ մէկիկ խօսէ որ աղէկ մը խրատուս

ըլլամ. առաջին առաքինութիւնը խոնարհութիւնն է ըսիր. ինչ է խոնարհութիւնը:

Պ. Խոնարհութիւնը՝ իրաւունէ գլխաւոր առաքինութիւն մընէ՝ թագաւորը՝ իրեն թագաւորական պալատէն դուրս կ'ելլէ և խոնարհութիւն ընելով աղքատին տունը կը մտնայ, անոր քովը կը նստի, հետը կը խօսի, ընկերակայ կը խնամէ, անոր ցաւերուն կը լսէ, և անոր խեղճութիւններուն դարման կը տանի, աշխարհիս մէջ ասկէ աւելի աղեկ ինչ կրնայ ըլլալ՝ եւ պիսկոպոսը խոնարհութեամբ իրեն աշակերտները կը սորվեցնէ և անոնց հաւասար սեղան կը նստի: Որովհետև Աստուած խոնարհութիւնը որչափ սիրելը մեզի հասկցունելու և մեզի ալ խոնարհ ընելու համար, երբոր Ս. կոյս Մարիամէն ծնաւ նէ, անբանեաց մսուրին մէջ դրաւեցաւ: Ուրեմն երկինքը ու երկիրը ստեղծողը որ աս ահագին տիեզերքը իրեն չը բաւեր և որուն մեծ վսեմքէն սերովբէները և քերովբէները կ'երկնչին, ինչպէս կրնայ մարդ մը ամբարտաւան ըլլալ, որ ինչ մը չէ, և որ ամէն վայրկեան կը մեռնի:

Ե. Ինչպէս կրնայ մարդ մը ամբարտաւան ըլլալ, որ ինչ մը չէ, և որ ամէն վայրկեան կը մեռնի:

Պ. Ամբարտաւանութիւնը՝ ինչպէս ըսի, ամէն մեղքերուն սկիզբն է, ինչպէս որ խոնարհութիւնը ամէն առաքինութեանց հիմն է,

զէր նէ հրեշտակներու բաղմութեանը վրայ կը հանդչէր ։

Նաև քեզի աղէկ մը հասկցունելու համար որ Քհառս Քրիստոս Աստուածն մեր, որչափ կը սիրէր խոնարհութիւնը և ինքզինքն կը խոնարհեր ամենուն առջև քանի մը օրինակ տամ որ մխիթ պահես ։ Նախ երբոր երեսուն տարեկան եղաւ • Յորդանան գնաց և իր ծառայէն Յովհաննէս Մկրտիչէն մկրտուեցաւ • երկրորդ՝ էշոյ և աւանակի վրայ հեծնալով Ս• Երուսաղէմ մտաւ • երրորդ՝ ոտքի մանուկներ սիրեց , դիր կը առաւ և օրհնեց • չորրորդ՝ առաքեալներուն ոտքերը լուաց և սրբեց • հինգերորդ՝ թող տուաւ որ ձեռուքները կապեն և դինքը քահանայապետներուն ու դատաւորներուն դիմացը տանին • վեցերորդ՝ երկու աւազակներուն մէջ տեղը խոնարհութեամբ կաչուեցաւ , եօթներորդ՝ խոնարհութեամբ գերեզմանին մէջ թաղուեցաւ ։ Ա.հաւասիկ եղբայր ասկէ կը հասկնաս որ խոնարհութիւնը որչափ սիրելի է Աստուծոյ և խոնարհ մարդը որչափ մեծարելի է անոր առջև և դինքը ինծի սիրով պիտի ընդունի երկնից Ս• Ա.րքայութեան մէջ ։

Խոնարհ մարդը՝ Աստուծոյ սիրելի ըլլալէ զատ մարդոց առջև ալ շատ սիրելի է • ամէնքը՝ իրեն խոնարհութիւնը տեսնելով զինքը կը մեծարեն ու կը յարգեն , խօսքը մեկ կ'ընեն , սիրտը չ'են ցաւցուներ , կ'ուզեն որ անոր հետ

ընկեր ըլլան եւայլն ։

Հ. Եղբայրախրատութիւնը ի՞նչ է ։

Պ. Եղբայրախրատութիւնը՝ զրեթէ ամէն գլխաւոր առաքինութիւններուն դեղեցկին է. և չը կայ առաքինութիւն մը՝ որ եղբայրախրատութեան չափ անուշ և մեծարելի ըլլայ աստուծոյ ու մարդոց առջեւ. անոր համար սիրելի եղբայր, ես ալ քիչ մը երկայն պիտի խօսիմ աստր վրայ՝ և կը յուսամ ալ որ մոխիկ կ'ընես. քեզի հասկցունելու համար թէ՝ եղբայրախրատութիւնը որչափ կը սիրէ Աստուած և մեզի մէկզմէկ սիրելու համար ինծի՞ օրինակ տուած է, սա կը յիշեցունեմ որ՝ Քրիստոս մեր սիրուն համար, աշխարհ եկաւ՝ քարոզեց՝ չարչարուեցաւ՝ խաչուեցաւ մեռաւ ։ Ի բոլոր պատուիրանքներուն ամենէն գլխաւորը ըսելով աս ս.քանչելի պատուիրանքը տուաւ. « զայս պատուիրեմ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս » ։

Թոպչ. Ձեզի աս կը պատուիրեմ որ մէկզմէկ սիրէք. եաքն ալ կ'աւելցունէ, « որպէս և հայրն ձեր երկնաւոր՝ սիրեաց զձեզ » ։

Թոպչ. Ինչպէս որ ձեր երկնաւոր հայրն ալ ձեզի սիրեց՝ այո, եղբայր Աստուած մեզի սիրեց, մեռնիք ալ ալէտք է որ մէկզմէկ սիրեն՝ ասկէ աւելի մեծ առաքինութիւն չը կայ երբէք. վասն զի Աստուած Սէր է՝ և ով սէր չ'ունի, ան Աստուած չը ճանչնար՝ առանց եղբայրասիրութեան՝ ոչ խոնարհութիւն կ'ըլլայ և ոչ ալ

ուրիշ առաքինութիւն մը. Ս. առաքեալն ցոյց հաննէս եղբայրասիրութեան վրայ խօսելով կ'ըսէ թէ. «Եղբայրդ ամէն ժամանակ աչքիդ առջեւը ունենալով չը սիրես նէ, Աստուած չ'ես սեսեր՝ զանիկայ կնաոր պիտի սիրես»:

Հ. Այդ եղբայրասիրութիւնը ամէնքն ալ ունին՝ ամէն մարդ հարկաւ իրեն եղբայրը կը սիրէ, և կարծեմ թէ եղբայր, ասկից այդչափ մեծ առաքինութիւն մը չ'է. ինչո՞ւ աչքի կը դոյես:

Պ. Դուն սխալ հասկցար մինչև հիմայ ըսածներս. ես եղբայրասիրութիւն կ'ըսեմ նէ՝ մի կարծեր որ ամէն մարդու իւր եղբայրը սիրելուն համար կ'ըսեմ. որովհետև ասիկայ, գողերն ալ, մարդասպաններն ալ, չարագործներն ալ. սահմոանները ալ և կռապաշտներն ալ կ'ընեն, իմ եղբայրասիրութիւն ըսածս՝ Աստուծոյ ալ ապառնիքին վրայ է՝ որ կ'ըսէ, սիրեացես զ'ընկեր քո. իբրև զանձն քո:

Թաղէ, հոս ընկերդ քու անձիդ պէս սիրես: Ընկեր ըսելով չ'է թէ մէկ մօրէնաձը մէկ եղբայր պիտի հասկընաս, հապա բոլոր քու ընկերներդ, բարեկամներդ, ազգակիցներդ ու բոլոր մարդիկները, այս է ճշմարիտ եղբայրասիրութիւնը. վասն զի թէ որ մարդ մը իր մէկ ծնողքէ եղած եղբայրը կը սիրէ և անոր աղէկութիւնը կ'ուզէ ու ձեռքէն եկած բարութիւնը կ'ընէ նէ մեծ բան մը ըրած չ'ըլլար. ասիկայ ամէն մարդիկ ալ կ'ընեն. հապա՝ պէտք է որ մեզի օտար եղող-

ներն ալ մեր անձին պէս սիրեն.ք , անոնց քա֊
ըի գործեն.ք , նեղը գտնուած առեններին անոնց
օգնութեան հասնին.ք ։ Ա.հա եղբայրսիրութիւնը
ամէնուն պարտ.քը ըլլալուն համար Սամարացի֊
ին առակը խօսեցաւ ան որ առաջ ըսի՝ թէ մար֊
դուն մէկը երուսաղէմէն Ճաճրայ երթ.քով
քաղա.քը երթալու համար. ճամբան աւազակները
վրան յարձակեցան՝ բոլոր ունեցածը առին և
զինքն ալ դանակով զարկին վիրաւորեցին ու
հան տեղը ձգեցին , ան տեղէն քահանայ մը ան֊
ցաւ , տեսաւ որ խեղճ մարդը որուն արիւնը կը
վազեր և որ՝ առած վէր.քին ցաւին չը դիմանա֊
լուն խեղճուկ մը կը ճըվար , բայց քահանան
հոգը չ'ըրաւ ու ճամբան շարունակեց՝ եւսէն
Ղևտացի հրեայ մը անցաւ , և ասկայ ալ նոյն֊
պէս հոգը չ'ընելով ճամբան առաջ տարաւ, ասոնց
եւսէն Սամարացի մը անցաւ ան տեղէն և երբ
որ ան խեղճ վիրաւորեալ մարդը տեսաւ նէ
մէկէն .քովը եկաւ , վէր.քը նայեցաւ , սրբեց ,
վրան դեղ .քսեց , աղեկ մը կապեց որ արիւնը
կարի , ետքը ձիան վրայ դնելով մօտիկը պան֊
դոկ մը տարաւ ու պանդոկապետին տուկ տա֊
լով բաւ լմէ , այս վիրաւորեալ մարդը աղէկ
դարմանէ այսինքն հոգ տար , ըռնացուր և որ֊
չափ ծախք ընես նէ , ետ դառնալու առնես
կը վճարեմ ։ Ա.հաւասիկ եղբայր , Սամարացիին
ատ երածը ճշմարիտ եղբայրսիրութիւն էր որ ի֊
ըեն չը սեռած , չը ճանչցած մարդուն այսչափ

աղէկութիւն ըրաւ և քսակէն դրամ տուաւ։

Հ. Եղբայր, ես ալ կը սիրեմ այդպէս առաքինութիւնը՝ և կը ջանամ որ ամէն մարդիկն ալ իմ անձիս պէս սիրեմ. բայց թէ որ թշնամի մը ունեմ նէ դանիկայ ալ իմ անձիս պէս պիտի սիրեմ. չէ՞ մի որ անիկայ միշտ ինծի չարութիւն ընելու եռանդ է և դիշեր ցորեկ ղիս կանիծէ։

Պ. Աղէկ որ այդ հարցումը ըրիր, ես ալ հինգ տարի աղէկ պիտի հասկցունեմ քեզի ճշմարիտ եղբայրսիրութեան ի՞նչ ըլլալը. ահաւասիկ Յիսուս Քրիստոս այդպէս հարցունողին՝ որ Աստուածային ամենատուրբ բերանովը այսպէս կը պատասխանէ. «սիրեցէք զԹշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք առելեաց ձերոց»։

Թոպճ. Ձեր թշնամիները սիրեցէք, ձեզ անիծողները օրհնեցէք. ձեզ առողներուն բարիք ըրէք. ահա հոս կուզայ կը հասնի ճշմարիտ եղբայրսիրութեան սահմանը՝ որուն համար ըսի թէ ամէն առաքինութենէն աւելի մեծարելի է. և արդարև մարդ մը որ եղբայրասէր ըլլալ կ'ուզէ, պէտք է որ չէ թէ իր սիրելիները միայն՝ հապա նա և իր թշնամիները սիրէ. որովհետև Ս. աւետարանի հոգին ան է որ աշխարքիս մէջ քրիստոնեայ մը մեկուսի կրնայ ալ չարութիւն չընել և ձեռքէն եկած բարիքը ընել. միայն իր սիրելիներուն —ուչ— հապա՝ նա և իր թշնամիներուն. դինքը անիծողներուն և դինքը

չարչարողներուն ալ ձեռքէն եկած բարիքը ընելու է. որովհետև եթէ մարդ մը իր թշնամին բարիք ընել չ'ուզէր նէ. ըսել է որ անոր չարիք պիտի դործէ. և ասանկով չարի տեղ չար պիտի հատուցանէ. աս ալ հին օրէնքի դործ կ'ըլլայ որ Մովսէս մարդարէն դրաւ և ըսաւ. «աչին ընդ աչան և ատամն ընդ ատամն»։

Թուէ. Աչքի տեղ աչք հանեցէք. և ակռայի տեղ ակռայ հանեցէք. այսինքն ձեր թշնամիներուն դէմ թշնամութիւն ըրէք կ'ըսէր. բայց Քրիստոս ատ պատուէրնին պակասը վրդեց. և երբոր հին պատուէրնը կ'ըսէր թէ «սիրեցես ընկերդ և ատեացես թշնամին քո», որ ըսել է։

Թուէ. Քու ընկերդ պիտի սիրես ու քու թշնամիդ պիտի ատես, ցնծաս Քրիստոս ատ եղբայրքի խօսքին պակասը լրացուց և ըսաւ քու թշնամիդ սիրէ և անոր բարիք ըրէ։

Հ. Բայց եղբայր, երբոր կ'լսես կ'ըսեմ որ մարդ մը ինծի թշնամութիւն կ'ընէ և կամ ընել կ'ուզէ նէ, ներսիդիս չի դար որ անոր բարիք ընեմ, աւելն սղէկ չ'է՞ որ անկէ հեռու քաշուիմ որ ոչ սղէկութիւն ընեմ անոր և ոչ ալ դէշութիւն։

*Պ. Այդ ըսածդ սղէկ է եղբայր, բայց ըսածիդ կերպը պակաս է, վասն զի լրաւ է որ դուն թշնամիդ հեռու կեցնալու ես, բայց ոչ թէ անոր

թշնամութիւն չ'ընես ոեչյի, հապա՝ որպէս պի անիկայ քեզի թշնամութիւն չ'ընէ՝ որովհետև քու թշնամիդ հարկաւ քեզի չը սիրեր և երբոր քեզի չը սիրեր նէ՝ ըսել է քեզի չ'ուզեր. ահաւասիկ ցնաւս մեզի չ'ուզողներուն մեր ինչ ընելնիքը պրուցեր է, թէ որ կ'ըսէ,—ձեզի այս քաղաքէն չ'ուզեն նէ ուրիշ քաղաք մը գացէք ու թէ որ ձեզի՝ ձեր գանուած տեղէն վռնտեն նէ, ուրիշ տեղ մը գացէք՝ բայց գուն կ'ըսես որ թշնամիս ատելութիւն չ'ընելու համար անկէ հեռու պիտի կենամ, հապա երբայր, անանկ գէպք մը պատահի որ, քու թշնամիդ համ ատելութիւն ընելու ես, համ գէշութիւն, այսինքն թէ որ անոր ատելութիւն ընես ան՝ գէշութիւն ըրած ըլլաս նէ, այն ժամանակ գուն ճշմարիտ երբայրասէր կրնաս ըլլալ:

Հ. Այդ բաւական պիէկ մը չը կրցայ հասկնալ երբայր, քիչ մը իրմէն երեցաւ ինծի ատ կտորը, ուստի կ'աղաչեմ որ եթէ կարելի է նէ, յարմար օրինակով մը խելքս տեղ ընէիր որով քու բացատրութիւնդ հասկնայի:

Պ. Ըսենք որ գուն մէկ մարդ մը կը ճանչնաս որ քեզի շատ թշնամի է, և ձեռքէն գալու որ ըլլայ, քեզի սպաննել, ու քու տունդ կողոպտել կ'ուզէ՝ գուն ատ մարդէն զատուելդ և հեռու տեղ մը գալիդ բնակելու, քիչ մը ժամանակ ետքը՝ տեսնենք որ ան մարդը ճամբան երթալու առնը աւազակները վրան յարձակե-

*յան որ գինքը սպաննեն , զուն երբեր հեռուէն աս բանը տեսնելու ըլլաս և դիտնաս ալ որ ան մարդը կրնաս սպասել նէ , ինչ կ'ընես , կը ձգես որ աւազակները գինքը գարնեն մեռցու-նե՞ն , չ'էլ նէ կերթաս զանիկայ անոնց ձեռքէն կը խլեցնես , հարկաւ պիտի խլեցնես , ապա թէ ոչ ճշմարիտ եղբայրսակեր չըլլալէդ զատ , մարդուն մեռնելուն պատճառ կ'ըլլաս : որովհե-տև կրնայիր սպասել՝ բայց թողուցիր որ աւա-զակները գինքը սպաննեն և ասանկով զուն անոնցմէ աւելի չարագործ և մարդասպան գի-տի սեպուիս : Նաև ըսեն որ քու թշնամիդ ճամ-բան երթալու առնը անտառին մէջ լինկաւ սա-քը կոտրեցաւ և երեք օր հոն մնայ անօթի ծարաւ և վիրաւորեալ , զուն ալ երեք օրէն ետքը այն անտառը գայիր և տեսար որ եթէ այն մարդը քանի մը ժամ ալ հոն կենայ , պիտի մեռնի , ինչ կ'ընես , թշնամիս է ըսելով զան-կայ հոն կը ձգես ու զուն կ'առնես կը քալես , չ'էլ նէ մեղքնալով շալակդ կ'առնես , տուն կը տանիս , անոր ուտելիք կ'ուտաս , վէրքը կը նա-յիս , քովդ տունդ մէջը կը պահես մինչև որ անոր ոտքը լաւնայ և անանկ տեղը դրկես՝ և կամ իր ընտանիքէն մարդ կայ և գինքը տա-նէ տանի , աս երկուքէն ո՞րը կ'ընես՝ եթէ որ երկարելը կ'ընես նէ՝ երանի քեզի որ իրաւցու-նէ ճշմարիտ քրիստոնեայ և ճշմարիտ եղբայրա-սէր եա եղեր . իսկ եթէ որ առաջինը կ'ընես նէ՝

քու եղբայրասիրութիւնդ , քու քրիստոնէութիւնդ ընդ ո՞ւր կը մնայ , չ'է որ մարդու մը մեռնելուն պատճառ եղար . կարելի էր որ ան մարդ՝ը՝ եաթը քեզի հետ ունեցած թշնամութեանը վրայ պղծալով դար քեզի հետ հաշտուէր և դուն ալ քու եղբայրասիրութեամդ հոգի մը դժոխքէն վառակած կ'ըլլայիր որ Աստուծոյ առջևը շատ մեծ բան է . մինչդեռ ան մարդը իմ թշնամիս է ըսելով թէ որ զանի անուանին մէջը ձգես երթաս նէ , դուն պատճառ պիտի ըլլաս ան մարդուն մահուանը և մարդասպան պիտի սեպուիս : Ահաւասիկ եղբայր , ճշմարիտ եղբայրասիրութիւնը իմ տկար խելքուս քեզի կաըլլել եղածին չափ բացատրեցի , հիմայ ուրիշ առաքինութիւններուն վրայ խօսինք :

Հ. Շնորհակալ եմ եղբայր , որ ամէն մէկ հարցումներուս ալ ազուր պատասխաններ կուտաս և գիս կը համոզես , որովհետև առաքինութիւնը պէս պէս կը հանդիպես , ինչպէս որ ըսիր , հիմայ բացատրեմ այս ըսածիս մէկը և

հասկցուսնեմ քեզի թէ հեզութիւնը ի՞նչ է, համբերութիւնը ի՞նչ է. և թէ ասոնք ինչո՞ւ համար առաքինութիւն կը կոչուին։ Անիրաւները թշնամութիւն ընելը կը սիրեն, բայց քրիստոնէին հեզութիւն ընել կը վայլէ, և ասոր ալ օրինակը ինծմե տուաւ Աստուած, ինչպէս որ մարգարէն կ'ըսէ, «իբրև ոչխար՝ ի սպանդ վարեցաւ»։

Թուէ. Ոչխարն պէս մահուան դիմեց. և ո՞րովհետև մենք քրիստոնեայ պարտաւոր է ինծմէ նմանիլ. ուստի պէտք է որ հեզութիւնն ալ անկէ սորվինք և անոր համեմատ հեզ ըլլանք. թշնամիայ բամբասանքներուն, մեզի ըրած չարութիւններուն ներեն.ք. ահաւասիկ ասիկայ է հեզութիւնը և ինծմե Աստուած երբեք կուսայ սանկներուն համար ու կ'ըսէ. երանի հեզոց, զի նո.քա ժառանգեսցեն զերկիր։

Թուէ. Երբեք հեզ մարդկիններուն՝ որովհետև անանկները երկիրը պիտի ժառանգեն։

Իսկ համբերութիւնը՝ ինչ ըսել է թէ որ կարելի է ըսել նէ եղբայրսիրութենէն և հեզութենէն ալ աւելի չէ ալ նէ՝ անոնց հաւասար է. և համբերութիւն չ'ունեցող մարդը բնաւ առաքինութիւն չը կրնար ունենալ. խոնարհ եղբայրսէր ու հեզ չը կրնար ըլլալ, վասն զի մարդս երբեմն բարկացած ժամանակը ամէն աշխարհ աներևոյթ չ'երևար որ դիմացինն ալ իրեն նման մարդ է և իրեն եղբայր է և թէ քրիստոնեայ մը եղբայրսէր ըլլալու է. ասոնց ա-

մէն.քը կը մոռնայ և ահա երբ կը կարծես որ աստանային ձեռ.քը դէրի պիտի ելնար դիմա֊ յինին չարութիւն ընելու, հոն մէկէն և մէկ համբերութիւնը երևան կ'ելլայ և այն մարդը ընելի.ք չարի.քէն ետ կը կեցնէ, որով ըսել է թէ համբերութիւնը անանկ առա.քինութիւն մըն է որ դժոխքէն մարդ կ'ազատէ. Յիսուս Քրիստոս համբերութեան ս.քանչելի օրինակները տուաւ մեզի մաոնութեան դիշերը հրեից այն֊ .քան նախատինք.ներուն, ծեծերուն, չարչա֊ րան.քներուն, թու.քերուն և ծիծաղներուն համ֊ բերեց, խաչին վրայ երե.ք ժամ մնաց համ֊ բերելով, գերեզմանին մէջ երե.ք օր համբերեց և մինչև հիմայ ալ մարդոց գործած այլազան չա֊ րութիւններուն կը համբերէ ու կ'ազատէ որ ա֊ մէն.քն ալ ղեղչի դան, և լրեն՝ անոնց համար թախած արիւնը սպրսպը չ'երթայ. ահա եղ֊ բայր, կարծեմ կրցայ հասկցունել որ համբերու֊ թիւնը՝ ս.քանչելի առա.քինութիւն մըն է. և չը համբերող մարդը երկնից Ս. Ս.րքայութիւնը չը կրնար մտնել։

Հ. Հասկցայ հղբայր, հիմայ պիտեմ ես ալ որ հեզութիւնը և համբերութիւնը մեծ ու գլխա֊ ւոր առա.քինութիւններ են. հիմայ ըսէ ինծի որ, արիութիւնը ու աշխատասիրութիւնը ինչ են և ինչու առա.քինութիւն կը կոչուին։

Պ. Մինչև հիմայ ըսածներէս հարկաւ հասկը֊ ցար որ քրիստոնէին պարա.քերէն մէկն ալ ե֊

ըև ծարդ՝ աշխատիլ և թէ ղինքը ու թէ իրեն ընտանիքը պարկեշտ կերպով ապրեցնելն է. և ասիկայ միայն դործը առաքինութիւն դարձած կ'ըլլայ. նաև սա ալ հարկաւ հասկցար որ ամէն բանէ վախնալու չ'է, հապա՝ աս աշխարհիս մէջ ամէն բան Աստուծոյ է ըսելով դէմ կենալու է առանձին մեր դլուխը բերած վտանգութիւններուն. առաջինը՝ այսինքն մարդ մը թէ ղինքը և թէ իրեն ընտանիքը պարկեշտ ու վայելուչ կերպով ապրեցնելու համար դործելու առաքինութիւնը աշխատասիրութիւնն է, և աշխատասէր մարդը միշտ Աստուծմէ կ'ապաւէ որ իրեն դործերուն յաջողութիւն տայ. դոր օրինակ. թէ որ ան մարդը երկաթադործ է նէ Աստուծմէ կը խնդրէ որ իրեն բերդքերը աղէկ և առատ ընէ. թէ որ հալիւ է նէ կը խնդրէ որ իր ոչխարները աղէկ ծնին ու չը մեռնին. Աստուած ալ անոնց աշխատասիրութիւնը տեսնելով կ'օրհնէ դիրեն.ք և մէկին տեղ շատ կը հատուցանէ. աշխատասէր մարդը՝ կ'ըլլայ նաև հիւրասէր իր տունը եկող մարդիկը կը յարդէ ու կը մեծարէ, անոնց կերակուր կը հանէ, կը հանդչեցնէ, և առանց փոխարէն մը ընդունելու՝ մեծ պատիւներ ընելով դիրեն.ք կը ճամբէ:

Իակ երկրորդը՝ այսինքն մարդ մը աս աշխարհիս մէջ ամէն բան Աստուծոյ յանձնելու է և առանձին փորձութիւններէն վախնալու չ'է. առաքինութիւնն ալ արիութիւն կը սեպուի

Յիսուս Քրիստոս արիւնեան օրինակը տուաւ մեզի՝ ոչ թէ մեռնելէն չը վախցաւ՝ այլ ուզեց հասնիլ եւ երեսակէմ գնաց, մինչ անմարդուն որ ամէն կերպով Քրիստոսը կը նսեմացնէ անոր տուած պատուէրները պահելէ։

Հ. Այս ըսածներդ ալ հասկցայ. և հիմայ եւս ալ կը սիրեմ արիւնքիւնը և աշխատասիրութիւնը. որովհետև մարդիկ ալ կը սիրեն այն և աշխատաբեր եղողը, և անոր մեծ յարդ ու պատիւ կուտան. հիմայ ալ կը խնդրեմ որ ինձի աղեկ մը բացատրես թէ ողորմածութիւնը և աղքատասիրութիւնը ինչ են, և ինչո՞ւ առաքինութիւն կը կոչուին. և թէ որ աս հարցումներուս աղեկ մը ձանցրութիւն կը պատճառեմ նէ, կը խնդրեմ որ ներէք, դուք ալ աս աղեկ բաները ինձի տրվեցունելով առաքինութիւն դրած կ'ըլլաք։

Պ. Ինտոր որ արդէն քեզի հետ խօսեցայ, եղբայր, ես ամենևին ձանձրութիւն չ'եմ զգար քու րրած հարցումներդ և մտքովս ալ կ'ուզէի, որ Աստուած արժանի կ'ընէ զիս՝ ինձ պատուէրանքները ուրիշներուն տրվեցունելու. ուստի հիմայ խօսիմ ողորմածութեան և աղքատասիրութեան վրայ. Գիտես հարկաւ որ կարօտ եղողներուն ողորմիլը անոնց օգնութիւն ընելը արդէն աղեկ բան է. Յիսուս Քրիստոս յայտնի ըրաւցած է որ ողորմածութիւն չ'ունեցող մարդը՝ երկնից Աքրայութիւնը չը կրնայ

մտնել, և ահա աւետարանին մէջ այս պատմութիւնը դրուած է. «Պիտի մը եկաւ Յիսուսին ըսաւ թէ, տէր՝ ի՞նչ ընեմ որ յաւիտենական Աքայութիւնը ժառանգեմ». Յիսուս ալ անոր ըսաւ «Աստուծոյ պատուիրանքները պահէ». Պիտին՝ պատասխանեց թէ «անոնք ամէնն ալ պղտիկութենէ՛ն ի վեր կը պահեմ, ուրիշ ի՞նչ ընեմ» Յիսուս՝ան տեսնելով որ «եթէ կատարեալ ըլլալ կուզես նէ, դնա բոլոր ունեցած ապրանքդ աղքատներուն բաժնէ և իմ հետևէս եկո՛ր. պիտին որ լսեց՝ դլուխը կախեց և դնաց տրտում երթալ, որովհետև դրամ շատ ունէր և չ'էր ուզեր որ անոնցմէ բաժնուի. ահա այս օրինակը սորվեցաւ քրիստոնեայ, թէզի աղէկ մը կը հասկցունէ որ մեռնիլ կատարեալ ըլլալու համար միշտ պատրաստութիւն ընելու ենք, այնպէս սորվելու ենք որ աշխարհիս մէջ դանուած բաները մերը չ'են, հապա՝ մեռնիլ միջնորդ մընենք որ մէկ ձեռքով մեր ունեցածը և միւս ձեռքով տանք, թէ որ մեկը եղբայրասէր ըլլայ նէ հարկաւ պատրաստ ալ պիտի ըլլայ. վասն զի եղբայրը կը սորեմ բառը թէպէտ դիւրին է, բայց պէտք է որ անոր կատարութիւնը տեսած ժամանակը, ձեռքէն եկած բարիքը ընէ. ահա սորվելու պատրաստութեան . որ առանց եղբայրասիրութեան չը կրնար ըլլալ:

Իսկ աղքատասիրութիւնը՝ բուն եղբայրասիրութիւնն է. երկուքն ալ մէկ մէկէ դրեթէ եր-

քէֆ տարբերութիւն չ՚ունին ։

Հ. Էյ, թէ որ եղբայրութիւնը և ազգասիրութիւնը՝ երկուքն ալ մէկ են նէ, ինչո՞ւ համար զատ զատ առաքինութիւններ կը կոչուին կոր. այս տեղը ինծի հասկցուր ։

Պ. Ա՛յս հարցումիդ կ՚ապասէի ես ալ, որ յայտնապատասխանը տամ ։ Ա՛րդ՝ եղբայրութիւնը՝ ինչ է նէ, ազգասիրութիւնն ալ ան է. և մէկ կողմանէ կրնայիս նէ ազգասիրութիւնն ալ ինչ է նէ ողորմածութիւնն ալ ան է. բայց ասոնք անանկ տեղ մը կուգան կը հասնին որ մէկմէկի կը բաժնուին. վասն զի, ըսենք որ դուն եղբայրասէր ես, և բոլոր մարդիկները կը սիրես, բայց թէ որ ազգասէր ալ ըլլաս այն ատենը քու եղբայրութիւնդ կատարեալ կ՚ըլլայ, որովհետև հարուստ մարդիկը ամէնն ալ կը սիրեն հարուստ ըլլալնուն համար, բուն ազգասէրը ազգասիրութիւն վրայ ցըցունելու է, և արդէն ազգասիրութիւն ըսելը, ճշմարիտ եղբայրասիրութիւն ըսել է, վասն զի համարեանք թէ դուն երկու եղբայր ունիս, մէկը հարուստ՝ մէկալը աղքատ, ձրն առնլի կը սիրես, հարկաւ եթէ կատարեալ քրիստոնեայ մընաս. թէպէտ ղերկուսն ալ հաւասար սիրելու ես, բայց որովհետև աղքատ եղբայրդ քեզի կարօտ է, անոր համար՝ վասն առնլի դուն կ՚ունենաս, կը խղճաս և շատ կը սիրես, ահա այս է աղքատասիրութիւնը. և մարդ մը աղքատասէր ըլլալու

համար պէտք է առաջ հոգին հեղ, խոնարհ ըլլէ, ինչուր որ ըսի իր ունեցած բոլոր ապրանքին մէջ չը սեպէ ինքզինքը, սանկ ներսուն երանի կ'ուտայ ըսելով, «երանի աղքատաց հոգւով, զի նոցա մխիթարեսցին»։

Թուէ. երբեմն հոգւոյ աղքատներուն, որոնք առանց անոնք պիտի մխիթարուին. աղքատախրատութեան ինչ ըլլալը քիչ խօսքով քեզի հասկըցունելու համար սկիզբն ուրիշ կ'բաւէ որ, երբայրախրատութեան վրայ ինչ որ խօսելոյ նէ՝ աղքատախրատութիւնն անկէ աւելի է, անոր համար աղքատասէրը մարդու պէս առաքինի մարդ կարելի չ'է որ ըլլայ. Աստուած ալ այսախներուն՝ իր Ս. Աւետարանը մէջ անվախճան, երանելի ու նախանձելի վարք պատրաստած է։

Հ. Բարեխառնութիւնը ի՞նչ է։

Պ. Բարեխառնութիւնը՝ այսինքն ուտելու և խմելու չափաւորութիւնը, ետքն գլխաւոր առաքինութիւններէն մէկն է, և իր ուտելիքին ու խմելիքին չափ դնող մարդը միայն կարող է Քրիստոսի Ս. պատուիրանքները կատարել ու մեղայ ։ զգուշանալ, բարեխառնութիւն չ'ունեցող մարդիկ շատ ատանային որս կ'ըլլան, և ատանկները որչափ ալ որ Քրիստոսը, մերին և անոր հնազանդ մնալ ուզեն՝ չ'են կրնար, իսկ բարեխառն մարդը՝ իր ուտելիքին ու խմելիքին չափ դնելէն զատ, նաև իրեն ամէն մէկ գործեցուն չափ կը դնէ, աղօթքով և պահօք սատա-

նային վարձատրութիւնն կը յաղթէ և զանէ քովէն կը վռնտէ. ինչպէս որ Յիսուս Քրիստոս ըսաւ, «այս ազգ՝ այսինքն սատանայն ոչ իւիք երանէ, բանով մը չ'երլար, այլ միայն պահօք և աղօթիւք. հապա միայն աղօթքով ու պահքով. և ահա պահք պահելու համար պէտք է որ մարդ բարեխառնութիւնը սիրէ և բարեխառն վարուի, մանաւանդ որ բարեխառնութիւն ունեցող մարդը, եղբայրասիրութիւն, խոնարհութիւն, աղքատասիրութիւն և ողորմածութիւնն ալ կ'ունենայ, Աստուծոյ և իրեն մերձերուն հնազանդ կ'ըլլայ և բոլոր մարդիկը զինքը սիրելէ զատ, Աստուած ալ կ'օրհնէ և կը սիրէ այսպիսին։

Հ. Ողջախոհութեան կամ ժուժկալութիւն ըսած առաքինութիւնը ի՞նչ է։

Պ. Ահա եղբայր կ'ուզեմ այս մեծ առաքինութեան վրայ քիչ մը երկար խօսիլ քեզի հետ, և հասկցունել քեզի թէ ողջախոհ մարդը որչափ յարգելի ու մեծարելի է այս աշխարհիս մէջ և որչափ սիրելի է Աստուծոյ առաջ, իրաւունք ունէ երնեկ ողջախոհ մարդուն, որ թէ ինքզինքը իր անձը սուրբ կը պահէ և թէ ուրիշներուն սրբութեան դաս տուած կ'ըլլայ. Աստուած երբոր Ադամ ու Եւան ստեղծեց նէ, բաւ առնոնց «աճեցէք և բազմացարուք և լեցէք զ'երկիր» այս խօսքը չ'է թէ միայն անոնց համար բաւ, հապա՝ ամէն այրերու և ամէն կիներ

ըս. բայց Հաւերը, ժուժկալութիւն չ'ունենալ-
նուն, Աստուծոյ ա՛ս ամենաւորը պատուիրան-
քը ոտքի տակ կ'առնեն և իրենց ամուսնու-
թեան սրբութիւնը կ'ապականեն, իրենց հա-
մար հեշտութիւններ կը հնարեն, և անանկ կը
կարծեն որ Աստուած հրանան տուած է իրենց.
բայց չ'է, ատոր բոլորովին հակառակն է. ա-
մուսնութիւնը Աստուած հաստատեց որ մարդոց
ցեղը չը հատնի, հապա օրէ օր աճին ու բազմա-
նան, ատոր որ շատ քրիստոնեայներ առանց ա՛ս
պատուիրանքը դիտնալու, մի միայն իրենց սըր-
տին ցանկութիւնը կատարելու համար կնիկներու
հետ անհամար ժամանակ անցուցնել կուզեն. և շատ
կնիկներ ալ իրենց ցանկութեան փափաքը կա-
տարելու համար երիկ մարդոց հետ ապրելու
և ուզածնին ընելու կը նային: Ա՛հա ասիկայ ոչ-
չախոհութեան հակառակ մեղքութիւն մըն է, որ
բողչախոհութիւն կ'ըսուի. և ա՛ս մեղքութեան
ձեռքը անդամ մը դերի ինկողը, շատ դժուա-
րութեամբ կրնայ ազատիլ. անոր համար ոչ-
չախոհութիւնը միւս բոլոր անառակութիւննե-
րէն աւելի մեծ է. և այս առաքինութիւնը ա-
ռնելէն դժուար բլլալուն համար, Քրիստոս
ուս չէ իր բերնովը, չէ մարգարէից, առա-
քեալց և ուրիշ տարբեր բերանովը յայտնի ը-
ուած է որ ա՛ս առաքինութիւնը ուրիշ բանով
ձեռք չը կրնար անցնիլ, բայց միայն պահ.քով
և աղօթքով, ա՛հաւասիկ Քրիստոս իր բերնո-

ին ըրուցածը. «և են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն Աւրքայութեան Աստուծոյ»:

Թուփ. Եւ ներքինի մարդիկներ կան, որ Աստուծոյ արքայութիւնը ժառանգելու համար ներքինի եղան. այսինքն ներքինիի պէս ապրեցան, որովհետև ներքինի մարդը մարմնոյ այս տեսակ ցանկութիւն չ'ունենար, ըսել է որ Աստուծոյ Աւրքայութիւնը ձեռք անցունելու համար, ողջախոհ ըլլալու է. և առանց այս առաքինութիւնը ունենալու անկարելի է որ մարդ մը Աստուծոյ սիրելի ըլլայ, և Աւրքայութեան ճամբան դանէ ու անկէ շիտակ քալելով յառաջ երթայ:

Հ. Որովհետև այս ողջախոհութեան վրայ խօսք առիր որ երկայն պիտի խօսիս. կ'ուզեմ երկար որ ինծի օրինակ մը տաս ու հասկցունես թէ աս առաքինութիւնը մեկալ առաքինութիւններէն ինչպէս վեր է:

Պ. Ահա քեզի դեղեցիկ օրինակ մը տամ որ ըսածներուս միտքը հասկնաս. մարդս ունի աչք. ձեռք. ոտք. բերան. ականջ. լեզու և խելք. հիմայ ահաւասիկ սեպհն ք որ մարդ մը կայ՝ որ այս եօթն կատարելութիւններն ալ չ'ունի. անանկին կենդանի կրնանք ըսել — ոչ —. սանկ ալ եօթն գլխաւոր առաքինութիւններէն զատ մեկը անկարելի է որ քրիստոնեայ սեպուի: Հիմայ սեպհն ք որ այն մար-

ը միայն աչք ունի. կը տեսանէք որ՝ իրաւ, աչքը լիուռ ապէկ բան մըն է. և աչք չ'ունեցող մարդը խեղճ է առ աչխարհիս մէջ. բայց դարձեալ կատարեալ մարդ կրնա՞նք սեպել. —ոչ—. ասանկ ալ մի միայն խոնարհութիւն ունեցող մարդը թէպէտ և իր խոնարհութեանը համար ապէկ է. բայց մեւս առաքինութիւնները չ'ունենալուն համար ալ կատարեալ քրիստոնեայ չը կրնար սեպուիլ— : Սեպհնէք որ այն մարդը աչք և ձեռք ունի, դարձեալ կատարեալ մարդ չ'է. որովհետև ոտք չունի որ քալէ. ականջ չ'ունի որ լսէ. բերան չ'ունի որ ուտէ. լեզու չ'ունի որ խօսի. խելք չ'ունի որ մտածէ ու չարը բարիէն կարող ըլայ որոշելու. ասանկ ալ խոնարհութիւն և եղբայրութիւն ունեցող մարդը կատարեալ քրիստոնեայ չը կրնար սեպուիլ. որովհետև անդին դանուած մէկալ հինգ գլխաւոր առաքինութիւններէն զուրկ է. այսպէս ալ հեզութիւնը և համբերութիւնը՝ ա-

կանջներն են բանէ. ողորմածութիւնը և ա-քաւարարութիւնը՝ բերանի տեղ դնենք. բա-րեխառնութիւնն ալ լեզուին տեղը դնենք. կը նայինք դէտուանց որ կատարեալ մարդ եղեր է. որովհետև ականջ. լեզու. ձեռք. ոտք. բե-րան և աչք ունի. ասանկ ալ վեց առաքինու-թիւնը դործածին երբոր նայինք նէ. կը տես-նանք որ եղբայրութիւն. խոնարհութիւն. համբերութիւն. հեզութիւն. բարեխառնու-

թիւն. աղքատասիրութիւն ևն. այսպիսի առաքինութիւններ ունի. և կը կարծեն՝ որ կատարեալ քրիստոնեայ մըն է. բայց անդամ մը ներսը նայինք. մէկը պիտի տեսնենք որ խելք չ'ունի. մէկալն ալ պիտի դանենք որ ողջախոհութիւն չ'ունի. ուստի անանկը կատարեալ մարդ և կատարեալ քրիստոնեայ կը սեպուի՞ —ոչ—. ահաւասիկ այս օրինակս քեզի աղէկ մը հասկցունէ թէ ինչպէս որ մարդուս ձեռք. ոտք. լեզու. աչք. ևն. թէպէտ պէտք են. բայց ասոնք առանց խելքի օգուտ մը չ'են ըներ. սանկ ալ զանազան առաքինութիւն ունեցող մարդը երբոր ողջախոհութիւն չ'ունի՝ բան մըն ալ չ'ունեցած կը սեպուի. որովհետև խելք չ'ունեցող մարդը՝ օր մը կ'երևայ աչուընելը կը հանէ, օր մը ականջները կը խուլցնէ. օր մը ձեռքը ոտքը անպիտան կ'ընէ և ահա կը նայիս որ կենդանի չ'է. մեռեր է. սանկ ալ ողջախոհութիւն չ'ունեցող մարդուն գովը շուտով կը հանի սատանայն. անոր ցանկութիւնը կը դրդռէ. և օր ըստ օրէ ունեցած բոլոր առաքինութիւններէն ետ կը կեցնէ. և վերջապէս օր մըն ալ կառնէ դժոխքը կը տանի. ահա երեսյը. այս յարմար օրինակովս քեզի հասկըցուցի ողջախոհութեան ինչ բլլալը և այս մեծ առաքինութիւնը ձեռք անցունելու համար դարձեալ կըսեմ թէ պահք պահել և շարունակ աղօթք ընել պէտք է։

Ահա վերջացաւ եօթն առաքինութեանց վրայ ըսելիքներս. և կը յուսամ որ դուն ալ կատարեալ ու ճշմարիտ քրիստոնեայ մը ըլլալու համար առնք պիտի դործես. ու մեղքերէ և սատանային վարձուվճիռներէն ազատ ծնաս. յորմէ Յիսուս Քրիստոս իր ամենազօր աջովը վրկէ մեզի և պահպանէ, ամէն:

ԴԱՍ Գ.

Եօթն առաքինութիւնները եօթն մեղքերու դէմ են:

Ա. Եղբայր, եօթն դլխաւոր առաքինութիւնները ուն և եօթն մահացու մեղքերուն այսինքն մեղքերուն վրայօք խօսածներդ ալէկ մը միտքս առի, և հասկըցայ որ մէկ առաքինութիւն դործող մարդը պէտք է մէկալ ամէն առաքինութիւններն ալ դործէ որ, Աստուծոյ Սրբութեան արժանի ըլլայ՝ նոյնպէս մէկ մեղքերուն դործող մարդը՝ հարկաւ մէկալ մեղքերն ալ կը դործէ և սատանով դժոխքը կ'երթայ, քայց կրնայ որ անանկ մարդ մը ըլլայ՝ որ եօթն առաքինութիւնները և եօթն մեղքերը իմիասին դործէ նէ, ան մարդը Սրբութենէն պիտի երթայ, չ'է նէ դժոխք:

Ա. Կարելի բան չ'է որ եօթն առաքինութիւննե-

ը պտծող մարդը՝ նօթին մեղութիւնները կարենայ պտծել, որովհետև առաքինութիւնը միևչեւ որ չը սիրես չ'ես կրնար պտծել՝ ու երբոր կը սիրես և կը պտծես, ըսել է որ մեղութիւնները չ'ես սիրեր ու չ'ես պտծեր, մարդ մը չը կրնար Աստուծոյ և աստանային ծառայել, կամ մէկը պիտի սիրէ կամ միւսը, Աստուած կ'ուզէ որ մեր աոաքինի ըլլանք. աստանան ալ կ'աշխատի որ մեղութիւն պտծենք. հիմայ թէ որ Աստուծոյ հնազանդիլ կ'ուզենք նէ, պէտք է որ անոր Ս. պատուիրանքները ալահենք. թէ որ աստանային գերի ըլլալ կ'ուզենք նէ, պէտք է որ անոր ցուցուցած ճամբային երթանք, և այս ալ չը կրնար ըլլալ, ինչու որ Աստուծոյ պատուիրանքները աստանային ճամբային շատ հեռու և անոր հակառակ են. աստանկ ալ նօթին առաքինութիւններէն մէկը նօթին մեղութիւններուն հակառակ է։

Հ. Կը խնդրեմ որ այդ կէտերը ինձի աղէկ մը բացատրես. ինչպէս կ'ըլլայ որ ամէն մէկ առաքինութիւն ամէն մէկ մեղութեան հակառակը են կ'ըսես։

Պ. Ահա սորը օրինակը տամ քեզի. հպարտութիւնը նօթին մեղութիւններէն մէկն է, խոնարհութիւնն ալ նօթին առաքինութիւններէն մէկն է, հիմայ կարելի չ'է որ դուն հէմ հպարտ ըլլաս, հէմ խոնարհ, վասն զի հպարտ մարդը ամենևին ուրիշին խոնարհիլ չ'ուզեր. իսկ խոնարհ

մարդը ամենևին ուրիշին դէմ հպարտ ըլլալ չ'ուզեր. իսկ դուն կրնաս հպարտ և խոնարհ ըլլալ —ոչ— նաև չ'ես կրնար այս խոնարհութիւնը և հպարտութիւնը իրարու քով բերել կամ իրարու հետ խառնել, վասն զի ուր տեղ որ խոնարհութիւն կայ՝ հոն տեղ հպարտութիւն չը կրնար ըլլալ. զոր օրինակ տեսանք թէ խոնարհութիւնը ջուր է, իսկ հպարտութիւնը կրակ. հիմայ թէ որ ջուրը կրակին վրայ լեցուենէ կրակը չը մարիր. — հարկաւ կը մարի — այսպէս է նաև խոնարհութիւնը, երկրորդ՝ որ խոնարհութիւնը Աստուծոյ նշանն է, հպարտութիւնն ալ սատանային նշանն է, և ուր տեղ որ Աստուծոյ նշանը կայ նէ. սատանային նշանը այն տեղէն շուտ մը անյայտ կ'ըլլայ:

2. Հիմայ հասկցայ որ խոնարհութիւն ունեցող մարդը՝ հպարտութիւն չ'ունենար, ըսել է որ մէկ առաքինութիւն ունեցողը՝ մէկ մեղութենէ խալասած կ'ըլլայ, բայց կ'աղաչեմ, որ մէկալ առաքինութիւնները և մեղութիւններն ալ այսպէս իրարու դէմ բերես և վերի տուած օրինակիդ պէս բացատրես որ խելքս աղէկ մը տեղ բնէ:

3. Եօթն մեղութիւններուն երկրորդն է նախանձը. և եօթն առաքինութիւններուն ալ երկրորդն է եղբայրասիրութիւնը, ատոնք երկուքն ալ դէմ դէմի բերուն.ք, և կը նայինք որ անկարելի է թէ մարդ մը նախանձ և եղբայր-

ախտութիւն ունենայ, որովհետև երկուքը մէկ մէկու բոլորովին հակառակ բաներ են. նախանձոտ մարդը՝ իւր ընկերին կամ որ և իցէ մարդու մը աղէկ ըլլալը և յառաջ երթալը քանի որ կը տեսնէ, կարծես որ սրտին մէջ որդ մը կ'ելլայ ու գինքը կուտէ կը հատցունէ. ընդհակառակն եղբայրասէր մարդը՝ միշտ չանք կ'ընէ որ իրեն ընկերը կամ որ և իցէ մարդ մը միշտ և ամէն ժամանակ յառաջ երթայ և ինքը անոր յառաջ երթալը ու աղէկ ըլլալը տեսնելով սրտանց կ'ուրախանայ և թէ որ անոր աղէկութեանը համար ձեռքէն բան մը գալու ըլլայ նէ կ'ընէ. և երանի՜ վրայ ալ շատ գոհ կ'ըլլայ ու փառք կ'ուտայ Աստուծոյ, հինայ դուն քու վրադ մտածէ ու լսէ թէ կարելի է որ քու ընկերիդ վրայ չար նախանձ ունենաս և զանկայ սիրես, ասիկայ չը կրնար ըլլալ. զոր օրինակ ձիւնը և սառ արևը մի և նոյն ժամանակ չ'ես կրնար քով քովի բերել, նախանձը ձիւնին կը նմանի, թէ որ արև այսինքն եղբայրասիրութիւն ըլլայ, այն ձիւնը այսինքն նախանձը շուտով կը հալի, չը մնար:

Հ. Շատ աղէկ, հիմայ հասկցայ որ նախանձն ալ եղբայրասիրութեան դէմ է եղեր, և եղբայրաներէր եղող մարդը՝ նախանձոտ չ'ըլլար, հապա երկրորդ առաքինութիւնը և երկրորդ մեծութիւնը իրարու հետ մնատի համեմատելու է:

Պ. Երկրորդ մեծութիւնն է բարեսիրութիւնը՝ որ

համբերութեան ու հեզութեան պակասութենէն առաջ կուգայ. վասն զի թէ որ դուն բանի մը բարկանալու ըլլաս՝ ալ աչքիդ բան մը չ'երեւար, ընելիքիդ վրայ չ'ես մտածեր, բարին ու չարը որոշելու կարողութիւն չը մնար վրադ, և կամքդ առաջ տանելու ու բարկութիւնդ մարելու համար ամէն տեսակ դէշութիւնը կ'ընես, իսկ համբերութիւնը տար հակառակն է. համբերող մարդը չը բարկանար, ընելիքին վրայ կը մտածէ, բարին ու չարը որոշելու կարողութիւն ունի, իր կամքին ականջ չը կախեր և հեզութեամբ հանդարտ կը կենայ. ուրեմն կարելի է որ մարդ մը բարկացող և համբերող ըլլայ.

—ոչ—ասկէ ալ կը հասկընաս որ առաքինութիւնը գործող մէկը մեղք չը կրնար գործել, վասն զի կարճ խօսքով հասկցուներ. առաքինութիւն գործել ըսելը՝ մեղք չը գործել և կամ մեղքի հակառակը գործել ըսել է:

Հ. Զորրորդ մեղքիւնը՝ չորրորդ առաքինութեան հետ ինչո՞ր համեմատելու է:

Պ. Զորրորդ մեղքիւնն է ծուլութիւնը՝ և ծոյլ եղող մարդը աշխէն անգամ չարժիլ չ'ուզեր, իրեն անանկ կ'ուգայ որ աշխարքիս մէջ ի միայն դատարկ ապրելու համար ծնած է, և թէ որ բոլոր ունեցածը ուտէ լմնցունէ և ետքը անօթի մնայնէ, հարկ կ'ըլլայ որ երթայ գողութիւն ընէ, որով թէ Աստուծմէ և թէ մարդիկներէն

կը պատժուի. իսկ երրորդ առաքինութիւնն է, արիութիւնը և աշխատասիրութիւնը, որ ծուլութեան հակառակ ըլլալով մարդը ուժով և աշխատասէր կ'ընէ, գողութենէ ետ կը կեցունէ. արի և աշխատասէր մարդը, աղէկ դիտէ որ ինքը աշխարհ.ք եկած է իր ճակտին քրտինքը ապրուստը ճարելու և ուրիշներէն օգնութիւն չ'ըսպասելու համար. ծոյլ մարդը վախկոտ կ'ըլլայ, իսկ աշխատասէր մարդը մի միայն Աստուծմէ կը վախնայ և անոր Ս. պատուիրանքներուն համեմատ կեսրի աշխարհքիս մէջ. վերջապէս, ինչ որ ծոյլ մարդը չ'ըներ, կամ ընել չ'ուզեր, նոյն բանը կ'ընէ աշխատասէր մարդը. և մինչդեռ ծուլութիւն ընելով մարդիկ տառապանայն կը մօտենան, աշխատասէր և արդ մարդիկ ալ Աստուծոյ կը մօտենան:

Չ. Հինգերորդ մեղքեան հետ հինգերորդ առաքինութիւնը լաւագոյն համեմատելու է:

Պ. Հինգերորդ մեղքիւնն է ագահութիւնը՝ որ շատ տսկալի է. որովհետև ագահ մարդը չ'է թէ ուրիշներուն ձեռս կուտայ, հապա՝ իրեն անձին ալ. ես մարդ մը գիտէի, որ շատ ագահ էր, վաստկած ոսկիները հոգէ առնէր մը մէջ կը լեցնէր և ամէն իրիկուն կը տանէր հողին ծերքը կը պահէր. կէս գիշերին անկողինէն կ'ելլար կերթար այն տեղը հողը դարձեալ կը փորէր, առնը կը բանար մէջի ոսկիները կը համրէր ու կը համրէր, կը համբուրէր և

ըեսին կը քսէր, յետոյ վրանին կը նայէր, կը նա-
յէր ու լալ կ'ակսէր. այսպէս քանի մը ժամ ա-
նանց հետ ժամանակ անցուներէն ետքը կրկին
անգամ սանդին մէջը կը լեցուներ դէմը կ'առ-
նէր ու կ'ակսէր աղօթք, երկրպագութիւն ը-
նել. որչափ գէշ մելութիւն մըն էր սակայն, ա-
մենևին հաց ուտել չ'էր ուզեր, վախնալով որ
գուցէ ոսկիները կը հատնին. ամենևին աղքատ-
ներուն չ'էր ողորմէր. օր մը տեսայ որ աղ-
քատին դեռինը վուաճ լալին վրայ որպէս թէ ո-
ղորմութիւնը տալու մտքով տասը վարայ ձը-
դեց և քսան վարայ դողցաւ, քիչ մը ժամա-
նակէն ետքը լսեցի որ անօթութենէն մեռեր
էր. ահաւասիկ երկայր, ապահ մարդուն այս
աշխարհիս մէջ ունեցած վախճանը աս է. իսկ
անդին աշխարհին մէջ դժոխքին յաւիտենական
տանջանքը պիտի ժառանգէ. իսկ հինդերորդ
առաքինութիւնն այսինքն ողորմածութիւնը և
աղքատասիրութիւնը՝ ապահութեան բոլորովին
հակառակն են. և ողորմած ու աղքատաբեր մար-
դը՝ թէ աս աշխարհիս ու թէ անդին աշխարհին մէջ
հանդիստ ու վառատր կեանք մը կանցունէ.
աղքատասէր մարդը իր վատակը հոգին ներ-
քինը չը պահեր, հապա՝ երբ աղքատ մը կը տես-
նայ՝ ձեռքէն եկածին չափ, ողորմութիւն կա-
տայ անոր, ապահ մարդը՝ աղքատները չը սի-
րեր ու կը վռնտէ, որովհետև կը վախնայ որ
իրմէ ողորմութիւն կ'ուզեն. իսկ աղքատասէր

մարդը անոր հակառակ աղքատները կը սիրէ, և ինքը անոնց կ'երթայ ողորմութիւն բաժնելու համար. ես մարդ մը կը ճանչնամ որ պզտիկուց աղքատներուն ողորմութիւն կ'ուտար և գանոնք կը սիրէր, իր կեցած գեղին բոլոր աղքատ մարդիկները, կիներն ու աղաքնները գինքը կը ճանչային ու իրենց հոգիներուն պէս կը սիրէին. ամէն անգամ գինքը տեսնելնուն պէս ուրախ կ'ըլային կ'առնէին իրենց խրճիթը կը տանէին և իրենց խեղճութիւնները կը պատմէին, անիկայ ալ սիրով անոնց մոիկ կ'ընէր և հոգը գառնելու առթը քակը կը բանար ու ամէն մէկուն մէյմէկ ողորմութիւն կուտար. և փոխարէն անոնց օրհնութիւնը կառնէր ու դուրս կ'ելլար. ժամանակէ մը հոգը այս մարդուն նանամած աղքատներէն մէկը շատ հարստացաւ, այնչափ որ ծառայներ, ձիեր տուներ ունէր ու նէր. ու սկսաւ ինքն ալ աղքատ մարդիկներուն ողորմութիւն ընել և գանոնք սիրել. ա- սիկայ ըսից որ ժամանակաւ իրեն ողորմութիւն ընող և գինքը սիրող մարդը շատ աղքատացեր և իր ընտանիքին ու զաւկիներուն հետ աւուր հացի կարօտ չքաւորութեան մէջ ինկեր է, շուտ մը եկաւ անոր տունը դնաց, իրեն հին բարեկամը հանդուրեց և գանիկայ իրեն զաւկիները ու կինիկուվը առաւ իր վառարտ տունը տարաւ և հոն մեծ պատիւով պահեց մինչև վերջը. սիկայ ըսից որ ժամանակաւ իրեն ողորմութիւն ընող և գինքը սիրող մարդը շատ աղքատացեր և իր ընտանիքին ու զաւկիներուն հետ աւուր հացի կարօտ չքաւորութեան մէջ ինկեր է, շուտ մը եկաւ անոր տունը դնաց, իրեն հին բարեկամը հանդուրեց և գանիկայ իրեն զաւկիները ու կինիկուվը առաւ իր վառարտ տունը տարաւ և հոն մեծ պատիւով պահեց մինչև վերջը. ա-

և աղքատասիրութեան ողորմածութեան վերջ. Ջը ես իմ աչքովս տեսած ըլլալուս՝ օրինակները քեզի պատմեցի, դուն ալ դնա մտածէ։

Հ. Վեցերորդ մեղութիւնը՝ վեցերորդ առաքինութեան հետ ինչպէ՞ս համեմատութիւն է։

Գ. Վեցերորդ մեղութիւննէ որկրամոլութիւնը, որուն դերի եղող մարդը՝ այս աշխարքիս հետ անանկ կը կապուի որ ամենևին մեռնիլ չ'ուզեր. և մեռնելու ժամը հասած տեսնը վրան սարսափ կ'ուզայ. երբա՛ է որ Աստուած մեզի այս աշխարքիս մէջ տեղծած ժամանակը հրամայտւաւ որ ամէն կերակուրները ուտենք, բայց որկրամոլութեան մեղութենէն մեզի աղաւորլուս համար Ադամին ու Եւային պատուիրեց ըսելով թէ Դրախտին մէջը եղած ամէն պտուղներէն կերէք, բայց երկու ծառ ցուցուց և ըսաւ որ անոնց պտուղներէն պիտի չ'ուտէք. թէ որ ուտէք նէ պիտի մեռնիք. բայց սատանան օձի կերպարանք մտնելով գնաց Եւան խաբեց. որկրամոլութեան դաս մը տուաւ անոր, և Եւայ ալ ան ծառերէն մէկուն պտուղը վրցուց կերաւ, ու Ադամին ալ կերցուց. Աստուած ալ զիրենք անիծեց և ըսաւ թէ քանի որ իմ պատուիրանքս չը պահեցիք, ինտոր որ առաջ հոգի էիք նէ, նորէն անանկ հոգ դառնաք. և սանկով որկրամոլութիւնը պատճառ եղաւ որ մարդիկ մեռնին. որկրամոլութիւնը պատճառ եղաւ որ Ադամէն մինչև Քրիստոս այսինքն 4000

առարկայ մարդկային ձեռքը գերկի մնացին. արկածանքութիւնը պատճառ եղաւ որ աշխարքիս մէջ հիւանդութիւններ, տուժիւններ, չարութիւններ և թշուառութիւններ ծնան. և որ քառնալ մարդը՝ այս ամէնուն պատճառաւ բոլոր մարդկանցմէն դէշ կը սեպուի. իսկ վերջերորդ առաքինութիւնը՝ որ բարեխառնութիւն է, այսինքն ուտելու և խմելու չափաւորութիւնը՝ ամէն տեսակ դէշութիւններէն մարդս կազատէ. աղբատութեան թշուառութիւններուն առաջքը կ'առնէ. և բարեխառնութիւն ունեցող մարդը՝ ամենևին արկրատոր չը կրնար ըլլալ. ասկէ զատ բարեխառնութիւն ունեցող մարդը՝ երբեմն դիպուածով մը հիւանդացած նէ, շուտ մը ամէն տեսակ ուտելիքներէ ետ կը քաշուի. և առանց կոլ կ'առողջանայ. իսկ արկրատոր մարդը՝ հիւանդացած որ ըլլայ, չը կրնար ամէն կերակուրներէ ետ կենալ. վնասակար բաներ կ'ուտէ և իրեն մեռնելուն պատճառ կ'ըլլայ որ անձնասպանութիւն ըսել է, և Աստուած այսպիսիները ունեցած է ամէն ժամանակ:

Հ. Եօթնեկրտրդ մեղութիւնը եօթնեկրտրդ առաքինութեան հետ ինչպէս համեմատելու է:

Պ. Ամէն մեղութիւններ իրենց դէմ մէյ մէկ առաքինութիւններ ունին. բայց եօթնեկրտրդ մեղութիւնը՝ այսինքն գողչախոհութիւնը՝ իրեն դէմ առաքինութիւն չ'ունի. գողչախոհութեան վրայօք խօսած ժամանակս ըսի որ ասիկայ ամէն

մոլութիւններէն գէշ է, և աս մոլութենէն ետ քաշուիլը շատ դժուար է. անոր համար Աստուած պատուիրած է որ աղօթք ընենք պահք պահենք փորձութեան մէջ չիյնալու համար. վան զի սատանային փորձութիւններուն ամենէն զօրաւորը՝ աս մոլութիւնն է. թէ որ շարունակ պահք պահելու և աղօթք ընելու ոյժ ունենք. և խնդրենք Աստուծմէ որ մեզի ցանկութեան փորձութենէն ազատ պահէ. այն ատեն Աստուծոյ շնորհքը մեր վրայ դալով սրտերնուս մէջ թեթեւութիւն մը կ'իմանանք. կը սիրշակինք. և զօրութիւն կ'ունենանք ժուժկալութիւն՝ այսինքն ողջախոհութիւն պահելու, վան զի ողջախոհ կամ ժուժկալ մարդը բղջախոհութիւն չ'ընէր։

Հ. Եղբայր ըսիր որ ժուժկալութիւն ընելու և Աստուծոյ սիրելի ըլլալու համար պահք պահելու և շարունակ աղօթք ընելու ենք. պահքին վրայ ասկէ մը խօսեցար, բայց աղօթքին վրայ սա պիտի հարցունեմ թէ, եկեղեցիին մէջ ընելու իմ չ'է նէ առանձին իմ տունս կամ սենեկիս մէջ։

Պ. Այդ հարցումիդ պատասխանը վաղուան դասին մէջ պիտի տամ. հիմայ այս օրուան դասը կը յուսամ որ աղէկ մը միտքդ պահեցիր և դոյց միտքիդ մէջը սուրբերու ես որ Հօրմն մուխիւններուս դէմ Հօրմն առաքինութիւնները դործելու ենք, այսինքն.

Ղ. Հպարտութեան դէմ, լռնարհութիւն.
Բ. Նախանձի դէմ, եղբայրսիրութիւն.
Գ. Բարկութեան դէմ, հեզութիւն և համբերութիւն.
Դ. Ծուլութեան դէմ, արիութիւն և աշխատասիրութիւն.
Ե. Ագահութեան դէմ, ողորմածութիւն և աղքատասիրութիւն.
Զ. Որկրամոլութեան դէմ, բարեխառնութիւն. այսինքն ուտելու և խմելու չափաւորութիւն.
Է. Բղջախոհութեան դէմ, ողջախոհութիւն կամ ժուժկալութիւն, որ աղօթքով Աստուծմէ ընդունելու ենք:

Այս եօթն մոլութիւններէն հեռի կենալով և եօթն առաքինութիւնները գործելով քրիստոնեայ մը կատարեալ կ'ըլլայ և Ս. Արքայութիւնը կը վայելէ ետքը:

ԴԱՍ Դ

Աղօթք եւ Հայր մեր.

Հ. Հնայ երէայր, եօթն մահացու մոլութիւններուն հետ ալ ինչ ըլլալը ազէկ մը գիտեմ և հասկցայ ալ՝ որ մոլութեան մէջ չ'ինալու համար առաքի-

Նուէրներ դրկելու եմ. բայց աղօթքին համար պիտի խօսէիր այսօր, թէ եկեղեցին մէջ ընե-լու եմ, չ'է նէ առանձին սենեակիս մէջ։

Պ. Աղօթքը երկու կերպ է, հրապարակական և առանձնական. երբոր եկեղեցի կ'երթաս և ժողովուրդին բազմութեանը հետ կ'աղօթես նէ, անոր կ'ըսուի հրապարակական աղօթք. իսկ թէ որ սենեակդ կը փակես և մինակ կ'աղօթես նէ, անոր ալ կ'ըսուի առանձնական աղօթք. այս երկու կերպէն ալ կրնաս ընել, այսինքն կըր-նաս եկեղեցին մէջը աղօթել, կրնաս նաև սե-նեակդ մէջը աղօթել. բայց թէ որ «ես առան-ձին սենեակիս մէջը կ'աղօթեմ և ամենևին եկե-ղեցի չ'եմ երթար» ըսես նէ, մեծ սխալմունք մը դործած կ'ըլլաս. որովհետև քու սենեակդ մէջ դուն մի միայն կ'աղօթես. իսկ երբոր եկեղեցի երթաս նէ, հոն Աստուծոյ Ս. դիրքերուն ըն-թերցմունքը կը լսես. հաւատքի վրայ քարո-զութիւններ մտիկ կ'ընես. Քրիստոսի Ս. ան-մահ պատարագը աչքդ կը տեսնայ և միան-դամայն Աստուծոյ Ս. եկեղեցին մէկ անդամը լլլալէ յայտնի կը ցուցնես։

Հ. Ըսիր որ դվխաւոր աղօթքը «Հայր մերն» է և մեկալ բոլոր աղօթքները անկէ չինուած են. բայց երբայր դուն Հայր մերը ինծի դրուցեցիր և ես մէջը անանկ մեծ դրուցուածք մը չէ դը-տայ, ինչու համար դվխաւոր աղօթքը «Հայր մեր»ն է կ'ըսես։

Պ. «Հայր մեր» ին մէջ գրուցուած խօսքերուն միտքը թէ որ հասկնայիր նէ այդ հարցումը չէր պիտի ընէիր. Յիսուս Քրիստոս իր ամենասուրբ բերանովը այս աղօթքը մեզի տուվեցուց, և հասկցուց որ մեր ամէն խնդիր.քներէրը ամբողջ ա՜նոր մէջը կան. անոր համար տէրունական այ՜ս ինքն սիրոջմէն տրուած աղօթք կ'ըսուի. Հայր մերին մէջը եօթն գլխաւոր խնդիր.քներ կան ո՜րոնք եթէ դիտնալու ըլլաս, ազէկ պիտի հաս՜կնաս որ «Հայր մեր» էն մեծ աղօթք չէ կայ և չը կրնար ըլլալ։

Հ. Այդ եօթն գլխաւոր խնդիր.քներըը որո՞նք են։

Պ. Այս եօթն գլխաւոր խնդիր.քներն են.

Ա. Հայր մեր՝ որ յերկինս ես, Ս. Հոգւոյն անուն.քո.

Թ.ԷՓ. Մեր Հայրը, որ երկին.քին մէջն ես, քու անունդ սուրբ ըլլայ։

Բ. Եկեսցէ արքայութիւն.քո։

Թ.ԷՓ. Քու թագաւորութիւնդ հասնի։

Գ. Եղիցին կամք.քո. որպէս յերկինս՝ և յեր՜կրի։

Թ.ԷՓ. Ինծոր որ երկին.քին մէջ՝ անանկ ալ աշխարհ.քիս վրայ.քու կամքդ ըլլայ։

Դ. ԶՀաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր։

Թ.ԷՓ. Մեր ամէն աւուր հացը՝ այսօր ալ մեզի տուր։

Ե. Թող մեզ զպարտս մեր. որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։

Թ.ԷՓ. Մեր յանցանքներուն ներէ. ինծոր որ

մեն.ք ալ մեզի դէմ յանցան.ք գործողներուն ու մեր պարտականներուն կը ներեն.ք ։

Զ. Եւ մի տաներ զմեզ ՚ի փորձութիւն ։

Թուէ. Ու մեզի փորձութեան մէջ մի ձգեր ։

Է. Այլ փրկեա զմեզ ՚ի չարէն ։

Թուէ. Հապա մեզի չար սատանայէն փրկէ ։

Ահա սոն.ք են «Հայր մեր»ին և մէջի եօթն խնդ-իր.քները՝ որոն.ք զատ զատ մեկնութիւններ ունին ։ սա խնդ-իր.քները ընելէն ետ.քը չնորհակալ կ՚ըլլան.ք Աստուծմէ ու կ՚ըսեն.ք «զի .քո է Ա.ր.քայութիւն և Զօրութիւն և փառ.ք յաւիտեան ամէն» ։

Թուէ. Որովհետև Ա.ր.քայութիւնը՝ Զօրութիւնը՝ և յաւիտենական փառ.քը ուրիշինը չ՚են. հապա՝ .քովինդ են. ամէն ։

Հ. «Հայր մեր»ին եօթն խնդ-իրներն ալ զատ զատ մեկնութիւններ ունին ըսիր. կ՚աղաչեմ Էղբայր որ զանոն.ք ինձի պուտկես. որպէս զի աղեկ մը խելքս տեղ ընէ. ուսոի ըսէ ինձի թէ հայր մեր որ յերկինս ես. ի՞նչ ըսել է. ա.ս խոս.քին իմ խելքս ամենևին չը հասաւ, Աստուած թէ որ երկին.ք՝ն է նէ. ի՞նչպէս կ՚ըլլայ որ աշխար.քիս մէջը եղածները և մարդոց ըրածները դիտէ ։

Պ. Հայր մերին այդ առաջին խոս.քը դուն պըտալ մեկնեցիր. ահա դաւիթ մարգարէն կը բացատրէ այսպէս. «Երկին.ք աթոռ իմ են. և երկիր պատուանդան ոտից իմոց» ։

թ՝՚ւէ. երկինք իմ աթոռս է, և աշխարհքն ալ իմ ոտքերուս դնելու տեղ նէ. նա և ցնտուս ինքնիսատս ցաղութիւն առնելէն ետքը երբոր երկինք պիտի համբառնար, ըսաւ անոնց. «գնացէք այսուհետև քարոզեցէք զամենայն հեթանոս. մկրտեցէք զնոսա. յ՚անուն Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ուսուցէք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ. և ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս. մինչև՝ ի կատարած աշխարհի »։

թ՝՚ւէ. Ա.սկէ ետքը գացէք, բոլոր հեթանոսանեւրուն քարոզեցէք. ու զանոնք Ս. Երրորդութեան անունովը մկրտեցէք. իմ ձեզի պատուիրածներս՝ անոնց սորվեցուցէք ու ես մինչև աշխարհքիս վերջը ձեզի հետ եմ. ըսել է որ Ա.տուածի պիտի որ երկինքն է կ՚ըսուի նէ, իր զօրութիւնովը և իմաստութիւնովը ամէն տեղ է. և կրնայ մարդուս սրտին մէջի եղածներն ալ տեսնել. որովհետև անիկայ միայն գիտէ թէ մեզնէ ինչ կը խորհինք և ինչ պիտի ընեինք. շատ անգամ մարդիկներ կան՝ որ Ա.տուած չը տեսնայ ըսելով իրենց չարութիւնները դիշեր ատեն կը գործեն, բայց ահա Ա.տուծոյ ինչ ըլլալը Դաւիթ մարգարէն՝ աղէկ կը բացատրէ ըսելով թէ. «տէր, քննէ զնիրաս և զերկիւամտութիւնս»։

թ՝՚ւէ. Ա.տուած մարդուս սրտին և երակներուն մէջի եղածը կը քննէ. ուր միայն որ մեր դատաւոր տեղը և կամ մութին մէջը գործածը

չը պիտի տեսանէ . տես թէ Քրիստոս ի՞նչ կ՚ըսէ. «և հայրն քո որ տեսանէ՝ ի ծածուկ հատուսցէ քեզ յայտնապէս» ։

Թոչէ. Եւ քու հայրդ որ ծածուկը կը տեսնայ . յայտնի կերպով այսինքն ամենուն առջև պիտի հատուցանէ քեզի քու ըրածիդ վարձքը . նաև աւանկ կ՚ըսէ . «ոչ քո ծածուկ . որ ոչ յայտնեսցի . և գաղտնի որ ոչ ծանիցի» ։

Թոչէ. Ծածուկ բան մը չը կայ՝ որ չը յայտնուի և գաղտուկ բան մը չը կայ որ չը ճանչցուի. ահա այս խօսքերով կը հասկցուի որ հայր մեր ոչ ի՛երկինս ես ըսելով մի միայն աս պիտի հասկըցանք որ Աստուած իր ամբողջ երկինքը հաստատած է . բայց ինքը ամէն տեղ է ։

Հ. Հինգ տղէկ մը հասկցայ աս առաջին խօսքին մեկնութիւնը . հապա՝ երկրորդ խնդրուքին մեկնութիւնը ի՞նչ է ։

Պ. Երկրորդ խնդրուքը աս է . « քու թագաւորութիւնդ հասնի » աս ալ ամէն ճշմարիտ քրիստոնէին ուզած բանն է , որ աշխարհիս վերջը չը շուտով հասնի և Աստուծոյ յաւիտենական թագաւորութիւնը գայ. մէկ քրիստոնեայ մը աս խօսքը ըսելու համար՝ պէտք է որ ամէն գործերուն ամէնն ալ սիրէ և գործէ , և պատրաստ ըլլայ որ երբ Աստուած իրեն հրեշտակը ղրկէ անոր հոգին առնելու նէ , ան քրիստոնեային ուրախութեամբ գնէ աս խնդրուածքին աշխարհքը և երթայ Աստուծոյ առջևը կայ-

Ես. ահա ինչ որ ես ուզեցի ըսել։ Ես ուզեցի ըսել որ ես ալ ամեն ժամանակ միտքերնիս բերեր եմ Աստուծոյ թագաւորութիւնը պիտի հասնի օր մը. ուստի պատրաստ ըլլանք որ անոր գիմացը պարզ երեսով ելլանք և անվախ ալ մեզի սիրով ընդունի։ Վասն զի աշխարհքիս մէջն անգամ է. երբոր պատերազմի գացող զինուորը գիտցայ որ երեն թագաւորը՝ անյայտ ժամանակ մը պիտի գայ և իրեն ըրած կռիւներուն վրայ հաշիւ պիտի ուզէ, մեկէն կարծես թէ նոր ուժ մը կուգայ վրան և կ'սկսի թշնամիին դէմ մեծ քաջութիւն ընել, և ամեն ժամանակ կ'ըսէ ինքնիրեն որ՝ ալ իմ թագաւորս ժամմըտաւ գայիր ոչ, սա իմ քաջութիւններուս վոխարէն վարձքս առնէի. արդ՝ երբոր աշխարհային անցաւոր վաստքի մը համար այսպէս մեծ թագաւորին հանդիպելը կուզենք նէ, հապա երկնային և յաւիտենական անճառելի վաստքի մը համար Աստուծոյ թագաւորութեան հանդիպելը չ'ենք ուզեր. ուստի մեր աղօթքներուն մէջ միշտ ըսենք Աստուծոյ թէ «քու թագաւորութիւնդ հասնի». բայց ատ խօսքը ըսելու համար, պէտք է որ մեր գործքերովը արժանի ըլլանք Աստուծոյ սիրելի ըլլալու։

Հ. Երբոդ խնդիրքին մեկնութիւնը ի՞նչ է։

Պ. Երբոդ խնդիրքն է. «Թնաւոր որ երկինքին մէջ անանկ ալ ատ աշխարհքիս վրայ. քու Ս. կամք

քըզ ըլլայ» ։ Ասոր վրայ Դաւիթ մարդարէն այս-
պէս կը գրէ , «Աստուած ոչ կամի զմահ մեղա-
ւորին , այլ ղդառնալն նորա ՚ի չար ճանապար-
հէն» ։

Թուէ . Աստուած մեղաւոր մարդուն մեռնիլը չ՚ուզեր , հապա կուզէ որ անիկայ իրմէն չար ճամբէն ետ դառնայ . Յիսուս Քրիստոս այս խօս-
քը անոր համար մեզի տուիմացուց որ գիտնանք
թէ Աստուած որչափ կ՚ուրախանայ երբոր մեղ-
նայ որ մարդիկ ատանային չարութիւնները կը
ձգեն և իրեն կը դառնան . Աստուծոյ կամքը
ահաւասիկ ասիկայ է . և որովհետև մեր.ը ալ
քրիստոնեայ ենք , երբայրութեան պէտառ-
լու ենք որ ամէն մարդ Աստուծոյ սէրը պատ-
ուիրան.քները պահէ , իր մեղ.քերէն ետ քաշ-
ուի և երկնից Ս. Ա.ր.քայութիւնը ժառանգէ .
որովհետև Աստուած մեզի չ՚ստեղծեց որ սա-
տանային ձեռ.քը դերի ելնուլով դժոխ.քին յա-
ւիտենական տանջան.քներուն մատնուինք , հա-
պա՝ անիկայ ուզեց որ իրեն դէմ ապստամբ և-
ղող հրեշտակներուն պակասը լեցուներու հա-
մար , մարդը ստեղծէ որ վերջէն իր տէրը Ա.ր-
քայութեանը մէջ առնէ . բայց մարդիկ իրենց
ունեցած ազատութիւնը չարաչար գործածելով
և անդ.ենական աշխար.քին դատարանը մոռ.քեր-
նին չը բերելով և կամ բանի տեղ չը դնելով .
սկսան մեղութիւններու եռանդ լինել . անոր հա-
մար՝ Յիսուս Քրիստոս աշխարհ.ը եկաւ , ինչպէս

որ ինքը կ'ըսէ. «ոչ եկի կոչել զ'արդարս՝ այլ զմեղաւորս»։

Թ՚չէ. Չէ թէ արդարները, հապա մեղաւորները կանչելու եկայ. և մենք որ քրիստոնեայ ըլլալով Աստուծոյ պատուիրանքները աղէկ գիտենք. պէտք է որ չը գիւղողներուն տրվելու ջանանք և մեղաւորները իրենց չար ճամբէն դառնալու աշխատինք և ըսենք «ով Աստուած. ինծի որ երկինքին մէջ՝ անանկ ալ ամաչելիքս վրայ չդա կամքդ լլայ»։

Հ. Ջորտրդ խնդիրքին մեկնութիւնը ինչ է։

Պ. Ջորտրդ խնդիրքը այս է. «մեր ամէն աշխարհս այսօր ալ մեզի տուր». Յիսուս Քրիստոս այս աղօթքը մեզի տրվելցունելուն պատճառը այն է որ, քրիստոնեայ մը միշտ ապրած օրուան վրայ մտածելու է. երկրդրդ օրուան վրայ մտածելու չ'է. ինչպէս որ ինքն ալ կ'ըսէ. «տակէ հոգը. մի խորհիր թէ, ինչ պիտի ուտենք. կամ ինչ պիտի խմենք և կամ ինչ պիտի հագնինք. որովհետև Ձեր երկնաւոր հայրը՝ այդ բաները պիտի պարգևէ ձեզի. երկինքին թռչուններուն նայեցէք որ չ'են վարեր ու չ'են հնձեր. ու շտեմարաններուն մէջ չ'են ժողվեր. բայց ձեր երկնաւոր հայրը զանոնք կը կերակրէ. չ'է՞ որ դուք այն թռչուններէն լաւ էք»։ տալ հասկցունել կուզէ Քրիստոս որ ամէն ժամանակ աշխարհային բաներ մտածելով երկնից Ս. Արքայութիւնը չը ստանանք, և

կամ վաղուան և միւս օրուան ուսելիքնիս մը-
տածելով՝ աղքատներուն ողորմութիւն տալը չէ
դադրեցուներնիք . ուստի կ'ըսէ որ օրուան ու-
տելիքնիդ կամ խմելիքնիդ նոյն օրը միտքերնիդ
բերէք . և ըսէք , մեր ամէն աւուր հացը՝ այ-
սօր մեզի տուր ։

Հ. Հինդերորդ խնդիրքին մեկնութիւնը ի՞նչ է։

Պ. «Եւ թող մեզ զպարտս մեր որպէս և մեք
թողումք մերոց պարտապանաց» . այս խօսքին
մեկնութիւնը արդէն տուած եմ քեզի , եղբայր-
սիրութեան վրայ խօսած ատենս . որովհետև
եղբայրասէր մարդը ներող կ'ըլլայ և թշնամին
իրեն ինչ ալ որ ընէ նէ , ինքը անոր կը ներէ .
բայց ինչպես ուզելով մեզի հաւկցունել որ մին-
չև որ մեր թշնամիներուն ըրածին չը ներենք նէ ,
Աստուած ալ մեր մեղքին թողութիւն չի տար .
անոր համար մեզի ըսել կուտայ . «ինչպէս որ
մենք մեր պարտականներուն այսինքն մեր թշնա-
միներուն կամ մեզի դէմ գործողներուն կը նե-
րենք նէ՝ անանկ ալ դուն Աստուած մեզի
ներէ ։

Հ. Բայց եղբայր , երբոր թշնամիս ինծի դե-
շութիւն մը ըրաւ և ես ալ ներեցի նէ , դար-
ձեալ դէշութիւն մը ընէ նէ ներեմ. և կամ թէ որ
իմ եղբայրս պակասութիւն մը գործէց ու ևկաւ
ներում խնդրէց . ես ալ ներեցի նէ , դարձեալ
պակասութիւն մը ընէ և ներում խնդրէ նէ դարձ-
եալ ներեմ ։

Պ. Այդ հարցումիդ պատասխանը Յիսուս Քրիստոս կուտայ Ս. Աւետարանին մէջ և կ'ըսէ. «Թէ որ քու եղբայրդ քեզի դէմ չ'է Թէ ւօթեն, հապա՝ ւօթանաւուն անգամ ւօթեն հեղ ալ ներելու ըլլայ նէ՝ դուն պէտք է որ ներես». ահա Քրիստոսի ըսածը. և Թէ որ մեզի դէմ յանցանք գործողներուն չը ներենք նէ; ինչպէս յոյս ունենանք որ Աստուած մեր յանցանքները ներէ. ահա հինգերորդ խնդիրքին մեկնութիւնն ալ աս է։

Հ. Վեցերորդ խնդիրքին մեկնութիւնը ի՞նչ է։

Պ. Հայր մերին վեցերորդ խօսքը այս է. «և մի տաներ զմեզ ի փորձութիւն»։

Թ. Ու մեզի փորձութեան մէջ մի ձգեր. քրիստոնեայ մը պէտք որ Քրիստոսի պատուիրանքները պահել ու հօգին դէմ տարած առաքինութիւնները գործել ուզէ, դարձեալ չը կրնար փորձութենէ խալըսիլ. փորձութիւնը շատ անգամ կը գրկէ Աստուած, մեր իրեն վրայ ունեցած սէրը և հնազանդութիւնը փորձելու համար. ինչպէս որ Յոբ երանելին փորձեց. բայց մարդկային բնութիւնը ուժգուր ըլլալուն համար, միշտ փորձութեան չը կրնար դիմանալ և վերջապէս կը յուսահատի և սատանային ձեռքը կ'ինայ. ահա ատոր համար Քրիստոս մեզի կը խրատէ որ մեր աղօթքին մէջ խնդրենք Աստուծմէ որ մեզի փորձութեան մէջ չը ձգէ, որ չ'ըլլայ Թէ սատանային դէրի ինանք. բայց

երանէ ան քրիստոնէին, որ փորձութիւնը վրան եկած ժամանակը մինչև ետքը կը համբերէ ինչպէս որ ծոք երանելին համբերեց. և սասանիլ ճիտուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտ և հաւատացեալ՝ և երկնից Ս. արքայութեան արժանի ըլլալը յայտնի կը ցուցնէ թէ Աստուծոյ և թէ մարդիկներուս առջև։

Հ. Եօթներորդ խնդիրքին մեկնութիւնն ինչ է։

Պ. Եօթներորդ խնդիրքը՝ վեցերորդ խնդիրքին հետ կապուած է. վասն զի «և մի տանիր զմեզ ի փորձութիւն» ըսելէն ետքը, կ'աւելցունէ նաև թէ. «այլ փրկեա զմեզ ի չարէն». այսինքն տանայլին չարութեններէն մեզի պահէ, որ չ'ըլլայ թէ մինակը ճնալով անոր խարդախութիւններէն խաբուինք և դժոխոց որդի ըլլանք. որովհետև մարդ մը կամ պէտք է որ աստուծոյ որդի ըլլայ, կամ պէտք է որ Աստուծոյ որդի ըլլայ անոր համար, ճիտուս Քրիստոս ազօթքին սկիզբը մեզի ըսել կուտայ ՀԱՅՐ ՄԵՐ, մեր հայրը որ երկինքն ես. և տանկով կը հասկցունէ թէ քրիստոնէին հայրը Աստուած է. ուստի՝ ինչպէս որ զաւակ մը ամէն բան իր հօրմէն կը խնդրէ, անանկ ալ ամէն քրիստոնեայ Աստուծոյ զաւակը կը ըլլալով պէտք է որ ամէն բան Աստուծմէ խնդրէ և աստանայէն չը յուսահատելու հասկնայ Աստուծոյ տպաւինի. բայց՝ Աստուծոյ՝ հայր մեր ըսելը գիտնաս եղբայր որ շատ դժուար է. վասն զի պէտք է որ Յիսուս Քրիստոս ազօթքին բուժին

ակնս մեռնք մեր հօրը այսինքն Աստուծոյ նմանինք. և ուստի մեր հօրը նմանելու համար ալ աղէկ դիտնալու ենք թէ անիկայ ինչ է և ինչ կ'ուզէ որ ընենք, աշխատելու ենք որ մտքու թիւններէն ետ կենանք և առաքինութիւն գործենք. կատարեալ կերպով անոր հաւատանք և մեր ամէն յոյսերը անոր վրայ դնենք. անոր պատուիրանքները պահենք և խնդրենք անկէ որ մեզի սատանային չարութիւններէն և գանազան փորձութիւններէ տղատ պահէ։

Հ. Իրաւ եղբայր, հիմայ կը տեսնամ որ հայր մեր ըը թէպէտև պզտիկ աղօթք մը նէ բայց ամէն մէկ խօսքերը ընդարձակ մեկնութիւններ ունին։

Պ. Այո. հայր մերը թէպէտ պզտիկ է, և կարելի է որ գուն ալ ըսես թէ ես այս աղօթքը շատ մը կը սորվիմ և ամէն ժամանակ կը գըրուցեմ. բայց դիտցիր որ հայր մերը գրուցէն դժուար բան չի կայ. վասն զի միայն գըրուցելով չը լմննար, հապա պէտք է որ անոր ամէն մէկ խօսքերուն ինչ ըսել ուզելը աղէկ մը հասկնալով անոնց համեմատ պատրաստես ինքզինքդ որ արժանի ըլլաս այն սքանչելի խօսքերը գրուցելու. չ'է նէ, չը գրուցելդ աւելի աղէկ է, վասն զի այն ժամանակը Աստուած ծաղր ըրած կ'ըլլաս և հեթանոսէ մը աւելի դէշ կը սեպուիս. և ըրած աղօթքէս օգուտ շահիմ ըսելովդ՝ Աստուած զաւկութենէ կը վերժէ քեզի։

ԴԱՍ Ե.

Մեղաւորին ղղջումը եւ ապաչխարութիւնը.

Հ. Ա՛ւ հիմայ եղբայր, աշխարհիս ստեղծումէն մինչեւ հիմայ Քրիստոսի ծնունդը եւ անկէ ալ մինչեւ Յարութիւն Աստուածայայտութեան մեռնիլը, եւ մեր Ս. Եկեղեցին հաւատքը եւ դաւանանքը եւ Ս. հանգանակը. եւ հոգին դիմաւոր առաքինութիւններն ու հոգին մահացու մեղքերը. եւ Տէրունական աղօթքին այսինքն ՀԱՅՐ ՄԵՐ ին մեկնութիւնը ալէկ մը տրուելով սկսայ մտածել որ քրիստոնեայ ըլլալը մեր կարծածին չափ դիւրին բան չ'է եղեր. եւ մկրտուելով ու քրիստոնեայ եմ ըսելով մարդ մը Աստուծոյ Ս. Արքայութիւնը չը կրնար ժառանգել. ուստի ես ալ մեղաւոր, այս համոզը լսելով յուսահատեր մնայեր եմ թէ ինչպէս ալիսի կրնամ քրիստոնէութեան սա ծանր բեռը կռնակս առնել եւ մինչեւ մահս տանիլ։

Պ. Քրիստոնէութիւնը՝ իրաւ է որ քու կարծածդ նման թեթեւ բեռ մը չ'է, բայց երբոր դուն բոլոր սրտով Քրիստոսի հետեւիլ ուզես, ան ծանր կարծած բեռդ շատ թեթեւ կ'ըլլայ քեզի. Յիսուս Քրիստոս՝ երբոր ժողովուրդին կը քարոզէր՝ ըսաւ անոնց. «ով որ Ս. Աւետեաց նը մտնել կ'ուզէ, թող իրեն խաչը առնէ եւ իմ հետեւէս գայ». այսինքն հասկցուց որ ճշմարիտ

քրիստոնեայ եղողը՝ պէտք է որ առ աշխարքին
մէջ քրիստոսի նմանի. անոր պէս ապրի. անոր
պէս չարչարուի և նեղութիւն քաշէ ու տանի
չուխտ։ Ինչո՞ւ է որ նեղութիւն քաշելն ու տանի
չուխտը շատ գժուար բան մըն է. բայց երբ մը
տաժանք որ հոս քանի մը տարի նեղութիւն
քաշելով վերանալէ ետքը, յաւիտենական Ց. և
անճառելի Ա.քայութեան փառքը ու հանդըս-
տութիւնը պիտի վայելեմք նէ, քաշածներնիս
մեր աչքին բան մը չ'երեւար շատ ալ քիթեւ
ու քիչ է. անոր համար Յիսուս Քրիստոս կ'ը-
սէ. «լուծն իմ քաղցր է և բեռն իմ թեթեւ կ'ը-
սէ։ Թոպէ. իմ լուծս անուշ է և բեռս թեթեւ կ'ը-
սէ։ Երկմտիլ որ մարդ մը առաքինական ցուցու-
ցած ճամբէն չի՛ որ երթայ ու հոգին մահացու
մեղքերը գործելու ըլլայ՝ ոչ այս աշխար-
քիս մէջ կրնայ հանդիստ ապրիլ և ոչ ալ մեռ-
նելէն ետև ա.քայութեան մէջ կը մտնայ. այն-
պիսի մարդը՝ ոչ խիղճ կ'ունենայ. ոչ մարդկու-
թիւն. ոչ հաւատք և ոչ օրէնք. բայց անոր հա-
կառակը՝ հոգին առաքինութիւնները գործող
ճշմարիտ քրիստոնեայն, չը մեռած՝ արդէն աս
աշխարքիս մէջ ուրախ կ'ըլայ իր աղէկ գործե-
րուն վրայ և խիղճը հանդարտ կը պահէ. թէ
մարդոյ և թէ Աստուծոյ առջև մեծ պատիւ և
յարդ կը վաստկի. անոր համար՝ թէպէտև հո-
գին մահացու մեղքերը գործող և աստա-
ծային ձեռքը դէրի եղող մարդուն համար ըշ-

մարիա Քրիստոնեայ ըլլալ և եօթն գլխաւոր ա-
ռաքինութիւնները գործելը դժուար կ'երևայ.
բայց մէյ մը որ իր գործած մեղքերուն վրայ
ղղջայ ու ապաշխարեց նէ, կամայ կամայ կ'ըս-
կըսի բարի ճամբու մէջ մտնալ. Քրիստոսի հը-
նազանդիլ բոլոր սրտով. և այն ատեն ինք ալ
կը հասկընայ որ՝ իրաւցնէ Յիսուս Քրիստոսի
մեր վրայ դրած լուծը շատ քաղցր է և բեռն
ալ շատ թեթև:

Հ. Եղբայր կը խնդրեմ որ այդ ըսածդ օրինա-
կով մը բացատրես, որովհետև ասոնց վրայ շատ
հարցունելիքներ ունիմ, ինչպէս կ'ըլլայ որ մարդ
մը իր գործած առաքինութիւններուն վրայ ա-
շխըրքիս մէջ ալ ուրախ կ'ըլլայ. վասն զի ը-
սեմ որ ես առաքինութիւն մը գործել թէ որ
ուզեմ նէ, եկեղեցւոյ բոլոր ունեցածս աղքատնե-
րուն տալու եմ, և թէ որ իմ ապրանքս ուրիշ-
ներուն տամ և կամ անոնց համար խարճեմ նէ,
առկէ ինծի ինչ ուրախութիւն կ'ըլլայ:

Պ. Թէ որ դուն որդի մը կամ եղբայր մը ու-
նենաս և անկայ խիստ ծանր կերպով հիւան-
դանալու ըլլայ նէ, ինչ կ'ընես. չէ՞ որ բժիշկ-
ներ կը բերես, դեղեր կ'առնես, բոլոր ունե-
ցած դրամդ կը խարճես քու եղբօրդ կամ ըր-
դուդ հիւանդութիւնը անցունելու համար. և
թէ որ անկայ ըսընանայ նէ, բոլոր ունեցածս
հացուց ըսելով կը տրտմիս, չէ նէ այն եղբօ-
րըդ կամ աղուդ առողջանալը տեսնելով կ'ու-

բախտաւոր . նաև ուրիշ օրինակ մըն ալ տամ . ըսենք որ թագաւոր մը ուրիշ թագաւորի դէմ պատերազմելու համար շատ զօրքեր կը հանէ և անոնց ամէն մէկուն կ'ըսէ որ՝ ձեզմէ ամեննէն նեղել քաջութիւն ընողին՝ անանկ վաստ մը և իշխանութիւն մը պիտի տամ որ մինչև հիմայ ուրիշին տուած չ'եմ . և ան քաջութիւնը ընող զինուորը իմին թագաւորութեանս ազատիչը պիտի կոչեմ . հիմայ այս թագաւորէն վաստ ընդունելու և ազատիչ կոչուելու փոխարէն ուզեցող զինուոր մը պատերազմին մէջ շատ մը քաջութիւններ ընելով և թշնամիները յաղթելով թէ որ ինք ալ մէկ տեղացէն զարնուինէ՝ իրեն զարնուած ըլլալն վրայ կը դնէ , չ'է նէ թագաւորէն վաստ պիտի ընդունիմ և ազատիչ պիտի կոչուիմ ըսելով մտքէն կ'ուրախանայ, հարկաւ հէմ իր զաւկին կամ եղբօրը առողջութիւնը տեսնողը ուրախ կ'ըլլայ և հաստատած սակին համար մտօքը կ'ըսէ որ՝ անանկ կը սեպեմ քի ես այսչափ սակ չ'ունէի . հէմ զինուորը կ'ուրախանայ . որովհետև առած վէրքը կ'անցնի , բայց ընդունելիք վաստը և պատիւը՝ անվախճան յաւիտենական է : Ա.հա սանկ կ'ուրախանայ նաև ճշմարիտ քրիստոնեան երբոր հոգին դէպ ի ուր տանելիութիւնները կը դործէ :

չ. Հիմայ խնդիրս ալէկ մը հաստատել իրաւ քրիստոնէութիւն ունենալով և հոգին դէպ ի ուր տանելիութիւնները դործելով թէ ան աշխըր-

քիս մէջ և թէ անդին աշխարքին մէջ մարդ Աստուծոյ սիրելի կ'ըլլայ. ասոնք հարցուներուս պատճառը ան էր որ Եղբայրը, մինչև հիմայ եօթն մահացու մեղութիւններուն վրայ խօսած ժամանակդ մտօքս ես ինծի կը հարցընէի թէ արդեօք ես ալ ան մահացու մեղութիւններուն դէրն եղած եմ. և տեսայ որ շատ մեղքեր դործեր եմ չըսելու և երբեմն ալ դիտմամբ ու հիմայ կ'ըսեմ ես ինծի՝ ալ մեղաւոր հոգի, դուն աս ամչափ մեղքեր դործեր ես, ալ ես ճշմարիտ քրիստոնեայ չեմ սեպուիր, և ինծի համար Աստուած իրեն Արքայութեան դռները պոյած է։

Պ. կը սեռնամ որ յանդիմանութիւնը վրադ ծանրացեր է, և մինչև հիմայ դործած մեղքերդ աչքիդ առջևը բերելով անանկ կը կարծես որ Աստուած քեզի իր Արքայութենէն զրկեր է. բայց պէտք է որ առջի դասերուդ մէջ քեզի ըսած խօսքս մոռցած բերես և Ս. Գրոց հետ միկտեղ ըսես. «Աստուած ոչ կամի զմահ մեղաւորին այլ զդառնալն նորա՝ ի չար ճանապարհէն»։

Թոփէ. Աստուած մեղաւոր մարդուն մեռնիլը չ'ուզեր. հապա կ'ապասէ որ անիկա իր չար ճամբայէն ետ դառնայ. նաև Յիսուս Քրիստոս ինքը ըսաւ որ «ես մեղաւորները դժոխքին կրակէն վրկելու համար աշխարհ եկայ». այս եղբայր Ս. Գիրքն ալ կ'ըսէ թէ երբ որ մե-

ջաւար մարդ մը իր ըրածներուն վրայ պղծութիւն գալով լայ և ապաշխարէ, Աստուած անոր պըղծութիւնը ներել կը ներէ ան մեղաւորին. բայց երկնքին աստրկերն ու հրեշտակները մեծ ուրախութեան մէջ կ'ըլլան. անկէ առէք մը կը հասկցուի որ մեղաւոր մարդ մը ամենևին յուսահատելու չ'է բսելով թէ ալ ես չ'եմ Աստուծոյ պատկերը, որովհետև շատ չարիքներ գործեր եմ. մանկ մէկ բան մը մտքէ անցուցածը անգամ մեծ մեղք է. որովհետև Աստուծոյ կարողութիւնը անտրտել բսել է առհկայ. վասն զի գիտնալու եղ.ք թէ քանի որ Աստուած ամէն բանի կարող է նէ, հարկաւ ապաշխարող մեղաւորին տալ կը ներէ իր Աստուծոյ դէմը բանալ կարող է։

2. Բայց բսեր.ք որ երբայր, Աստուած գործած մեղքերուս թողութիւն տալու պատրաստ է. ես կը մտածեմ որ ինչպէս առաջին ձեռքէն պիտի ազատիմ, քանի որ միշտ հին Յիսուս Քրիստոսի պատուիրանքները չը գիտցած չ'էի գործեր ու մեղքիներ ունէի. առ բանը քանի կը մտածեմ միտս դալ մը կուգայ. և անոր համար է որ ինքնիրմս կ'բսեմ թէ ես ապաշխարութիւն պիտի չը կրնամ երթալ։

3. Աստուած մեր ակտրութիւնը գիտնալ առնանկ ճամբայ մը ցոյց տուաւ որ՝ որչափ մեղք գործած ըլլանք, դարձեալ երթն երթալու դէպ.թիւն այսինքն խոստովանութիւն ունենանք.

անոր համար պատուիրեց Ս. Առաքեալին բերնեն որ՝ քրիստոնեայներէն պէտք է ամէն ժամանակ խոստովանին ինչ մեղք որ գործեր են նէ. և արտասուց պղծութիւն գան ու իրենց մեղքին ծանրութեան չափովը ապաշխարեն. անոր համար Ս. Եկեղեցին ալ քահանաներէ դրած է մեր քովը. որոնք մեզի կը խոստովանցուանեն և մեր հոգեւոր պէտքը կը հոգան. ուստի իմ խրատս քեզի ասիկա կը լսես որ ինչ մեղք ալ գործեր ես նէ, դնա՛ ամէն ժամանակ քահանային խոստովանէ և արտասուց պղծութիւն լուա. քահանայն ալ քու մեղքիդ ծանրութեանը համեմատ քեզի ապաշխարանք մը կը դնէ ու Աստուծոյ կողմանէ քու մեղքերուդ թողութիւն կուտայ. և դուն ալ ապաշխարանքդ կատարելէդ ետքը կ'իմանաս որ հոգիդ վրայէ հեծած մեղքին ծանրութիւնը կը թեթեւնայ, կ'երթաս Յիսուս Քրիստոսի ամենասուրբ մարմինն ալ կը հաղորդուիս. և սանկով սուրբ և ճշմարիտ քրիստոնեայ մը կ'ըլլաս ու Քրիստոս քու սրտիդ մէջը կը բնակի։

Հ. Ո՞ն երբայր, ես կը սոսկամ այդ բանէն. ես մեղաւորս ինծի՞ կրնամ Քրիստոսի ամենասուրբ մարմինը բերանս առնել, չէ՞ որ Յուդային պէս կ'ըլամ այն ժամանակը։

Պ. Այդ բաժդ կերպով մը ճշմարիտ է, և հիմայ կ'ուզեմ որ ատ կտորը քեզի բացատրեմ. Յիսուս Քրիստոս մեր փրկիչը կ'ըսէ թէ. «Ամեն նայն մեղք և հայհոյութիւնք թողուին»,

թ–ԻԳ • Ամեն մեղքերու և հայհոյութիւններու ներում կը տրուի, այսպէս ալ մէկ քրիստոնեայ մը ոչնախ մեղաւոր ալ ըլլայ, իր գործած մեղքերուն և ըրած հայհոյութիւններուն համար կրնայ ներում առնել, միայն թէ կատարեալ կերպով պղջալու է • աս կատարեալ կերպով պըղջալու համար ըսածս ան է որ՝ շատ մարդիկներ թէպէտ և մեղք մը գործելէն ետքը կ'երկան կը խոստովանին և կ'ապաշխարեն՝ բայց իրենց պղջումը սրտանց չ'ըլլար • հապա՝ քանի մը ժամանակէն ետքը նորէն կ'ըսկսին ան մեղքը գործելու • պոր օրինակ • մարդուն մէկը՝ բարկանալով իր ընկերին հետ կռիւ կ'ընէ, և ետքը ըրածին վրայ պղջալով կ'երթայ կը խոստովանի և Ս• Հաղորդութիւն կ'առնէ • բայց քիչ մը առնէն ետքը նորէն կ'ակսի առոր անոր հետ կռիւ ընել և իր եղբայրները առել • ահա այս պղջումը սրտանց չ'ըլլար՝ հապա՝ այսպէս ընող մարդը Աստուած խաբած կ'ըլլայ • ուստի Ս• Հաղորդութիւնը առնելու համար յատկապէս չը մարելիք կրակ մըն է • բայց թէ որ մարդ մը մեղք գործելէն ետքը՝ երբ ալ որ ըլլայ մինչև անդամ մեռնելու ժամանակը՝ ըրածին վրայ պղջայ • խոստովանի և ապաշխարէ ևէ, անառակին Աստուած թողութիւն տալու պատրաստ է ամէն ժամանակ •

Հ• Թէ որ այդ ըսածդ պէս է ևէ եղբայր • ես ալ մէկ դիւրին ճամբայ մը գտայ • և չիտակը շատ

քան կ'երևայ ինձի. ըսեմ ոչ մարիկ ըրէ. որով-
հետև Աստուած մեր մեռնելու ժամանակը ան-
պատմ մեր մեղքին կը ներէ. ուրեմն ես ալ հի-
մայ ամէն ուշաճս կ'ընեմ և մեռնելուս մօտ
կ'եղած ըրածներուս վրայ կը պղմամ. կուլամ.
կը խոստովանիմ ու կ'ապաշխարեմ. և Աստուծ-
ոչ թողութիւն կ'առնեմ. մեռնելէս ետքն ալ
Ս. Աքսորութիւնը կ'երթամ. ան ճամբան շատ
բան է, աշխարհիս մէջ Քրիստոսի ուղածին պէս
ապրիլը շատ դժուար է. մեռնելէն ետքը դը-
ժոխքը երթալն ալ տակաւին տանջանք է. ա-
ւե ապէկ չ'է՞ որ հոս ապրած ժամանակիս ա-
տանային ձեռքը ճնանք. և մեռնելու առեն
մեղայ կանչելով ետքը Աստուծոյ քովը երթանք:

Գ. Աչխատ խօսքերուս մէջ կ'ուզեմ որ ոչ
հարցումը ինձի ընես. որ ես ալ քեզի հետ
քիչ մը աւելի համարձակ խօսիմ. եղբայր դուն
անանկ կը կարծես կոր որ Աստուած մեր խա-
ղալիքն է և կամ աստանան այսքան անմիտ է
որ աշխարհիս ամէն վատքերը քեզի պէս ու
մեռնելու ժամանակը քուկին հոգիդ ձեռքէն
փախցունէ. Աստուած քեզ չ'ստեղծած գիտէր
որ օր մը քու մտքէդ ա բանը պիտի անցու-
նէիր. ուստի դնա՛ չնորհակալ եղիր որ իմ դի-
մացս երար և մտքիդ մղորութիւնը կ'սիսխա
հաղնալ. ահա Քրիստոս ատոնք միտք ուն-
ցողներուն ատկէս կ'ըսէ, «արիւն կացէք դի
ոչ գիտէք երբ սէր ատեն գայցէ»:

թ՜ՀՀ • Ալթաուն կեցէք որովհետև չ'է.ք գիտեր թէ սանտէրը երբ պատւոյ դայ կ'ըսէ, տան տէրը ըսելով մեզ.ք մեր մեռնիլը և վերչին դատաստանը միտքերնիս բերելու եզ.ք • ի՞նչ գիտես որ հիմայ մեզ.ք աս խօսքերը ըրած ժամանակնիս Աստուած մեր հոգին ձեռքերնուս պիտի առնէ • կամ ի՞նչ գիտես որ մինչև իրիկուն աշխարքիս կատարածը չը պիտի հասնի, ասկէց զատ մինչ դուն երթալ այդ ճամբան կը մտմտաս նէ Աստուած քու վերչին պղտումդ կ'ընդունի մի • գիտեմ որ՝ աշխարքիս մէջ Քրիստոսի պատուիրանքները ինչո՞ւ կը պահենք, ոչ թէ ուրիշ բանի, հապա յայտնելու համար որ մեզ.ք մեր Քրիստոս Աստուածը կը սիրենք և անոր ուզած կերպովը կ'ապրինք • թէ որ դուն քու Աստուածդ անարգես և աս աշխարքիս մէջ հանգիստ ապրելու համար աստուածային յայտնուցած մըլն ճամբայէն քալես նէ, ա՛լ Աստուած քեզի պատասխան տէյ կ'ընդունի՞ —ոչ— : Ուստի քանի՜ յարմար օրինակ մը տամ որ խելքդ աղէկ մը հասնի :

Հարուստ մարդ մը երկու տղայ ունի և անոնց կ'ըսէ թէ գաւկիններս՝ ձեզ սեռնամ, թէ որ բարի վարք ունենաք և բարի գործէք՝ իմ ըսելը ապրանքս ձեր երկուքին ժառանգութիւն պիտի տամ • իսկ թէ որ մերթ ճամբանիդ երթաք նէ, հս ալ ձեզի ժառանգութենէ կը զրկեմ : Տղաքն ալ իրենց հօրը կը հարցունեն որ՝ հայր,

*Մեզի լսէ Թէ որչափ ժամանակ մեր վարքը պի-
տի նայիս որ ան ժառանգութիւնը մեզի տաս։
Հայրը կը պատասխանէ այսպէս։ որդեակներըս
ես ձեզի ժամանակ չ'եմ ըսեր։ բայց դուք ա-
մենայն ժամանակ պատրաստ կեցէք, ահա ձե-
ղի տուն՝ տեղ։ ուսերնիք՝ հագուստ ևայլն։ կ'ըլ-
լայ որ վարը կուգամ ձեր վարքին դատաստա-
նը կը կարեմ։ կ'ըլլայ որ քանի տարիէն կուգամ
կ'ըլլայ որ երեսուն տարիէն, աս խօսքը լսել-
նուն պէս տղաքը կը վախնան ու կ'ըսեն։ Հայր
հապա այսչափ ժամանակէ մէջ Թէ որ օր մը
սխալինք ու մեղք մը գործենք նէ, ետքը ին-
ծի ընեն։ հայրերնին ալ կ'ըսէ իրենց որ նա-
յին քի մեղք չը գործեն։ բայց Թէ որ սխալե-
լով պակսութիւն մը ընեն շուտով իրեն նամակ
գրեն ու ստանց ըրածներուն վրայ ղրկեն։ ին-
ձ ալ անոնց կը նեղէ։ աս ըսելով հայրերնին ե-
լաւ հեռու երկիր մը գնաց։ Ան ժամանակը մեծ
տղան մօտքը լաւ Թէ երբեմն մեղք մը գործէք
նէ։ ըրածնուդ վրայ ղղջացէք և ինծի մեղքի
Թուղթ մը գրեցէք ես ալ ձեզի կը ներեմ։ ու-
ստի հիմայ կարելի է որ հայրս մինչև քանա տա-
րի տունը չգայ ես ուզածս կ'ընեմ ու ետքն
ալ մեղքի գէր մը կը գրեմ ամէն բան կը ա-
պրինայ։ ու սկսաւ ուզած չարութիւնները գոր-
ծել։ իսկ պզտիկ տղան ամէն ժամանակ կը
նայէր որ մեղք չը գործէ որպէս զի հայրը գո-
ւա ըլլայ նէ գինքը անմեղ տեսնայ։ սանկ չորս*

Տիեզ տարի անցուցին. մեծ տղան սկսաւ մա-
հացու մոլութիւններ գործել և պզտիկ եղբօրը
խրատը մտիկ չ'էր ըներ. մէկ գիշեր մըն ալ
հայրերնին գաղտուկ եկաւ տունէն ներս մտաւ
և տեսաւ որ պզտիկ եղբայրը հանդարտ նստեր
աղքատաց տղայութիւն կը պատրաստէ, իսկ մե-
ծը իր ախնաւակին մէջ. քանի մը չար ընկերներով
տեսակ տեսակ խայտառակութիւն կը գործէ.
այն տունն հայրերնին ձայնը հանելով կանչեց
տղան քը, գաղտաստան տեսաւ. պզտիկը օրհ-
նեց մեծն ալ անիծեց և տունդ քանդ մը տալու
տունէն գուրս վռնտեց. գողերն ալ ինքզինքնին կէս գի-
շերուան գուրսերը տեսնելով միտքերնին վախցան և գա-
նակով գարկին տպտանեցին: Անոնք եղբայրը Ա-
ստուծոյ ալ ընկերն քը տանկ պիտի ըլլայ. մեծ-
ցաւը ժամանակը չ'ուս գիտեր, անոր հասնիլը
մոռնքե ուս կ'ընտրես ուս. երկրորդը՝ գուն միտքդ
քու Աստուածդ չը սիրես նէ, ըրած պղտութիւդ
պատուս չ'ունի. և թէ որ Աստուծոյ քեզի ըրած
առատութիւնները գիտես, և տատանու-
մըն ալ ինտոր գէշ ըլլալը խոհքդ հատը կ նէ,
ինչպէս կ'ըսես որ աշխարքիս մէջ տատանումն
կը հետևիս. տատանումն աս աշխարքին մէջ քե-
զի հանգստութիւն կուտայ, բայց ետքն ալ ու-
զես չ'ուզես քեզ գժոխքը կը տանի:

Ա. ամենէն գաղտ աս կտորն ալ քեզի ըսեմ որ
միտքդ հիմայ ինչ մտքե որ գործէիր նե՝ չը գիտ-
նալով կը գործէիր. անոր համար պատրաստ ու-

չափ մեծ չ'էր ըլլար. բայց հիմայ որ ամէն բան սարքեցար և Աստուծոյ կամքը գիտես նէ՝ ան գործած պզտիկ մոլքիդ մեծ պատիժ ալ տայ Աստուած. աս ալ գիտցիր ու անկէ ետքը լինչ կուզես ըրէ. ահա Յիսուս Քրիստոս իր սուրբ բերնովքը սա խօսքերը կ'ըսէ. «ան ծառայն որ իր տիրոջը կամքը չը գիտէ ու պատիժ կը գործէ նէ անիկայ քիչ ծեծ պիտի ուտէ. իսկ ան ծառան որ էրևն տիրոջը կամքը գիտէ ու չը գործեր նէ անիկայ շատ ծեծ պիտի ուտէ։

Հ. Եղբայր, դուն հիմայ ուրիշ վախ սուրբ լինելէ, ըսել է որ սա վայրկենէս սկսելով սուրբէ նման պիտի ապրիմ որ կարենամ Աստուծոյ Արքայութիւնը մտնալ. ուրիշ ճար մը չը կայ սանալ չէ՞։

Պ. Հա՛. հիմայ Ա.Քրիստիանն երթալը սրտիկը ես, սա աշխարհքը քրիստոնէին Ա.Քրիստոսի դնալու ճամբան է. և ալ որ ճամբուն մէջ չը խոտորիս ու շիտակ չը գնաս, անիկայ անոտառներուն մէջը կը մոլորի և Ա.Քրիստոսի երթամ ըսելովդ ինքզինքդ դժոխքը կը տանի. անոր համար դիշեր ցորեկ քու պարտքդ աս է որ ամենևին Ա. աստիւծոյ ճամբան չը ձգես ու անկէ շիտակ երթաս. հրաւէ որ աստիւծոյ ճամբան շատ նեղ ու շատ վըշտալի է. բայց Քրիստոս երանելի կուտայ անանկներուն և կ'ըսէ. «մտէք ընդ նեղ դուռնէն, որ տանի՛ ի կեանս»։

Թոբէ . Նեղ դուռնէն մտէք որ ձեզի Արքայութիւն կը տանի : Ուրեմն դուն ալ երթայր . Յիսուս Քրիստոսի մեր փրկչին խօսքին հետեւելով մտիր այն նեղ դուռնէն և նեղ ճամբայէն . քանի որ ինքը կ'ըսէ . « Նեղ է անցուկ է ճանապարհն որ տանի 'ի կեանս , լայն է արձակ է ճանապարհն որ տանի 'ի կորուստ » :

Թոբէ . Շատ նեղ է այն ճամբան որ Արքայութիւն կը տանի , հապա դժուարութիւն մը ունի ճամբան շատ լայն ու ընդարձակ է . ահա աս բաները ալէկ մը մտածէ պահելու եմ և ինծի որ ըսիր՝ աս վայրկենէս անդին աւելի մը պէս ապրելու եմ . բայց բան մը կայ չը մոռցած բանտ քեզի ասիկ առաջ դրած մեղքերուդ համար Աստուծմէ և մարդոցմէ թողութիւն չը՞ պիտի խնդրես :

Հ. Մինչև հիմա դրած մեղքերուս համար պիտի զղամ , խոստանամ ու ապաշխարեմ և մարդ սրտով Ս. Հաղորդութիւն պիտի առնեմ . և տանիկ Աստուած մեղքերս թողութիւն պիտի տայ . բայց մարդոցմէն առնելիք թողութիւնս ինչ է :

Պ. Մեղքին ինչ բաղձալը մինչև հիմա հակցար , մարդ մը ինչ մեղք որ դրծէ , չէ թէ միայն Աստուծոյ սիրտը կը ցաւցունէ , հապա սրտ ալ շատ մը կողմանէ ընկեր է նէ անոր ալ սիրտը ցաւցուցած կ'ըլլայ . դու օրինակ ընկերդ անարդեա ,

անոր հայհոյես, անոր ունեցածը գողնալու էլ-
լաս նէ, Աստուծոյ առջև ալ յանցաւոր կ'ըլլաս
ան մարդուն առջևն ալ. որովհետև երկուքին
սիրտը մէկէն տաւդիր. ուստի ինտուր որ Ա-
ստուծմէ թողութիւն կը խնդրես նէ, անանկ ալ
ան մարդէն երթալու թողութիւն խնդրելու ես.
ահա Յիսուս Քրիստոս աս բանին համար աս
պատուէրները կուտայ. «երթէ մատուցանիցես
պատարագ քո ի վերայ սեղանոյ, և անդ յի-
շեցես եթէ եղբայր քո ունիցի ինչ խեթ ընդ-
քեզ. թող պատարագդն ի վերայ սեղանոյն և երթ-
ա՛ նախ հաշտեայ ընդ եղբօր քումմ, և ապա
եկեալ մատուսցես պատարագդն քո»:

Թող. Թէ որ սեղանի վրայ պահ ըրած ժամա-
նակդ միտքդ գայ որ քու եղբօրդ սիրտը ցաւ-
ցուցեր ես. ըրած պահդ սեղանին վրայ ձգէ ու
գնա առաջ եղբօրդ սիրտը առ և անոր հետ
հաշտուէ. ետքը եկուր քու պահդ ըրէ: Ա՛ստ.
Ե. Գլ. 23—24 համար:

Ա՛հա աս պատուէրովդ Աստուած մեզի կըսէ թէ
մինչեւ որ մեզմէ ջատս կրնանալուն սիրտը չառնենք
ու մինչև որ մեզմէ ցաւ ունեցողներուն հետը
հաշտուինք նէ, Աստուծոյ առջևը մեր պաշ-
մը և ապաշխարութիւնը ընդունելի չ'ըլլար:
Վասն զի, ըսենք թէ դուն քու դրացինիդ ու-
նը ուտար և շատ մը բան գողցար, ետքն ալ գո-
ղութիւն ըրի մեղքը միտդ բերով պղծաս ու ա-
պաշխարեցիր նէ, այն պղծութիւդ Աստուած չնայե

կ՚ընդունի. քանի որ դողութեան ապրանքը քո՛վը է. հապա պէտք է որ առաջ երթաս անդորրացած իրեն սիրոյը յանձնես ու անկէ թողութիւն խնդրես ըրածիդ համար. եւ քու Աստուծոյ ալ աղօթք պիտի ընես և մէյմըն ալ անչարութիւնը չ՚ընելու համար տրտունջ ու խոստովանութիւն ընես. ահա ան ժամանակը Աստուած ալ քեզի թողութիւն կ՚ուտայ։

Նմանպէս թէ որ մէկու մը ծանր խօսք ըսեր եւ նէ պէտք է առաջ ան մարդուն երթաս և անկէ ներում առնես որպէս զի մեղքիդ թողութիւն ըլլայ՝ ան մարդէն ալ Աստուծմէ ալ։

Հ. Հապա երբայր՛, ան մարդէն թողութիւն խնդրելու երթամ ու ան մարդը արդարկելով ինծի ճամբէ ու թողութիւն չիտայ նէ՝ ի՞նչ ընեմ ան ժամանակը դժո՛ւքը պիտի երթամ։

Պ. Աստուած մարդուս սրտին մէջ անյագ քաշողը կը քննէ. կ՚ըսէ Ս. մարգարէն. և մարդ մը թէպէտ մարդկանցմէ առջև կեղծաւորութիւն կ՚ընէ. աւա՜ղ կը խօսի. բայց Աստուծոյ առջև ոչ կեղծաւորութիւն կրնայ ընել և ոչ ալ կրնայ աւա՜ղ խօսիլ. որովհետև Աստուած մարդուս երեսին չը նայիր. հապա՛ սրտին կը նայի. անոր համար ցնոյս ուղիղ ճշմարիտ քրիստոնեայն եղիր և ապաշխարող մեղաւորներուն հեղութիւն, երբայրասիրութիւն ու խոնարհութիւն սորվեցուցանել. թէ որ դուն մէկու մը չարիք դարձիր կամ դրժելու միտք ունեցար ու եղբ

պղջայիր նէ , գնա՛ ան մարդուն և թողութիւն խնդրէ անկէ . ձեռքդ երկնցուր ու հաշտուէ անոր հետ . ասիկա քուկին քրիստոնէական պարտաւորութիւնդ է . ճշմարիտ մարդուն՝ առանկ ընել պէտք է . բայց թէ որ դիմացինդ արդարով քեզ չ'ուզէ կամ քեզի հետ չը հաշտուի ու քեզի թողութիւն չիտայ նէ՝ անկէ դուրցած բանդ կամ անոր ունեցած պարտքդ դարձեալ անոր յանձնէ . ու բնաւ անոր երեսին դէմ քէն մի պահեր : Եւ Աստուած որ քու երեսդ և ան մարդուն երեսը կը տեսնէ , քեզի թողութիւն տալու պատրաստ է . որովհետև դուն անոր հետ հաշտուելուզեցիր . բայց անիկայ մերժեց :

2. Բան մ'ալ ասոր համար կ'ուզեմ եղբայր . կ'առջեմ որ անոր ալ պատասխանը տաս : Շատ անգամ իմ ընկերներս պատճառ կ'ըլլան որ ես մեղք կը գործեմ . ան ժամանակը ես դարձեալ յանցաւոր կը սեպուիմ . որովհետև թէ որ անոնց հետ կը պարտիմ նէ անոնք բանի այսինքն զորով մեղքը կը խոթէն իս . ու թէ որ չը պարտիմ նէ , եղբայրներս չը սիրած կ'ըլլամ :

3. Երբոր ձեռքդ երկած ապէկութիւնը մէկու մը ընելու համար ան մարդը սիրես նէ , ահա բրածդ եղբայրասիրութիւն կ'ըլլայ . որ դուն մեղքը մտնաս , բայց երբոր քու ընկերդ պատճառ կ'ըլլայ քու պարտքդ ան է որ՝ այն ընկերդ խրատես որ իրեն չար ճամբէն ետ դառնայ . ու երբ կը նայիս որ անիկայ քեզ կը մոլորցունէ նէ , ձգէ գինքը և քուկդ մերժէ . առանկ կը պատուիրէ Քրիստոս քրիստոս ըսելով որ «եթէ աչդ ոչ թակղեցուցանէ զքեզ , խլեա զնա՝ և ընկեր՛ի քէն , զի լաւ է քեզ թէ մի յ'անդամից քոց կորիցէ , և

ՀԻ ամենայն մարմնոյ. քո անկանիցի՝ ի գերհեն: Եւ
երթէ աչ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հատ
պնա՝ և ընկեա՛ ի քէն, զի լաւ է քեզ երթէ մի
յ՚անդամոց քոց կորիցէ, և ՀՀ ամենայն մարմինդ
քո արկանիցի՛ ի գեհեն »:

Թուփ. Թէ որ քու աչ (սաղ) աչքդ քեզի մո-
լորեցունէ նէ, զանիկայ վրցուր ու նետէ. ո-
գուիեռուն աւելի ազէկ է որ քու անդամներէդ
մէկը կորսուի, քան թէ բոլոր մարմինդ դժոխ-
քը իյնայ: Ու թէ որ քու աչ ձեռքդ քեզի մո-
լորեցունէ նէ զանիկայ կարէ ու քեզմէն նետէ.
որովհետեւ աւելի ազէկ է որ քու անդամներէդ
մէկը կորսուի, ու բոլոր մարմինդ դժոխքին
մէջը չըգայ՝ ի՚լսէ Մատթ. Գլ. Ե. համար
29—30: Հոս ցիտուս Քրիստոս սաղ ձեռք ու
սաղ աչք կ՚ըսէ նէ, սիրելի բարեկամդ, սիրելի
ընկերդ հասկցունել կ՚ուզէ. վասն զի ան մար-
դը որ քեզի կը մոլորցունէ և մեղքը կը խօ-
թէ, մի կարծեր որ անիկայ քեզի բարեկամ ու
սիրելի ընկերը է. ան տեսակ մարդը սատանայն
կը նմանի, և ինտոր որ սատանան մեր քովէն
կը հեռացունենք և անոր փորձութիւններէն
ազատելու համար Ս. սուրբ ջրհորդութիւն կը
խնդրենք նէ, անանկ ալ մեզ մոլորեցնող մար-
գիկներէն ազատելու համար աղօթքով Ս.
սուրբ օդնութիւն խնդրելու ենք:

ՎԵՐՋ ՋՈՐՀՈՐԴ ՄԱՍԻՆ

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԷՈՒԾՈՒՄՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԴԺՈՒԱՐԻՆ ՔՆԴՐՈՑ

ԴԱՍ Ա.

Եկեղեցական խնդրոց վրայ հարցուաձեներ։

Կանա դալիլեացւոց հարանվքին վերան ով էր, որ Քիստս և Մարիամ Աստուածանայրն հոն գնացին։

Գ. Քանզի աստուածարանը՝ իր քարոզութիւնին մէջ կը հաստատէ որ այն հարանվքին վերան Քիստսին Սիմեն կանանցի ըսուած աշակերտոն էր, ասանկ կը վկայեն նաև աւրքն Ներնատոս և աւրքն Եպիփան։



Հ. Գիտեմ որ Քրիստոս Թաւոր էրտնքը վրայ այլակերպուեցաւ, բայց ինչո՞ւ համար հետը տղոց աւագքեանները պատուիրեց որ՝ մինչև որ ինքը

յարութիւն չ'առնէ նէ սեռամծնին մարդս չ'լսեն ։

Գ. Սուրբն Գրիգոր՝ Քրիստոսէ այս խօսքին շատ պատճառներ ցոյց կուտայ որոնց դէմ տալու չեն եղեր ։

Ա. Որպէս պի՝ երեն յարութեան ժամանակը ըսելէք հրաշքները՝ այս հրաշքին յարմար գան և ամէն մարդ առաքելոց ըրած պատմութեան նը հաւատայ ու չը տարակուսի ։

Բ. Որպէս պի՝ երբոր առաքեալները հոգին սուրբը առնելով զօրանան ու հրաշք գործեն



նէ , ան ժամանակը կարող ըլլան երենց գրուցածնին չհաւատք ըլլալը ամենուն առջև հաստատելու ։

Գ. Որպէս պի՝ երբոր հրեշտակը Քրիստոսի յարութիւնը քարոզէ նէ , ամենքը հաւինան , թէ ան որ ինքը զինքը մեռելներէն յարուցած նէ , կըրնայ նաև Մովսէսն ալ մեռելներէն յարուցանել ։

Դ. Որպէս պի՝ երբոր ինքը երկինքը համբառ-

ետ նէ, ան առեն ամէն.քն ալ կարող ըլլան հասկնալու թէ ան որ կըլայ երկինք եղալ, հարկաւ կրնայ եղիան երկինքէն վար բերել։

Հ. Թէ որ Պետրոս չը մեղանչէր նէ, Քրիստոս կը մարգարեանար։

Պ. Քրիստոսի աշխարհք գալուն պատճառը երկինքէն Թափուած հրեշտականերուն սորվը լեցնելու համար էր, ինչպէս որ ինքը Քրիստոս ալ կը յայտնէ, կրնանալ աշխարհին առաքը զրկելով։ Երկարող Քրիստոսի մարդեղութիւնը այսինքն մարմին առնելով կատարեալ մարդ ըլլալը՝ Պետրոսէ մեղքին համար էր որ չէր կրնար ուրիշ միջոցով վճարել, որովհետև Պետրոսի պատուիրանները դէմ մեղանչէր էր։

Նա և Քրիստոսի մարդեղութիւնը՝ մեղայ քաւելու համար էր. անոր համար ըսաւ Յովհաննէս, «ահա գառն Պետրոսի՝ որ բառնայ զմեղս աշխարհի»։



Թոփ. Ա. Հա Աստուծոյ գառը՝ որ աշխարհին մեղքը կը վերցնէ կը ջնջէ. Ցով. Ա. Գլ. 29 համաբ. ինատր որ նաև Քրիստոս իրեն համար կ՚ըսէ թէ «երկն որդի մարդոյ՝ խնդրելու կեցուցանել զկորուսեալն»։


Թոփ. Մարդուն որդին այսինքն Քրիստոս աշխարհ եկաւ որ մեղաւոր կորուսած հոգիները փնտռէ և ազատէ. Մատ. ԺԸ. 11։

Նաև հաւատոյ հանդանակին մէջ Քրիստոսի համար գրուած է այսպէս. «Որ մեր վրիպեալները հանար՝ երկինքէն իջնալով մարմին առեր»։ Ուստի աս վկայութիւններուն նայելով թէ որ Ադամ չը մեղանչէր նէ, Քրիստոս Քրիստոս ալ չ՚էր մարմնանար։

2. Քրիստոս Եկեղեցւոյ առիճաններըն երբ հաստատեց։

Պ. Որքան վարդապետք եկեղեցւոյ այսպէս կը վկայեն. Թէ Քրիստոս՝ եկեղեցւոյ մէջ ընծերցութեան աստիճանը այն ժամանակը հաստատեց՝ երբոր շաբաթ օր մը Նազարէթ քաղքին ժողովարանը մտաւ և նայիմարդարէին գիրքը ժողովուրդին առջեւը կարդաց. Ղուկ. Դ. 17։ Կիսադարկութեան աստիճանը հաստատեց՝ երբոր երուսաղէմի տաճարին մէջ ու առաւոտ ընդհներըը չուանէ խարազանով (խաչիով) դուրս վռնտեց։ Յով. Բ. 15։ Վարկաւարդութիւնը հաստատեց՝ երբոր ետնութեան դիշերը աշակերտաց ոտքը լուաց

«Քահանայութիւնը Հաստատեց՝ երբոր նոյն գի-
շերը՝ իւր մարմինը և արիւնը աշակերտաց բաշ-
խեց ու ըսաւ. «առէք կերայք այս է մարմին



իմ. և այլն». Եպիսկոպոսութիւնը Հաստատեց՝ երբոր առաքեալներուն վրայ փչեց և ըսաւ. «առէք Հոգի Ս. Յսկ. Ի. 22. Կաթողիկոսութիւնը Հաստատեց՝ երբոր երկինք Համբառնալու առեն՝ ձեռքը առաքեալներուն վրայ դրաւ և զանոնք օրհնեց։

Հ. Եկեղեցւոյ Ս. խորհուրդները Քրիստոսեան զանգներու և մահուանը նշանակութիւններն են. բայց սրսանին ինչու Համար Ս. խորհուրդ կ'ըսուի. զանի որ անիկայ հեշտութիւն և ուրախութիւն է։

Պ. Թէպէտ և պահքը ուրախութիւն մը ըլլալուն Համար Քրիստոսի չարչարանքներուն չի նմանիր, բայց սէր ըլլալուն Համար Յիսուս Քրիստոս

ինատակ մեր վրայ ունեցած սիրուն կը նմանի, և Յիսուսի՝ իր եկեղեցւոյն հետ սիրով և անբաժանելի կերպով միացած ըլլալը կը յայտնէ, ինչպէս որ գրած է Պօղոս առաքեալը ըսելէ. «Էրիկ մարդիկ, ձեր կիներըդ սիրեցէք, ինչպէս որ Քրիստոս իր եկեղեցին սիրեց և իրեն անձը՝ անոր համար զոհեց, որպէս զի զանիկայ մաքրէ։ Պօղոսի Եփեսացւոց նամակ. ե. 25։

2. Երբեմն Քրիստոս խաչել կը տանէին, խաչին ալ կռնակը շալկեցուցեր էին, ինչ կը նշանակէ թէ խաչին շալկելը։



գ. Հրեից և հեթանոսաց խառնարտութիւնը բառական չը համարելով խաչելու տանելնէն յառաջ տուած չարչարանքնին, ծանր խաչն ալ կռնակը տուին. աս բանը խաչողներուն համար մեծ անպարսաւութիւն էր։ բայց Յիսուս Քրիստոսի համար մեծ խորհուրդ և գերութիւն էր այսպէս խաչը շալակն առնել տանելը, ինչպէս որ եսայի մարգարէն կը վկայէ. «Թէ մանուկ ծըննաւ մեզ, որդի տուաւ մեզ որոյ իշխանութիւնն ’ի վերայ ուսոյ իւրոց»։

Թուէ. Մեղի մանուկ ծնաւ, մեզի որդի տրուեցաւ. որուն իշխանութիւնը՝ երեն ուսին վրան է» ։ Ա՛լսէ. Դ. Թ. 6։ Պօղոս առաքեալն ալ կ’ըսէ. «խաչուելը յանձն առաւ և ամօթը բանի սեպ չը դրաւ»։ Եբր. Ժ.Բ. 2։

Հ. Քրիստոսի խաչին երկայնութիւնը սըքան էր։



գ. Ս. Կաւանդիան կը վկայէ Թէ, Քրիստոսի Ս. խաչին երկայնութիւնը 18 քիլ էր և բեռնաւորուն երկաթ կռմին երկայնքը 9 քիլ։

Հ. Քրիստոս երբոր դժոխքը իջաւ նէ, որդեօք

հան առնլ բոլոր հոգիները ազատից մի ։

Պ. Որոնք որ իրենց կեանքին մէջ հաւատացին որ Քրիստոս աշխարհք պիտի գայ նէ. զանոնք ազատից. նաև որոնք որ աշխարհի վերայ բարի կեանք անցուցեր էլլնն նէ զանոնք ալ ազատից ։ Ս. Հայրապետները այս բանիս կը վերայեն և եկեղեցին ալ կը քարոզէ ըսելով. «Հետապծեայ հզօրեղապէս զ'երեսս արդարոյ» ։

Թ՚՚չ. Մեծ զօրութիւնով ապրարնելուն խաչը բոլոր դժոխքին ազատից ։

Հ. Այլ խօսքիդ ոմանք կընդդիմանան ըսելով թէ «Ադամ՝ գլուխ էր՝ պղծի մարդկան». թէ որ գլուխը ազատեցաւ նէ, պէտք է որ անդամներն ալ ազատին ։

Պ. Ադամ մեղանչեց՝ բայց ապաշխարեց. մեղաւորներէն շատերը չ'ապաշխարեցին. անոր համար Ադամ ազատեցաւ. բայց ուրիշ մեղաւոր հոգիները չ'ազատեցան ։ Ահա Ս. եկեղեցին այս խօսքիս վկայութիւն կ'ուզայ ըսելով թէ. «որ մահ դերի առեալ մահուամբ զմահ կոխեաց. յերկր. արձակելով զերեսն մարդասիրէից յ'անբաւութեր քո հանդիսաւ ։

Թ՚՚չ. Քրիստոս «մեռնելովը՝ մահը ոտքի տակ առաւ. և Ս. մարգարէներուն հոգիները Ա. քայութիւն պրկեց» ։

Հ. Ասոր ուրիշ գիշեր տան երթ. մամ կը վառին սեղանը. ինչու տան երկու. քը կը մտրեն և մէկը վառ կը մնայ ։

Գ. Այն գիշերը առաքեալները մինակ ձգե-
ին Քրիստոսը. և իրենք ցրուեցան. վասնորոյ
տասներկու ժամը կը մարին և մէկ հատը վառ
կը մնայ. որով կ'իմացուի թէ Քրիստոս անօրէն-
ներուն մէջ մինակ մնայ: Եկեղեցւոյ Ս. վար-
դապետներէն ոմանք կ'ըսեն թէ այն գիշերը ա-
շակերտներուն ամէնն ալ երկպառութեան մէջ
մնացին և միայն Ս. կոյս Աստուածածին իր հա-
ւատքին վրայ անխախտ մնաց. անոր համար 12
ժամը կը մարին և մէկը վառ կը թողուն:

Դ. Քրիստոս ամէն մեր մեռած օրը յարութիւն
կրնար առնել, ինչո՞ւ համար երեք օրէն յա-
րութիւն առաւ:



Դ. Անոր համար որ՝ չըլլայ թէ հոգի մէկը չը տա-
կաւորի Քրիստոսի հինգշաբթի իրիկուն վրայ, անոր համար երեք օր գերեզմանին մէ-
ջը մնաց. նաև երեք օրէն յարութիւն առնե-
լուն պատճառն մէկն ալ ասա էր որ՝ մեզի ցոյց
տայ թէ երեն մեռնելուը երեք տեսակ մահ կա-
կառնէ, այսինքն առաջին մեղքի մահը, երկ-

ըսէր՝ մատնելու մահը և երթալ՝ դժոխքին մահը։

2. Երբոր Յիսուս ան ալ մեր Փրկատուս դատարանին և քահանայապետներուն առջևը կայներ էր ան, լեզու անոնք կը խօսէին և ինքը պատասխան չէր տար։



Պ. Նախ՝ պէտք էր դատին ընացին պէս՝ մեղադրող հակառակորդին ժամանակը լուսկեռնալ, ինչպէս. եղէ պահապան բերանոյ իմոյ, և հակառակել մեղադրին առաջի իմ։

Թուփ. Մեղաւորին՝ իմ առջեւս հակառակութիւն ըրած ժամանակին ես իմ բերանս դոցեցի։ Սաղ. ԼԹ. Զ.

Երկրորդ՝ ինքը ըսեր էր թէ պէտք չ'է որ մարդարէութիւը խոշերուն առջեւը ձգուի, ինչպէս մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզից։

Թուփ. Ձեր մարգարէութիւնները՝ խոշերուն առջեւը մի ձգէք. Մատթ. է. 6։

Երրորդ՝ մարգարէին բերնովը ըսեր էր Աստուած թէ, «եղէ ես որպէս մարդ որ ոչ լսէ և ոչ դոն խօսք՝ի բերան նորա։

Թուփ. "Ես ան մարդուն նմանեցայ՝ որ չը լսէր, և անոր բերնին մէջ խօսք չի կայ։ Սաղ. Լէ. 15։

Չորրորդ՝ թէ որ Քրիստոս անոնց խօսքին պատասխան տար նէ, մէկ խօսքով մը ինքզինքը կ'արդարացնէր, ու մեռնելէ կ'ազատէր, ան աստենը մեր փրկութիւնը անկատար կը մնար։

Հինգերորդ՝ Քրիստոս պիտի որ դալիմները չարտասուեցնեմբ ինքը պիտի մեռցնէին, ուստի մեզի դաս մը ըլլալու համար անոնց առջեւը լուռ կենալով գերազոյն խոնարհութեան և համբերութեան ճամբան ցուցնէր։

Հ. Քրիստոս յայտնութիւն առնելէն ետքը ինչո՞ւ համար առաջ կենան երևեցաւ։

Պ. Որպէսզի մահաբեր ձայնը՝ առաջ կենկէն (եսայէն) յայտնի եղաւ. անոր համար պէտք էր որ փրկութեան աւետեան ալ կենկով առ-

ցանծուէր. ինչպէս որ երեւ։

Հ. Արդեօք Մարիամ աստուածածինն սկզբնական մեղք ունէր։

Պ. Այդ հարցմանդ հաւատոյ մասն չ'է. որ Ս. գիրքէն քեզի վկայութիւն բերեմ. միայն աստուածպաշտութիւն հաւատոյ մասն ես պէտք է սկզբնական մեղքով չը ծնաւ Ս. կոյս Մարիամ։ Եւ դուն ալ բանաւորապէս չ'ես կրնար ըսել որ Աստուածածնին սկզբնական մեղք ունէր. վասն զի Ս. գիրքը մինչեւ անգամ ատոր վրայ բան մը գրած չ'է. ուստի ողջամիտ քրիստոնէին չը վայելեր որ Ս. գիրքին չը յայտնածը՝ մարդկային խնամատարութեամբ դանել ուզէ։

Հ. Արդարեւ շատ հաւնեցայ այդ պատասխանդ վրայ. բայց Ս. աւետարանիչները ինչու համար հիշ բան մը չը գրեցին Ս. Աստուածածնին վերափոխման և սկզբնական մեղքին վրայ։

Պ. վարդապետ, եկեղեցւոյ կ'ըսեն թէ պէտք չ'է զարմանալ ատոր վրայ. վասն զի բանականէ որ Ս. աւետարանիչները Աստուածածնին համար կ'ըսեն այսպէս. «յորմէ ծնաւ Յիսուս»։ Որ այս խօսքով Ս. կոյս աստուածածնի բոլոր հատարելութիւնները կ'իմացուի իր մօրը պատճին մէջ յղացած օրէն մինչեւ երկինք վերցնելու օրը։ Նաեւ աւետարանիչները Ս. կոյսին վրայ բան մը չը գրելով իմացուցեր կ'ուզեն թէ. Ս. կոյսին պէտք և պէտքէն դուրս

լալը, մեր խելքէն միտքէն վեր բան մըն է։ Վան որոյ չը դրեցին ոչ դալը և ոչ գնալը։

Հ. Ինչո՞ւ համար չ'ուզեց Ս. տուաձ որ Սրբուհի Ս. տուաձածինը առանց ամուսնութեան մը նայ կամ տաճարին մէջ կամ իր տանը մէջ. այլ Յովսէփին հետ ամուսնացեալ ըլլայ։

Պ. Պէտք է որ ամուսնութեան ինչ ըլլալը աղէկ մը հասկնաս. բայց այստեղ կարգը չ'է. հիմայ մեզ.ը Ս. կոյսին ամուսնանալուն պատճառը մտածելու են.ք նախ Ս. կոյսին կողմանէ. երկրորդ՝ Յրէից կողմանէ։

Ս. կուսին կողմանէ մտածելով երեք պատճառ կայ. նախ՝ հին օրինաց մէջ ամէն աղջիկ ամուսնանալու էր. ապա թէ ոչ անէծք մակ կը մնար. ուստի աստուածածինն ալ ամուսնացաւ բայց միշտ կոյս մնաց. և երբ օրհնեալ Գաբրիէլ հանդ։ Երկրորդ՝ որ իրեն արուեստին յանամատուր և պահապան ունենայ։ Երրորդ՝ կ'ըլլայ որ չ'ամուսնացած երբար ճիտուս Քրիստոսը ծնի չէ, հին օրէնքին վճիռը կործանուի։

Քրիստոսի կողմանէ ալ մտածելով երեք պատճառ կայ. նախ՝ որպէս զի կը կարծուի թէ ճիտուսի ծնունդը ապօրինաւոր է։ Երկրորդ՝ որպէս զի սովորական կարգաւ յայտնի ըլլայ թէ ան ցեղէ պիտի ծնի, և պէտք էր որ հայր անունով մէկը ունենար. որովհետև մօրը ցեղը չը ցուցնէր. հապա՝ հօրը ցեղը։ Երրորդ՝ որպէս զի մօրմէն զատ արուեստին անուցիչ և պաշտպան մը

ունեմնայ ։

Հ. Քրիստոս տէրն մեր, ինչո՞ւ սրբուհի կոյսը չէն կ'անուանէ, մայր չը կոչեր ։

Պ. Տէրն մեր, իբրև տէր խօսելով իր աստուածութիւնը և զօրութիւնը ցոյց կուտայ և կին կ'անուանէ Ս. կոյսը, և ինքզինքը որդի կ'անուանէ մօրը՝ վասն զի մարդ էր և ըստ մարդկութեան 'ի մօրէ ծնեալ էր. և ըստ աստուածութեան չանջնեապէս 'ի հօրէ ծնեալ էր. այդ պատճառաւ իր մայրը չէն կ'անուանէ՝ որ ցոյց տայ թէ ինքն է անոր ստեղծողը ։

Հ. Ս. կուսին հասակը քանի՞ տարեկան էր վախճանման ժամանակը ։

Պ. Ս. վարդապետք կ'ըսեն թէ չիտուն և ութը տարեկան էր վերափոխման ժամանակը. վասն զի. երբ յղացաւ զՔրիստոս՝ տասն և չորս տարեկան էր, և անոր հետ ապրեցաւ երեսուն երեք տարի, և Քրիստոսի մահուընէն ետքն ալ տասն և մէկ տարի ալ ապրեցաւ աշխարքիս վրայ, որով ամէնը կ'ընէ չիտուն և ութը տարի ։

Հ. Երբ որ Ս. հաղորդութիւնը կատարելու համար պատարագիչ քահանայն՝ ամէն էականերնը կ'ըսէ նէ, այն առնը դինին ու հացը ըստուգապէս Քրիստոսի մարմինը և արիւնը կ'ըլլայ մի ։

Պ. Այդ հարցմունքիդ վրայ գիտունները շատ վիճաբանութիւններ ըրած են, բայց ձեր անգորութեանը համար համառօտ մը իմացու-

նեմ. որ Ս. պատարագը՝ սկիզբէն մինչև վերջը Յիսուս Քրիստոսի Ս. յիշատակութիւնն է, և վերջապէս մեր մեղաց թողութեանը համար իւր Ս. մարմինն և արիւնն մեզի տալուն խորին խորհուրդն է։

Պատարագիչ քահանայն հօր Աստուծոյ կ'աղօթէ և կը յիշատակէ որ Յիսուս Քրիստոս իր մարմինը և արիւնը մեզի տուաւ. յայտնապէս բանալ Ս. խորհրդոյն եական բանը թէ, «առէք կերէք այս է մարմին իմ» և թէ «արբէք ՚ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ» և իրեն Ս. յիշատակին համար միշտ այս խորհուրդը կատարել պատուիրեց մեզի, և ետքը նոյն պատարագիչ քահանայն գոհութիւն կը մատուցանէ Աստուծոյ՝ որ մեզի արժանի ըրաւ այս ահաւոր և Ս. խորհուրդը կատարելու ու աչքով տեսնելու։

Ըրեմն մինչև որ այն Ս. խորհրդոյն վրայ եական խօսքը չ'բսուի նէ, գոյախոհութիւնը չ'ըլլար. այսինքն հացը և գինին՝ մարմին և արիւն չ'են ըլլար։ Եւ որովհետև Աստուծոյ հաճար հինայ և վազը չը կայ՝ անոր համար ալ չ'ենք կրնար ըսել թէ Ս. պատարագին մէջ գոյախոհութիւնը մը ժամանակ կ'ըլլայ։

Հ. Խելագար մարդկանց հաղորդութիւնը տալ արժանի է։

Պ. Խելագար բաժդ երկու կերպով է. ոմանք տկար միտք ունենալով տխմար կ'ըսուին. բայց

կրնան տրվիլ հաւատոյ խորհուրդը և պատիւը. սահմինները Ս. հաղորդութիւն առնելու են, իսկ ամանք ամենևին բընական ութիւն չ'առնին. մի՞ այն կերպարանքով մարդ են. թէ որ 'ի ծընընդեանէ անանկ են նէ, պէտք չ'է հաղորդութիւն տալ. բայց եթէ Ս. հաւատքը ընդունելէն ժամանակ մը ետքը եղած ըլլայ խենթութիւնը նէ. պէտք է տալ թէ որ թ.քնելու կամ վախերու երկիւղ մը չը կայ:

Հ. Քանի՞ յատկութիւն պէտք է եկեղեցական խորհրդոյ կատարելութեանը:

Պ. Սուրբ և ուղղափառ հայրապետներուն հաւանելով ի'բանք չորս. այսինքն նիւթ՝ տեսակ՝ դիտաւորութիւն՝ և խորհուրդը կատարելու համար տուրբ հաւատք ունեցող օրինաւոր պաշտօնեայ:

Հ. Ի՞նչ պիտի ըլլայ նիւթը:

Պ. Ամէն մէկ խորհուրդի համար ծիսաւոր բիտոսի հետևելով անիկայ ի՞նչ նիւթ յատկացուց նէ, վրնք ալ սահմն ընելու ենք. ինչպէս, մկրտութեան խորհրդոյն՝ ջուրը յատկացուց, պատարագին խորհրդոյն՝ հացը և գինին յատկացուց. և այլն:

Հ. Տեսակը ի՞նչ է:

Պ. Տեսակին ալ խորհուրդին վրայ ըսուելիք է. սկան խօսքին ձևն է. ինչպէս պատարագի այսինքն հաղորդութեան խորհրդոյն տեսակն է, առէք կերէք այս է մարմին իմ և այլն:

Հ. Դիտաւորութիւնը ի՞նչ է։

Պ. Դիտաւորութիւնն այն է որ կը դիտնանք թէ խորհուրդ մը ի՞նչ բանի համար կը կատարուի։

Հ. Հերետիկոս քահանային պատարագը արժեւոք ընդունելի կ՚ըլլայ։

Պ. Թէպէտ քահանայն Արիոսի հետեւող է նէ, բուն պատարագը ընդունելի չ՚է. որովհետեւ Արիոս Քրիստոսի աստուածութիւնը ուրացաւ։ Թէ որ քահանայն Եւնիմիոս հերետիկոսին հետեւող է նէ, այն ալ ընդունելի չ՚է, որովհետեւ Եւնիմիոս ուրացաւ Հոգւոյն Սրբոյ աստուածութիւնը, և մենք կը հաւատանք որ ամէն Ս. խորհուրդները կատարելապէս՝ Հոգին Սուրբն է։ Ասանկ նաեւ թէ որ քահանայ մը Ս. երդմնութեան անձերէն մէկուն աստուածութիւնը ուրացող հերետիկոսի մը հետեւող է նէ, անոր բուն պատարագը ընդունելի չ՚է։

Հ. Հապա ինչո՞ւ համար վարդապետներէն մեզ կ՚ըսեն թէ Ս. խորհուրդը կատարողին վրայ չէ որ հաւատք և արթարար ընտրութիւն չ՚ըլլայ նէ հոգ չ՚է. քանի ամէն մարդ կրնայ խորհուրդ կատարել, թէ հերձուածող ըլլայ՝ թէ անհաւատ թէ չար՝ թէ բարի. միայն թէ Ս. եկեղեցւոյ պատուիրածին պէս կատարէ խորհուրդը։

Պ. Զար պաշտօնեայներով խորհուրդ կատարելը բացարձակապէս չ՚արդիլուիր, քանի կ՚ըսուի թէ ուխտաւոր բժիշկին ալ երբեմն կրնայ հո-

ւանալ բժշկել. բայց անհաւատը՝ որ Ս. Երրորդութեան հաւատոյն ծանօթութիւն չ'ունի, և չ'է մկրտուեր նէ, չ'եմ կրնար ըսել որ Ս. խորհուրդը կատարելու կարող է. որովհետև Սուրբըն կ'ըսէ թէ անհաւատից կատարած խորհուրդը խորհուրդ չ'է' հապա՝ ծաղրածութիւն է։

Հ. Ուրացող քահանային կատարած խորհուրդը ի՞նչպէս է։

Պ. Քահանայական Ս. կարգին կնիքը (մէօհրը) անջնջելի կը մնայ ուրացող քահանային վրայ. ուստի պէտք եղած առենը կրնայ կարգին ջրութեամբը խորհուրդ կատարել, բայց իր գործած գործէն շնորհք չը կրնար բերել։

Հ. Ժամարար քահանայն երբ Ս. հացը կը բաժնէ նէ, Քրիստոսի մարմինն ալ բաժնուած կը համարուի՞ մի։

Պ. Յակոբ սուտածաբան և բոլոր ուղղափառ Ս. վարդապետները կ'ըսեն թէ՝ «կնաւոր որ հացը կտրելով Քրիստոսի մարմինը ոչ կը կտրուի, ոչ կ'ըզայ ու ոչ ալ կը ցաւի։

Հ. Քահանայ մը թէ որ Ս. Հաղորդութեան հացին և գինիին վրայ եակաև խօսքը ըսէ, և միւս աղօթքները չ'ըսէ նէ, այն խորհուրդը կը կատարուի՞ մի։

Պ. կը կատարուի կ'ըսեն սուտածաբանք, բայց այնպիսի քահանայ մահացու մեղք գոր-

ժամ կ'ըլլայ։

Հ. Թէ որ նեղ ժամանակ մը հարկ ըլլայ նէ, հնարք է որ նոյն դործը առանց մեղայ ըլլայ։

Պ. Վարդապետը կ'ըսեն որ հնար չ'է, չը կըրնար ըլլալ. վասն զի հարկ եղած ժամանակը մի միայն մեքենութիւնը առանց մեղայ կրնայ ընել. բայց պատարագին խորհուրդը չ'ըլլար։

Հ. Ինչու համար եպիսկոպոս ձեռնադրելու ժամանակը Աւետարանը դլխուն վրայ կը դնեն։

Պ. Ձեռնադրուողին ցուցնելու համար որ, իր բոլոր գործերուն մէջ Ս. Աւետարանին պատուիրանը միշտ աչքի բռնելու է. և միշտ անոր հրամաններուն մէջ պահելու է. և անոնց ստուգապաշտութեան վճիռներուն տեղեակ կ'ըլլայ. և Աւետարանը բոլոր Ս. գիրքերէն յարգի կը բռնէ։

Հ. Արդեօք հրաման կայ որ կարդատորները ամուսնացեալներու կամ օտար կիներու հետ բնակին։

Պ. Տիեզերական Ժողով Ս. Ժողովը կը հրամայէ որ եպիսկոպոս մը կամ վարդապետ մը կամ սարկաւագ մը արդիլեալ է որ օտար կամ բեւեռամ կիներու հետ բնակի. միայն թէ՝ երբոր իր մայրը կամ քոյրը կամ մօրաքոյրը կամ հօրաքոյրը ըլլայ նէ, ան վնաս չ'ունի։

Հ. Աշխարհական մարդ մը՝ քահանայութեան կոչ ըլլալը չը դիտնալով և ուրիշներուն բռնութիւնովը քահանայ ըլլայ նէ, յետոյ իր անար-

ժանուքիւնը ճանչնալով կրնայ արդեօք ինքը պինդը անմեղ ընել ապիտութեանը պատճառաւ. այնպէս նաև ձեռնադրողը ձեռնադրուողին անարժանութիւնը չը գիտնայ նէ, անպարտ կ'ըլլայ մի։

Գ. Ա. Հարցմանդ պատասխանը Ծովհան Ոսկերբերան կուտայ այսպէս ըսելով. «ապէտ կամ անարժան ձեռնադրուողը՝ չը կրնար ինքզինքը արդարացընել ըսելով որ՝ քահանայ կամ վարդապետ ըլլալու պատճառը ես չ'եմ. կամ թէ ես ինչ ընեմ ուրիշները կառնի (զօրով) զիս ձեռնադրելուն։ Նոյնպէս ձեռնադրող եպիսկոպոսը կամ կաթողիկոսն ալ չը կրնար ինքզինքը արդարացընել ըսելով թէ մենք ձեռնադրուողին ինչպէս մարդ ըլլալը չ'իմացանք. որովհետև սա խօսքը պարզելը՝ իրենց համար աւելի մեծ յանցանք է. որ մարդը չը քննած և անոր ինչ ըլլալը չը հասկցած՝ կ'ելլան զանիկայ սարկաւագ կամ վարդապետ կամ քահանայ կը ձեռնադրեն»։

Հ. Ծովհաննէս Պրաչէն ըրած մկրտութիւնը արդեօք խորհուրդ կը համարուէր։

Գ. կերպով մը խորհուրդ կը համարուի, որովհետև խորհուրդը՝ իրաց նշան մըն է. և որովհետև Ծովհաննէսի մկրտութիւնն ալ Քրիստոսի մկրտութեանը նշանակ էր, այսինքն տէրէն մըն էր. անոր համար այս մարքով խորհուրդ կը սեպուի։ Բայց որովհետև Ծովհաննու մկրտութիւնը չ'է մէկ ընդհ.քի պատճառ՝ հապա նշա-



նակ էր. անոր համար խորհուրդ չ'էր սեպվեր. ուստի Յովհաննէսին վկրտուողները՝ երբոր Քրիստոսի աստուածութեանը հաւատացին նէ նորէն վկրտուեցան, որպէս զի վրայնին սուրբ Հոգին շնորհքը գայ։

Հ. Հնարի է տղայն վկրտել իւր մօրը արգանդին մէջ ծնած։

Պ. Ոչ, որովհետև Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ոչ նախ հոգևորն՝ այլ նախ հնչաւորն, և ապա հոգևորն է»։

Թ. Պէտք է որ մարդս առաջ հնչաւոր ըլլայ այսինքն ծնի, ու ետքը հոգևոր խորհուրդը վրան կատարուելու է։ Ուրեմն պէտքը չ'է որ մանկտւոյ ծնունդէն առաջ հոգևոր ծնունդ ըլլայ. որովհետև վկրտութիւնը հոգևոր ծնունդ է։

Հ. Թէ որ երկու քահանայ մէկտեղ ըլլան, մէկին ձեռքը կտրած և մէւսը հասի, կրնա՞ն տան երախայ վկրտել իրր թէ մէկը խոր-

հուրդը ընելուվ և մկկալը տղան ջուրը խօթելուվ։

Պ. Ո՛չ, որովհետև մկրտութեան խօսքին ձևէն յայտնի է որ՝ այս խորհուրդին խօսքերը զուրցողը տղան ջուրը խօթողը մէկ հոգի մը պիտի ըլլայ, այսպէս «Ես մկրտեմ զքեզ», յայտնի է որ խօսքը զրուցողը և գործը կատարողը մէկ մարդ մըն է. սանկ կը տրվէցուննեն աստուածաբանք։

Հ. Ս. մուռոնը մարմնաւոր ախտերու լբրվելու դեղ գործածել արժա՞ն է։

Պ. Եկեղեցական կանոնադրքին մէջը գրուած է որ, արգիլեալ է որ քահանայ մը Ս. մուռոնը մարմնաւոր ախտերու լբրվելու դեղ գործածէ, ոչ ականջին քսէ և ոչ ակռաններուն, և ով որ կը յանդգնի՝ նզովեալ է։

Հ. Ս. ԱՍՏՈՒԱԾԸ՝ ի՞նչպէս եկեղեցական առաձնքներուն կարգը մաւ։

Պ. Ս. վարդապետք կ՚ըսեն թէ՝ ծիսուս խաչին վրայ մեռնելէն ետքը երրոր ծովսէփ Արիմաթիացին պիղատոսէն հրաման առնելով ծիսուսը խաչէն վար առնելու եկաւ նէ, չը կրցաւ անոր



ձեռքերուն և ոտքերուն դամերը հանել. ո՞ր ժամեւոտ կրակի նման կայծակներ կ՚ելլէին ան տեղերէն և վիրաւորած կոզէին. և յետոյ ցոյ- սէլ Աբեմաթիայեն ծնկան վրայ չոքելով ձեռ- քերը տարածեց և աղօթք ըրաւ այսպէս, «Ս. Աստուած Ս. և հզօր, Ս. և անմահ՝ որ խաչե- ցար վասն մեր ողորմեայ մեզ։

Թոէբ. Ով տուրբ Աստուած. հզօր Աստուած, անմահ Աստուած որ մեզի համար խաչուեցար նէ, մեզի ողորմէ, սասանկ երեք անգամ կըրկ-



ներով Քրիստոսի մարմինը խաչէն իջեցուց • ուս-
ում առաքեալներն ալ կանուն դրին այս աղօթ-
քը ըսել։

Եւ Ս. Աստուածածնի վերափոխման ժամանա-
կը՝ որովհետև Բարթուղիմէոս առաքեալը հոն
չ'էր, և երեք օրէն եռքը եկաւ • և Ս • Աս-
տուածածնին վախճանքին համեմատ իր դերեզ-
մանը բացին մարմինը տեսնելու համար՝ բայց
մարմինը հոն չ'էր, որովհետև երկինք վերա-
փոխած էր, ան առեղը թողլուս առաքեալն ալ
աս աղօթքը ըրաւ • «փառաւորեալ և օրհնեալ
միշտ Ս• կոյս Աստուածածին Մարիամ՝ Մայր
Քրիստոսի, մատո գ'աղաչանս մեր որդւոյ քոյ և
Աստուծոյ մերոյ» • Այս խօսքն ալ առաքեալնե-
րը Ս• Աստուածածնին հետ միացուցին, և ան
ժամանակէն մինչև հիմայ սկսաւ ըսուիլ եկեղե-
ցիներուն մէջ։ Այսպէս կը վկայէ մեր Սիմէօն
կաթողիկոսը պատմագիր անուն գրքին մէջ։

Հ. Վերջին յարութեան օրը՝ յարութիւն առ-
նողները, ինչ հասակաւ կամ ինչ որակութ-
եամբ որ մեռան են, այնպէս ալիսի յարու-
թիւն առնեն, եթէ ուրիշ կերպիւ։

Գ. Մէկ մարդ մը ինչ կերպ մարմնով որ մեռնի
նէ, այն կերպով յարութիւն չը ալիսի առնէ •
որովհետև ցորենը՝ մերկ հատ մի է, կ'ինայ
հողին մէջ ու կը մեռնի • բայց այնպէս չը բուս-
նիր, այլ հագուած ու զարդարուած։ Նոյնպէս
յարութեան օրը՝ տղայն ու ծերը՝ կարճ հա-

առաւ յարութիւն պիտի առնեն. Քրիստոսի հաւատքին նմանութիւնը պէս է։ Եփես. Դ. 13։

Հ. Շատ մարդիկ կան, որ մարդու մի՛ կ'ուսանին. և այն միսէն մնացեալ ոսկորնալ գաւակ կը ծնանին. եթէ բաժիդ պէս յարութիւն ըլլայ նէ, պէտք է որ այն կերուած միսը շատ անձի վրայ բաժնի ըլլայ, որ այս անյարմար բան մի է ուրեմն յարութիւն չը կայ։

Պ. Մարդ մը այս աշխարհիս մէջ ինչ որ մարմնոյն մէջ ունեցեր է նէ, պէտք չ'է որ յարութեան օրը վրան առնէ. հապա՝ այնչափ մը որ իրեն կատարեալ հասակին բաւականութիւն ընծայ։ Թէ որ կատարեալ հասակին բաւականութեանը բան մը պակսեց. ինչպէս ըսեր ես թէ տղայութեան ժամանակը մեռաւ. կամ թէ անգամց կղմնանէ պակսութիւն ունեցաւ նէ, այսր աստուածային կարողութիւնը կրնայ անոր տեղը լեցընել։ Նոյնպէս ալ թէպէտ ոմանք մարդու մի՛ կ'ուսանին, բայց հարկ չ'է որ յարութեան առած ժամանակը այն միտն ալ մարմնին մէջ երևնայ. որովհետև բնական չերմութեան զօրութիւնովը՝ մարդուս միսը միշտ կը հատնի և դարձեալ կ'աճի. բայց կերուած միսը որուն միտն էր նէ, յարութեան օրը՝ դարձեալ այն մարդուն հետ կը միանայ։

Հ. Սէր հաւատքին զօրութեանը նայելով՝ թէ որ Քրիստոսի զօրութիւնը մեղքէ ու մահուընէ կ'ազատէ նէ, պէտք է որ Քրիստոսի հա-

ատաձորները և տուրբ խորհուրդներն ընդունողները միայն վերջութեան արժանի լլլան. ուրեմն չատերը Քրիստոսի չը հաւատացին եթ անոնք յարութիւն պիտի չ'առնե՞ն։

Պ. Որովհետև միածին անոր համար մարդկային մարմին առաւ որ մեր մարմինը նորոգել տայ, և մեր վրայ բնութեան ինչ պակասութիւն որ կայ նէ, յարութեան օրը պիտի նորոգուի. բայց ամէն մարդոց պակասութիւնները չ'են նորոգվիր. հապա միմիայն Քրիստոսի հաւատացողներուն. ինչպէս արքային առաքեալը կ'ըսէ. «Ամենեքեան յարիցուք, այլ ոչ ամենեքեան նորոգեսցուք»։

Թ-ւթ. Ամէնքն ալ յարութիւն պիտի առնեն, բայց ամէնքն ալ չը պիտի նորոգվին։ Ա. կորն. ԺԵ. 51։

Հ. Թէ որ ամէնն ալ յարութիւն պիտի առնեն նէ, ինչու համար Դաւիթ մարգարէն կ'ըսէ թէ «ամբարիշտները դատաստանի պիտի չ'երլլան։ Սաղմոս Ա. 5։

Պ. Դաւթի խօսքը այսպէս իմացիր, ամբարիշտները չ'է թէ դատուելու. պիտի չերլլան, հապա դատապարտուելու պիտի երլլան. որովհետև իրենց գործած չարութիւններուն համար հիմակուընէ դատապարտուած են, ինչպէս որ ապիրատեր մարդ մը որ բանտը կ'ըլլայ, վերջապէս երբոր դատաւորին առեւանը կը հանեն նէ, դատաստանի համար երլալ չ'ըսուիր անոր. հապա

յետին վճիռը լսելու համար. այս է Դաւիթ մարգարէին խօսքին միտքը:

Թէ որ մարգարէներէն վկայութիւն կ'ուզեանք, ահա Յոբ երանելին կ'ըսէ. «գիտեմ որ Ազատած մշանջենաւոր է և վիս գերեզմանէս պիտի յարուցանէ». և նոյն մարգարէն կ'ըսէ. «պիտի տեսանեմ և աչերուս պիտի ուրախանայ, ոչ ձեր ուրիշները պիտի զուարճանան, և Ազատած իր սիրելիներուն պիտի երևնայ ու մեղաւորնե-րուն պիտի սպառնալիք ընէ». ահա տակէ կը յայտնուի որ մեղաւորներն ալ յարութիւն պի-տի առնեն:

Եւ ահա Յիսուս Քրիստոս ալ այսպէս կ'ըսէ. «ժամանակ պիտի գայ որ՝ գերեզմանի մէջ ե-ղողները ամէն ձայնին պիտի լսեն, և դուրս պի-



տի գան, որոնք որ բարի գործեր են նէ Ա-րքայութիւն պիտի երթան, և որոնք որ չար գործեր են նէ դժոխք պիտի երթան. Յով. ե.

28 ։ Ա.Հա հոս կը հասկցուի որ չար դարձողնե-
րըն ալ՝ բարի դարձողներն ալ, այսինքն մեղա-
ւորներուն արդարները ամէնը մէկէն յարութիւն
պիտի առնեն ։

Հ. Հաւնեցայ բառիններուդ, բայց կ'ըսես որ
վերջին դատաստանէն ետքը վտանգն ալ յաւի-
տենական է ատնչանքն ալ յաւիտենական է.
բայց ինչ որ Աստուծոյ դատաստանը արդար է
նէ, պէտք չ'է որ պատիժը մեղքէն շատ ըլլայ,
որովհետև Ս. գիրքին մէջն ալ գրուած է որ,
« յանցանքին համեմատ պիտի ըլլայ պատիժը »։
Բ. Օրի. ԺԹ. 2։ Արդ՝ յանցանքը ժամանակաւոր
է. ինչո՞ւ պատիժը յաւիտենական պիտի ըլլայ ։

Պ. Վարդապետը եկեղեցւոյ հայրերէն կ'ըսեն.
թէ որ մարդ մը քաղաքական օրինաց դէմ յան-
ցանք գործէ հինգ տարի բանտի չափ, և քաղաքապետը
խնամոյ նէ, արդեօք հինգ պատիժ կու-
տայ, եթէ շատ ժամանակի. և պատճառը ի՞նչ
է. քանզի մեծին հրամանին դէմ գործեց ։ Ի-
նամուր մէկը՝ որքան գերագոյն մեծութիւն
ունենայ այն յանցաւոր մարդուն վրայ նէ, այն-
քան ալ պատիժը աւելի կ'ըլլայ ։

Արդ՝ որովհետև մեռաւ իր անձին և պատու-
կան արիւնը թափեց մեր մեղքին համար. և
թէ որ մենք դարձեալ Աստուծոյ անհուն մե-
ծութեանը դէմ յանցաւոր գտնուինք նէ, Ա-
ստուած՝ որ յաւիտենական է. յաւիտենական պա-
տիժ կրտայ արդարութեամբ ։

Հ. Ս. վերնատանը մէջ եղած ընթրիքէն առաջ Յուդայ Հաղորդուեցաւ. կամ որ կ'ըսէ. «Թայեալ պատառ ոյ յուդայէ» այն Թայեալ պատառը Ս. խորհրդե՞ն էր։

Պ. վարդապետը կ'ըսեն Թէ Յուդայ առաքեալներուն հետ Հաղորդուեցաւ Ս. խորհրդէն. բայց պետրոս է Թէ երբոր՝ Յուդայ Քրիստոս ի ձեռքէն Թայեալ պատառը առաւ նէ. առնելեն Հաղորդուած էր։

Հ. Ղազարու յարութեան յիշատակը ծաղկազարդին չորեքշաբթի օրը կը կատարէնք. արդեօք Ղազարոս այն օրը յարութիւն առաւ։

Պ. Ձի՛ն շաբաթ օրը չ'էր որ Քրիստոս յարութիւն առաւ Ղազարու. հապա առն և հինգ օր առաջ էր. եւ.քը Քրիստոս հրէայներէն հեռացաւ Եփրայիմ քաղաքը գնաց. անկէ Բեթանիայ եկաւ և հարկերոյթի նստաւ. հան էր նաև Ղազարոս. ու երբոր եւ բառապետները իմացան նէ. երկրորդ օրը ամբոխի ու ձիթենիի առեր առին. և դիմաւորելին Քիստոս. աս է ծաղկազարդ բառածը։

Հ. Թէ որ կարգաւոր մը անելու տեղը մարդ մը բանտարկե՞ նէ. այն մարդը բանտարկուած սեպվի՞ մի։

Պ. Այ՛ն. որովհետև Քիստոս առաքեալներուն կապելոյ և արձակելոյ զօրութիւն տուաւ. ըսելով Թէ «որ միանգամ կապիցէք յ'երկրի՝ եղիցի կապեալ յ'երկինս. և չ'ըսաւ Թէ իրաւունք

բանտարժանիք բանտարուած սեպուի։ Ա.հա արբազան առաքեալներն ալ՝ եկեղեցական կանոններուն մէջ գրած են թէ. «Անկրաւ տեղը մարդ բանտարող կարգաւորը պիտի պատժուի. բայց ան մարդը՝ բանտարեալ կը սեպուի. վասն զի բանք որ այդպիսի տէր մը իր այդեզործին հրամայ առաւ որ այդպիսին ծառերը յօտէ այսինքն (պատառիշ) ընէ. ան պայմանաւ որ՝ մինչ չոր ատերը այսինքն տալերը կոտրտէ։ Բայց թէ որ այդեզործը ելլէ կանանչ և պտղատու ծառերն ալ կտրէ նէ, թէպէտ և ինքը պատիժ կը կրէ. բայց ծառերն ալ կտրուած կ'ըլլան։

Հ. կարգաւոր մը կարգաւորի մը հետ ոխակալութիւն ունենալով կրնայ Ս. պատարագ մատուցանել։

Պ. Ո՛չ, որովհետև այսպէս կը հրամայէ Ս. Ներսէս Շնորհալին. «Չ'ըլլայ որ Ս. պատարագ մատուցանող քահանայ մը, ուրիշին հետ քէն պահէ կամ ոխակալութիւն ունենայ, և անանկ պատարագ մատուցանէ ու այն պատարագն ալ Աստուծոյ առջև անընդունելի ըլլայ, հապա պէտք է որ այնպիսին իր եղբօրը հետ հաշտուի նախ որ Քրիստոս հրամայեց, անանկ են նաև հաղորդուող աշխարհական մարդերն ալ։

Հ. Թէ որ քահանայ մը՝ յանցաւոր մեկը բանադրած ըլլայ նէ, կրնայ Ս. պատարագ մատուցանել։

Պ. Թէ որ Աստուծոյ օրինացը դէմ մեղանչէ.

լուն և չը պղծուն համար բանադրեր է քահանայն և այն բանադրեալն ալ չ'է ազատեր ու քահանային թողութիւն չ'է կրնար նէ, քահանայ առանց խղճին ցաւ մը ընելու կրնայ Ս. պատարագը մատուցանել, բայց բանադրեալը պատարագութեան ներքև կը մնայ որովհետև իր չար ճամբէն ետ չը կեցաւ ու ան քահանային թողութիւն չը կրնար։

2. Թէ որ քահանային բանադրած մարդը պղծչալով պայ անկէ թողութիւն ուզէ, բայց քահանայն թողութիւն չը տայ նէ կրնայ պատարագ մատուցանել։

3. Անխախտ քահանայ մինչև որ բանադրեալին թողութիւն չի տայ ու անոր հետ չը հաշտուի նէ, հրաման չ'ունի Ս. պատարագ մատուցանելու։

4. Ս. պատարագը մատուցանող քահանայն ինչ կերպ պահպանութիւն ունենալու է։

5. Իր ժամադրութեան գիտցողն թող հասկընայ, որովհետև հոգւոյ խորհրդաւոր պիտոյն նայելով, պէտք է իր անձին կատարելութիւն ունենալ, սպասաւորը կը ցուցնէ որ բարին ու չարը ընտրելու մասին ազէկ դատողութիւն ունենալու է, շապիկը կը ցուցնէ որ ողջախոհութիւն մաքրութիւն ունենալու է, գօտին կը ցուցնէ որ իր կիրքերը մեռցնելու է, բազկանը՝ այսինքն թևին դրածները կը ցուցնեն որ Ֆրիսոսակ Ս. աւետարանը քարոզե-

ըս համար քաջ ու արի ըլլալս է, ուրարը կը ցուցանէ որ երկայնամիտ ու համբերող ըլլալս է, վերջապէս շուրջառն ալ կը ցուցանէ որ կատարեալ սիրով զՅաուսաժ սիրելս է։

Հ. Ի՞նչ կերպ որպհսութիւն պէտք է ունենալ այդ ճաշակ այսինքն հաղորդութիւն առնողը։

Պ. Շատ կատարելութեան պէտք ունի. որովհետև պէտք է առաքինութեան գործ քերով զարդարուիլ. որ այս Ս. խորհուրդը իր հոգիին մէջ ընդունելս սեղի ունենայ. և ահա այսպէս կը հրամայէ Ս. առաքեալն Պօղոս. «փորձեսցէ մարդ նախ զանձն իւր, և ապա՝ ի հացէ անտի կերիցէ»։

Թ-ւէ. Մարդ մը պէտք է որ առաջ իր անձը քննէ. ու ետքը այն հացէն ուտէ» Ս. Կորնթ. Ժ.Ա. 18։ Ուրեմն հաղորդուողին առաջին զգուշանալու բանը սովին է որ հօգին մահացու մեղքերէն հեռի ձնայ և հօգին գլխաւոր առաքինութիւններըը ունենայ իրեն վրայ. ապա թէ ոչ հրամանն չիկայ որ հաղորդուի. այսպէս կը պատուիրէ Ս. Եկեղեցին ալ ըսելով թէ. «որ ոչ է՛ք կարող հաղորդիլ Յաուսաժային խորհըրդոյս, առ դրսնս երէք և աղօթեցէ՛ք»։

Թ-ւէ. Թէ որ այս Յաուսաժային Ս. խորհրդէն հաղորդուելու արժանի չ'է՛ք նէ, դուրս երէք ու աղօթեցէ՛ք։ Վասն զի այս խորհուրդը Սբրքութիւն է. ու չէլի մեղաւորներուն հապճուրբերու սրբութիւն է. անոր համար կ'ըսուի. 'ի սրբութիւն սրբոց։

Հ. Անարժանութեամբ ճաշակողները ի՞նչ պատիժ ունին։

Պ. Այդ պատիժներուն տեսակները շատ են. մինչև անգամ չը համարձակիմ ըսել թէ աշխարքիս վրայ արժան պատիժ և պատուհաս կը պատահի նէ, շատը անարժանութեամբ պատարագ ընողներուն և անարժանութեամբ հաղորդուողներուն երեսէն է. այսպէս կը հաստատէ երեւելի Աստուածաբան մը և կ'ըսէ թէ, անարժան հաղորդութիւնը՝ մարդը մեղքի մէջ կ'ընկղմէ և անոր կորուստը կը պատրաստէ։ Ասկէ կը հասկըցուի որ անարժան հաղորդուողը մատնիչ Յուդային նման իր տիրոջը ներքուստ ծառան է որ զԱստուած անգամ խաբելու կը յանդգնի։

Հ. Ամէն ազգերուն պատարագն ալ մի և նոյն է։

Պ. Մուրքն ներսէս առաջ պատասխանը այս մտքով կուտայ ըսելով թէ, «խելքով տղայ մ'ըլլաք, մի կարծէք որ ամէն ազգերու Աստուածը զատ զատ է, վասն զի թէ որ անանկ ըլլայ նէ, պիտի ըսէինք որ այս ազգին Աստուածը՝ իր վարքին գործութիւնը անոր ըրած պատրաստին մէջ կը ցուցնէ, ու այն ազգին Աստուածն ալ՝ իր ազգին կը ցուցնէ իր վարքը պատարագին մէջ»։ Ուրեմն, քանի որ Յիսուս Քրիստոս մէկ է և ամէն քրիստոնեայ ազգերուն հաւատքին էական կարգերը իրարու համաձայն են, ըսել է որ ամէնուն ալ պատարագը մէկ ձեւ ու մէկ գործութիւն ունի։

Հ. Բայց բան մը կայ որ անիկայ հասկնալու եմ, մեր եկեղեցին հաղորդութեան հացը անխմոր կ'ընէ, և գինին մէջն ալ ջուր չը խառներ, բայց ուրիշ մէկ քանի ապրեր կ'ընեն, ուրեմն անխմորը և խմորեալը, անջուր գինին և ջրախառն գինին մէկմէկէ բնաւ երբէք տարբերութիւն չ'ունի՞ն։

Պ. Ահա նոյն Սուրբն ներսէս աւտր վրայօք ալ սանկ կը խօսի, «աւաղ այդ յանդգնութեանը և այդ անօգուտ հակառակութեանը, որ մեզի չառիթաւորութեան կը տանին, ու պարապ տեղը կը վիճաբանինք. օրինակի համար ըսեմ որ ճերմակ ապակին այսինքն (ճամը) թէ որ քիչ մը ներկելու ըլլամ նէ, արեւուն ճառագայթները դարձեալ ան ապակիէն չ'ե՞ն անցնիր, հարկաւ կ'անցնին. ուրեմն այսպէս ալ ջրախառն կամ անջուր խմորեալ կամ անխմոր ընելը՝ Հոգւոյն Սրբոյ զօրութիւնը ոչ կը սակաւացնէ և ոչ ալ կ'աւելցնէ, վասն զի Աստուած նիւթին չը նայիր։

Եւ այս ալ դիտնալու է թէ ընդհանուր Աստուածաբանները այսպէս վճիռ տուած են որ՝ ամէն մէկ քրիստոնեայ ազգեր՝ իրենց ազգային եկեղեցական ծիսերը և արարողութիւնները հաստատուն պահելու են։

Հ. Ինծո՛ւ կ'ըլլայ որ բոլոր եկեղեցիներուն մէջ եղած պատարագը՝ մի մարմին Քրիստոսի կ'ըսուի։

Պ. Այդ հարցումիդ ալ պատասխանը դարձ-

եւ նոյն առաքելն ներսէս առած է այս օրինակը տալով թէ. «արեւուն մէջ գաս գաս մէկ քահանայ հաս ապակի դիր. նոյն մէկ արեւը ան լոյսը չ'է՞. որ ամէնուն վրայ ալ կը ծագէ, և այդ լոյսը մէկ լոյս մը չ'է. ու ան ապակիներն ալ նոյն լոյսէն հաւասար զօրութիւն չ'ունին առնելու նոյնպէս բոլոր աշխարհս մէջ թէպէտ եկեղեցիները գաս գաս են. բայց մէկ նիւթ կը դնեն ապաստրակին, այսինքն հաց և գինի, որուն վրայ կը ծագի համատարած արեգակն մի այսինքն Ս. Հոգին Աստուծոյ, և ան ամէնն ալ Քրիստոսի մէկ մարմինը կ'ընէ:

Հ. Քրիստոս մէկ անգամ մը պատարագուելով հաչին վրայ մեռաւ, մեզ ամէն օր պատարագելով Քրիստոսի մահն ալ մեռանգամ կ'ընենք:

Պ. Քահ. լոյն, եկեղեցիներուն մէջ որչափ որ կը պատարագենք նէ, չ'է թէ Քրիստոսի մահը կը կրկնենք. հապա՝ անոր Ս. յիշատակը կը կատարենք Ս. Երրորդութեան առջև, և կ'ըսենք Հօր Աստուծոյ թէ, ով Հայր Աստուած, նայէ քու միածին որդւոյդ մարմինին և արիւնին, որ երեն մահուանը յիշատակ սեղի ձգեց մեզի, և այսպէսով քու և մեր մէջը հաշտութեան միջնորդ եղաւ ու մեր մեղքերը սրբեց. հիմայ Քրիստոսի ան մեռնելուն յիշատակը կատարելով կը խնդրենք որ մեր մեղքերուն թողութիւն ու մեզի շնորհք պարգեւես:

Հ. Ս. առաքելոց կենդանութեան ժամանակը

պատարագի արարողութեան առանձնքները ի՞նչ էին ։

պ. Որովհետև Ս. առաքեալներուն ժամանակը Քրիստոսի հաւատքը նոր ծաղկեր էր ու բոլոր հաւատացեալներն ալ Հոգւով Սրբով լեցուած էին, անոր համար Ս.առուծոյ շնորհքովը անոնք իրենց միտքէն կը շարադրէին ինչ առանձնք որ պէտք ըլլար նէ, մէջ պատարագի և թէ ուրիշ խորհուրդներու համար ։ Բայց երբոր հաւքերը շատերուն թերահաւատ ըլլալուվը Հոգւոյն Սրբոյ շնորհքը անոնց վրայէն պակսեցաւ նէ, ան ժամանակը Ս. վարդապետք եկեղեցւոյ՝ արժանաւոր ալօթքներ շարադրեցին և մեզի աւանդեցին որ պէտք եղած առնը ղբուցնենք, այսպէս կը վկայէ Սուրբն Եղիսէս շնորհալին ։

հ. Ս. պատարագին մէջ Ողջոյն առաք միմեանց և Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ է, ի՞նչ կը նշանակէ ։

պ. Սեղանին վրայի ընծայները՝ Քրիստոս կը նըշանակեն, և արկաւագը այս ըսելով իմացուներ կ'ուզէ թէ, որ հաւատացեալ ժողովուրդը պէտք է որ դուք եղբօր պէս մէկ մէկու հետ սիրով ըլլաք, և ան սէրը՝ մէկմէկու ողջոյն տալով յայտնեցէք, և անոնք որ մէկու մը հետ կռուած են ու արդարած են նէ, թող եկեղեցին դուրս չելլան ու ալօթք ընեն, որովհետև պատրնուն մէջ ոխ պահող մարդիկը արժանի չ'են որ Ս. խորհուրդին դիմացը կայնին ։ ու-

ան սարկաւագը ոչխարը տալէն ետք՝ դպիրներն ալ ժողովուրդին կտակէն պատառիկ տալով կ'ըսեն թէ թշնամութիւնը մեզմէ հեռացեր է, և սէրը ամէնուս վրայ տարածուեր է, և մեր՝ մեր դխտուն այսինքն Յիսուս Քրիստոսին հետ մէկ մարմին ենք։

Հ. Այդ ոչխարին ժանեակը ժամարարը կէս մը կը բանայ սկիհը և սեղանին մէկ կողմը կը կայնի, առ ինչ միտք պիտի ըլլայ։

Պ. Մեր Յիսուս Քրիստոսի կոյս Մարիամէն ծնելուն խորհուրդն է, վասն զի Յիսուս Մարիամէն ծնելով մարդկային ազգին երեւցաւ։

Հ. Երբոր Քրիստոս առաքեալները քարոզութեան ղրկեց նէ, ըսաւ անոնց թէ «ոչ բառնայք ղբսակ, ոչ խաղալ մի կօշիկ» այս խօսքին միտքը ինչ է։

Պ. Քրիստոս առաքեալներուն անոր համար աս պատուէրանքը ըրաւ որ՝ իրենց հոգը՝ իրենց պիտոյ եղած բաներուն վրայ չ'ըլլայ. հապա՝ ղերեզմանք ղրկողին այսինքն Աստուծոյ վրայ ըլլայ՝ որ երկինքին թռչուններուն կը խնամէ։

Հ. Քրիստոս նաև առաքելոց ըսաւ որ «ճամբուս վրայ մարդու բարև մի տաք», այս խօսքին միտքը ինչ է։

Պ. Աւաղ պէտք է իմանալ թէ ինչ է ոչխարին մեկնութիւնը, որովհետև ոչխարը այնու որ կը տուն է նէ, ան մարդուն համար խնդրուած մէկն է որ կ'ընծեղք Աստուծմէ և կ'ուղղէ որ այն

մարդը երկնային փառքին արժանի ըլլայ. ուս-
ում ճամբան քալող մարդ մը դարձի մէջ գըտ-
նուած ըլլալուն համար ողջոյնին պատիւը չը կըր-
նար դիանալ, և պէտք եղած պատասխանը տալ
անոր՝ որ իրեն ողջոյն տուաւ, անոր համար ցի-
տաս ըսաւ առաքեալներուն թէ ճամբուն վրայ
մարդու ողջոյն մի տաք, նաև ըսաւ թէ «որ
տունը մտնաք, առաջ ըսէք՝ այս տունին խաղա-
ղութիւն ըլլայ եկեղեցին կը հասկնանք, և ճամ-
բու մէջ եղողը եկեղեցիէն դուրս գտնուողն է,
և հարկաւ անանկ մարդը քրիստոնէական ո-
ղջոյնին արժանի չը կրնար ըլլալ, ուստի ինչ-
պես ալ ըսաւ, ճամբու վրայ մարդու ողջոյն
մի տաք։

Նաև յայտնի է որ ճամբայ ըսուածը՝ աշխար-
հային ճանապարհ մըն է, որով կը հասկնամք
աշխարհի մեղքերուն և հեշտութիւններուն
ճամբէն գացողները, որոնք չէ թէ միայն ող-
ջոյնի արժանի չեն. հապա՝ անանկներուն հետ
ճամբուն մէջ ընկեր ըլլալն ալ չը վայլեր, որոնց
համար Սողոմոն կ'ըսէ թէ, «անոնց հետ ճամ-
բան մի գըներ, անանկներուն ճամբէն դու ոտ-
քըդ հեռացուր». Առակաց Ա. 15։

2. Առաքելոց գարոզութեան վիճակները ո-
րո՞նք էին։

Պ. Յակոբ առաւածաբանը՝ առաքելոց կանո-
նագիրքերէն առնելով այսպես կը գրէ թէ պետ-
րոս առաքեալին վիճակներն էին, Հռոմի՝ ու-

ըր Իտալիա, Սպանիա, Անգլիա (Ինկլիզերա), Կիլիկիա (Ատանա) մինչև Սև ծովուն քովի երկիրները։

Յակոբ առաքեալին վիճակն էր, Երուսաղէմ ու բոլոր Հրէաստան և Սրապիտան, կեսարիա և ուրիշ շատ երկիրներ։

Մարկոս աւետարանիչին վիճակն էր, Աղէք-սանդրիա՝ Եգիպտոս ու Հապեշիստան։

Պ. Թոմա առաքեալին վիճակն էր, բոլոր Հինդիստան։

Յովհաննէս աւետարանիչին վիճակն էր, Եփեսոս, Սեղանիկ ու Յունաստան և ուրիշ շատ մը տեղեր։

Անդրէաս առաքեալին վիճակն էր, Եղնիկ, Իզնիմիա և ուրիշ զանազան երկիրներ։

Ղուկաս աւետարանիչին վիճակն էր, կ. Պոլիս և բոլոր շրջակայ երկիրները մինչև Բարբարոսաց աշխարհը։

Թադէոս առաքեալին վիճակն էր Ուրհա, Մծբին, Միջագետք ու բոլոր Հայաստան։

Աղդէ Հայրապետին վիճակն էր, Պարսկաստան. և Ասորեստան, Պարթևաստան և ուրիշ երկիրներ։

Հ. Քրիստոսի պայծառակերպութեան ժամանակը՝ հետը երթալ առաքեալները Մովսէս ու Եղիա մարգարէները լինուր ճանչցան, որմէհետև Մովսէս շատ տարի առաջ մեռած ու Եղիա ալ երկինք երած էր։



Գ. Յառնկ կը վկայեն ոմանք ԹԷ, առաքեալ-
ները՝ Մովսէսեն ու Եղիայեն պատկերները ու-
նէին ու անկից ճանչցան, բայց ասիկայ անյար-
մար խօսք է, որովհետև այն ժամանակը սով-
րութիւն չ'էր մարդու պատկեր նկարելը, ու թե-
մըն կ'երևայ որ Քրիստոս անոնց անունը ա-
լամ առաքեալներն ալ գիտցան, կամ ԹԷ Մով-
սէս մեռելներէն յարութիւն առած ըլլալով
մեռելի կերպարանք ունէր. ու Եղիա ողջ ըլ-
լալուն վրայէն դրախտին անմահութեան հոտը
կը բուրէր։

Եւ կամ թէ առաքեալները լսած էին որ Մովսէս քիչ մօրուք ունեցող և թոթովախօս մէկն է, և եղիայի համար ալ լսած էին թէ, համարձակ խօսող և շատ մարդու է, անկից դիտցան, աս խօսքերը հաւանական են, բայց աւելի հաւանական է թէ Քրիստոս ուզից թէ առաքեալները՝ իր աստուածութեան վարքին մէկ մասը տեսնան, այս մանաւոր չնորհքին ալ տալ աւաւ անոնց որ իրենց չը տեսած Մովսէս ու եղիա մարգարէները շուտով մը ճանչցան։

Հ. Աւետարանիչները ինչո՞ւ համար չորս են, և ոչ աւելի, ոչ պակաս։

Պ. Թէպէտ ուրիշ շատ աւետարանիչներ ալկային բայց արբատան Հայրապետները անոնց մէջէն չորս հատը միայն ընտրեցին խորհրդաւոր պատճառներով, ըսելով թէ Քրիստոսի վրայօք գրուելիքները՝ գլխաւոր չորս բաներ էին, այսինքն, մարմին առնելը, թաղաւորութիւնը, խաչին վրայ մեռնելն ու թաղուիլը. և յարութիւն առնելն ու երկինք համբառնալը։

Ահա Մատթէոս աւետարանիչ՝ մեծ մասամբ Քրիստոսի մարդկութեանը՝ այսինքն մարմին առնելուն վրայօք կը խօսի. Մարկոս՝ Քրիստոսի աւետարակիրութեանը վրայ կը գրէ. Ղուկաս՝ Քրիստոսի պարարակ էղի նման մարթութեան, իսկ Յովհաննէս՝ արժանի նման Քրիստոսի աստուածութեանը վրայօք կը գրէ։ Եւ ահա այս պատճառաւ, երբոր այս չորս ա-

ե. Եառաքանչիներուն պատկերները կը նկարեն նէ, Մատթէոսին քով հրեշտակ մը, Մարկոսին քով առիւծ մը, Ղուկասին քով եղն մը, և Յովհաննէսին քով արծիւ մը կը դնեն։ Այս եառաքանչիները թէպէտ և չորս հատ են, բայց ամենուն ալ գրածը Քրիստոսի աշխարհ գալը և ըրածները կը պրեն, անանկ որ մէկը միւսին ամենևին հակառակ չը խօսիր, որովհետև ամենուն ակիզբը մէկ է, այսինքն Քրիստոս։ Ինչպէս որ եղեմական դրախտէն չորս գետ դուրս կ'ելլէին՝ բայց ակիզբը մէկ հատ մըն էր։

Հ. Քրիստոս յարութիւն առնելէն ետքը առաքեալներուն երևցաւ նէ, ինչու համար անանկ յարմարցուց որ Թովմաս մէջերնին չը գտնուեցաւ։

Պ. Ըրբատան վարդապետք կ'ըսեն որ, եթէ ամեն առաքեալներն ալ մէկտեղ գտնուելով Քրիստոսը տեսնէին և առանց կասկածելու հաստատին նէ, ըստ կ'ըլլար թէ առաքեալները անմիտ մարդկիներու պէս խաբուէր են, որ առանց քննելու շուտ մը հաւատացեր են, անոր համար Քրիստոս Թովմասը մէջերնուն դուրս ձգեց, որ երկրորդ անգամ երևնալու ժամանակը աւելի հաստատուին իրենց հաւատքին վրայ. և ըստ Ոսկեբերանին որ կ'ըսէ թէ, «ուր ըլլ օրէն եառքը Թովմասին երևցաւ Քրիստոս ու չ'է թէ շուտ մը, որպէս զի Թովմաս մինչև ուր օր առաքեալները ըչեն աղէկ մը հաստնայ Քրիստոսի երևնալը, և

ին.ք ալ՝ աւելի փափաքի Քրիստոսը տեսանելու։»։

Հ. Քրիստոսի գերեզմանին վրայ կիւրակէ առաւօտ գացող իւղաբեր կիներուն որո՞նք էին։

Պ. Մարիամ Մագթաղենացի՝ Ղազարոսին քոյրը, և Մարիամ կղէոպասայ, և Սողոմէ՝ մայր որդւոյն Զեբեդեայ, և Մարիամ Մագթաղենացին Մարթա անուանուած քոյրը, և Յօհաննա՝ որ էր կին Քուզայ Հերովդէսի հազարապետին, և Շուշան՝ որ կը յիշուի ԺԱ. գլուխ Ղուկաս Ը. 3։

Հ. Մեկ քանի տեղեր տեսերում են կայ որ՝ աւագ շաբաթ օրը գերեզմանատուն կ'երթան, այս ինչ միտքով պիտի ըլլայ։

Պ. Քանի որ հրեայ հայրապետները կ'ըսեն թէ, որովհետև Քրիստոս այն օրը գժոխքը կը տանի հոգիները ազատելու համար, անոնք ալ արքայական կարգաւորները գերեզմանատուն երթալով ննջեցեալց հոգին այցելութիւն կ'ընեն, և կը պատրաստեն Քրիստոսի որ՝ կենդանի որ մարդապատրաստութիւնը այն օրը գժոխքը կը տանի և կարգաւորի հոգիները արձակէց նէ, անոնք ալ դիմաւորելու համար ննջեցեալներուն հոգին որոնք տեսնելու համար կ'երթան, այս պատճառաւ ննջեցեալի տէրերը՝ աս օրը առաւօտ կանուխ կ'երթան գերեզմանատուն իրենց մեռելոց։

Հ. Երանելի Աստուածածին ինչո՞ւ համար կ'օրհնեն, և արքայոյս մեռոնով կ'օծեն։

Պ. Ա. բանէս Ս. կարդալիքները հինգ գլուխ որ պատճառ կուտան, նախ որ՝ առաքեալներն

իշխանութիւնը այն ատեն հալածէ. այս պատճառաւ Ս. կանանց մէջ անանկ հրաման կայ որ՝ մէկ որ Աբխազական եկեղեցի մը ուղղափառանելը առնեն նէ, առանց զանիկայ օծելու՝ այն ատեղը եկեղեցական Ս. խորհուրդ կատարելու հրաժան չի կայ, որովհետև Աբխազացի եկեղեցին տատանայից բնակարան է: Երկրորդ՝ եկեղեցին անոր համար կ'օծուի որ, Քիառս Քրիստոսի հարազատ ախոյեան կոչուի անկէ ետքը. և ինաոր որ Քիառս Քրիստոս օծեալ որդի Աստուծոյ կ'ըսուի նէ, անոնկ ալ պէտք է որ եկեղեցին օծեալ ըլայ: Երրորդ՝ մարդ մը որչափ որ յանցաւոր ըլայ միշտ չի անդամ մէկ որ մարդ սպանած ըլայ նէ, ալ չը բռնուիր ու չը պատժուիր, ու այս ալ եկեղեցական կանոնադրութեն մէկը գրուած է. որովհետև եկեղեցին՝ օծեալ արքայարան է և Աստուծոյ տուն կը սեպուի: Չորրորդ՝ եկեղեցին անոր համար կ'օծուի, որ այն տեղի սրբութիւնը Աստուծոյ աւելի հաճոյ ըլայ, ինչպէս որ Յովսեփ Երուսաղէմի մէջ տաճարը չինելէն ետքը. Աստուծոյ աղօթք կ'ընէր, ըսաւ թէ, «Ով տէր Աստուած կը խնդրեմ քեզմէ որ՝ ով որ այս տեղ գայ ու քեզի խնդրուած մը կամ աղօթք մը ընէ նէ, հաճութիւնով անոր ականջ դնես»: Որովհետև լսուած արդարեւ վարդապետութեան, Աստուծոյ սիրոյը, աչքը և ականջը եկեղեցւոյ մէջն են, որ սիրտովը կ'աղօթեմ, աչքովը՝ ազ աղօթք ընծայներուն աչքին արտասուքը կը տեսնայ, և ականջովը անոնց բերած աղօթքը կը

լէ։ Հինգերորդ՝ եկեղեցին անոր համար կ'օծուի՝ որ Աստուծոյ Ս. խորհուրդները անոր տաճարին մէջ կը կատարուին, և ինչպէս որ Աստուած պատուիրեր էր հրեից, տաճարը կ'օծէին անոնք. ուրեմն թէ որ հին առեներ տաճարական պատարագին մատուցումը օծեալ տեղ կ'ընէին նէ, հարկաւ նոր օրինաց համեմատ եկմարիա պատարագին մատուցումն ալ օծեալ տեղ մը ըլլալու է։

Հ. Ի՞նչ կերպով պէտք է եկեղեցի մտնալ։

Պ. Պէտք է մեղի Ս. սիրտ և խոնարհ հոգի ունենալ՝ որ հոն տեղը Ս. սեղանին վրայ անտեսանելապէս նստող երկնաւոր թագաւորին առջև արհամարհ չ'երևնանք, և որչափ առն որ եկեղեցւոյն մէջ ճամբնէ, պէտք է որ ինքզինքնիս խրխատոսի տեսուն մերոյ առջև կեցած տեսնենք, և անոր համեմատ վարք ունենանք։

Նաև պէտք է որ մեր հինգ զգայարանքները բարի գործերով պատրաստենք. այսինքն, աչքովնիս լաց ցաւի մարդիկներուն տեսնելու անոնց ողորմինք. ականջովնիս Ս. եկեղեցին մէջ երգուած աղօթքները լսենք, բերանովնիս՝ այն տեղը սեղանին վրայ անտեսանելապէս նստող երկնաւոր վեհապետին, այսինքն Յիսուս Քրիստոսի անուշ հոտը առնենք ըսելէս զի կարող ըլլանք Սողոմոն իմաստունին հետ ըսել թէ, «ալ տէր քու երկիւղ անուշ հոտը առնելով քու եռանդագին գանք», բերանովնիս՝ միշտ մաքուր մնա-

նան.ք որ Պատուծոյ օրհնութիւն տալու արժանի լլլան.ք, ձեռ.քով.իս՝ ծունր դնեն.ք ամենակալ Պատուծոյ առջև և անոր աղօթեն.ք, առնոյմէ զատ Յ. եկեղեցի մտնողին մարմինը պէտ.ք է որ Ս. լլլոյ և հոգին ալ միշտ աստուածայնի գործերու վրայ մտածէ։

2. Ինչու համար կ'ըսուի թէ եկեղեցին երկինքի դիմաց աշխարհի գերատանց է։

Պ. Հին ատենը կ'ըսուէր որ Պատուծոյ աթոռը երկինքն է և երկիրս անոր ոտքին պատուանդանն է, իսկ նոր օրինաց մէջ Քրիստոս որովհետև Ս. եկեղեցւոյն մէջ միշտ կը բազմի, ուստի եկեղեցին Պատուծոյ աթոռն է և երկինքը ալ անոր ոտից պատուանդանն է։

2. Թէ որ հերձանութիւնները եկեղեցի մը մտնելու լլլան նէ, այն եկեղեցին պղծեալ կը համարուի՞ մի։

Պ. Ո՛չ, որովհետև Սուրբանն չինած տաճարին մէջը հերձանութիւնները ալ կը մտնային ու երկրպագութիւն կ'ընէին, նաև Ս. Գրոց մէջը ամենևին յիշուած չ'է որ հերձանութիւնները եկեղեցի մը որ մտնան՝ այն եկեղեցին պղծեալ սեպուի։

2. Ուրեմն եկեղեցի մը դարձեալ օծելու հա՞մար, քանի՞ պատճառաւ պղծեալ կը համարուի։

Պ. Նախ՝ թէ որ նոյն եկեղեցւոյն մէջ բռնութեամբ մարդասպանութիւն լլլայ, դարձեալ օծուելու է։

Երկրորդ՝ թէ որ եկեղեցւոյն մէջ անհաւատ

կամ բանադրեալ մարդու մը մարմինը թաղուած ըլլայ նէ, դարձեալ օծուելու է։

Երրորդ՝ թէ որ անվայել ու անյիշելի մեղք մը պղր օրինակ չնութիւն դործուած ըլլայ եկեղեցին մէջը նէ, դարձեալ օծուելու է։

Չորրորդ՝ թէ որ եկեղեցիին դլխաւոր սեղանը թէ որ այրին՝ դարձեալ ինչպէս. պատերը, սեղանը, օծելու է. իսկ թէ որ միմիայն պատառը այսինքն (թաւանը) այրած ըլլայ նէ, ան սեղանը օծել չ'ուզէր, որովհետև պատառը առաջուց ալ օծուած չ'է։

Հինգերորդ՝ թէ որ օծուելէն ետքը սեղանին վրայ երկաթէ դործիքով բան բանել հարկ ըլլայ նէ, դարձեալ օծելու է։

Վեցերորդ՝ թէ որ սեղանը սեղէն խախտի կամ կոտնանի նէ, դարձեալ օծելու է։

Եօթներորդ՝ այրած սեղանը՝ թէ և լման մը նայած ըլլայ, դարձեալ օծելու է, բայց միայն սեղանը պէտք է օծել ու ոչ թէ եկեղեցին։

Ութերորդ՝ թէ որ ծեփը վար եկած ըլլայ ու նորէն ծեփուի նէ, այն ծեփուած սեղերը նորէն օծուելու է։

Իններորդ՝ թէ որ օծումը ընողը բանադրեալ կամ հերետիկոս ըլլայ ու կատարելապէս չը հաւատայ Ա. Երրորդութեան նէ, այնպէս ալ մարդուն օծումը և միութիւնը ընդունելի չ'է. ուստի նորէն օծելու է։

Տասներորդ՝ թէ որ ակամայ կամ պատահական ըս-

պատուիրեն մը ըլլայ, ինչպէս ըսենք թէ յանկարծ մէկուն վրայ քար կինալով այն մարդը մեռնի, և կամ խեղդուիլ մը ինքզինքը վերէն վար նետելով մեռնի ե, այս պատճառաւ եկեղեցին նորէն օծել պէտքը չ'է։

Հ. Թէ որ տաճարին մէջ բռնութեամբ մարդասպանութիւն ըլլայ ե ըսէր, պէտք է որ նորէն օծուի, ահա Զաքարիա քահանայապետը պատանեաց տաճարին սրահին մէջ, ինչու՞ տաճարը նորէն չը սրբագործեցաւ։ Բ. Մնացորդ. ԻԴ. 22։

Պ. Զաքարիա քահանայապետը պատնող ծովային թագաւորը յիրաւի անօրէնութիւն գործեց, բայց Զաքարիային արիւնը մաքուր ըլլալուն՝ տաճարը չը պղծուեցաւ, հապա՝ անոր մարտիրոսական արիւնովը աւելի ևս սրբուեցաւ։

Հ. Թէ որ կարգ առած եպիսկոպոսը ձեռնադրութեան պակսութիւնը չը գիտնայ ե, ձեռնադրողը յանցանք կ'ունենայ մի։

Պ. Ձեռնադրողը ամենևին չը կրնար արդարանալ՝ երբոր ըսէ թէ ես ձեռնադրութեան պակսութիւնը չ'էի գիտեր. որովհետև Պօղոս առաքեալ ալ իր Տիմոթէոս սիրելի աշակերտին այսպէս կը գրէ թէ, «շուտով մը մարդ. մի ձեռնադրեր. որպէս զի չ'ըլլայ որ անոր մեղքին ծանրութեանը մասնակից ըլլաս» Ա. Տիմ. ե. 22։

Ս.Հաւատիկ Ս. Յօհան Ոսկեբերան ալ կ'ըսէ թէ, «առանց մարդը ապէկ մը ճանչնալու՝ շուտ մը

զանկակայ ձեռնադրելը շատ մեծ յանցանք է, ու ով որ ետքը կ'ըսէ թէ ես անոր ինչ ըլլալը չ'էի գիտեր, ան ըսող եպիսկոպոսը այլ աւելի յանցաւոր կ'ըլլայ, որովհետև ինքզինք աս խօսքով ապաշնորհամեմ ըսելն է քեն այլ աւելի կը բամբասուի։

Հ. Թէ որ ձեռնադրուողը անարժան մէկը ըլլայ և քանի մի հոգի նրան հաստոր վկայեն որ արժանի է, ան առնելը ձեռնադրողը յանցանք կ'առնենայ մի։

Պ. Ձեռնադրողը հիչ չ'է նէ քաղաքական գործերու վերաբերեալ կանոններով ընդունելու է վկայներուն ըրած վկայութիւնը, ինչպէս ըսեմք թէ մէկը սուտ բան մը կը ծախէ, և ծախուս առնողն ալ անոր դինը քանի ըլլալը չը գիտեր նէ, հերիաթայ իրեն անկեղծ մէկ բարեկամին կը հարցունէ թէ այս բանին դինը քանի՞ դուրուշ է, և թէ որ ան բարեկամն ալ նոյն բանին արժողութիւնը աղէկ մը չգիտնայ նէ, անոր վրայ կասկածելու է ընծայատուն աղէկ մը քննել։ Սուրբն Ոսկեբերան այնպիսի սուտ վկայներուն և առանց քննելու ձեռնադրողին

պատիժը խիստ ծանր կերպով կը պրէ։

Հ. Զաւակին Ս. յարութեան երրորդ կիւրակէ օրը ինչո՞ւ աշխարհամատուրն կիւրակէ կ՚ըսեն ք։

Պ. Որովհետև երուսաղէմի մէջ եղած նաւակատէրն է. և նաւակատեաս ըսելն ալ եկեղեցիին նորոգիին է, որովհետև նոյն օրը լմնցաւ այն տուրս տաճարին շէնքը՝ զոր Մն. Մահարիտս օծեց. և ինչպէս որ ամէն տարի տաղաւարաց օրերուն երկրորդ օրը մեռելոց կ՚ըսեն, անանկ ալ այս կիւրակէն տաղջին կիւրակէն եւաքը, կը սեպեմք Ս. յարութեան տաճարին գործելիքներուն սեղ, որ այն է աշխարհամատուրն կիւրակէ ըսուելուն պատճառը։

Հ. Ինչո՞ւ համար Ս. եկեղեցիին մէջ երեքեան անդաստան ընելով աշխատիմ չորս կողմը կ՚օրհնեմք։

Պ. Որպեսզի վարդապետք տայ մեկնութիւնը այսպէս կ՚ուսան մեզ, իբր թէ տասուժայնի պարկեներուն գոհութիւն տալով չորս կողմը կ՚օրհնեմք, մարգերնիս բերելով Քրիստոսի տեառն մերոյ փրկական տնօրէնութիւնը որոյ շնորհքով և առաքեալներուն ձեռքովը՝ Ս. Աստուածածնին քարոզութիւնը բոլոր աշխարհք տարածուեցաւ. և ինչպէս որ Դաւիթ մարգարէն տեսլեան գրած էր, մինչև աշխարհիս չորս ծայրը Քրիստոսի տասուժութիւնը կը քարոզուի։

Ուրեմն, նախ Արեւելեան կողմը օրհնելով այս-

ալէս կ'ևմանամք թէ ինչպէս որ առաւօտները արևուն լոյսը աշխարհիս ամէն կողմը տարածուելով խաւարը կը վտարտէ և մեզ ալ կ'ակնկալէ բոլոր արարածներուն վրայ նայիլ և ուրախանալ ներ, ահա անանկ ալ Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝ հօրմէն ծագելով եկաւ մեր մարքին խաւարը վտարեց և մեզի լուսաւորեց որ աքայութիւն երթալու ճամբան տեսանք և առաջադիմելու ճամբան մէջ մտանք։

Արևմտեան կողմը օրհնելով այսպէս կ'իմանամք թէ, ինչպէս որ արևմուտքը ցորեկուան վերջը և գիշերուան սկիզբն է ներ, անանկ ալ վերջին դատաստանին օրը աս աշխարհիս վերջը՝ և անդին աշխարհին սկիզբն է, անոր համար արևմտեան կողմանէ Աստուծոյ անուն թադաւորութիւնը ցոյց տալով կ'ըսենք թէ անկայ է կենդանիներուն և մեռեալներուն տէրը։ Նաև քրիստոնէից թադաւորութիւնը կը յիշատակենք որպէս զի այն թադաւորութիւնները իրենք ալ հասկնան որ Աստուծոյ ճշմարիտ թադաւորութիւնը քով իրենք առաջը մը այսինքն շուք (քէօրկէ) մըն են։

Հարաւային կողմը օրհնելով ցոյց կուտանք որ ինչպէս որ աշխարհիս այն կողմը աւելի տաք ու բարեբեր է ներ, անանկ ալ մեռնելէ յետոյ Յիսուս Քրիստոսի սիրուն աւելնալով սկսանք աւելի ջերմեռանդութեամբ գործել բարի գործեր ալ և այս խորհրդով երբոր այն հարաւային կողմը կ'օրհնենք ներ, «որ-

կ՚ըսեն.ք ։

Հիւսիսային կողմը օրհնելով որովհետև այն կողմը աշխարհիս ամենէն բարձր տեղն է, կ՚ի՚ մանան.ք որ Աստուծոյ սիրովը ամէն ապրելէն բարձր եղան.ք և Մ. աւազանին շնորհ.քովը Աստուծոյ որդի եղան.ք ։

Հ. Պատարագը լմնալէն ետքը եկեղեցին մէջ մնալու ատեն ալ ի՞նչ է ։

Պ. Որովհետև քահանային չենք կրնար հաղորդել նէ, հիչ չ՚եղ նէ այն օրհնելով և Մ. մասը առնելով, Աստուծոյ շնորհացը մասնակից կ՚ըլլան, և երբ լմէ անոր սեղանին վերջաւն.քներովը կը կերակրուին ։

ԳԼՈՒԽ Բ։

Լուծումն աստուածպաշտական խնդրոց։

Հ. Երբ Քրիստոս Յորդանան գետը մկրտուելու նէ, ինչո՞ւ համար Հոգին Ս. ուրը սպանելի կերպարանքով իջաւ վրան՝ ու չ՚է լմէ ուրիշ կերպ տեսքով։

Պ. Նախ անոր համար որ՝ Քրիստոս աշխարհիս եկաւ սպանելի նման հեզ և խոնարհ, որպէս զի մարդոց մեղացը թողութիւն շնորհէ, բայց դարձեալ Աստուածութեան օրը հուրի նման պիտի գայ՝ ամբա-

բնչա և չար մարդերը պատժելու համար։

Երկրորդ՝ որովհետև Աղաւնին եօթն յատկութիւններ ունի, որոնք կը յուցնեն թէ Հոգին Սրբոյ պարգևները ինչպէս Քրիստոսի վրայ եկան, նախ՝ որ աղաւնին չուրի մօտ կը նայի որ հեռուէն յայնչոսկոյ թռչուններուն իրեն մօտենալը տեսնելուն պէս վախչի, այս յատկութեամբ Քրիստոսի երկրորդ՝ աղաւնին ընակիր ունի որ ոտ և գէշերը մէկտեղ կը ձգէ, այս յատկութեամբ Քրիստոսի պատմութեան պարգևը կ'իմանամք. երրորդ՝ աղաւնին ուրիշներուն ձագերն ալ կը կերակրէ ու կը մեծցունէ, այս յատկութեամբ կ'իմանանք Քրիստոսի վրայ խորհրդոյ պարգևը. չորրորդ՝ աղաւնին իր ձագերուն նեղութիւն տալով չը սնուցաներ, այս յատկութեամբ կ'իմանանք Քրիստոսի վրայ հանճարի (խելքի) պարգևը. հինգերորդ՝ աղաւնին սրտին վրայ լեղի չ'ունի. այս յատկութեամբ կ'իմանանք Քրիստոսի վրայ Աստուածպաշտութեան պարգևը. վեցերորդ՝ աղաւնին իր բոյնը ապառաժ քարերու մէջ կը շինէ, այս յատկութեամբ կ'իմանանք Քրիստոսի վրայ զօրութեան պարգևը. եօթներորդ՝ աղաւնին երդի տեղ ցաւոյ ձայն կը հանէ. այս յատկութեամբ ալ կ'իմանանք Քրիստոսի վրայ երկիւղի պարգևը։

Ա.հա այս պատճառներով Հոգին Սուրբ աղաւնի կերպ իջաւ Յիսուս Քրիստոսի վրայ։

2. Հոգին աստը Սիոն վերնատունը մէջ առաքելոց վրայ ինչու համար հրեղէն լեզուներու կերպարանքով ելաւ :

Գ. Սկսա արդարեն մեկնիչներուն ցուցուցած գլխաւոր պատճառները. առաջին՝ որովհետեւ ինքն Հոգին աստը մեզմէ խոհեմներն այրել կուգակ մի էր. երկրորդ՝ առաքեալները եւ սիրտը վառելու համար. երրորդ՝ վառեալ սիրտ աւետարանը քարոզելու համար. չորրորդ՝ ինչպէս որ նոյն մարգարէին լեզուն աստը կըրակով մաքրուեցաւ, անանկ ալ առաքեալները հրեղէն լեզուներով այրելու մաքրելու համար. հինգերորդ՝ զանազան լեզուներ խօսելու պարգեւը ցուցնելու համար. վեցերորդ՝ որպէս զի Հոգին աստը ցուցընէ թէ ինքն է որ առաքեալներուն տպաւորութիւնը պիտի չնչէ, ինչպէս որ Քրիստոս ըսաւ «նա (Հոգին աստը) պիտի զայ և ամէն բան ձեզի պիտի սորվեցունէ». Յով. ԺԴ. 26. եօթներորդ՝ որովհետեւ առաքեալները սուրբ աւետարանը պիտի քարոզէին եւ քարոզելու դործիքն ալ լեզուն է, անոր համար Հոգին աստը հրեղէն լեզուի կերպարանքով եկաւ. և վերջապէս որովհետեւ մարդուս լեզուն դիւրաւ կը ծռի սղէկին ու դէշը խօսելու, անոր համար Հոգին աստը հրեղէն լեզուի ձեւով եկաւ որ անոնց լեզուն բարի խօսելու հաստատէ :

Հ. Յովէլ մարգարէն կ'ըսէ. «եւ ծերք ձեր

երազով երազեցին» Յովել բ. 28. արդեօք երազը ճշմարիտ համարելու են, կամ թէ մարգարէութեան մասն է. և ահա Նաբուզոդոնոսոր և փարաւոն երազ տեսան, մինչ է ասոնք մարգարէ՞ էին։

Պ. Երկու բան պէտք է երազին որ մարգարէութեան մասն համարուի, նախ՝ պէտք է որ երազը՝ հոգին ըլլալու մէկ բանը առաջուց ճշմարտապէս ցուցնէ. կամ ծածուկը երած բան մը յայտնէ. երկրորդ՝ պէտք է որ այն երազը Աստուծոյ կողմանէ յայտնութիւն ըլլայ որ և իցէ բանի մը համար։ Որպէս առաջին կերպով որ ապագայ բանի՝ պէտք չէ երազին հաւատալ, որովհետև երազ բաւական բնական բան մըն է. ուստի բնական բան մըն ալ ծածուկը երած. բան մը կամ հոգին պատահելիք պէտք մը առաջուց չէ կրնար յայտնել ճշմարտապէս։

Իսկ երկրորդ կերպին որ նայելու ըլլան՝ ոչ նորադարմատ եւ ոչ ալ փարաւոն մարգարէ չէին և ոչ ալ անոնց նման ուրիշները. որովհետև անոնցմէ շատ երազներուն մեկնութիւնը չեն կրնար տալ. միայն մարգարէ կը համարուին. Յովսէփ դեղեցիկ եւ Դանիէլ՝ որոնք Աստուածային յայտնութեամբ երազներ մեկնեցին։

2. Ախիայէս կը համարուի որ Աստուած աներեր է. հնչուն ուրիշ երկիւղը այժմ Աստուծոյ կ'անուանեն։

Գ. Նիւթական բան մը ուր է նէ, հոն է, ուրիշ տեղ չ'է, ինչպէս Պետրոս՝ որ հոս է, ուրիշ տեղ չ'է. բայց անանկ մի իմանար երկինքին ամէն Աստուծոյ ըլլալը, հապա երկինքին բարձրութեան եւ գերազանցութեանը եւ պատուականութեանը համար է որ ամէն Աստուծոյ կ'ըսուի։

Հ. Երկիրն ինչո՞ւ համար Աստուծոյ ոտքը պատուանդան կը սեպուի։

Գ. Որչափ միտքի մարդկութեան չափակից եւ Աստուածային գերադրաշ ազգութիւնը միր միտքը հասկնալու համար կ'ըսեն թէ ֆըլատոս երկինքին իչատ, անոր համար ալ մարդկութենէն առաջ միտքերնուս ըմբռնումներ համար երկինքը ամէն կ'անուանենք, եւ երկինն ալ պատուանդան ոտից կ'ըսուի նէ, առ աստուածպատուական վարդապետները Քրիստոսի մարդկութիւնը կ'իմանան, որովհետեւ ոտքը միտինին էն ետքի մասն է եւ Քրիստոսի մարդկութենն ալ ետքի ժամանակը եղաւ, եւ երկիրը Քրիստոսի մարդկութիւնը պատուանդանին եղաւ։

Հ. Կարելի է որ դժոխքին մէջ գտնուիլ եւ Տղինները վերչապէս ազատուին ու արքայութիւն երթան։

Գ. Պէտք է դիտնալ որ աստուածային կարողութիւնը երկու է, բացարձակ կարողութիւն եւ կարեւոր կարողութիւն, Աստուած իր բացարձակ կարողութիւնովը միր խելքին միտքին

վեր եզած բաները ի՛նչ է, ուստի թէ որ ուզէ դժոխքին մէջ դատապարտուած հոգիներն ալ կրնայ ազատել. բայց կարդալ կարողութեամբ հնարքին չ՚է որ անոնք ազատուին. որովհետեւ Աստուած չ՚ուզեր որ չարը առանց պատիժի Յնայ և բարին ալ առանց վարձքի։

Երկրորդ՝ որ Աստուած այս աշխարհիս մէջ չարիք գործող մարդոց միշտ պատրաստ է ներել ու միայն թէ անոնք զղջան, բայց իր անդառնալի վճիռն ա՛ է որ մեղքով մեռնող մարդիկները յաւիտենական կրակին պիտի մատնուին և անոնցմէ ոեւէ մէկուն համար ամենեւին ազատութիւն չկայ։

Հ. Թէ որ ամէն բան Աստուծոյ կը կատարուի՝ ինչու՞ համար այդչափ մեղքեր ու պատկառելիութիւններ կը գործուին և շատ անգամ աշխարհիս մէջ արդարները ձախորդութեան մէջ կ՚ինկան, և մեղաւորները յաջողութիւն կ՚ունենան։

Պ. Ահա այդ հարցումէդ պատասխանը այսպէս կուտայ Սուրբն Օգոստինոս ըսելով թէ «Աստուած ծայրագոյն բարի ըլլալով ամենեւին չ՚ուզեր որ գործի մէջ չար պատահի. և այնքան ամենաբարի ու ամենակարող է որ չարէն բարի կը հանէ, ինչպէս որ ցուզայի մատնութենէն և Հրեից չար անգթութենէն յայտնի է թէ որքան բարիք հանեց։

Հ. Ի՞նչպէս կրնայ ըլլալ որ չարէն բարիք յա-

ռաջ գայ , քանի որ չարը լաւ ինքեան չար և բարին հակառակն է ։

Գ. Ահա արդարեան Գօդա առաքեալն այսպէս կը գրէ « Ո՞չ ունիմ իշխանութիւն քրտան կա՞ նոյն Ի՛նձին ընդունայ առնել Ո՛անօթ , զոմն Ի՛և պատիւ և զոմն յ՛անարգանս » Հռոմ. թ. 21 ։

Թուփ. Մինչ բրտաը այսինքն (չէօմլէկճին) իշխանութիւն չ՛ունի՞ կաւին միայ որ մէկ խառնուրդէ երկու անօթ չինէ , մէկը պատուաւոր բաներու գործածուի ու մէկալն ալ անպատիւ բաներու համար ։

Երկրորդ որ չարը չ՛է թէ բարին հակառակն է , հապա անոր պակասութիւնն է , և չար ըսուածն լաւ ինքեան ոչինչ է ։

Չ. Շատ բաներ կան որ դէպքով կը պատահին մինչ անոնց մէջն ալ Աստուծոյ մասը կայ մի ։

Գ. Շատ բաներ դիտուած կը համարին որու որ պատահին են , բայց անոնք Աստուծոյ համար դիտուած չ՛են , որովհետև ամեն բան կարգադրողն Աստուած է , ահա Աստուածաբան վարդապետ մը ատոր վրայօք գեղեցիկ օրինակ մը կ՛ուտայ այսպէս «Ագային մէկը իր երկու պատառը զատ զատ ճամբաներով տեղ մը կը ղրկէ , և անոնք ալ այսպէս այլ և այլ ճանապարհաւ երթալու ատեն լրտուս պատահեցան ա զանիրնուն ըրած խորհուրդին պէս՝ որ լրտնիք չ՛էին գ լսեր ։ Ուրեմն պատուոյ լրտուս պատահելը՝ լրտնոյ մտայը նայելով դիտուած կը

համարուի, բայց պրկուլ ալային մասյը նայելով դիպուած չը համարուիր, որովհետև ինք դիտաէր որ անոնք իրարու պիտի պատահին։

Հ. Մարդարէն կ'ըսէ թէ Աստուած մեղաւորին մեռնիլը չ'ուզեր, հապա կ'ուզէ որ անիկայ իրեն չար ճամբայէն դառնայ, կը տեսնանք որ շատ մեղաւորներ իրենց չար ճամբէն չ'են դառնար և անոնք մեղաւոր կը մեռնին, ուստի Աստուծոյ կամքը անկատար կը մնայ։

Պ. Թէ որ ան մեղաւորին սիրտը Աստուծոյ կամացը արժանապէս պատրաստ գտնուի նէ, Աստուծոյ կամքը միշտ կը կատարուի, և թէ որ անպատրաստ գտնուի նէ, Աստուծոյ կամքը չը կատարուիր, այսպիսի կամքը Աստուածային վարդապետները երկու քի կը բաժնեն և կը կոչեն նախընթաց կամք և հետեւեալ կամք։ Աստուած նախընթաց կամօք կ'ուզէ որ մարդիկ ապրին և ապաշխարութեան ճամբան մտնան, բայց Աստուծոյ այս կամքը միշտ չը կատարուիր, վասն զի թէ որ միշտ կատարուելու ըլլայ, մեր անձնիշխանութիւնը բոնութեան տակ ընկած կ'ըլլայ, և Աստուած ալ մարդիկները բռնութեամբ փրկած կ'ըլլայ, որ այս արդարութեան դէմ է, ինչպէս որ ան առնը մեղաւորը պիտի ըսէր թէ Աստուած չկայ ինծի արդարացնել։ Բայց հետեւեալ կամքով Աստուած իր ուզածին պէս պատրաստ եղողները կը փրկէ, և այս հետեւեալ կամքը միշտ կը կատարուի։

Հ. Սուրբ Գիրքին մէջ երկու հակառակ գըրուածներ կան, մէյ մըն ալ կ'ըսէ թէ մարդս ոչչով առնն որ մարմնեղէն մէջն է նէ, ընդառաջ չըլնար առնելու, ուրիշ առղ մ'ալ նայի մարդապըն կ'ըսէ թէ. «առակ ղՏէր նառելը յ'աթոռ թարգմանեան և վերացելոյ, և լի էր առնն փառօք» նայի Հ. 1. ուստի այս երկու խոսքերն ինչպէս հաւկնան։

Պ. Սուրբն նուռնելիս կ'ըսէ, «նայի մարգապըն Աստուածային էութիւնը չը տեսաւ, որովհետև ծովհաննէս աւետարանիչ կ'ըսէ. ը'Աստուած ոչ ոք երբէք երբէք, անանկ է նէ, ոչ Մովսէս, ոչ նայի և ոչ ալ Պետրոս կրցան ընդառաջ տեսնալ, ուրեմն մարգարէին տեսէ ղՏէր ըսելը կամ կերպ մը տեսակաւ էր՝ իբր թէ մարմնական աչակերտաւ, ինչպէս տեսան Աբրահամ, Յակոբ և Մովսէս, բայց աս տեսակը իրր թէ մարգս կերպարանքով էր, այսինքն Թագաւորական կերպիւ, որովհետև նառելը տեսնը ուղիղ է, և այսպէս միշտ մարդկային կերպիւ տեսանելը կ'ըսուի Աստուածաշունչին մէջ, որովհետև Աստուած մարդկային բնութիւն առնելու եր։

Հ. Ինչպէս կ'իմանանք Աստուծոյ խոսակցութիւնը նահապետաց և մարգարէից հետ։

Պ. Աստուած երբ կերպիւ խոսեցաւ նահապետաց և մարգարէից հետ. նախ՝ երբեմն իրմէն ղրկած տուած երկնքով. երկրորդ հրեշտակներ

լով և լսելն ձայնով, երբորդ՝ հոգևոր խոսակցութեամբ երեսց մտայը և անուրջքին մէջ։

Հ. Հրեշտակներուն մարմին առնելը ինչպես կը ներկուի։

Պ. Հրեշտակները մարմին չունին, բայց Աստուծոյ հրամանը կատարելու համար երբեմն մարմին կառնեն, ինչպես որ առջի դիրքին մէջ կը կարդանք, բայց անոնց առած մարմինը մեր բնութեան պէս հաստ ու թանձր չ'ին, և մեզ որ շօշափելի ընչութիւնք ենք, կարելի է որ կարծելին մեզ ճշմարիտ մարդկային մարմին չ'են, բայց երեսք ինչպէս որ ուզեն անանկ կրնան իւրացնել առ մեզ։ ինչպէս որ՝ մեր հոգին մարդկային մարմնոյ մէջ երեսին մոլ և երեսին պիտի գոյ կ'առնոյ զգայութիւնները, այսպէս հրեշտակները մոլ առեն որ Աբրահամ երեսց առջևը շօշափել ըլլար առեն, բայց Աբրահամու անանկ երեսցուց որ անոնք մարդկային մարմիններ են։

Հ. Ինչու Աստուած վառեալ մարենիին մէջէն Մովսէսի երեսցաւ։

Պ. Պատճառն այս է որ՝ ցոյց տայ մեզ ինքը հրեայ ժողովուրդին եղիպտոսի մէջ քաշած հիշատակութիւններուն համար կը վառի։ այսպէս երեսցաւ նաև Յովհաննոսի, որպէս թէ պատարագի մէջ է։ որովհետև կոյսած երեսցաւ, երբ թէ երեսն հետ մէկտեղ պիտի պատերազմէր։ Մանթաղենայինին երեսցաւ պատրաստելով, Էմմաուս գնացող աշակերտներուն պար-

տիզպանի կերտալ երեցաւ , որովհետև պատ-
ուէրն ՚ի ձէնջ պատրաստուած ի՚երևնայ , և ճամբու-
մէջ ալ ճանապարհորդ-ատանկ կը վայլէր ընել ։

2. Երբ Քրիստոս դատաստանին օրուան վրայ
կը խօսէր , ըսաւ թէ « այլ վասն աւուրն այնո-
րիկ եւ ժամու ոչ ոք գիտէ , ոչ հրեշտակք երկ-
նից , եւ ոչ որդի , բայց միայն Հայր ։»

Թուէ. Բայց այն օրուան համբ ըսելը ոչ հրեշ-
տակներուն գիտեն , ոչ որդին բայց միայն Հայրը
գիտե , Մատ. ԻԴ. 36 ։ Ըսել է որ Տէր Աստու-
ծոյ գիտցածը որդին չէ գիտեր, ինչո՞ւ ի՚բաւոյ որ
մեզ ալ Հայրն ու որդին հաւատոյ և հաւատար կը
պատանին ։

Պ. Այժմէս չ՚է . որովհետև ասոնք է թէ ինչ-
պէս որ Տէր և աւրը հոգւոյն մի օրինակ յայտ-
նի էր , նոյնպէս ալ որդւոյն Աստուծոյ , ոչ մի-
այն ըսա պատմ Աստուած , այլ և ըսա պատմ
մարդ ։ Եւ ինչպէս ըսաղ եղաւ թէ որ Քրիստոս
ըսա պատմ մարդ չ՚էր գիտեր , բայց ըսա հա-
ւատոյ վարդապետութեան արժան չ՚է . որ
այնպէս նուաղութիւն մը ասոնք այն գերագոյն
և լուսաւորեալ մարդկութեանը , որուն մէջ
աստուածային իմաստութեան և գիտութեան
ամէն գանձերը անպակաս կային , և որովհետև
դատաստանին նշաններըը մարդիօրէն կը պատ-
մէր , անոր համար դատաստանին օրը չ՚ուզեց
յայտնել , վասն զի Աստուծոյ գաղտնի խորհըր-
*դոյ մէկն էր , ուստի Քրիստոս ինքզինքը չէ

գիտցող ձևացնելու համար, դրատունից չ'ելլ գիտեր ըսաւ, ինչպէս կերպարանափոխ թատ-ուր մը երբ կը ջրչի, երբ մէկ ինքզինքը կը ծածկէ և իր տէրութեան գաղանիքները մար-դու չ'ըսեր. ահա նաև աստուածպաշտի վարդա-պետի մը տուած օրինակը. « Քրիստոս դատա-տանին օրը չ'եմ գիտեր որ ըսաւ նէ, չ'է թէ առիթ չ'էր գիտեր, այնպէս չ'էր, գիտէր՝ բայց չէր պիտի յայտներ, ինչպէս որ խոստովանահօր մը երթէ հարցունես թէ այս ինչ մարդը խոս-տովանելու առեն քեզի ինչ ըսաւ, ան քահա-նան ճշմարտապէս պատասխան կուտայ քեզի՝ թէ ոչ, ահա ամէնքս ալ պարտական ենք ա-նանկ իմանալ Քրիստոսի ան խօսքին եղանակը, այսինքն թէ չ'եմ գիտեր ըսելը. « ըսել չ'եմ գի-տեր » կը նշանակէ :

2. Երբ Աստուած ամէն արարածները ստեղ-ծեց նէ բնութեան դէմ բան մը չըրաւ, բայց Դաւիթ մարգարէն կ'ըսէ թէ, « և Ջուրք՝ որ'ի վերոյ քան զերկինս օրհնեցէք զանուն տեառն» Սաղմ. ճԽԸ. Ս. ահա բնութեան դէմ կ'երևայ Ջուրն երկինքէն վեր ըլլալը :

3. Բնութեան դէմ չ'է այն Ջուրն երկինքէն վեր ըլլալը, որովհետև անօդ, սուրբ և թեթև Ջուր մըն է, որով կը զանազանի մեր Ջուրէն, ևս իր բնական տեղն ալ հոն է, քանզի սուրբն Օգոստինոս կ'ըսէ թէ « ամէն բանին բնականը այն կը համարվի, ինչ որ անօրինելէր է անկէց,

որմէ է ամէն բանին չափը՝ թիւը և բնութեան կարգը ։

Հ. ինչո՞ւ համար այս չուբերը այն տեղ դրուեցան ։

Պ. Այսպէս կ'ըսէի, որ բարեխառնեն չերմութիւնը, որ աստուգայ զօրութենէն և շրջանէն առաջ կուգայ ։

Հ. ինչո՞ւ համար երբեմն առաքինի գործերու պարտաւոր մարդիկ իրենց վախճանին թող տրուած են որ մեղութիւններ և չարիքներ գործեն ։

Պ. Աստուած հիչ մէկ արդարը թող չիտար, և չը պրկէր իր շնորհքէն թէ որ նախ այն արդարն ինքզինքը չը պրկէ. այսպէս կը սովրեցնեն Աստուածաբանք ։

Հ. Գիտեմ որ Աստուած ամենուն համար է, ինչո՞ւ հապա կրսեն Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ և Աստուած Յակոբայ և զաւակի նոցա արդարոյ ։

Պ. Որովհետև դերագոյն երէց առաքինութիւնները նախ և առաջ այս երէքին վրայ տեսնուեցան և անցան միւս նահապետներուն, Աբրահամէն սկսաւ հաւատքը և հնազանդութիւնը, Իսահակէն մաքրութիւն մեղայ և անմեղութիւն, Յակոբէն, աշխատութեան և թշուառութեան համբերութիւն և արիութիւն, ահա ասոր համար կ'ըսվի, Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ և Աստուած Յակոբայ ։

Հ. Ցարտաթեւնէն եւս քը Քրիստոսի ուսոլն էին ատո՞ր էր։

Պ. Քրիստոս Ցարտաթեւնէն եւս քը ճշմարտապէս առաքելոյ հետ կ'ուսէր, բայց հրեշտակաց ուսուցանելուն նման՝ կերպած ըլլալով, որ զոքեհետեւ վաստատութեամբ մարմինը օդով, չը պանիր, այսպէս կ'ըսեն աստուածաբանք։

Հ. Քրիստոս խաչին վրայ՝ գին քը խաչը հանդարտելուն համար կ'աղօթէր ըսելով. «Հայր ներէ անոնց որովհետեւ ըսածնին չ'գիտեն դիտեր»։ Թէ որ Քրիստոսի խնդիրքը Աստուծոյ ընդունելի եղաւ, ըսել է թէ ան Հրեայներէն չը դատապարտուեցան, թէ որ ընդունելի չ'եղաւ՝ ուրեմն Հայր Աստուած չ'ընդունեց իր միածին Որդւոյն խնդիրքը։

Պ. Քրիստոսի խնդիրքը ընդունելի եղաւ և միշտ ալ կ'ըլայ, ինչպէս որ ինքը Քրիստոս ալ վկայեց՝ երբ ըսաւ «Հայր, թեղմէ շնորհակալ եմ, որ ինծի լսեցիր և դիտէի ալ որ միշտ ինծի կը լսես» Ցով. ԺԱ. 41։ Անոնց համար ընդունելի եղաւ, որովք որ արժանի էին այն ներողութեան շնորհից ընդունելու, ինչպէս որ Հարիւրապետը և ան խաչին քով գտնուողներէն շատերը վերկացան, բայց որովք որ ներողութեան շնորհքը ընդունելու արժանի չէին նէ, անոնք իրենց եսքի յամառութիւնովը դատապարտուեցան ան Հարիւրապետը որուն անունը Ղունկիանոս էր, մէկ աչքը կոյր էր, որ սեղով խոցեց Քրիստոսի

կոչը, և անկէ բղխեալ արիւնը կոյր աչքին ցաւակելով լուսաւորուեցաւ, և հաւատաց ինքը և երկու գինուորք ալ իրեն հետ։

Հ. Այս աշխարհիս մէջ ամէն բան բարի կ'ըսվի, որովհետև Աստուծմէ յառաջացած է, ինչու հապա Քրիստոս կ'ըսէ թէ. «Չիք ոք բարի, բայց միայն Աստուած, Ղ՚ու. ԺԸ. 19»։

Պ. Բարին երկու կերպով կ'իմացվի, հաղորդութեամբ և բնութեամբ. արդ՝ ամէն առեղծուած բանիր՝ Աստուծոյ բարութեանը հաղորդ ըլլալով բարին, ինչպէս որ Ս. Գիրքն ալ կը վկայէ. «Ես եմիս Աստուած զամենայն զոր արար. և ահա բարի են յոյժ» Ծննդ. Ա. 32։ Բայց բնութեամբ բարին՝ այսինքն էապէս և անխոտոր բարին միայն Աստուած է։

Հ. Թաղեր լեռան վրայ Քրիստոսի հետ եղող աշակերտներէն մարմնաւոր աչօք ինչպէս կրցան Քրիստոսի Աստուածութեան փառքը տեսնել։

Պ. Սուրբ Յովհան Ոսկեբերան այսպէս կ'ըսէ «Քրիստոս իր Աստուածութեան բոլոր փառքը չէ ցուցուց։ Վասն զի առաքեալներէն չէին կրնար մարմնաւոր սակաւ աչքով Աստուածային պայծառութեան ամբողջ փառքը տեսնել, անոր համար Քրիստոս ալ մէկ մաս մը միայն ցուցուց ինչպէս որ աւետարանիչներուն խօսքերէն ալ կը հասկցուի։ Եւ ինչ է որ կ'ըսեն թէ արեւի պէս լուսաւորեցաւ, վասն զի անապական մարմինին փառքը՝ ապականացու մարմնին նման

լայս չ'արձակէր և նաև ապականացու մարմինին աչքը չը կրնար այն անապական մարմինին լուսաւորութիւնը տեսանել» . ուրեմն տեսածնին Աստուածութեան բոլոր լոյսը չ'էր, այլ անոր մէկ մասը , ինչպէս որ չարականին մէջն ալ կ'ըսէ թէ , «'ի մասնաւոր լուսոյն զարհուրելի դասք ա- ռաքելոյ » ։

Հ. Քրիստոս աշխարհ եկաւ որ խաչը երթայ , ըսել է որ գինքը խաչող պէտք էր , ինչու համար հրեայները դատապարտութեան գինքը խաչելնուն համար, չ'է՞ որ Աստուծոյ կամքն այսպէս էր։

Պ. Հրեայները այս սարսափելի մեղքը գործելնին է , չ'է թէ Աստուծոյ հրամանը կատարելու համար , հապա իրենց նախանձուն համար Յիսուսը մեռուցին . ուստի դատապարտութեան իրենց չարաբաստութեանը և անպիտանութեանը համար ։

Հ. Զարչարանաց ժամանակ որչի՞ն միածին կ'ըսէ իւր Հօրը , «Հայր, թէ որ կուզես, այս բաժակը (չարչարանքը) ինէ վերցուր , բայց չ'է թէ ի- մին հապա քու կամքդ ըլլայ» . և երկինքէն հրեշտակ իջնալով զանիկայ զօրացուց այսինքն ուրախց ընելով թէ՝ Հօր Աստուծոյ կամքը քու մեռնելդ կ'ուզէ աշխարհի փրկութեան համար։ Արդ՝ արդեօք Քրիստոս Հօր Աստուծոյ իսկա- ստութիւնն է , անոր կամքը գիտէր . ինչու հրեշտակէն ամրացնել պէտք կ'երևնայ ։

Պ. Քրիստոս Աստուածութեամբ Հօր Աստուծոյ

հաւասար էր, բայց մարդկութեամբ հրեշտակ ներքին փոքր էր, կ'ըսէ Պօղոս առաքեալ Եբր. Բ. 9։ Եւ որովհետև սովորութիւն է որ Աստուծոյ կարգադրութեամբը փոքր եղողը մեծէն կը տրուի, ուստի որդին Աստուծոյ ուզեց խոնարհութեամբ այս օրէնքն ալ պահել, անոր համար հրեշտակին միջնորդութիւնը ընդունեց։

Հ։ Սուրբ երրորդութեան երեք անձինքն իրարմէ անբաժանելի են, հապա ինչո՞ւ համար Քրիստոս խաչին վրայ աղաղակեց թէ «Հայր, ինչո՞ւ թողիր»։

Պ. Քրիստոս շատ անգամ իր գործերը Հօր Աստուծոյ կը յատկացնէր, և շատ անգամ ալ մեր ընթրելը Հօր Աստուծոյ աղաչանք կ'ընէր, ինչպէս որ ներքեւ շնորհալին կ'ըսէ. «բարելի բառ ընդ իմ. էլի, էլի, առ հայր գոչէր»։

Թ՚էջ. Իմ տեղս՝ Հօր Աստուծոյ կ'աղաղակէր զեղիկ լեզուով Աստուած, Աստուած ըսելով։ Ուրեմն ան ինչու համար ինք թողուցիր ըսածը իրեն համար չ'էր՝ հապա մեզի համար էր։

Հ. Աստուած ամեն ստեղծուածներուն պոհ.քն թէ հոգևորաց և թէ մարմնաւորաց Աստուած է, ինչո՞ւ համար Սուրբն Գրիգոր Նարեկացին միայն Աստուած հոգւոյ կ'անուանէ։

Պ. Այո՛, Աստուած ամեն արարածոց ստեղծողն է, բայց երբ յատկապէս Աստուած հոգւոյ կ'ըսվի, նշանակու է հրեշտակաց և մարդոց համար, որովհետև հոգին մարմինէն աւելի պատ-

ուսման է . ուստի և՝ Աստուած հոգւոց կ՚անուանի :

Պատուական բան , նախ՝ որովհետև հոգին աւելի կը նմանի Աստուծոյ, երկրորդ՝ հոգին անմահ է , երրորդ՝ հոգին պարտ ըլլալով և մարմինը նիւթէ առեղծուած ըլլալուն համար հոգին պատուական մաս է . Աստուծոյ բոլոր արարածոց մէջ նաև հատարակ խօսակցութեան մէջ , երբեմն մարդը հոգի կ՚անուանենք , ինչպէս կ՚ըսենք , քանի՞ հոգի կայ հոն պետրոսին տունը . մի թէ հոն ըլլալները միայն հոգի՞ են , մարմին չ՚ունի՞ն : Սրպէս խնայէր նաև Տարեկոյսին Աստուած հոգւոց բառը :

2. Աստուած իր ամենակարող զօրութեամբը ինչ որ ուզէ կրնայ ընել բայց ինչո՞ւ համար Սուրբն Թոմաս Ագուինացին կ՚ըսէ թէ, «Աստուած՝ իր ստեղծածներուն զատ ուրիշ բան կրնայ ընել , բայց ի երեք բանէ » այս երեք բանը ի՞նչ պիտի ըլլայ :

Պ. Յիրաւի ճշմարիտ է , եւ սհա այս երեքին առաջինն է Քրիստոսի մարդեղութիւնը . երկրորդը՝ երանեալ արդուհի Աստուածածինը , երրորդը՝ արդար հոգւոց երանութիւնը : Եթէ կ՚ուզես գուշակել , սհա այս է , Քրիստոսի մարդեղութիւնն այն է որ Աստուած մարդկային բնութեան հետ միացաւ մարմին առնելով և ամէն առաւել քան ինչ կրնայ ընել , որ Աստուած և հոգ մարդեցան .

Երկրորդը՝ որ Սրբուհի կոյս է, որովհետև Աստուծոյ մայր եղաւ եւ ոսկէ աւելի պէտք ունէր կոյս ըլլալ ու արարածն արարիչին մայր եղաւ։

Երրորդը՝ որ արդարոց երանութիւնն է, որ է Աստուծոյ ցանկալի սեռութիւնը. որով մարդս ունայ ցանկութիւնը, յօժարութիւնը եւ խղճը կը կշտանայ, ուրիշն այն տուրքին ըսածը ճշմարիտ է. այս երեքէն աւելի պէտք բան չը կրնայ ըլլալ։

Չ. Աստուծոյ պարզ էութիւնը ձեռք կամ կերպարանք ներքև չ'իյնար, և. այսպէս ինքը Մովսէսին ըսաւ, «Երկինքէն վեր եղածիններուս նմութիւնը մի ըներ». Բ. օրինաց. Գ. 15։ Ինչու համար գրիչները անհունին պատկերներ կը նկատեն։

Դ. Արդարև Աստուծոյ պարզ էութեանը նայելուլ պատկեր նկարել պէտք չ'է, բայց մենք մեր նկատած պատկերներուլ, ոչ թէ այն պարզ էութիւնը ցուցնել կ'աշխատինք, հապա միայն ըլլալի կերպով մը Աստուծոյ մարդասիրութիւնը միտքերնիս բերելու համար. այնպէսի կերպարանքով կը նկարենք որպէս թէ մեզի երեցած ունի։

Ա.հա միտքին որ մարդկային մարմին առաւ, մարդու կերպարանքով կը նկարենք. Հոգին Սուրբ, որ աղաւնիի կերպարանքով երեցաւ՝ մենք ալ աղաւնիի կերպարանքով կը

ներկայեն ք, և Հայրն Աստուած՝ որ հին աւուրց ծերունեին կերպարանքով երեւցաւ, մեզ ք ալ այնպէս կը նկարեն ք ։

Սխալ չ՚ե՞ն ք դիտեր որ երեք անձն ալ զարգ էութիւն են անձև և անտես և թէ բնաւ օրինակի կամ նմանութեան տեր ք չ՚են իյնար ։

Հ. Աստուածային էութիւնը ոչ ծնող է ոչ Աստուած ծնեղ, ոչ բղխող է և ոչ ալ բղխեցուց, և այս խօսքը բոլոր աստուածարան վարդապետաց մէջ ընդհանուր կանոն է. արդ՝ Քրիստոսի ծննդեան համար ինչո՞ւ Նիկիական հանդանակին մէջ գրուած է. «ծնեալն Աստուծոյ հօրէ՝ միածին այսինքն յ՚էութենէ հօր» ։

Պ. Ճշմարիտ է այդ ըսածդ, բայց Նիկիական հանդանակին, այսինքն հաւատամքին մէջ որ կ՚ըսվի՝ թէ ըսածիդ դէմ չ՚է, որովհետև հայր Աստուած իր էութեան զօրութիւնովը, որ յ՚ինքեան կայացեալ է՝ կը ծնանի, և հօր Աստուծոյ էութիւնը ծննդեամբ որդուն Աստուծոյ՝ կը հաղորդի. ինչպէս որ Հոգին Սուրբ ալ՚ի հօրէ բղխելով հօր Աստուծոյ էութիւնը հաղորդ կ՚ըլլայ. ուրեմն այս խօսքիս մէջ էութիւնը՝ հակացութիւն իմանալու է ։

Հ. Նախանձը գովասար մտութիւններուն մէջին է, բայց ինչո՞ւ Աստուածաշունչին մէջ գրուած է. «Աստուած նախանձոտ» Բ. օրինաց Գ. 24, մինչ Աստուծոյ նախանձիլ կը վայլե՞ ։

Պ. Քիչուէ նախանձը մտութիւն ըլլալով Աս-

աուծոյ չը վայլէր , բայց նախանձը երկու կերպով կ'ներկայանայ , նախ կ'ներկայի առերեսութիւն և յետ՝ ուրիշին ապէկութեանը վրայ , մերսութիւն ըսուած նախանձն ասիկայ է , որ Աստուծմէ բաղդատուելին հետեւի է . երկրորդ՝ նախանձ կամ նախանձիլ կ'ըսուի՝ երբ բարիին մէջ չարաճճութիւն , ինչպէս Քրիստոս տաճարին նախանձով կը մաքրէր , տեսնալով չար Հրէայներըը Աստուծոյ տանը մէջ , որն որ Դաւիթ Քրիստոսի հոգւովը պատմելով ըսած էր . «քու տանդ նախանձը զիս մաշեցուց , և քեզ նախատողներուն նախատինքները վրաս եկան» : Սաղ. ԿԹ. 10 :

Որովհետեւ չար Հրէայներըը՝ հօր Աստուծոյ տունը առուտուրի տեղ ըրեր էին , ահա այս կերպովս նախանձ բառը կ'ըսուի Աստուծոյ վրայ , վասն զի տանդ նախանձը կրակի նման բան մըն է , որ երկաթին ժանգը կը մաքրէ , Աստուածաշունչին մէջ այս տեսակ առաքինութեան նախանձներուն շատ օրինակներըը կը տեսնենք : Նախանձն այն առեն Աստուածային և տըրը նախանձ է , երբոր սէրը տըրը և Աստուածային սէր է . և երբ որ սիրոյն բարկութիւնը արդար և տըրը և Աստուծոյ կամացը հաճութեանը յարմար է , որն որ Աստուծոյ պատուոյն համար կը շարժի :

Իսկ մեւս նախանձը՝ զրպարտի մէջ հինցած առերեսութիւն մըն է ուրիշին ապէկութեանը համար , որ քնաւ Աստուծոյ նախանձին չը նմանիր :

Հ. Հեթանոսաց ճակատագիր բառը ինչ է:

Պ. Ո՛չ, որովհետև Հին և Նոր Կտակարանները մէջ երբէք աստր վրայ խօսք մը չ'ընտրէն գաս, նաև այդպիսի բան մը կայ ըսել ալ, Աստուծոյ ամենակարող զօրութեանը և մարդուս անձնիշխանութեանը վրայ թերհաւատալ է, միայն աս կայ որ Աստուծոյ նախատեսմանութեանը հաւերման կը գործէ ամեն բան:

Հ. Նախատեսմանութիւնն ինչ է:

Պ. Նախատեսմանութիւն Աստուծոյ ի՛նքն է, որն որ առաջուց ամեն բան տեսնել կարողացած է:

ԳԼՈՒԽ Գ.

Երկրային հրեշտակաց վրայ:

Հ. Հրեշտակն ինչ է:

Պ. Հրեշտակը իմացական գոյութիւն մըն է, միշտ շարժող, անձնիշխան կամօք, անմահրմին Աստուծոյ ստեղծուր, և անմահ:

Հ. Հրեշտակները ինտո՞ր կը ճանչին:

Պ. Հրեշտակները՝ իրենք իրենց գոյացութեամբը չ'են ճանչնար, որովհետև իրենց գոյացութիւնը՝ արարածոց պատճառ կամ նման չ'է, հապա անոնք Աստուածային տեսակներով և

գնական իրաց գաղափարներով կը ճանչնան։

2. Հրեշտակները կրնա՞ն / ետքի ըլալիքները առաջուց գիտնալ։

Պ. Ապագայ բաներ երկու տեսակ է, մէկը հարկիւ ապագայ կ'ըսվի, վասն զի իր պատճառներէն յառաջ կ'ուգայ, ինչպէս ըսինք թէ, երկաթ տարի գրավհեան այսինչ մոլորակը այս ինչ ջրհանէն մէջ պիտի պատահի, ուստի հարկաւ կամ անձրև պիտի գայ, կամ չորութիւն պիտի ըլլայ, ասանկ ապագաները հրեշտակները գիտեն։ Իսկ միւսը ազատ ապագայ կ'ըսվի, որ այսպիսի ապագայն հրեշտակները չ'են գիտեր, գրավհեան ազատ ապագայները՝ պատճառներէ առաջ չ'են՝ի գար, այլ Աստուծոյ ազատ վճռոյն և մարդոյ ընտրութեանը յոգուած են, ուստի ասանկ ապագայները միայն Աստուած կրնայ գիտնալ, այս պատճառաւ Եսայի մարգարէին բերնովը Աստուած կուտքերուն կ'ըսէ. «կուտքեր, պատմեցէք մեզի, թէ ապագայն ինչո՞ պիտի ըլլայ, որպէս զի մենք ալ հաւատանք որ դուք Աստուած էք» · Եսայ ԽԱ.։

Ազատ ապագայ բաները օրինակով մը բացատրեմ։ Ըսենք թէ գալ տարի ազգաս մը ճամբորդութիւն ընելու առնն շատ ինչք (մալ) դնատնալով պիտի հարստանայ, այդ ինչքը յերաւէ այն ազգատը պիտի գտնայ՝ թէ որ Աստուած ուզէ և ինքն ալ այն ճամբորդութիւնը ընէ նէ, ապա թէ ոչ չը գտնար ու չը հարստանար,

արդ՝ ով դիտէ թէ Աստուած պիտի կամենայ թէ պիտի չը կամենայ, աղքատը այն ճամբաը- դումիւնը պիտի ընէ՞ թէ ոչ, որովհետև միայն Աստուծոյ կամքովը չ'ըլլար, հապա պէտք է որ աղքատն ալ կամք ընէ, թէ որ այս խօսքս ծա- ղըը երևցաւ քեզ՝ ահա վկայութիւն, «թէ որ Աստուծոյ կամքին հետ մարդոց կամքն ալ չը միանայ՝ արժանաւոր բան մը չը կատարվիր» Մէկ. կոր. ը

Ա. Ահա աղաս ապաշխարները սատնկ են և հրեշ- տակները զանազ ոչ կը ճանչնան՝ ոչ ալ պիտեն, ասոնք ներնդատոր կախարդոց թէ պէտքերուն և թէ խօսքերուն հաւատալու չ'է, բաժնին ըլ- լայ ալ նէ, պատահմամբ է. որովհետև լուսա- ղէն հրեշտակին չը դիտցածը, սատանան հիչ չը դիտէր ։

Հ. Հրեշտակները մարդուս սրտին մէջի խոր- հուրդը դիտե՞ն ։

Պ. Թէ որ Աստուած՝ որ խորհրդոց քննողն է, չը յայտնէ նէ, սոյգ կերպով չ'են կրնար գիտ- նալ, կամ այն մարդը իւր սրտին խորհուրդը չը յայտնէ նէ, հրեշտակները չ'են կրնար գիտ- նալ, որովհետև Աստուած է միայն որ մարդուս սիրտը և միտքը կը քննէ և հոն եղածները գի- տէ ։

Հ. Հրեշտակները մէկ մէկու հետ ինտիր կը խօսին ։

Պ. Երբ հրեշտակ մը կամք կ'ընէ որ իւր սրտին

խորհուրդը ուրիշ հրեշտակ մը իմանայ, այն ա֊
տեն իւր միտքը կը շուկէ դէպ՚ի այն միւս հրե֊
շտակին, և այն ալ շուտ մը կ՚իմանայ անոր
ուրտին խորհուրդը, ահա աստանկ է հրեշտակաց
մէկ մէկու հետ ըրած խօսակցութեան կերպը,
աստ ձեռս Աստուծոյ և հրեշտակաց հետ կը
խօսինք։

Հ. Հրեշտակները ի՞նչպէս կ՚ուտեն։

Պ. Հրեշտակաց ուտելը՝ տեսակաւոր հոգի՛
չ՚է, հապա իրենց միաւորեալ օդեղէն մարմի֊
նէն՝ որ իրենք կ՚առնեն։ Անդ՝ կը ձգեն կե֊
րակուրը իրենց մարմինին մէջ, և շուտ մը ան
կերածնին օդի կը վոխուի, և ետքն ալ արևը
գանոնք շուտ մը ոլորշիի պէս կ՚այրէ կը ցրուէ,
այսպէս կ՚ըսէ կուռնելիոս։

Հ. Հրեշտակաց խմաստութիւնը որդեօք օրէ
որ կ՚աւելնայ։

Պ. Ոչ. արտևեան դիտութիւնը՝ երանելի հո֊
գիներու պարգև է. թէ որ օրէ օր այն դի֊
տութիւնը իրենց միտքը աւելնար՝ այն տեղ կա֊
տարեալ երանելի չ՚էին տեսլեր. արտևեան
օրէ օր առաջ երթալը՝ ճանապարհորդութիւն կ՚ըլ֊
լայ՝ որ տակաւ իր տեղը հասած չ՚է։ Բայց հրե֊
շտակները այս կերպը չ՚են, հապա կատար֊
եալ կերպով արժանացած են իրենց յաւիտենա֊
կան երանութեան։ Անոր համար իրենց խնդու֊
թիւնն ալ օրէ օր չ՚աճիր։

Հ. Ամբողջ հրեշտակները փրկության մարդկութեանը սերմա՞կ էին։

Պ. Այսպէս պատասխան կ'ուտայ Աստրըն Դիանեսոս Արիապագացին. «կը տեսանենք որ հրեշտակները ամենէն առաջ գոյացան փրկության մարդեղութիւնը. և երբ անոնց ձեռքով մարդիկ ալ իմացան, ուրեմն ըսել է թէ հրեշտակները փրկության մարդեղութեանը սերմակից էին։

Հ. Թէ որ սերմակից էին, ինչու Տաճար փրկության համբարձման ժամանակը առանց դիտելու կը հարցնէին «իսկ այս մի՞ թէ որ դիտես դայ յ'եղումայ, կարմիր հագուստ ի՞նչ բաստրայ։»

Պ. Թէպէտ առ քանի մը հոգի կերպ կերպ հոգեւորական մեկնութիւններ կ'ուտան պրպտելու մեկնիչները, բայց մենք հարցմունքիդ կատարեալ պատասխանը ալ նայինք։ Ամառուց առջուց առհասնած տնօրինած էր փրկության մարդեղութիւնը և ժամանակ ժամանակ հրեշտակներուն ձեռքով մեր կերպով մը մարդացնելը կ'իմացնէր, բայց երբոր ալ փրկության գործքերուն պատճառը ինչ ըլլալը չ'էին գիտեր, անոր համար փրկության մարդեղութենէն ետքը հրեշտակները շատ բան եկեղեցւոյ գլխատորներէն իմացան շատ բան ալ եկեղեցւոյ գլխատորները հրեշտակներէն լսեցին։

Ահա քեզի օրինակ. Աստուած Ադամին և Եւային հանար ըսաւ. «երկնքեան ի՛ ճարմին մի» Կրնաս ալ այդ խօսքը մեկնեց ապրեցնել «զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ» այս իրարմէ չը բաժնուիլը որ Քրիստոսէ ի՛ր Ս. եկեղեցիին հետ անբաժանելի միութիւն մատնած ըլլալուն օրինակն է, հրեշտականերուն հին մեկը չ'էր գիտեր։ Եւ Քրիստոս երկինք կը հաստատէ որ հրեշտակները ըստուերէ, և անոնք ալ երբոր գինքը ճանչցան շուտ մը առաքեալներուն եկան ըսին թէ, «այս ցիտուը հիմայ լնաար որ երկինք երթաս, անանկ ալ օր մը նստէն պիտի դայ.» ուրեմն ըստ աստուածապանից, հրեշտակաները թէպէտ և Քրիստոսի մարդեղութիւնը առաջուց գիտէին, բայց անոր ամեն ընթերքները չ'էին գիտեր անոր համար համբարձած առենը սկսան հարցունել թէ, «իսկ այս ալ է որ գիտեր դայ յ'եղովմայ, կարմիրութիւն ձորձոյ իւրոց ի՛ բոսորայ»։

2. Հրեշտակայ երդաբանութիւնը ինչ է կամ ինչ առնուն ի՛ կ'ըսեն։

3. Սուրբն Ներսէս շնորհալին հրեշտակաց ինն գասերուն ալ յատուկ յատուկ օրհնութիւն կը սահմանէ այսպէս։ Աստ ինն գասք սիտուց կ'ըսեն, «Սիտու քո Աստուած յաւիտեան յաւիտենից»։ Սաղմ. ԽԴ. 7։

Երկրորդ գասք քերուբէից կ'ըսեն «օրհնեալ են փառք սուրբ ի՛ տեղւոջ իւրում» Եզեկ. գ. 12։

Երրորդ դասք սերովբէից կ՚ըսեն, «սուրբ սուրբ, սուրբ տէր զօրութեանց, լի է ամենայն երկիր վառօք նորա»։ Եսայ Զ. 3։

Չորրորդ դասք տէրութեանց կ՚ըսեն, «արքայութիւն քո՝ արքայութիւն յաւիտենից, և տէրութիւն քո՝ յազգէ մինչև յ՚ազգ»։ Սաղ. ճԽԴ. 13։

Հինգերորդ դասք զօրութեանց կ՚ըսեն, «տէր զօր զօրութեամբ իւրով, տէր կայտղ՚ի պատերազմի»։ Սաղ. ԻԹ. 8։

Վեցերորդ դասք իշխանութեանց կ՚ըսեն «տացեն քեզ հնազանդութիւն ի ժառանգութիւն և իշխանութիւն քեզ ընդ ամենայն ծագս երկրի»։ Սաղ. Բ. 7։

Եօթներորդ դասք պետութեանց կ՚ըսեն «դու ես քահանայապետ յաւիտենից և տէր ընդ այմէ քումմէ»։ Սաղմ. ճԹ. 4։

Ութերորդ դասք հրեշտակապետաց կ՚ըսեն «ողորմեա՛, դու առեղծեր մի կորուսաներ։ զդործս ձեռաց քոց մի անտես առներ»։ Սաղ. ճԼԷ. 8։

Իններորդ դասք հրեշտակաց կ՚ըսեն «փառք՝ ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն՝ ի մարդիկ հաճութիւն։ Ղուկ. Բ. 14։

Արդ՝ հիմայ ըսել կ՚ուզես թէ, արդեօք յաոնիկ է հրեշտակաց ամէն մէկ դասուն օրհնաբանութեան առմունքը և թէ, արդեօք միշտ այդ օրհնութիւննե՞ր կ՚երգեն, թէ ուրիշ բան։

Ա. Առաջին հարցմանդ պատասխանը. Հնարհալին այսպէս կ'ուսոյ. «Թէպէտ և այս երգերը ամէն մէկ գաւառն յատուկ են, բայց վոխանորդաբար ամէնն ալ կ'երգեն, վասն զի մէ որ երեքսըրեան վատաբանութիւնը միայն սերտվբէից յատուկ ըլլար՝ ինչպէս որ ըսինք և երեքն ալ միշտ Աստուծոյ աթոռոյն քովն են և տեղ չ'են պրկուիր, եայլ մարդարէն ինչպէս կը ըսէր այդ վատաբանութիւնը ուրիշ հրեշտակներէ։

Մ. Իւս հարցմանդ ալ այսպէս կը պատասխանեմ։ Երբ ուրախութեան լանճոյքի մը մէջ մէկ կամ քանի մը քնարահար դանուի, յայտնի է որ միշտ մէկ եղանակաւ չ'են երգեր, հապա հրեշտակները որ մարդիկներէն աւելի վեր են, միշտ մէկ կերպ օրհներգութիւն պիտի ունենան, և քանի որ հրեշտակները՝ որոնք մեռնիլ աւելի գ'Աստուած կը սիրեն կը պատուեն ու կը պաշտեն, ուրեմն շատ տեսակ օրհնութիւններով կը գովեն ու կը վատաւորեն իրենց արարիչը։

ԳԼՈՒԽ Դ.

Մեհենի հարցումներ

Հ. Կայենի մեղքը ինչո՞ւ համար թողութիւն չ'ունեցաւ։

պ. Որովհետև կայէն կ'ըսէր թէ «մեծ է պատ. ամիժ իմ քան զիմաստուն գիս» Ծննդ. գ. 13 = Որով ըսել կ'ուզէր Աստուծոյ թէ իմ մեղքս քան զոր ներմանելենէդ մեծ է = Բայց Աստուծոյ ողորմութեանը նայելով բոլոր աշխարհիս մեղքը կաթիլ մը չուրի չափ է = Ահա ասոր համար կայէն իր մեղացը թողութիւն չը գտաւ որովհետև չարաճաճեր էր =

հ. Ադամին մեղանչելէն ետքը՝ Աստուած դըպրախտը դարով կը կանչէ զինքը «Ադամ ո՞ւր ես» ըսելով, մինչ Աստուած Ադամին ուր ըլլալը չ'ին մի դիտեր =

պ. Ամեն բան Աստուծոյ յայտնի է, բայց որ կ'ըսէ, ո՞ւր ես, ըսել կ'ուզէ, ես քեզի անմեղ ստեղծեցի, և շնորհօք զարդարեցի, հիմայ ո՞ւր ճեայիր, ինչու մերկացար աստուածային փառքէ = Եաև յանցանք ունեցող մարդը յայտնի է որ երեւնալու կ'ամչնայ, բայց Աստուածային անճառելի ողորմութիւնն իր դիմութիւնը ետ չը քաշեց Ադամայ վրայէն, հապա՝ համարձակութիւն և սիրտ տուաւ Ադամ ո՞ւր ես ըսելով, որ գուցէ ան ալ յանցանքը ճանչնալով մեղայ գոչէ, սակայն Ադամ արժանի չըրաւ ինքզինքը պղծանն շնորհայ =

հ. Չրհեղեղէն ետքը նոյ նահապետը տապանին մէջէն ադուաւ մը թող տուաւ և կ'ըսէ Ս. գիրքը թէ «ինչաւ ադուաւը և նորէն ետ չը դարձաւ» Ծննդ. ը. 7 = Յետոյ աղաւնի մը թող

առաւ, որն որ իր ստքերը դնելու տեղ չը գըտ-
նելուն տապանը դարձաւ, այդ՝ թէ որ աղա-
նիին համար դադրելու տեղ չի կար նէ, ա-
ռաւը ո՞ր դադրեցաւ։

գ. Ագռաւը երբ թող տրուեցաւ նէ՝ իր ա-
զատին պէս ուտելիք գտաւ չուրին երեսը. որ
էր խեղդըվող կենդանեաց և մարդոց մարմինը,
բայց աղաւնիին յարմար ուտելիք մը չը կար որ-
ճանէր, ուստի անօթի չը մնալու համար
տապանը դարձաւ։

հ. Երբ Դուվ Սոդոմ քաղքէն կ'ելար նէ՝ ին-
չո՞ Աստուած հրեշտակաց բերնովը պատուիրեց
որ հոսանք չը նայի։

գ. Ա՛ս բանիս համար Սուրբն կուռնելիոս չոր-
պատճառ կ'ուսոյ. նախ՝ Դուվին հնազանդու-
թիւնը փորձելու համար։ երկրորդ՝ չէր ուզեր
Աստուած որ Դուվ պատժըվողներուն դառնա-
լով ցաւակից ըլլայ անոնց։ երրորդ՝ շուտով
հետացնելու համար։ Չորրորդ՝ չըլլայ որ Դով-
ան վտիտը դառնայ։ Օդին մեղ ալ պիտի է
տրվիլ թէ մեզմէ վայ կամ չը պղծայով մեղա-
ւոր վրայ նայելու չէ, վասն զի Աստուծոյ կա-
մացը հակառակ են։

հ. Դուվին կնկանը համար կ'ըսուի թէ աղի
արձան կտրեցաւ, այդ բնաւ՛ր անձրեւէն չը հալիր

գ. Մի գարմանար չը հալելուն, որովհետեւ
թէպէտ աղին անձրեւէն հալելը բնութեան
գործ է, բայց աստուածային կարողութիւնը

աէր և իշխան է բնութեան, ուրեմն Աստուած ինչ որ կը դործէ, դործին ինատր ըլլալը մի՛ հարցուներր։ Եւ այդ հարցմանդքէդ առնլի զարմանալի բան մը կայ այդ կինոջը վրան, քանդի կ'ըսեն ոմանք այսպէս թէ՝ եթէ կատու մը կարեւ այդ աղի արձանէն, շուտ մը արիւն կը վազէ և տեղը կը լեցնլի։ թէ որ ըսես արձան է, ինչպէս արիւն կը վազէ, կըսեմ թէ Աստուած՝ որ անապատին մէջ Իսրայէլացւոց համար քարէն ջուր հանեց, կրնայ նաև իր ամենակարող զօրութիւնը ցցուներլու համար արձանէնալ արիւն հանել։

Հ. Մովսէսի օձ դարձած գաւազանը ինչի՞ օրինակ է։

Պ. Աստուծ կ'ուզէր Իսրայէլացւոց ազգը՝ որ Յովսէփին ժամանակը Եգիպտոս գաւազան ունէր Եգիպտոսի մէջ. երբոր Յովսէփ մեռաւ՝ Իսրայէլացիք Եգիպտացւոց մէջ օձու նման սողնլի էին, բայց աստուածային զորութեամբ՝ բը նորէն գաւազան եղան Մովսէսին ձեռքով։

Հ. Մովսէս փարաւոնին առջեւը ձեռքը ծոցը դրաւ ու դուրս հանեց ու տեսան որ բորոտեր է, ետքը դարձեալ անանկ ըրաւ և տեսան որ բժշկուեր է, այս ինչի՞ օրինակ է։

Պ. Մովսէսի ձեռքը՝ Հրեից ժողովուրդը կը նշանակէր որ երբ սկսան Մովսէսին կամքին հակառակ խստութեամբ վարուիլ՝ իրեւ բորոտ հաշուեցան. և երբոր Մովսէս դիմալով՝ անոնց

ֆաճար Աստուծոյ կ՚ապաչէր , և յանցանքնին կը ներվէր՝ ան առնն բժշկուած կը սեպուէին ։

Հ. Մովսէսին պետէն ջուր առնել և՛ արեան պարճառները ինչի՞ օրինակ է ։

Պ. Ամիկայ Հրէից տղաքներուն եգիպտացւոց ձեռքով ջուրը թափուիլը կը նշանակէ . որ փարաւոնն թագաւորին ժամանակը կ՚ընէին , յետոյ իրենք ալ Աստուծոյ ձեռքովը կարմիր ծովին մէջ խղդուեցան ։

Հ. Մորենին՝ որ Մովսէսին երեւցաւ , որ կը վառէր ու չէր այրեր ինչի՞ նշանակ էր ։

Պ. Աստուածպատանք առար երկու՝ մեկնութիւն կուտան . նախ՝ թէ մորենին մէջի կրակը կը նշանակէր Աստուած , և մորենին ալ Իսրայէլացւոց աղգը , որ եգիպտական գառապանով կը տանջուէին եգիպտացւոց ձեռքը . բայց օրէ օր կը զօրանային ու չէին ոչնչանար , մինարդ որ մորենին կը վառէր ու չ՚էր այրեր ։

երկրորդ , մորենին Սուրբ կոյս Աստուածածինն նշանակ էր և մէջի կրակն ալ Քրիստոս , Սուրբ կոյս Աստուածին լեցեալ Աստուծոյ կրակովը վառեցաւ բայց այրելով չ՚ոչնչացաւ ։

Հ. կախարդներուն գործած զարմանալի բաներուն ապանչելիք կամ հրաշք կը սեպուի՞ն մի ։

Պ. Սատանայներուն կախարդներուն ձեռքով շատ բաներ կընեն որ մարդոյ աչքին զարմանալի կ՚երեւնան . բայց անոնք ապանչելիք չ՚են , հապա աչքի երեւցող խարդախ բաներ , մինչդեռ

ըաեն՛ք թէ մէկուն գլուխը կը կարէ և նորէն տեղը կը դնէ, թէ որ կարըված գլուխն ալ կրնայ միւսանգամ միտաւ և ետքը նորէն կենդանացաւ՝ հաւատամ ս.քանչելիք ըլլալուն, նաև այլ եղածին ալ տուա ըլլալը թէ որ հաստատել կ'ուզես, դուն կարէ այն մարդուն գլուխը և թող այն կախարդը կենդանացնէ, յայտնի բան է որ չը կրնար։

Իրաւ է որ կախարդները սատանայից ձեռքով շատ հնարքներ կը բանեցնեն, բայց անոնք ամենքն ալ ոչինչ կ'ըլլան ճշմարիտ քրիստոնէին առջին, երբոր ան քրիստոնեան միշտ հաւատով վառուած և հոգեւորապէս պատրաստ կ'ըլլայ, ինչպէս որ կը հրամայէ Պաւլիմ. «անկայուն՝ լ կոչմանէ քոմմէ հազարք, և բնաւ ընդ ոչմէ քոմմէ, և սա քեզ ինչ ոչ մարթեացին», Ա-ղէ. Զ. 7։

Թ-էք. Քու մէկ կոչմէդ հազարով պիտի նայեան ու միւս կոչմէդ սուր հազարով պիտի նայեան ու քեզի անմեռնին պիտի չը մօտենան։

Հ. Երբոր փարաւոնի կախարդները երկնց պատգամները դեռեին ձգեցին ու օձ դարձան ան պատգամները, միթէ անոնք ճշմարիտ օ՞ձ եղան։

Պ. Ոմանք սուա երեւմունք կը համարին, ոմանք ալ ճշմարիտ էր կ'ըսեն, որովհետև կ'ըսեն ճշմարիտ է բառերը, թէ որ անոնք սուա օձեր էին ապա Ահարոնի պատգամն ալ որ օձ

դարձաւ և զանոնք կլլեց՝ ան ալ սուտ էր. և եթէ ըսես. ինչպէս ըրին, ահա վերի տուած պատասխանէս իմացիր և կամ թէ ան կախարդները սատանայից զօրութեամբը ուրիշ տեղէ շուտ մը օձեր բերել տուին և շուտ մը ան գաւազաններըը անուռս ընելով օձերը երեւան հանեցին, այսպէս հասկցիր միւս կախարդական գործերն ալ որոնցմով նըր թէ Մովսէսին նմանեցան:

Հ. Ինչո՞ւ Աստուած այդչափ թոյլտուութիւն կ'ընէ կախարդներուն որ այդ զարմանալի բաները կ'ընեն:

Պ. Իմացնելու համար թէ՝ որչափ կախարդութեան արուեստը կրնայ աչք կապել, այնչափ ալ կախարդները Մովսէսէն յաղթուելով յայտնի ըլլայ թէ Մովսէսին գործքը Աստուծոյ է ու չէ թէ արուեստով:

Հ. Ա՛րչափ և ինչ էին Եգիպտացւոց պատիժները՝ որ Մովսէսի ձեռքով կրեցին:

Պ. Տասն էին. Ա. Ջուրին յ'արիւն փոխուիլն էր: Երկրորդ՝ գորտերուն գալն էր: Երրորդ՝ մուն, այսինքն սիվրէ սինէկն էր: Չորրորդ՝ շանաճանճըն էր: Հինգերորդ՝ կենդանւոց ժանտամահ կամ սատակումն էր: Վեցերորդ՝ մարդոց և անասնոց վերայ պալուտ՝ այսինքն խոպաւճըխ ուռուցեալ վէրքեր ելլալն էր: Եօթներորդ՝ անհնարին կարկուտ, կարկուտ և կայլատակումն էր: Ութերորդ՝ մարախն էր:

Յննեղորդ՝ երեք աւուր չօշափելի խաւարն էր։ Ցաննեղորդ՝ անգ-գանիկ տղայոց և անասնոց կատարումն էր։

Հ. Ո՛րչափ ժամանակ տեւեցին այդ պատիժները։

Պ. Ս. կատներիս մինչեւ Հաշտ.քսան և եօթն օր տեւեցին կ'ըսէ։

Հ. Ինչու՞ փարաւոնին խղդուած ժողովն՝ կարմիր կ'ըսուի։

Պ. Կերպ կերպ կը խօսին զանազան անձինք, բայց մեզի հաւանականը սա է որ, այն ժողովն յատակի աւազը կարմիր է, անոր համար կարմիր ծով կ'ըսուի։ Ոմանք ալ կարմիր ըսելուն պատճառ կ'ուզան իջէ այդ ծովուն մէջ բուսած (մէրճան) կը բուսանի։

Հ. Ամերիկէն պէտք՝ որ առաջնորդ եղաւ Իսրայէլացոց երբ եգիպտոսէն ազատեցան՝ և Աւետեաց երկիրը կ'երթային, ինչու՞ համար ցամաքեր ամբողջ նման կ'երեւար, և դիշերը հրոյ նման։

Պ. Այսպէս կը վարդապետեն՝ թէ Իսրայէլացոց երեկը անցնելի նման հովանի կ'ըլլայ արդարոց վրայ և դիշերն ալ հրեղէն ու զարհուրելի կ'երեւայ մեղաւորներուն։

Հ. Ինչու՞ համար Աստուած միտ չ'էր խաղալ Իսրայէլացիք երկինքէն կամ մանանան շատ ժողվեն, ու հրաման ըրաւ որ օրվան բաւականէն շատ ժողովեն։

Գ. Ա՛ս պատճառաւ էր որ տրվին Թէ ամեն օր պիրներ կերակրուէր Աստուած է, և ամէն բան անկէ միայն պէտք է խնդրեն ու յուսան։

Հ. Մովսէս երբ Սինա լեռը Աստուծոյ հետ խօսելու գնաց և հոն ուշացաւ Իսրայէլացիք ժողվուեցան Ահարոնի վրայ, և ըսին Թէ՝ Մովսէս գնաց չ'եկաւ, մեզի Աստուած ըրէ որ պաշտեն ք, և Ահարոն ալ ոսկեզին զարդերնին ուզեց և ձուլածոյ այծինքն հալեցուցած Թափուած որմէ մը շինեց որ պաշտեն, ինչո՞ւ ուրիշ կենդանիի կերպարանքով բան մը չը շինեց։

Գ. Ցայտնի է որ Իսրայէլացիք կռապաշտութիւնը եգիպտացիներէն տրված էին. և որովհետև եգիպտացիներուն պաշտած կուռքը եզի կերպարանքով էր՝ անոր համար Ահարոն ալ եզի նման շինեց։

Հ. Մեղադրելի չէ Ահարոն այդ գործին համար։

Գ. Իր ուզելովը չը գործեց Ահարոն այդ գործը՝ այլ վախէն, երբ քիչ մըն ալ դէմ խօսած բլար՝ զինքը պիտի քարկոծէին, և ինքն ալ չը կրցաւ իր իշխանական պատիւը գործածել, ուզեց որ հնարքով մը արգիլէ այդ գործը, և այս պատճառաւ ըսաւ՝ Թէ ձեր կանանց զարդերը բերէք որ ձեզի ձուլածոյ (Թափծոյ) աստուած մը շինեմ։ Որովհետև կանանց զարդը և ոսկեզինները իրենց հոգիէն աւելի է, վասն որոյ է րիկ ճարտուց ըսաւ՝ Թէ ինքնիներնուդ ոսկեզին զարդերը բերէք, կարծելով որ ինքնիներնէ

պարզերը չ'են իսաւր ։

Ահարօն մտածեց նաև որ այն կուռքը թաքծու չինէ, որպէս զի մինչև որ կաղապարը այսինքն խալիսը շինվի նէ, Մովսէս ալ կրնայ կուգայ և ինքն ալ կ'ապաւէ ։ Բայց այդ կարծիքը նորը սկսինչ եղան, որովհետև կռապաշտութեան սխալը անանկ սիրած էր Հրէից վրայ, որ չէ թէ իրենց կանանց պարզը՝ այլ և բոլոր ունեցածնին թէ որ ուզէր՝ պիտի տային ։ Ասոր Ահարօն չ'ուզելով և սկարսութեամբ մեղանչեց և ամբոխին արատութիւնները կատարելով մեղքին պատասխան ։

2. Մովսէս երբ սուրբ ժողովուրդը կռապաշտութեան մէջ ինկած, ինչո՞ւ կրնայ բերած սատանային պատուիրանաց երկու տախտակը՝ բարկութեամբ գետինը զարկաւ ու կոտրեց։

3. Այսպէս կ'ըսեն սատանայքը՝ թէ սուրբ նախանձէն չարժելով՝ անոնց հրապարակական սնապարծութեանը դէմ արժանի չը սեպուի որ Աստուծոյ օրէնքը այնպիսի թերեհաւատ ժողովրդեան մը բերէր ։

4. Ահարօնին թաւիծ ձուլածոյ կուռքը Մովսէս առաւ այրեց, փոշի ըրաւ և ջուրին երեսը ցանելով Իսրայէլացւոց խմցուց, ինչո՞ւ այս բանը ըրաւ Մովսէս ։

5. Մովսէս այդ բանը ըրաւ՝ որպէս զի պաշտած կուռքերնին արհամարհելի ցուցունէ, և Հրէաներն ալ սեռնան երեսից պաշտած սուտած-

նին ինչ ըլլալը և դէտնան անոր տկարութիւնը։

Հ. Մոլեխ մարդարէին պատկերը երբ կը նըկարեն՝ դլուխը երկու եղջիւրի նման բան կը դնեն, այս ի՞նչ նշան պիտի ըլլայ։

Պ. Հրեայները կ'ըսեն թէ՝ երբոր Սինա լեռնէն կ'իջնար օրինաց տախտակները բերելով լուսավղէն երկու եղջիւր կ'երևար ճակատին վրայ, իբր բերած օրէնքը լեփ-լեցուն (պայծառալազարնող) և ծառայեցուցիչ էր։ Բայց Քրիստոսի օրէնքները այսպէս չ'էին, ինչպէս որ ինքը Քրիստոս ալ կ'ըսէ «իմ լուծս քաղցր է, և իմ բեռս թեթև»։

Հ. Մոլեխի վախճանիլը ինչպէս եղաւ։

Պ. Հրաժարական ոզջոյնը և մարդարէական օրհնութիւնը տալէն ետքը՝ Աստուծոյ հրամանատ դէպ 'ի Նաբաւ լսած լեռը գնաց, որ Մոլեխայ երկիրն էր, և ժողովուրդը հետևէն լալով անոր ետևէն կը նայէր, որովհետև հրաման չը կար որ հետը մարդ երթայ։ Ուստի Մոլեխ՝ Միքայէլ Հրեշտակապետը իրեն ընկեր առնելով լեռը եկաւ, (վասն զի ըստ հաստատակաց կարծեաց՝ Միքայէլ հրեշտակապետն էր որ միշտ Մոլեխի կ'երևնար, անոր հետ կը խոսէր Աստուծոյ կողմէն), այն լեռան վրայ, ուր Մոլեխ իր հոգին Աստուծոյ ձեռքը աւանդելով մարմինը հրեշտակին ձեռքը ձգեց։

Հ. Աստուած հրէից ազգին պատուիրած էր որ այլազգեաց հետ խնամութիւն չ'ընեն, ինչպէս

որ գրված է, Բ. օբն. Լ. 3։ Սողոմոն թագաւորը ինչո՞ւ այս հրամանին հակառակ եգիպտացւոց փարաւոն թագաւորին աղջիկը իրեն կին առաւ. ինչպէս գրված է Գ. Թագ. Գ. 1։

Գ. Ս. գրոց մեկնիչները այս մասին Սողոմոնը՝ անպարտ կը համարին նախ՝ Ս. գիրքը գուշակութեամբ կը խօսի Սողոմոնի այս ըրածին վրայ, և Աստուած ալ հաւնած էր այդ բանին, վասն զի երբոր Սողոմոն փարաւոնին աղջկան հետ նոր կարգուած էր՝ Աստուած երևցաւ իրեն, և ըրած խնդիրքները մեծ առատութեամբ կատարեց։

Երկրորդ որ՝ այլազգեաց հետ խնամութիւն չ'ըլայ բանիցս ալ գրված է, այն այլազգիներուն անուններն ալ գրված էին որ են Ամօրհացի, Քանանացի, Քեթացի, Փերիզացի, Խեւացի, Երբուսացի. Գերգեսացի և Ջեբուսացի, ասոնց մէջ եգիպտացւոց անունը չը կայ, վասն զի այս յիշուած ազգերէն զատ եղած այլազգիները այնչափ մոլի և կատաղի չ'էին կուռքերուն սիրով և իրենց աղջիկներն ալ չ'էին յօժարեր որ իրենց երիկներուը հրապաշտութեան մէջ ձգեն, և կը յուսացվէր ալ որ կարելի է ճշմարիտ Աստուծոյ կը դառնան։ ինչ և եղէ, որովհետև Աստուած մեղապարտ չը համարիր Սողոմոնը այս գործին համար, հարկ է որ մեզ ալ մեղադրելի չը համարի։

Ա. Սողոմոնի տաճարին համար Ս. գրոց մէջ

կ՚ըսէր թէ, «ան առնէն այսինքն առաքէին չհետեւելու առնը ամէնեւին երկաթեղէն պատժելի մը ձայն չ՚ելաւ» գ. թագ. Զ. 7։ Այսինքն պէս կ՚ըսայ որ Տաճար մը կը շինուի և երկաթեղէն գործիք մը ձայն չ՚ելլար շինված ժամանակը։

գ. Որովհետև այն Տաճարին շինութեանը հինգ որ պէտք էր, քար, փայտ և. առաջուց ատանկ չափած ու յարմարած էին որ միայն ամէն մէկուն տեղը դնոնալ և վայելուչ կերպով շարել պէտք էր։ Ես անոնք որ բնեռուլ հատուելու բան էին, անոնք ալ ծայրերնին սուր չ՚էր, հապա՝ ոլորածոյ (պուռմալը) որ ատանց ձայն հանելու տեղը կ՚անցուներին, և ատիկայ ալ խորհրդով ըրին՝ որպէս զի տաճարնեն ժողովուրդ մէ անանկ սուրբ տեղի մը մէջ անշուշտ և անգթայ իրերը անգամ պէտք է որ բաներ պահեն. որպէս զի այս սուրբ տանը պատերը պահած ըլլան։

2. Շատ տեղ Ս. գրոց մէջ դուն Աբրահամու գրված է, ինչ հասկնալու է այս խօսքը։

գ. Այդ դուն Աբրահամու բառածը արդարոց երանական հանդստեան տեղին է. որովհետև ինչպէս որ տղայքը իրենց ծնողը դիրկը անհոգ և անվախ կը հանդչին, անանկ ալ. արդարոց գաղը այն երանական հանգստեանը տեղը հանգիստ կ՚ըլլան և իրենց կամացը հակառակ բան մը ամենևին չը կրնար տիրել։

Հ. Հարցուցած հարցմունքիս նման երբեմն Մ. դրոց մէջ երկիր կենդանւոյ կ'ըսուի, ինչպէս ըլլայ այդ կենդանւոյ երկիրը։

Պ. Երկիր կենդանւոյ ըսելով արբայութիւնը իմացիր, որուն վառքը վայելողները՝ մահկանացու չ'են ըսուիր, նոյնպէս երկինքն ալ որ անմահ հրեշտակաց բնակարանն է, երկիր կենդանւոյ կ'ըսուի, վասն զի հոն բնակողներն ալ մահկանացու չ'են։

Հ. Մարխամ Աստուածծինը կոյս կը դառնայ ամենայն Ս. Եկեղեցիք, ինչու համար Որդին Միածին կին կ'անուանէ կոյս գալիլացւոց հարսնիքին մէջ, ըսելով «Կին դու՝ չ'ես հասեալ ժամանակ իմ»։ Յովհ. Բ. 4։

Պ. Ս. Գրոց մէջ կին բառը հակառակ է թէ կոյսերու և թէ կարգելոցներու, ինչպէս որ հայր Յովսէփին ալ ըսվեցաւ «ահա քեզ մայրիամ կին քո» Մատթ. Ա. 20։ Եւ յայտնի է որ երանէն յղացեալը՝ ի հոգւոյն սրբոյ էր։ Նոյնպէս Յակոբ նահապետը երեն նշանված Ռաքէլին կին կ'ըսէր։ Որովհետև ինչպէս որ՝ հայց անուն թէ խմորուն հացին և թէ բաղարջ հացին կ'ըսվի, անանկ ալ կին անունը։ Ինչպէս որ առաքեալն ալ Քրիստոս՝ ի կուսէ ծնաւ ըսելուն առթ, ՝ի կնոջէ ծնաւ կ'ըսէ այսպէս «Աստուած ղրկեց իր որդին՝ որ կնիկէ մը ծնաւ» Գաղատացւոց Դ. 4։

Հ. Ս. Աստուածածնին կուսութիւնն ուրացողք

ներըը իրենց ըսածը ուեւտարանին ատ խօսքովը կը հաստատեն, « ոչ գիտաց գնա, մինչև ծնաւ զ'որդին իւր զ'անդրանիկ » Մատ. Ա. 25 ։ Ա.յս խօսքէն կը հեւնցնեն թէ ուրեմն անկէ ետքը գիտցաւ, ևր.ք ինչպէս լսանանք այդ խօսքը ։

Պ. Այն ձորին մէջ վերջին դատաստանը պիտի ըլլայ կ'ըսուի նէ, ոչ թէ ամեն դատելի մարդիկ անտեղ պիտի ղրկվին, հապա՝ այն ձորը տեղին մէջին տեղը պիտի հաստատվի. և որովհետև բոլոր տեղերը հարթ հաւասար պիտի ըլլան, ըսել է ամէն կողմն ալ կրնան կայնիլ, որչափ տեղ որ բոլոր մարդոց բաւական ըլլայ ։ Ոմանք կ'ըսեն թէ որովհետև արդարները Քրիստոսի ա՛ջ կողմը և մեղաւորները ձախ կողմը պիտի կայնին, ա՛ջ կողմով կ'իմանան արդարները ուն կանգնիլը Քրիստոսի հետ՝ բարձր օդին վրայ երկրէ վառաւոր տեղ մը, և ձախ կողմով մեղաւորաց կանգնիլը երկրի վրայ՝ երկրէ անարգ տեղ մը ։

Հ. Ամեն մեռեալ մանկտունքները, թէ որ տուրբ մկրտութեան սկզբնական մեղքէ ազատվելով մեռեր են նէ, անոնք ալ դատաստանի պիտի երթան ։

գ. Այս. անանք ալ գաւառաւանի պիտի ելլան՝ ինչպէս որ Յովհաննէս աւետարանիչ իր Յայտնութեանը մէջ կը վկայէ ըսելով. «և մեծ ու պղտիկ բոլոր մեռնողները տեսայ՝ որ Աստուծոյ առջեւը կը կենային» ի. 12։ Յիրաւի պղտիկ ոչխարը մեղք մը չ'ունին, որ ան մեղայց գաւառաւանը ըլլայ վրանին, բայց վայելուչ է որ իրենց համար ալ հրաշալեկան և վերջին վճիռ մը ըլլայ, այն աշխարհագումարաւորանին մէջ, որ Քրիստոսի բազմապատիկ շնորհքը, եւ իւր գաւառական արեանը արդիւնքը յայտնի և առատ կերպով ի'երևնայ այն վիրաւած մանկանց անմեղութիւնը, որոնք առանց բարի գործոց՝ միայն սիրական մեղքէ ազատելով, Քրիստոսի շնորհօքը յաւիտենական փառքով պիտի գաւառաւորուին երկինքին մէջ։

հ. Առանց մկրտութեան այսինքն սիրական մեղքով մեռնող մանուկները ինչպէս պատիժ ունին։

գ. Եկեղեցւոյ Ս. վարդապետաց և բոլոր աստուածաբանից ընդհանուր կարծիքն այս է որ միայն սիրական մեղքով առանց մկրտութեան մեռնող մանկանց պատիժը մեղաւոր հոգիներուն նման չէ, միայն թէ Աստուածային երանական տեսութենէն զուրկ կը մնան։

ԳԼՈՒԽ Զ.

Բնական իրաց վրայ հարցումներ եւ անոնց լուծումը։

Հ. Ադամայ խօսակցութիւնը ինչ լեզուաւ էր։

Պ. Այս հարցմանդ երկար պատասխանի մը պէտք է, բայց համառօտ կերպով մը խօսինք հաւատարմութեամբ սուրբ գրոց։

Որդ՝ Ադամ մեր նախահօրը խօսակցութեան լեզուն Հայոց լեզուն էր, և հաւատարմութիւն բանիս այս է. որովհետև առաջին նահապետները՝ ըստ եօթնեկին եօթը 130 տարիէ շատ Հայաստանի մէջ բնակելով շատցան, և երբոր երկիրը ամենուն համար նեղ կ'ուզար՝ մէկ քանի տուրուններ ցրուեցան անկից, բայց ոմանք ալ Հայաստանի մէջ մնացին՝ հոն տեղը տուն պիտի պատ են. ունենալնուն համար, ու հոն մնացողներուն մէկն էր նաև Նոյ նահապետ, որ ապրեցաւ իջնալէն եօթը Հայաստանի մէջ բնակեցաւ։

Իսկ այն ցրուած բնակութիւնները երկար ատենէ մէջ (հին պատմութեան մօտ) Սեմատար ըսուած գաւառը և հոն երթալու հետ միաբանելով՝ սկսան աշտարակ մը շինել, որ ըստ Ասորածշնչին՝ չարութեան գործ էր, վասն զի Ասորածտեղ որ այս չարութիւնը՝ երկնից լեզուին մէկ լեզուն կը գործեն, վասն որոյ միայն անոնք պատճառ Ասորած լեզուներուն խառնակելուն ինչ-

պէս առաջ դիւրքը կ'ըսէ «խառնակեցուք նանդ-
ղեղաս նոցա» Ա՛նպտ. ԺԱ. 7։

Եւ յիրաւի Աստուծոյ արդարութեանը դէմ է
անանց հետ չը միաբանողներն ալ պատժել, ու-
զեցաւ կը հետեւի որ նոյ և Հայաստանի մէջ մը-
նացող ուրիշ նահապետները այս խառնակու-
թեան պատիժէն ազատ մնացին։ Եւ ապա ե-
րբ Հայկ այս միաբանութեան մէջէն, եկաւ
իւր հայրենի երկիրը, և գիտէր որ իր նախա-
հաւր՝ այսինքն նոյ՝ տակաւին ողջ է վասն զի
բաւ առաջ գրուց նոյ՝ չըհեղեղէն հաւքը 350
տարի ալ ապրեցաւ, և աշտարակին շինութիւ-
նը՝ չըհեղեղէն 150 տարի հաւքը եղաւ։

Եւ Հայկ բնակեցաւ իր հայրենի երկրին մէջ,
և այն ժամանակը Ներսէսը կամ ըսել ըսուած
հսկայ մարդուն ամբարտաւանութիւնն ալնուա-
ճեց, և Աստուծոյ դէմ կռուողներուն գլխաւո-
րը զարկաւ սպաննեց, և ձգեց այն լեռնէն՝ որ
Աստուծոյ պատիժ էր, և իւր նախնեացը հետ
կը խօսէր առաջին անմեղութեան լեզուովը, որ
Ադամէն սրբոց սրբոյ մինչև նոյ նահապետին
հասեր էր, նոյ նահապետէն ալ Հայկին անցաւ՝
անկէ ալ մինչև մեզի եկաւ, ու մենք ալ մինչև
՛ի կատարած աշխարհի պիտի ունէ։

Այս խօսքիս հաստատութեանը համար ուրիշ
շատ ապացոյցներ ալ կան, ինչպէս նոյ նահա-
պետին և անոր յաջորդող շատ մը նահապետ-
ներուն ալ և ալ տեղի համար դրած անուն-

ները՝ որոնք քննել իմաստուն և դիտնական անձերու կը թողուն ք։

Հ. Ի՛նչպէս թէ այն աշտարակը չինողներուն դէմ աստուածները բօթանաստն և երկու հոգի էին. վասնորոյ՝ երբոր լեզուները խառնակեցան նէ, բօթանաստն և երկու լեզու եղան, այդ՝ մինչև հիմայ ամբողջ բօթանաստն և երկու լեզու կայ մը։

Պ. Այո՛, կայ, և կ՛ըսեին թէ մեկզմէկէ ածանցելով (չինելով) աւելցան, որովհետև կը վկայեն թէ, Ձիլէմէնկին մեկը հարիւր քսան տասակ գրով ու լեզու տալ տված է տերունական աղօթքը. իսկ Տարերս քննելով գտան որ միայն Ամերիկայի մէջ 4000 տեսակէն աւելի դանազան լեզուներ կան, և բոլոր աշխարհքիս վրայ 6–7000 լեզու կայ։

Հ. Ադամ աւետարայ երկիրը չը թողլեցաւ, ինչպէս կ՛ըսեր որ գուխը գաղղիա լեռան վրայ է կ՛ըսեն։

Պ. Վարդապետը կը պրծնի թէ, Նոյ Լերմանտուխտեամբ և որսով Ադամայ սակրները ժողվեց և տապանին մէջ գրաւ Լրհեղեղին ժամանակը, և Լրհեղեղը գադրելէն յետքը՝ այն սակրները նոր որդոցը բաժին ըրաւ, Եմ որդոյն բաժինը՝ Ադամայ գրերն էր, որ այս տալին վիճակ՝ Հրէաստանի կողմը ինկաւ։ Նոյ թէ Նոյ մարգարէական Հոգւով այսպէս ըրաւ, գիտնալով Քրիստոսի մահը այն-

ՈՒՂՂ ԱՒԱՆ ԼԱՒ ԱԴԱՄԱՅ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՒԱՆ ԱՒԱՅ. ԱՀԱ ԱՅՍ ՊԱՏՃԱՌԱՒ ԱԴԱՄԱՅ ԴԼՈՒԽԸ ԳԱՂԱՓԱ Է Ի'ԶԱՒԼ։

Հ. ԱՅՊ ՈՒՐԸՄ ԳՈՂԳՈԹԱ ԸՆՈՒԵԼՈՒՆ ՊԱՏՃԱՌԸ ԻՆՉ Է։

Գ. ՄԱՀԱՊԱՏԱՆԵԼՈՒՆ ԴԼՈՒԽԸ ԿՈՐՈՂԵԼՈՒ ՈՒՐՈՂ ԷՐ, ԵՒ ԿԱՌԱՒԱՆԱՒՈՐ ԿԱՄ ԴԱՂԱԹ ԱԶ Ի'ԶԱՒԷՐ, ՊԱՏՄԵԼՈՒ. ԱԴԱՄԱՅ ԴԼՈՒԽԸ ՀՈՆ ԷՐ։

Հ. ԱԴԱՄԱՅ ԽԱՐՒԼԸ ՆԵՔԻՄԻ՞Ն ԷՐ ԹԷ ՍԱՏԱՆԱՅԷՆ։

Գ. ՍԱՏԱՆԱՆ ՉԸ ԿՐՆԱՐ ՄԱՐԴՈՒ ԽԱԲԵԼ, ԵԹԷ ԱՆՈՐ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՉԸ ՅՕԺԱՐԻ, ԱՐԴ՝ ԱԴԱՄ ՈՉ ԹԷ ԻՐԸ ԱՆԴԷՈ ԽԱՐՒԵՑԱՒ, ԱՅԼ՝ ՆԵՔԻՆ ԱԶ ԿԱՄՔ ԸՐԱՒ ԱՆՈՐ ԲԱԺԻՆ, ՊԱՏՄԵՒԱԿ ԻՐ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ Չ'ԷՐ ՎԱՅԵՐ ՀԱՒԱՏԱԼ՝ ՈՐ ՕՁԸ ԱՊՐԻ (ՎՐԻՆ ՎԱՅ. ԲԱՂԱԼ) ԿՐՆԱՅ ՄԸ ԸՆԴԴԻՄ ԿՐՆԱՅ ԲՆԱՒԷՈ ԽՈՍԱԼ, Չ'ԷՐ ՎԱՅԵՐ ՀԱՒԱՏԱԼ՝ ՈՐ ԾԱՌ ՄԸ ԱՐԱՐԵԼ ԿՐՆԱՅ ՍԱՏԱՆԱԾԱՆԱԼ, ՊԱՏՄԵՒԱԿ ԱԴԱՄԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ՕՁԻՆ ԲԱՆԱՒԱՐԿԱԿ ԵՒ ԽԱԲԵՐԱՅ ԽՕՐՀԷՆ ՀԱՒԱՏՔԻ ՄԸՆ ԷՐ։ ՍԱՏԱՆԱՅԻՆ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԻՄԱՍՏԱԿԱՆ ԽՈՍՔ ՄԸՆ ԷՐ, Ի՛ՆՉ ԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ ՈՒՆԷՐ ԱԴԱՄ՝ ԹԷ ՈՒ ՈՒՆԿՆԷԼ ԻՆԼԱՒ Չ'ԸՆԼԱՒ, ԲԱՅՑ ՅՕԺԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՒԶԵԼՈՒՆ ՀԱՄԱՐ Ի'ԶԱՒԼ Է, ԱԴԱՄ ԽԱՐՒԵՑԱՒ ՕՁԻՆ ԿԱՄ ՍԱՏԱՆԱՅԷՆ։

Ա՛ՀԱ ԱՅՍ ԽՕՍՔԻՆ Ա. ՕՍԿԵՐԲԵՐԱՆ ԱԼ ՎԻՃԱՐՈՒԹԻՒՆ Ի'ՈՒԱՒ ԱՅՍՊԷՍ ԸՍԲԼՈՒ «ՍԱՏԱՆԱՆ ԶԱԴԱՄԸ ՉԸ

ձեռաց, յ'երկիր չը կործանաց, և դրախտին դուրս չը վռնաց, (իբր թէ մեկը կը հարցնէ, և ինքն ալ այսպէս պատասխան կ'ուտայ) չ'է թէ սատանային, այլ՝ Ադամինն էր յանցանքը որովհետև խնձոյն և խորհուլ չ'եղաւ, որովհետև սատանան՝ որ Յուդը այնքան չարչրկաց ու կարող չ'եղաւ զանկայ սատանացնել նէ՝ ինսո՞ւր կրնար Ադամը խաբել, թէ որ Ադամ իր ընտանի վատաթևնուլը ինքզինքն չ'ուզեր (սատանային) ձեռքը մատնած չ'ըլլար»։

Հ. Ս. դիրքը ի'ըսէ, Աստուած Ադամը դրախտին դխնացը հանաց. Ծննդոց. գ. 24. ՚ր պիտի ըլլայ այս տեղը։

Պ. ի'ըսեն թէ հրեշտակին ձեռօք առնըլուեցաւ Աղամ դրախտէն դուրս և բերուեցաւ Քերբերան լուսած երկիրը՝ ուր տեղ որ սուրղմուեցաւ և հան Տեաց և յետոյ թաղուեցաւ։

Հ. Որքան ժամանակ Տեաց դրախտին մէջ։

Պ. Ըմենայն արբանեան հարք կը վկայեն թէ Աղամ վեցերորդ օրը սուրղմուեցաւ և նոյն օրը մեղանչեց։

Հ. Ծառ կենաց լուսած ինչ ծառ էր։

Պ. Շատ դխնայեն զանազան բան կը խօսին, բայց կատարեալ իրական ծառ էր ի'ըսէ, և բնական զօրութիւն մի ունէր որ կենաց երկարութիւն և առողջութիւն ի'ուտար, բայց ոչ յաւերժական անմահութիւն կամ անապականութիւն կը պարգևէր։

Հ. Գիտութեան բարւոյ և չարի ըսուած ծառը ի՞նչ ծառ է։

Պ. Ոմանք թղենի կ'ըսեն և ոմանք խնձորենի, ևայլն, բայց այս եղելութեանց պատմիչը Մովսէս մարգարէն է, որ անկից առէլ հարատած տեղեկութիւն ունեցող չը կայ թէ դրախտին և թէ Աղամայ վրայ, որ պատուղի անուն չը տար, ուրեմն «ծառ գիտութեան բարւոյ և չարի» ըսուածը՝ այս է կրնանք ըսել, որովհետև պատուիրեց Աստուած այն ծառէն չ'ուտել, և թէ որ ուտէր՝ ըսել է ուտողին չար ըլլալը կերևար, անոր համար ըսուեցաւ «ծառ գիտութեան բարւոյ և չարի» որով ճանչի չարն և բարին։

Եւ արդարև հայրապետաց մեր Ս. Ներսէս շնորհալին, այս երկու տեսակ ծառերուն, այսինքն կենաց ծառին և գիտութեան ծառին համար այսպէս կ'ըսէ «գիտութեան ու կենաց «ծառերը՝ ուրիշ ծառերու նման ծառ էին, «բնութեան չորս տարերքներէն գոյացած, ինչ«պէս մեր աչքին առջև եղած ծառերը, բայց «առանցմէ են տարբեր և խիստ գերազիկ ծառեր «էին, և իրենց պատուղները չ'ունք գիտեր թէ «ի՞նչ էին, մեկը կեանքի համար մեռան պըտղո«ւոյն ու չարին գիտութեանը համար, զորոնք «ուտելը Աստուած արգիլեց»։

Հ. Աղամայ գերեզմանը ո՞ր է։

Պ. Ասանգուխին կ'ըսեն թէ Աղամ՝ փեթրոն բուսած տեղը թաղուեցաւ։

Հ. Ի՞նչ եղանակի մէջ աշխարհը ստեղծուեցաւ։

Պ. Ոմանք կ՚ըսեն թէ աշխարհս աշնան եղանակի մէջ ստեղծուեցաւ, որ այն ժամանակը դիշեր և ցորեկ հաւասար կ՚ըլլայ, և այն եղանակին մէջ կը բուսանին մարդուս ապրուստին համար եղած բոլոր պտուղները և բոյսերը, բայց նաւաներէս և ուրիշ երեւելի վարդապետները կը հաստատեն թէ գարնան եղանակի մէջ ստեղծուեցաւ աշխարհս. որ այն ժամանակն ալ դիշեր ու ցորեկ հաւասար կ՚ըլլայ. ինչպէս որ Բրնատան մարդեղութիւնը աշխարհիս նորոգութիւն ալ գարնան եղանակին մէջ եղաւ։

Հ. Երբ գարնան եղանակին մէջ ստեղծուեցաւ աշխարհ և մարդ՝ այն ժամանակը ինչ հասուն պտուղ կար ուտելու։

Պ. Ադամ երկիրը՝ ուր տեղ մարդ. և ամէն ցանկալի կեղտանիները ստեղծուեցան, բարեխառն էր, և այս պատճառաւ՝ գարնան եղանակին մէջ շատ պտուղ կ՚ունենար, և անանոյշ հասնար ալ պտղելու խոտ, մանաւանդ Ադամ երկրաւոր դրախտի մէջ դրուեցաւ, որուն ծառերը միշտ պտղալից էին։

Հ. կան ոմանք որ աշխարհս չ՚ի յաւիտենից է կ՚ըսեն, և ոչ թէ ժամանակի մը մէջ ստեղծուած, այսպէս բառնալուն ինչ պատասխան տալու է։

Պ. Այսպէս բառնալը յայտնի է որ տալը դէպի վկայութիւնը չեն ընդունիր պէտք է որ

բնական կերպիւ. պատասխան տանք։

Յաւիտենական անոր կ'ըսուի՝ որ վախճանութիւն չ'ունի, որուհետև վախճանութիւնը՝ ապահաստնութեան սկիզբն է, և աշխարհս մէջ կը տեսնանք որ միշտ վախճանութեան մէջ են, և որուհետև կը վախճանին՝ հարկ է որ օր մըն ալ պակասին, և ապականացու մարմին մը՝ չը կրնար յաւիտենական՝ անսկիզբն և անապական ըլլալ, ուրեմն այս՝ ապականացու աշխարհս ալ՝ յաւիտենական չ'է, այլ՝ ժամանակի սահմանաւ։

Նաև յաւիտենական անոր կ'ըսուի՝ որ իր գոյութիւնը իրմէն եղած կ'ըլլայ, և ուրիշէն պիտի չ'ունենայ, բայց աշխարհս մէջ եղածները՝ ամենքն ալ՝ մէկը մէկէն յառաջ կ'ուգայ, և ոչ մէկ ինքզինքն իրմէն. ուրեմն յաւիտենական չ'են այլ սկզբնաւորեալ։

Նաև մարդս աշխարհիս գլխաւոր մասն է, և ուրիշ սահմանուածներն անոր համար սահմանեալ են, և յայտնի է որ մարդս ժամանակաւոր է և ոչ յաւիտենական, վասն զի այս ամբողջութիւնը՝ երկիր չը կայ, և միւս բոլոր սահմանուածները՝ որ երկին համար սահմանուեցան, անոնք ալ ժամանակ եղաւ՝ որ չը կային, ուրեմն ամէնքն ալ ժամանակաւոր են և ոչ յաւիտենական։

Հ. Ուրեմն քանի՞ տարի է աշխարհիս սահմանեալն մինչ հիմա։

Գ. Հին խմբագրութիւնք՝ ինչպէս Քաղդէացիք,

եղիպտացիք ևն. քան հազար կամ երեսուն հազար տարվան և կամ ալ աւելի ժամանակի տեղեկութիւն կը հանարվին այս աշխարքը, որ բոլորն ալ առասպել է, և առնոց մէկ քանիսին քաղաքը լուանն մէկ շրջանն է, որ է մէկ ամիս և տասնհոգի հազարաւոր տարիներ կը համրեն: Մեզի գիտնալու ակնարկ եղածը՝ հօմանանանից Թուականն է, որ բոլոր քրիստոնէից տղերքը՝ իրենց գիտնականներով և իմաստուններով այնոր կը հետևին, որոնք՝ ի սկզբանէ աշխարհի մինչև այս տարի (1871) կը Թուին 7295 տարի:

Հ. Օրերը գիրքը կ'ըսէ, Թէ Աստուած վեց աւուր մէջ տեղեծից բոլոր աշխարքս, այդ վեց օրը ինչպէս իմանալու է:

Պ. Հաստրակաց կարծիքն այն է որ աւուրը գրոց քաղքին նման այդ վեց օրերը՝ բնական օրեր են, առաջին օրը՝ երկինք և երկիր և լոյս տեղծուեցաւ» երկրորդ օրը՝ անձրևային ջուրը գետերուն և ծովին ջուրէն զատուեցաւ, մէջերնին օդը հաստատելով. երրորդ օրը՝ ջուրը միատեղ ժողվելուեցաւ, և ծնողական ցամաքը բոյսերով և տունկերով զարդարեց. չորրորդ օրը երկնային լուսաւորները տեղծեց. հինգերորդ օրը ձուկերը և Թռչուններըը տեղծեց. վեցերորդ օրը անասուններըը և մարդը տեղծեց. եօթներորդ օրն ալ՝ հանդիստ բան Աստուած:

2. Շինելը քաւիչէն աւելի ժամանակի կարօտ է, ինչու՛ համար Աստուած վերց օրէնքը և երկիրը ստեղծեց. և Ընտեղեղով ա- պականած ժամանակը՝ 40 օր տևեց կործանու- մը։

Պ. Վարպետերուդ կ'ըսեն թէ, ըս- տեղծելը ղարմանքեան գործ է, որ Աստուծոյ բնութեանը յարմար է, ինչպէս որ Դաւիթ կ'ը- սէ «ասացեր՝ թէ աշխարհս ղարմանքեամբ շի- նեցեր» բայց ապականելը պատուհասի գործ է, որ Աստուծոյ գթութենէն օտար է, վասն որոյ մարգարէն կ'ըսէ Աստուծոյ համար «անոր սրտմտութիւնը՝ օտար կերպով կը գայ. և դառնութիւնը (բարկութիւնը) օտար կերպով կը հասնի աշխարհքս վրայ»։

2. Աստղաբաշխները և կամ մոգերը ասոնք գրոց մէջ՝ երբեմն ապագայ այսինքն հոգի ըսելով բաներու վրայ կը խօսին, ինչպէս այս ինչ տարի սղութիւն պիտի ըլլայ. կամ առա- տութիւն կամ պատերազմ կամ խաղաղութիւն են. ասոնք ճշմարիտ են։

Պ. Մարդ ներսէս չնորհալին աստեղագիտոյ համար ցիտուց որպէս անուն գրքին մէջ կ'ըսէ «երբեմն խօսածնին կը կատարուի երբեմն ալ պարապ տեղը՝ խօսածնին չը կատարուիր» և նմանելով կ'ըսէ, թէ՝ մեր աստղաբաշխները երկնից օրհոյցներուն ճշմարիտ գուշակութիւն չ'ունին, այլ գուշակութիւն կ'ընեն ապագայից

վրայ լուանին նոյնպես ժամանակը, վասն զի այն ժամանակը նշանաւոր վտիտութիւններ կ'ըլլան, և կը նեղուցուին մանաւանդ վրայ։

Ուրեմն ըսել է որ առաքեալներուն գրոցը երբեմն կը յարմարի՝ երբեմն ալ չը յարմարիր, որովհետև առանցայ ջրոտութիւնը յօժարութիւն կ'ուզէ՝ բայց բռնութիւն չը կրնար ընել։

2. Այդ բառիս կ'երևայ որ առաջները կամ հնայեան լուսաւոր մարմինները՝ մարդուս վրայ չ'են կրնար ներգործել։

3. Բնաւ, չ'են կրնար, վասն զի երբ Աստուած ներգործին լուսաւորը առեղծեց՝ մանաւանդ արևն ու լուսինը, ըսաւ «լինիլ՝ ի նշանս» իբր դանազանութեան տարբերութեան և ցրտութեան, անձրևի՝ պարզութեան, եղանակաց և ժամանակաց և ոչ թէ մարդուս վրայ վտիտութեան տալու կամ անձնիշխանութեանը տիրելու։ վասն որոյ Աստուած մարգարէին բերանովը ըսաւ «երկինքին նշաններէն մի վախնաք» ո՞րովհետև հեթանոսները կը կարծէին թէ աստղերը կամ երկնային լուսաւոր մարմինները մարդուս բարուցը վրայ կրնան ներգործել, և պարզևն ու պատիժը անոնցմէ առած կ'ուզուի, ան պատճառաւ իբր Աստուած կը պաշտէին զանոնք։ Թէ որ լուսաւորք մարդուս բնութիւնը վրայ կրնան ներգործել նէ, ահա նաև ու Յակոբ մէկ մօրէ և մէկ ժամանակ միասին ծնան, ինչու՞ մէկը չար և միսը բարի եղաւ, մէկը անմաղ ու տգէղ։ և

միւսը մաղոտ և կարմրագոյն, ուրեմն առաղերը մարդուս կամքին և անձնիշխանութեանը վրայ չ'են կրնար ազդել։

Հ. Մարդաբէական դրոյց մէջ երբեմն արեգական և լուսնի խաւարումն կը կարդանք, ինչպէս Ես՝այ Ժ.Գ. 10։ Յօէլ. 9. 15։ Արդեօք իրականապէս խաւարէին։

Պ. Կուանեվիտա՝ ճրագ մարդաբէական բառած կանոնադը մէջ կ'ըսէ «ոչ արդարև խաւարեցան կամ անկան։ Այլ նախ՝ ցոյց տալու համար կատարման և կործանման առաքելութիւնը որ այնքան մեծ եղաւ, որ արեգակն և լուսին և առաքեալք Քարէլացւոց և Երուսաղէմացւոց անդամ ստիպուեցան խոստովանելու խիստ չատ պիտի յիմարցնէին մինչ դի արժանի պիտի ըլլար խաւարել և անկանել բառերու։

Երկրորդ այնպիսի առիթով կործանումը օրինակ եղաւ աշխարհի կործանման, երբ արեգակը և լուսինը խաւարելու և երկնից աստղերը ինալու են։ Մտթ. ԻԴ. 35։

Բայց Քրիստոսի խաչելութեան ժամանակի լուսատուց խաւարումը որ կ'ըսվի, իրականապէս կատարվեցան սուրբ աւետարանին անսուտ վկայութեանը համեմատ։

Հ. Ինչո՞ւ Քրիստոսի երեսունները և սղոսունները և չար դաշնները սուղծեց Աստուած։

Պ. Վնասակար և անվնաս կենդանեաց արարիչն է նոյն ինքն ամենակարողն Աստուած, վը-

ճաշակար կենդանիներէն ոմանք պէտք կ՚ըլլան ինչպէս օձէն՝ ախտ բժշկութեան համար թիւրեաք կ՚առնեն. ոմանք զարդ են աշխարհիս, ոմանք երկիւղ կ՚ուտան՝ որ մարդուս հպարտութիւնը խոնարհի. այսպէս կը պրէ եղնիկ դողբայի հայ վարդապետը:

Հ. Սուրբ և անուրբ կենդանեաց խորհուրդեան պատճառը ի՞նչ է որ հին օրինաց մէջ կար:

Պ. Երեք պատճառ կ՚ուտան նախնիք. նախ՝ սուրբ կենդանեացմէ մարդոց եղած օգուտը, և անուրբ կենդանեաց՝ մարդոց տված վնասը: Երկրորդ. և բարոյական կերպով պատճառն այս է որ Իսրայէլացիք սիրած կենդանեաց բնութեանն ետ քաշուին, ինչպէս խորին զգպրապատութեանէն (բնութեանէն) չանը և նպաստաւկեն անառակութեանէն, ուղղին ախտակութեանէն են:

Երրորդ և խորհրդապէս՝ որ Աստուած իւր սուրբ ժողովուրդը հեթանոսներէն զրաշէ, զանք անխառն բոլոր կենդանիներն ալ կուտէին. այս վիտքը Ղեւտացւոց գրքին մէջ գրված կը նայի. ի. 24 և հմ. 26:

Հ. Արդեօք չորին ալ ուրիշ կենդանեաց հետ վերցրուդ աւնր մէջ առեղծվեցաւ աստուածմէ:

Պ. Չորին կատարեալ կենդանի չը սեպուիր այլ խառնած են. վասնորդ այն օրը ուրիշ կեն-

դանաց հետ առեղծուեցաւ , այլ ժամանակէ մը ետքը՝ ձիւն և կրան զուգաւորութենէն յառաջ եկաւ :

Հ. Մարդուս մեղանչական ըլլալը բնական բան մի է թէ՝ ետքէն առաջ եկած բան մը :

Պ. Վարդապետը եկեղեցւոյ բնական չէ կ'ըսեն , մանաւանդ Ս. Գրիգոր Նարեկացին Աստուծոյ հետ խօսելով այսպէս կ'ըսէ , « մի՛ ոք ես անունս բան մը (մեղանչական ըլլալը) ինձի կամք ցուցուցի , դու ոչչաւ աւելի ցուցուցիր քու բնական բարերարութիւնդ » , որ Յակոբ աստուածպաշտն մեկնելով այսպէս կ'ըսէ , « ես ոչ քու առեղծեալ պատկերդ եմ , և անկայութենէ հերոսով սիրեցի մեղքը՝ որ բնական չէ լինի , դու՝ Աստուած իմ , ոչչաւ աւելի ցոյց տալու ես ինձ քու բնութենական և բարերար ողորմած կամքդ » :

Հ. Քանի մարդու անուն կայ որ Աստուած ինքն է դրեր :

Պ. Վեց , ինչպէս կը վկայեն վարդապետք , նախ՝ Իսմայէլ . Ծննդոց ԻԶ . երկրորդ՝ Իսահակ , Ծննդոց ԻԷ . 19 . երրորդ՝ Սողոմոն , Բ Թագ . ԻԲ . 25 . չորրորդ՝ Յովսեա , Դ . Թագ . ԻԳ . 1 . հինգերորդ՝ Յովհաննէս , Գործ . Ա . 13 : վեցերորդ՝ Յիսուս , Գործ . Ա 31 :

Հ. Մարդուս մահը քանի տեսակ կը պատահի :

Պ. Չորս տեսակ է , բնական , պատահական , անձնասպանական և նախախնամական :

Բնական մահը ծերութեան մահն է, որ ըզ-դայտրանայ զօրութիւնը կը թուլնայ, և չար տարերայ բաղադրութիւնը կը քակվի, և հոդին մարմինէն կը բաժնվի, ինչպէս էին Աբրահամու՝ Իսահակայ՝ Յակոբայ և այլոց մահերը, որոնց համար Ս. Գիրքը կ'ըսէ, «ծերացնալով և օրերնին լեցնելով մեռան և իրենց հայրերուն քով դնացին»:

Պատահական մահը վտանգէ առաջ կուգայ՝ գազաններէ, չարին մէջ խղդուելէ և ուրիշ բաներէ, որոնք անզգուշութենէ մարդուս կը պատահին:

Անձնիշխանական մահը երկու կերպ է, բարի և չար. բարին՝ մարտիրոսայ մահն է, որ անձնիշխանական կամօք՝ իրենք զիրենք կը մատնեն Աստուծոյ սիրուն համար, և որոնք թէպէտ մարմնով կը մեռնին, այլ հոգով կը կենդանանան. չար մահը՝ Աքիտոփէլի և ծոգոյի մահուանը նման է, և անձնասպան և հակառակ Աստուծոյ կը համարվին:

Նախախնամական մահը շատ պատճառներով կ'ըլլայ: Աստուած անզգալ մեղաւորին մահ կուտայ՝ որ մեղքը չը շատնայ, և երբեմն չար դրծերուն թոխարէն՝ անժամանակ մահ կուտայ, կամ մէկը արդար կ'ըլլայ և ճգնութեամբ՝ նեղութեան մէջ ձգած կ'ըլլայ իր անձը, Աստուած անոնցմէն մահ կուտայ՝ որ հանգչի, կամ զի այնուհետև մարդուն մահը հանգստութեան

է : Կամ թէ որ Աստուած պատիժ տալու ըլլայ երկրի մը, նախ արդարը մահուամբ կը վերցընէ, որ մեղաւորաց հետ պատիժ չը քաշէ, կամ անոնց համար աղաչանք չ'ընէ : Նաեւ Աստուած մահ կուտայ մանուկ տղայոց որ մեծնալով մեղաց մէջ չ'իյնան, այլ անմեղ մեռնին և իրենց ծնողացը չար գործքերուն մասնակից չ'ըլլան, կամ ծնողքները իրենց կակիծովը լրացուցին :

Թողումք տրիշ կերպ պատճառներըը՝ որ միայն Աստուած գիտէ, մեք այսչափ գիտեմք որ Աստուծոյ խնամքը բարի է և բարի ի'ընէ և չար չը կամիր, թէպէտ մեզի չար ի'երեւնայ թէ արդարոց և թէ մեղաւորաց մահը, վասն զի անդադարաց ի'երեւնայ որ արդարը մեռաւ, բայց արդարոց հոգին՝ խաղաղութեան մէջ է ի'սկ Սողոմոն, մեղաւորը՝ որ մեռնի, կը դատըի մեղք գործելէն և այն ալ բարւոք մըն է :

Հ. Վերջին վայրկեանին մէջ եղած պղծութիւնը ընդունելի ի'ըլլայ :

Պ. Պէտք է Աստուծոյ անյիշաչարութիւնը մեծատածել, նաեւ պէտք է դղջացողին դղջման կերպին նայիլ, որովհետեւ թէ որ երեկլան ժամը տասնըմէկին այդին եկող գիշեհերը՝ առաւտան եկողներուն հետ հատատար վարձք առին, Մատթ. Ի. 9. Ինչ կրնանք ըսել վերջին ժամուն դղջացողին, միայն այսչափ պէտք է դիտնալ, որ չ'ըլլայ թէ մէկ մարդ մը այս խոս-

յուսալով այն ժամանակին ձգէ պղծումը, մինչ դիտոյ որ մահը երբեմն յանկարծ ալ կը պատահի, և ինքն ալ անպատրաստ կը գտնուի և անոյշ կը կտրուի, ինչպէս Ղուկասու աւետարանին մէջ ԺԲ. 16. ըսուած է մեծատանը՝ որոյ անդաստանը իր բերքերը տալեր էր, կը մտածէր թէ ինչ ընեմ, ուր լեցնեմ այսքան պտուղները, շուտ մը կը քակեմ կ՚ըսէր, և կը մեծցնեմ և այն տեղ կը լեցնեմ, և իմ հաճոյքս կը նայիմ, և երբոր այս մտածմունքները կ՚ընէր վրայ էր, այն գիշերը հոգին տալու։

Հիմայ՝ մեր խօսքին նայիմք, եթէ այն վերջին շունչին ժամանակը խելքը գլուխը գտնելով վերջին պղտիկ՝ և այնպիսի դիտաւորութիւն ըրած որ եթէ Աստուծոյ պատմութիւնը չը մոռնալով առողջանայ նէ այն մեղքերը չի պիտի գործէ և իր չար սովորութիւնները պիտի ձգէ, այսպիսին թողութեան արժանի չ՚ըլլար չենք կրնար ըսել, ապա թէ ոչ խոստմանութիւնը ոչինչ կ՚ըլլար։

Հ. Նոյն տապանին մեծութիւնը որչափ էր որ մէջը այնչափ կենդանիներ պատսպարվէցան։

Պ. Ս. Գրոց խօսքին նայելով, չորս հարիւր կանդուն հազար քառակուսի կանդուն էր, որ ըսվ՚ուտու երեքհարիւր կանդուն տապանին երկայնութիւնն էր, հինգ կանդուն լայնութիւնն էր, եթէ այս երկու թիւերը իրարու հետ բազմապատկես՝ կ՚ելլայ տասն և հինգ

հազար քառակուսի կանգուն, և այս թիւն ալ երեսունով բազմապատկէ՝ որ տապանին բարձրութիւնն էր, կ՚ելլայ չորս հարիւր յիսուն հազար կանգուն։ Եթէ տապանին երկայնութիւնը՝ լայնութիւնը և բարձրութիւնը այսչափ ըլլալը հասկընալ կուզես՝ Ծն. Ծննդոց Ձ. 15։

Հ. Դեւերը մահկից են, որոնցմով կը սպասքրմին մարդիկ։

Պ. Վարդապետ, ի՚նչն է եթէ երբ Աստուծոյ հրեշտակները երկինքէն դուրս հանեց, անոնցմէ շատերը դժոխքէն դուրս ձգեց մինչեւ դատաստանին օրը, ոմանք երեսներու մէջ և ոմանք չէն տեղերու մէջ մնացին, կամ օդին մէջ իրենց բնական զօրութեամբը ձգեց. բայց ասոնցմով չը հպարտանալու համար ներսատուց, նախ անոնց զօրութիւնը խափանեց, որ չը կրնան դործածել մինչեւ Աստուծմէ թոյլտուութիւն չ՚ըլլայ, երկրորդ՝ անոնք վախ մը դրաւ վրանին՝ որ ոչինչ բանէ մը կը վախնան։

Հ. Դժոխքը ո՞րը տեղն է։

Պ. Որովհետեւ հրեշտակները արարչագործութեան առաջին օրը ստեղծուեցան, և շատ չանցաւ՝ մեղանչեցին, ուստի երկինքէն դժոխքը թափուեցան, ապա՝ յայտնի է որ դժոխքն ալ առաջին օրը ստեղծուեցաւ, և ինչպէս որ նոյն օրը լոյսը խաւարէն զատուե-

ցաւ, այսպէս ալ հրեշտակները սատանային-ներէն զատուելուն, չնորհքը մեղքէն զանազանելուցաւ, և փառքը պատիժէն բաժանելուցաւ:

Հ. Դժոխքին հուրը արդեօք ինչ կերպ հուր է:

Պ. Գրիգոր Նարեկացին Ս. Աւետարանէն առ-ներով այսպէս կ'ըսէ «որդը՝ անմահ ըսիր, կըրակը՝ չը մարուելիք և կշտամբանքը՝ անվախճան», ևոբէ կդ: Այս խօսքը սա պէս կը մեկնէ Յակոբ սատուածաբան, այն տեղ եղած որդերը մարմին ուտելու և հատցնելու համար չ'են, հապա՝ խածնելու և ցաւցնելու համար: Բայց կրակը պետք է և յաւիտենական. որ դերբնական զօրութիւնով չը մարիր, որով մեղաւորները առանց պատուհասի կը տանջուին:

Թէ որ ըսես, որդերը կ'ուտեն, և կրակը կ'այրէ, ուրեմն տանջուածները կ'ապաւին, այսինքն կը հատնին. այդպէս չ'է, հատցածին կամ պակասածին տեղը շուտ մը կը լեցուի. վասն զի թէ որ Դժոխքին կենդանիները մարմինը աղէ ատձան եղաւ, եթէ կատր մը կտրըվի անկից, կ'ըսուին թէ իսկոյն տեղը կը լեցուի, արդեօք այսպէս ալ Աստուած չը լեցնէր այն որդերուն կերուած մարմինը: Ուրեմն պէտք է դիտնալ՝ որ որդը այնտեղ խածնելու և ցաւցնելու համար եղած է, նոյնպէս ճշմարիտ կրակն ալ հոն կը վառի չ'է թէ հատցնելու՝ հապա այրելու համար:

Հ. Տարեմուտին, այսինքն կաղանդին օրը ինչո՞ւ կը պատուեմք։

Պ. Ա.անդուխտեամբ այսպէս պատմութիւն մը կայ, յայտնի է որ՝ աշուրակաշինութեան ժամանակը եօթանասուն և երկու հոդի էին պլսաւորները, և մեր ազգին պլսաւորը որ Հայկն էր, տարեմուտին օրը Հայաստան հասաւ, և այն օրը հանդստանալով՝ ուրախութեան ոճն կատարեցին, և անկից վինչեւ այսօր սովորութիւն մնայ մեր ազգին մէջ, այն օրը պատուել։ Բայց Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետութեանը նայելով այսպէս դատեմք որ՝ Ս. Բարսեղ Հայրապետին աղօթքը՝ անօրէն չար Յուլիանոսը սատկեցաւ և ամեն տարի այն օրը խնդացաւ անոր սատակիլը, վասն որոյ քրիստոնեայք ուրախութեան ոճն կատարեցին, ուստի վինչեւ հիմայ այն ուրախութեան յիշատակութիւնը կ'ընեմք։ Տես Յայտնութեան մէջ, յունվարի Ա։

Հ. Ագարիայի վտքը թուականն ինչ է։

Պ. Ամեն ազգաց թուականները՝ իրենց ազգին վերաբերութեամբ մէյմէկ երեւելի իրողութիւն ունին, և անկից սկսած է այն ազգին թուականը, բայց այս Ագարիայի վտքը թուականը՝ այնպիսի նշանաւոր իրողութիւն մը չ'ունի, ուստի ֆոթը կ'ըսէի, և միայն Ջուղայեցւոց կը վերաբերի և ասոնցմէ Ջուղայեցի Ագարիայէն սկսած է։ Վասն զի 'ի թուականս

Հայոց ՈՒ (հազար յիսուն) պարսից Շահաբաս Ա. թագաւորը՝ վատրաբականի Ջուղա քաղքէն շատ մը Հայ գերիներ առաւ տարաւ Պարսկաստան և Սպահան քաղքին մօտ նոր Ջուղա անունով քաղաք մը շինել տալէ և ան Հայերը հոն բնակեցուց. և երբ ատոնք հոն տեղը հանդստացան նէ՝ հանդէս և տրախտաթխուն ըրին, և նոյն Ագարիա անուն մարդն ալ վրայ թռաւական բսխածը հաստատեց, որպէս զի իմանան թէ քանի տարի բնակեցաւ ան նոր Ջուղա քաղքին մէջ, վասն որոյ մեկնի Ջուղայեցի կը գործածեն այս թռաւականը:

Հ. Բազդ կամ ճակատագրութիւն բսխածը ինչ պէտ է ըլլայ՝ որով ոմանք յաջողութեան մէջ կ'ըլլան և ոմանք թշուառութեան մէջ:

Հ. Հեթանոսները ըսին թէ այդ բազդը կոյր չատուած մըն է, որ մարդուն ոչ բարին կը նայի և ոչ չարը, հապա չար մարդիկը յաջողութեան կը լծէ, և բարիները ձախորդութեան կը տանի. ոմանք ալ այդ բազդին ճակատագիր կ'ըսեն, ինչպէս որ մինչեւ հիմա անանկ կ'ըսեն ասոնց քրիստոնեայներն ալ: Աստուածաբանները՝ առեղծուց և ըստուգուց ուսուցանողները կ'ըսեայ կ'ըսէին, բայց ասոնց ոմանքն ալ չինծու առատել կը հաւատային արբասան հարց, որոնցմէ ըստ մարգարէին Աստուած է միայն որ ամէն բանի պատճառ և կառավարող է. Ս. Ղ. Լ. 16:

Արդ՝ այս յայտնութիւնքներըդ համ ձախորդութիւններըդ պատահմունք կը համարիլին՝ չէ թէ Աստուծոյ համար, որովհետեւ ամեն ըլլալիք բաներըդ անոր յայտնի են, հապա մեզի համար պատահմունք կը համարիլին, վասն զի մենք ըլլալիք դէպքերն առաջուց չենք գիտեր։

Հ. Երբ Իսրայէլացւոց ազգը Եգիպտոսի դռներնէն պաուելով անապատը ելաւ, ճամբան մէջ Աստուծոյ վրայ տրտունջ ընելնուն համար, օձեր ելան վրայնին՝ որ գիրենք չարդէին, Մովսէս ազաչեց Աստուծոյ և Աստուած հրաման ըրաւ Մովսէսին՝ որ պղինձէ օձ մը շինէ, և նշանակի վրայ դնէ, որ վիրաւորեալները անոր նայելով բժշկուին, յետոյ այդ օձը ուր ճարայ. թուոց ԻԱ. 8։

Գ. Այդ պղինձէ օձը՝ առաջ Իսրայէլացւոց կը պահէին երբեմն Աստուծոյ բարերարութիւնքը յիշատակ, բայց յետոյ սկսան երբեմն կուռք պաշտել և զոհ մատուցանել. ետքը այն օձը Եզեկիա թագաւորը չարդեց և անունը անգամ մատնելու համար՝ հրաման ըրաւ որ անոր կըտրվանքին նէհէլթան ըսվի, որ պղինձէ կտոր ըսել է, Դ. թագ. ԺԸ. 4։

Հ. Ժամացոյցը (սահաթը) ուսկից հնարուեցաւ։

Գ. Հին Նահապետք ամենէն առաջ օրուան ցերեկը և գիշերը քսան և չորս մասի բաժնեցին և ամեն մէկուն անունը դրին, բայց

ժամացոյցը՝ ըստ Ս. Գրոց եգեկիա թագաւորին հայրը Աքազ թագաւորը հնարեց։

Հ. Քնարները և նուագարանները ածակից հնարուեցան։

Գ. կայէնի յեղէն ծնած Յոբալ անուն մարդը հնարեց, ՟ծննդ. Դ. 21։

Հ. Երկաթագործութիւնը ոմ հնարեց։

Գ. Ղամէքին Թօփէլ անունով տղան, ՟ծննդ. Դ. 22։

ՎԵՐՋ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍԻՆ

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԽՈՐՀՐԴՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Ա. Հ. Պատարագիչ քահանային՝ պահարանը մոմելը՝ ինչ կը նշանակէ և ինչ խորհուրդ ունի :

Պ. Ս. նոյնին հոգւով սրբով յղանալը կը նշանակէ և Քրիստոսի Ս. վերնատունը մոմերու խորհուրդը ունի :

Բ. Հ. Պատարագիչ քահանային զգեստաւորելը ինչ կը նշանակէ և ինչ խորհուրդ ունի :

Պ. Ճխտաս Քրիստոսի ծնունդը կը նշանակէ, և աշակերտաց առքը լուալու խորհուրդը ունի :

Գ. Հ. Պատարագիչ քահանային զգեստաւորելուն լմննալը ինչ կը նշանակէ և ինչ խորհուրդ ունի :

Պ. Ճխտաս Քրիստոսի խանձարուրքը կը նշանակէ, և Ս. վերնատանը մէջ աշակերտներուն առքը լուալէն ետքը նորէն զգեստները հագնելուն խորհուրդը ունի :

Դ. Հ. Դալկութեան խորհուրդ խորին երգերը ինչ կը նշանակէ և ինչ խորհուրդ ունի :

Պ. Հրեշտակաց «փառք ՚ի բարձունս» երգերը մոգերուն գալը և Ճխտաի Թլփատութ-

թիւնը կը նշանակէ, և Ս. վերնատունը մէջ էր Երուսաղէմ ու տիւնը բաշխելուն խոհրդը ունի, որ տեղ Գլխատա կոչի, «եւ ի հօրէ և եկի յաշխարհ»։

Ե. Պատարագիչ քահանայ՝ սեղանին առջեւը գալ և ժողովրդին առջեւ ձեռքերը լուալ, կը նշանակէ թէ պէտք է առաջ ամէն կերպով աւելի լալ և մեղքերէ սրբուիլ, ու խաչը Աստուծոյ ճօռանալ, նաեւ ժողովրդին այդքան առջեւ ձեռքը լուալը՝ այն է որ անոնք ալ ըստ պատշանաւ և մաքուր կերպով Աստուծոյն Ս. խորհրդոյն հաղորդ ըլլան։ Նոյն երկրորդ անգամուն մատներուն ծայրը լուալը կը նշանակէ թէ՝ ինչպէս որ Գլխատա աշակերտներուն ոտքը (որ մարմնոյն վերջին մասն է) լուացած և ետքը իր Ս. մարմինը առնոյ տալու, այնպէս ալ Աստուածային Ս. խորհուրդը կատարողը պէտք է որ իր առջեւն ալ ամէնէն աւելի սեղանաց կերպերը մաքրէ, և անոնք Աստուծոյ դիմացը կայնի։

Զ. Քահանային Աստուծոյ ընծայ բերել ըսելը՝ Գլխատա Եդեսիոյ տանիլը կը նշանակէ, և Ջիմեոնեայց լեռը երթալուն խորհուրդը ունի։

Է. Քահանային Ս. սեղանին առջեւը գալը՝ Յիսուս Գլխատա՝ և տաճարին գտնուելը կը նշանակէ, և գիշերոյ պատահելը մտնելուն

խորհուրդը ունի ; ուր ոեղ Քրիստոս՝ աս Հայրն Աստուած ազօթք ընելով ըսաւ որ՝ Հայր, թէ որ կարելի է նէ, այս բաժակը (չարչարանքը) ինէ հեռացուր, ապա թէ ոչ, քու կամքդ եղայ :

Ը. Երբոր քահանայն կ'ըսէ « Ի յարկիս աբրահամեան » և սեղանը կը համբուրէ, կը նշանակէ թէ ցնաւս Քրիստոս ծորդանան գետին մէջ մկրտելու եկաւ և Հայր Աստուած ալ վկայել ըսելով թէ « դա է որդի իմ սիրելի » : Եւ աս խորհուրդը ունի որ՝ ծուդա պարտէզին մէջ Քրիստոսը հաստատելով մատնեց :

Թ. Երբոր դպիրները ձեռք կ'երկնեն, կը նշանակէ ծալհաննէս Մկրտչին այն խօսքը որ ցնաւսի համար ըսաւ, « ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի » . և աս խորհուրդը ունի որ Քրիստոս անուշ լեզուով խօսելու բանաւորաց հետ :

Ժ. Երբոր պատարագիչ քահանայն սեղանին բոլորտիքը կը խնկարկէ և բեմէն կ'սկսի ժողովուրդին մէջ կը պտըտի (որ ան աստեն դպիրք ալ ուր վեր կ'երկնեն) . կը նշանակէ թէ ցնաւս լեռնէն կ'սկսաւ և ժողովուրդին քարոզել ըսելով, « ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից » : Իսկ քահանայն նորէն բեմն երթալը կը նշանակէ թէ Քրիստոս նորէն լեռը երաւ, և հոգւով աղքատ եղողներուն երանի տուաւ : Այս երկուքիւնը առաջին՝ ա

խորհուրդը ունի որ Քրիստոսը կապած Աննա քահանայապետին և անկից ալ կայիափային առնելը տարին : Իսկ երկրորդ խորհուրդը սա է թէ, Քրիստոս երկինքէն յերկիր եկաւ, և ետքը նորէն երկինք գնաց, ինչպէս որ ինքն ալ ըսաւ, «Ելի՛ ի հօրէ և եկի յաշխարհս, և դարձեալ թողում զաշխարհս և երթամ առ Հայր» :

ԺԱ. Երբոր պատարագիչ քահանային ի՛ լսէ, զգնեալ ընծայարանին հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ կը նշանակէ Քրիստոսի այն խօսքը թէ «խնդրեցէ՛ք նախ զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւն նորա» : Եւ սա խորհուրդը ունի որ Քրիստոս կայիափա քահանայապետին առջեւ սա խօսքը ըսաւ, «յայսմ հետէ տեսանիցէ՛ք զորդի մարդոյ, նստեալ ընդ աջմէ զօրութեանն» ևայլն :

ԺԲ. Երբոր քահանային խոպոպը՝ւն՝ը կ՛լսէ, կը նշանակէ թէ Քրիստոս ձեռքը երկնցուց և բռնաւորները պրծաց, և այս խորհուրդը ունի որ, Հրեայները զինքը ծեծեցին, երեսին թքին և ըսին «դիտցի՛ր նայինք թէ քեզի զարնողը ո՞վ էր» :

ԺԳ. Երբոր քահանայն կ՛լսէ Տէր Ա՛ստուած ձէ՛ն խոպոպ՝ւն՝ը կը նշանակէ թէ Քրիստոս հարեւրապետին ըսաւ. եղիցի քեզ որպէս հաւատացեր, նաեւ Պետրոսի ուրացութիւնը :

ԺԴ. Երբ քահանայն նորէն խոպոպ՝ւն՝ը լուաւ, կը նշանակէ թէ Քրիստոս ծուռն ուրայ

հոլին սատեց և խաղաղութիւն եղաւ, և այս խորհուրդը ունի որ՝ Քրիստոս դարձաւ Պետրոսին նայեցաւ չարչարուած առնելը, և Պետրոս ալ դուրս ելլալով դառնապէս լացաւ ուրացութեանը համար։

ԾԵ. Երբ Ս. Աւետարանը սեղանին բոլորտիքը կը պտըտցնեն կը նշանակէ թէ, Քրիստոս հաւրեւրայեան առնելը դնաց, և անոր աղխիկը ողջնալու, և սա խորհուրդը ունի որ Հրեայք աւուղ ուրբաթ օրը՝ գՅիսուս Պիղատոսին տալին։

ԾԶ. Երբոր դպիրք մարդարէից և առաքելոց դիրքերը կը կարդան, կը նշանակէ Քրիստոսի այն խօսքը թէ՝ «ով որ իւր խաչը չ'առնէր և իմ ետեւէս չի գար, ինձի արժանի չէ»։ սա խորհուրդը ունի որ՝ Յիսուս Պիղատոսի առջեւ լուռ կեցաւ։

ԾԷ. Երբոր Ս. Աւետարանը կը կարդան՝ Քրիստոսի այս խօսքը կը նշանակէ թէ՝ «կամ առարէք դծառն բարի և պտուղ նորա բարի, կամ առարէք դծառն չար և պտուղ նորա չար»։ Եւ սա խորհուրդը ունի որ՝ Քրիստոս Պիղատոսի լուռ թէ՝ «Ամենայն որ՝ ի ճշմարտութենէն է՝ ձայն իմոյ լսէ»։

ԾԸ. Երբոր հաւատամքը կ'ըսեն, կը նշանակէ Քրիստոսի այն խօսքը թէ «ով որ՝ ի Ջրոյ և ի Հոգւոյ չը ծներ, երկնից արքայութիւնն ալ չը կրնար մտնել»։ Նաեւ կը նշանակէ թէ ա-

*ղանք որ այս Հատատամքին մէկ մասէն կը ծրա-
ւին, անանկներէն Քրիստոսի մարմինը տեղով
խոցած կ'ըլլան։*

*ԺԹ. Երբոր ապիսատը կ'երթէ և Նա հատոփով
պատռտո՜ւ, և պատարագիչ քահանայն ալ ծա-
ծուկ կ'առնէ, կը նշանակէ թէ Յիսուս Քրիս-
տոս դիւրութեամբ լեռը եկաւ և առանձին առ-
թեց. իսկ խորհուրդը սա է որ Հրեայները պո-
ռային թէ խաչեցէ (թող խաչուի)։*

*Ի. Երբոր պատարագիչ քահանային սպաս-
ատրը վար կ'առնեն, և ընծայիւ կը պատրաստ,
կը նշանակէ թէ Քրիստոս թաղիչ լեռանը վե-
րայ ալլակերպեցաւ, նաեւ կը նշանակէ այս
խօսքը որ ըսաւ թէ «մարդուն որդին (Քրիս-
տոս) տեղ մը չ'ունի, իր գլուխը ո՛ւր դնէ»։
Եւ սա խորհուրդը ունի որ, գինուորները չե-
րամէջ թաղաւորին պատառին վէջ Յիսուսի
լաթերը հանելին և ապուտակ լաթեր հագցը-
նելով նորէն Պիղատոսին բերին։*

*ԻԱ. Երբ պատարագիչ քահանայն սպիսատը
դնէ ձեռքովը ժողովրդեան դէմքին կողմը, և
ինքն ալ սեղանին վրայ կողմը կը կայնի, կը նշա-
նակէ Յիսուսի Քրիստոսի սա խօսքը թէ, «այն
քարը՝ որ շինողները անարգեցին՝ անկիւնին
գլուխը դրուեցաւ»։ Եւ սա խորհուրդը ունի
որ Պիղատոս ու Հերովդէս իրարու հետ խաղա-
էին, Յիսուսի մատնութեան գիշերը հաշտուե-
ցան։*

ԽԲ. Երբոր քահանայն և ընդ «ԵՕՓԷՒ» կ՚ըսէ ու պաւրք ալ «ՈՒԲ, ՈՒԲ, ՈՒԲ» կ՚երդեն, կը նշանակէ Փրկուտոսի այն խօսքը որ Հրեից ըսաւ թէ՝ «Թէ որ դուք իմ խօսքիս վրայ կեցնաք՝ իմ ճշմարիտ աշակերտներս էք, և ճշմարտութիւնը պիտի ճանչնաք ու ճշմարտութիւնն ալ զձեզ պիտի ազատէ». և սա խորհուրդը ունի՝ որ սուտ վկայներ դացին Փիղատոսին քով և ցիտուսի վրայօք իրարու հակառակ վկայութիւն ըրին։

ԻԳ. Երբոր քահանայն ՈՒԷՒ, ՀԷՒ կ՚ըսէ, կը նշանակէ թէ Փրկուտոս անապատին մէջ ժողովուրդը բազմացուց և քանի մը հատ նկանակով զանոնք կշտացուց, և այս խորհուրդը ունի որ՝ Փիղատոս ցիտուսի համար ըսաւ թէ, «առէք այդ մարդը և ձեր օրէնքին համեմատ խաչեցէք»։

ԻԴ. Երբոր քահանայն կ՚ըսէ, Ե ՀԷՈՒ Ի ՀՈՒՈՑ ԵՒՂՈՓ. և պաւրքն կ՚երդեն յոճնոյնէ օրհնեալ ե՞ պէտ, կը նշանակէ Ի ծնէ կուրին լուսաւորվելը, և սա խորհուրդը ունի որ՝ Փիղատոսի պինտորնները ցիտուսի դրսէն վըշէ պատկ մը դըրին և պինդը ծեծեցին։

ԻԵ. Երբոր քահանայն ԽՈՂՊՈՒՆԻՆ կուտայ և սկինձ կը բանայ, կը նշանակէ Փրկուտոսի այն խօսքը որ ըսաւ թէ, «յորժամ բարձրացոյց յերկրէ, զամենեսեան ձգեցից առ ի»։ և այս խորհուրդը ունի որ՝ ցիտուսը մերկացուցին և

այնպէս խաչին վրայ տարածելոյն :

Իզ. Երբ քահանայն կ'ըսէ, ընդ որս և մեզ այսց աւուցն . կ'նշանակէ քահանային հնական ազաղակը և աս խորհուրդը ունի որ՝ ազակոչելոյն աւազակը Քրիստոսի կողմն կառ « ահա, ինծի ալ յիշէ քու արքայութեանդ մէջ » :

Իէ. Երբ քահանայն խաչելութեան կուտայ և զնի տո է ապտակելուն և ջքաելուն կ'ըսէ, կը նշանակէ Քրիստոսի այս խօսքը թէ, « Աստուծոյ մատուկը դեւերը կը հանեմ » . և աս խորհուրդը ունի որ՝ Հրեայներէն Քրիստոսի ըսին թէ՝ վհո, որ քակէիր զաւազանն և դերիս աւուրս չինէիր » :

Իը. Երբ քահանայն ՝ է «էքս» ասէ կ'ըսէ, կը նշանակէ Քրիստոսի ըսած այս խօսքը թէ, « մի տայք զարեւթիւն շանց և մի արիանէք զմարգարիտս Ձեր առաջի խոզից » . և այն խորհուրդը ունի որ՝ Քրիստոս իր բանական հոգին հօրը ձեռք աւանդեց » :

Իթ. Երբոր գաւազանէն քահանայն նշխարը դնելին մէջ կը թաղէ՝ և գալիք ՝ ի երդն օգնական հօր և որդւոյ և հոգ . կը նշանակէ Քրիստոսի այն խօսքը թէ, « սիրեցից զհոգի Աստուած քո, յաւիտեան պահէ քումմէ, յաւիտեան զօրութիւնէ քումմէ և յաւիտեան մնայ քոյ » :

Լ. Քու լալը պատմէ, լալը ուժովէ ու լալը մարքմէ՝ քու աչեր Աստուածդ սիրէ :

Ել սա խորհուրդը ունի որ՝ Քրիստոսի մար-

մինը արևնամ ներկուեցաւ, արեւը և լուսինը խաւարեցան և ուրիշ շատ հրաշքներ եղան խաչելութեան ժամանակը։

Ա. Երբոր քահանայն սկիհը ձեռքը բռնած կ՚ըսէ «ահա կեանք», կը նշանակէ Քրիստոսի այն խօսքը թէ, «ես եմ երկինքէն իջած հացը» և ան խորհուրդը ունի որ՝ գինուորքն խոցուեցան և խաչէն վար աճնուեցան։

ԱՆ. Երբոր վարագոյրին քաշուելու առենը պատարագիչ քահանայն սերտունական մարմինը սկիհին մէջ կը դնէ, կը նշանակէ Յիսուսի այն խօսքը թէ, «ինչպէս որ ցորեան հրեք օր ու հրեք գիշեր կեցաւ՝ անանկ ալ որդի մարդոյ (Քրիստոս) հրեք օր և հրեք գիշեր պիտի ցնայ երկրիս սրտին մէջ այսինքն գերեզմանին մէջ։

ԱԲ. Երբ վարագոյրը նորէն կը բացուի, և արժանաւորները կը հաղորդուին, կը նշանակէ Քրիստոսի այն խօսքը թէ, «մէկդի ըրէք այդ քարը» և անանկով Ղազարոսը ողջնցուց, և այս խորհուրդը ունի որ՝ Քրիստոս յարութիւն առնելէն ետքը Մարիամ Մագթաղենացիին ճանչցուց ինքզինքը։

ԱԳ. Երբ վարագոյրը կը ծածկըվի, կը նշանակէ թէ՝ Քրիստոս իր աշակերտացը հետ Եփրայիմ բսլած տեղը գնաց և հոն բնակեցաւ, և այս խորհուրդը ունի որ՝ յարութենէն ետքը երբ առաքեալները տեղ մը նստած և դռները

դոյած էին , մեկէն Քրիստոս մէջերնին երեւ-
ցաւ :

Ս. Երբոր պատարագիչ քահանայն կ՚ըսէ
ոչ օրհնեա պայնոսէն . կը նշանակէ թէ՝ Քրիստոս ի-
ջոյ և աւանակէն վրայ բազմելով երուսաղէմ
մտաւ , և պզտիկ տղայքն ալ երդեցին այսպէս
«ովսաննա , օրհնեալ որ գաս յանուն տեառն »
և սա խորհուրդը ունի որ՝ Քրիստոս առաքեալ-
ներըը ժողվեց Բեթանիա տարաւ , օրհնեց գի-
րենք և հոն աչքերնուն առջեւը երկինք համ-
բարձաւ :

ՎԵՐՋ ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ

ԳԻՏԵԼԻՔ

Ա. Պատարագիչ քահանայն՝ Յիսուսի Քրիստոսի օրինակ է:

Բ. Սաղատարը՝ որ պատարագիչը գլուխը կը դնէ, կը նշանակէ թէ՝ Տէրն մեր Յիսուս Քրիստոս Բեղլհարէն (աստանայէն) յաղթեց և մարդկային ազգը փրկեց:

Գ. Պատարագին հագած չապիկը կը նշանակէ Քրիստոսի անմեղ ու մաքուր վարքը:

Դ. Գօտին՝ կը նշանակէ թէ Քրիստոս կատարեալ ողջախոհ է և ղպայական ցանկութենէն ամենևին չը յաղթուեցաւ:

Ե. Բաղպանը (թևնոցը) կը նշանակէ թէ Քրիստոս յօժարութեամբ յանձն առաւ Հօր Աստուծոյ կամքը կատարել:

Զ. Ուրարը՝ կը նշանակէ թէ Քրիստոս Հօր Աստուծոյ հաճութեանը համեմատ իր կենագործ ծնօրէնութիւնը կատարեց, այսինքն՝ մարդացաւ, խաչեցաւ եւայլն, և Ս. Աւետարանին քաղցր լուծը քարոզեց՝ զոր ինքը երկու աշերովը վերցուց:

Է. Շուրջառը՝ կը նշանակէ թէ՝ Քրիստոս իր մարդեղութեան ժամանակը՝ ամեն առաքինութիւններով զարդարուած էր:

ՈՂԲ Ի ՎԵՐԱՑ ՄԱՆԿԱՆՑ

Ինքսա ըե ՝է քեբանոց ժեռելոյն :

Ջայս լինչ ՝ի խոր խոցեցայ , որ գլմասիս խակէ խելք չիկայ ,
Ոչ խոսք մի խոսիլ կարեմ , գիմ ամեն բանքս մոռացայ :
Մարիկ եկ գիմ հյալըն առես , որ կրսակ ընկերը սիրտս ՝ի նեցա ,
Իմ հեքիմըն դու եզիր , որ գիմ ցաւըն լաւ գիտես :
Ա՛յ իմ սիրելի մարիկ , բեր ձեռքըդ սրբտիս խոցըն առես ,
Լաւնալու ճար մի արէ , որ չ՝ելնիմ մանուկ արեւէս :
Գլխակս ՝ի ծնկանդ առնես , պահ մի լաւ՝ պահ մի հառաչես ,
Մի՛ լար , մի՛ եղներ յաչիդ , դամ յերդդ որ գիս առեսանես :
Կուլամ ես գիս կուլամ , որ չը կայ խեղճուկ ինձ նման ,
Շատ հարկէթ կայր յիմ սրտիս , յ՝ամենէն մահրուամ կը ճնամ :
Չայիք իմ կենճ արեւուս , որ ջուտուկ եզայ յ՝աշխարհէս ,
Ներքեւ հողերուն մտայ , զատվեցայ հօրէս ու մօրէս :
Ախատս որ խեղճուկ մեռայ , չը հասայ սրտիս մուրատին :
Ողորմ ու լալի եղայ , հեռացայ յ՝ամեն սիրելուս :
Ա՛յ իմ սիրական մայրիկ , ներջանել գիս կու կամէիր ,
Ա՛յսօր հարսանեաց գոհան , գերեզման բերիր ի՛ ջուցիր :
Ա՛յ իմ լալագին մարիկ , հարկէթ քեզ չը հասուցին :

Այսօր գիս ձեռացդ առին , քո սրտիկդ ՚ի խոր խոցեցին :
Մայրիկ ինձ հալալ արէ , որ Աբրայ աղ ու հաց հետ քեզ ,
Այսօր քեզնէ կուզատուիմ , այլ երեսդս չը տեսանես :

Զայս ալ ծայրն ասէ :

Ա՛յ իմ սիրելի որդեակ , այդ ո՞րպէս ցաւ դիսպաւ քեզի ,
Գեղեցիկ գոյնն երեսիդ , դեղնեցաւ նման մեռելի :
Այդ ծով ծով աչերըդ քո , որ լուսով էր խխտցանկալի ,
Այսօր ինչ եղեր որդեակ , չ՚ես նայիր մէկիկ մի ինձի :
Այդ սիրուն բերանդ քո , և լեզուդ նըման պիւլպիւլի ,
Հիմիկ ինչ եղեւ որդեակ , մէկ մի չ՚ես խօսիր հետ ինձի :
Ա՛յ իմ գեղեցիկ որդի , փեսաւթեան էիր արժանի ,
Այսօր հարսանեաց փոխան , կըտաւով գքեզ պատեցի :
Ա՛յ իմ սիրական ձադուկ , գեղեցիկ ոսկի աղաւնի ,
Այսօր խոցեցաւ սրտիկըս , որ գքեզ յ՚աւիշս թըրծուցի :
Սրտիկս արիւնով լիր , և պողպատ սըրով խոցեցիր ,
Ինձմէ հեռացուր որդեակ , գիս քենէ կարօտ թողուցիր :
Ո՛վ Մայր Աստուծոյ բանին , դու միջնորդ ես մարդկան աղգին ,
Իմ որդեակս ՚ի քեզ յանձնեմ , պահպան արա՛ արժանի :

ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ՂԱՐԻՊԻՆ

Ղարիպին կեանքն է լալի ողբ երգական,
Դառն ու լեղի լի տրտմութեամբ 'ի նեզ զընդան.
Յորժամ լինի յ'օտար երկիր թափառական,
Ձղարիպն օտարք ոչ ճանաչեն՝ ոչ գտանան,

Անդ ոչ եղբայր, ոչ սիրելի, ոչ ազգական,
Ոչ գտանէ զոք կարեւոր սասնջական.
Թէ և լինի պարոն՝ որդի՝ և աննըման,
Հանած վարած ասեն նմա մոլորական:

Ղարիպին հացն է լեղի՝ որ ճաշակէ,
Դառն ու լեղի խառն արտասուօք ջուրն որ ըմպէ.
Թէ զօրըն տան նուշ ու շաքար որ ճաշակէ,
Երբ հառաչէ նա ի սրտէն արիւն կաթէ:

Ղարիպին սիրտն է 'ի տուղ անմխիթար,
Երբ հառաչէ նա սիրտն ու փորն առնու դալար.
Յորժամ լինէ զիւր սիրելիքն հաւասար,
Նա ձ'աչերան արիւն կաթէ յ'երեսն 'ի վայր:

Ղարիպին խելքն է կորեր միտքն է մոլար,
Թէ և լինի քան զՍողոմն մաօք ճարտար.
Որ թէ խօսի բան մի քանի անգին գոհար,
Սասանեն նմա թէ լո'ւռ կացեր անդէտ յիմար:

Ղարիպին ցերեկն եղուկ դիշերն է վա'յ,
Աչերուն քունն է հասեր որ ճար չը կայր.
Մտաք տանջի դիշերն 'ի բուն ոչ դիւրանայր,
Վաղուն ես ինչ լինիմ դիտես երբ լուսանայր:

Ղարիպին վայն է եկեր երբ քաղցենայր,
Երեան 'ի քարշ 'ի փողոցներն կը մուրայր.

Շատ ոք վհակեր զդուռն ՚ի դիմաց նստեր կուլայր ,
Թէ կաթ մի ջուր ուզեր զերին մէկ մի չէ տայր :

Ղարխալըն խեղճ էր երբ յանկարծ հիւանդանայր ,
Մոխրաթաւալ յ՚օտար փողոցն անկեալ կենայր ,
Թէպէտ ունէր շատ սիրելիք , մէկ մի չը կայր ,
Եւ կայր անկեալ վերք երեսին խըղճուկ ու լայր :

Ղարխալըն լայր ու հառաչէր , չի՞նչ կու լինաւ ,
Այ վախ չդիտեն իմ սիրելիք՝ թ՚ինչ հալի կաւ .
Ղարխալ օտար եմ ու պանդուխտ դառն ու կուլաւ ,
Մէկ մի չ՚ունիմ ինձ սիրելի և բարեկաւ :

Ղարխան անկեալ և թաւալէր ողրմագին ,
Քանղի հասեալ էր օր մահուն բուռն աւեններն .
Ոչ բարձ գլխոյն կայր Ղարխալին ոչ անկողին ,
Քարըն բարձ էր աւաղն արած իւր անկողին :

Ղարխան առնոյր գոան ու ձըգէր հոգեվարին ,
Ձգէր գրպուկն և տարածէր քակտէր գհոգին ,
Հայէր խեղճուկ յ՚աջ և ՚ի ձախ ողրմագին ,
Մէկ մի չը կայր որ կաթ մի ջուր տայր Ղարխալին :

Ղարխան ՚ի ժամ հոգեվարին երէց ձայնէր ,
Մէկ մի չի կայր որ զպաղատանքն կատարէր .
Ոչ սիրելի ոչ բարեկամ առ նա լինէր ,
Նա իւր խոցոյն հեծեծանօք դառն արտասուէր :

Ղարխալին տէրն է Աստուած նմա լսէ ,
Զողորմութիւնն՝ քահանային սիրտն ծակէ ,
Եւ նա եկեալ վանն Աստուծոյ զնա հաղորդէ ,
Զղարխալ հոգին հաղորդութեամբ ուրախ առնէ :

Ղարխալին եկեալ եհաս ժամըն մահուան ,
Դառըն հեծէր և արտասուօք զհոգին եհան .

Եւ կայր անկեալ միջ փողոցին անտիրական ,
Մէկ մի չ'եկաւ՝ առնու Ղարիպին ոչ լալական :

Տես թէ ինչ դառն է կեանք ու մահըն Ղարիպին ,
Մէկ մի չը կայր՝ զձեռքըն խաչէր վերայ սրտին .
Ծիծաղելով առեալ տարան յ'եղեր հողին ,
Մէկ մի չ'եկաւ անդ 'ի թաղումն Ղարիպին :

Նաղաչն ասաց թէ Ղարիպին կեանքն է հարամ ,
Ղարիպին ըզհալըն դիտեմ որ վայ կուտամ .
Թէպէտ տեսայ յ'ամեն մարդոյ լութ ու քէրէմ ,
Զղարիպութիւնն յորժամ յիշեմ , սարսիմ դողամ :

Նաղաչն ասաց թէ Ղարիպին սիրուն է քնքուշ ,
Գաղտըրըն լեղի թուի նըման չէտ վարդի փուշ .
Շէնեհար հետ Ղարիպին զուրցէ անուշ :
Ողորմութիւն տուր և քաւէ մեղացդ փուշ :

Ամենօրհնեալ կոյս Մարիամ Աստուածածին ,
Շենէհար դու օգնական լեր Ղարիպին .
Զամեն Ղարիպ բարով հասո իւր մուրատին ,
Եւ քեզ ամենքս երկրպագեմք կոյս տիրածին :

Այ՛ ով Յովհաննէս մանուկ ծ քնքնէն գոված է :

Ես Յովհաննէս մանուկ ձեզմէ կու խնդրեմ ,
Ձեր բարի երախտիքն ինձ հալալ արէք .
Ծնողք և ընտանիք և սիրելիք իմ ,
Ես ձեզնէ հեռացայ՝ դուք բարով կացէք :

Հայր իմ Աստուածատէր վասն իմ մի հոգար ,
Մայր իմ ողորմասիրտ խնկի պիս մի լար .
Աշխարհս է անցաւոր ուժեք չը մնար ,
Ես ձեզնէ հեռացայ՝ դուք բարով կացէք :

Արարիչն Աստուած զձեզ մխիթարէ,
Ձեր մնացեալ որդւոցն արեւ պարգեւէ.
Ձեզ երկար ժամանակ և ողջ անձ տացէ,
Ես ձեղնէ հեռացայ՝ դուք բարով կացէք:

Փառք աշխարհիս ամենքն նունայն ու սուտ է,
Սատանայն կու ջանայ որ զմարդիկ խաբէ.
Եղբայրք պատրաստ կացէք որ զձեզ չը պատրէ,
Ես ձեղնէ հեռացայ՝ դուք բարով կացէք:

Ընընդակից մանկունք և ընկերակից ք,
Սարկաւագունք ընտրեալք և ուսումնակից ք.
Ի ձեր բարի աղօթքն զիս յիշեցէք,
Ես ձեղնէ հեռացայ՝ դուք բարով կացէք:

Սրբասէր քահանայք որ զիս վարժեցիք,
Զբանն Աստուածային որ լինձ ուսուցիք.
Ձեր բարի երախտիքն լինձ հալալ արէք,
Ես ձեղնէ հեռացայ՝ դուք բարով կացէք:

Ահա բաժանեցայ ձեղնէ բարեկամք,
Եղբարց և սիրելեաց կարօտ կու մնամք,
Խաղաղութիւն ընդ ձեզ այլ ես կուգընամ,
Ես ձեղնէ հեռացայ՝ դուք բարով կացէք:

ՎԱԽՃԱՆ ԳՐՈՑԻ

ՀԱՅԿ. Ս.Հ. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Государ. Армянская Библиотека
им. Ив. Мясникяна
7/XI 1922

ՅԱՆԿ ՆԻԻԹՈՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ

ԵՐԵՍ

ԳԱՍ Ա. Երրորդութեան երեք անձանց վրայ . 1

ԳԱՍ Բ. Հրեշտակաց անկումը և աշխարհիս ստեղծումը 5

ԳԱՍ Գ. Ադամեն մինչեւ Աբրահամու կոչումը 13

ԳԱՍ Դ. Աբրահամու կոչումեն մինչեւ Իսրայելացւոց Եգիպտոսէ երկիրը մտնելը . . 19

ԳԱՍ Ե. Իսրայելացւոց Եգիպտոսէ երկիրը մտնելեն, մինչեւ Բաբելոնի գերութիւնը 25

ԳԱՍ Զ. Մարգարէից պատմութիւնը . . . 29

ԳԱՍ Է. Հրէից Բաբելոն քաղաքը գերի երթալեն, ինչուան Յիսուս Քրիստոսի ծնունդը 38

ԳԻՏԵԼԻՔ. Առաջին մասին վրայ 43

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՇԽԱՐՀ ԳԱԼԷՆ, ՄԻՆՉԵՒ ԵՐԿԻՆՔ, ՀԱՄԲԱՌՆԱԼԸ, ԱՌԱՔԵԼՈՑ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ, ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ։

ԳԱՍ Ա. Քրիստոսի ծնունդն ու տաճարը ընծայուելը 47

ԳԱՍ Բ. Քրիստոսի մկրտուելն, իր քարոզութիւններն ու հրաշքները 58

ԵՐԵՍ

ԴԱՍ Գ. Յիսուսի հրաշքները 63
ԴԱՍ Դ. Յիսուսի Քրիստոսի խօսած առակները 69
ԴԱՍ Ե. Քրիստոսի ուրիշ խօսքերը ու ըրած-
նները 76
ԴԱՍ Զ. Քրիստոսի մատնուելէն, մինչեւ յա-
րութիւն առնելը 82

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ԱՆՈՐ ՕՐԷՆՔՆԵՐԸ

ԴԱՍ Ա. Հին ու նոր եկեղեցիներուն պատու-
րանքները 97
ԴԱՍ Բ. Ե՞րբ խորհուրդ Ս. Եկեղեցւոյ . . 107
ԴԱՍ Գ. Աշխարհի կատարածը 113
ԴԱՍ Դ. Հաւատք եկեղեցւոյ 118
ԴԱՍ Ե. Պահք, աղօթք, բարեխօսութիւն սըր-
բոց, և պաշտօն 128
ԴԱՍ Զ. Սրբոց մասունքներու և պատկերներու
յարգութիւն և պաշտօն 137
ԴԱՍ Է. Քրիստոսի մի, անբաժան, Ընդհան-
րական և Առաքելական եկեղեցին . . 145
ԴԱՍ Ը. Արդեօք ինչո՞ւ դժոխք, երկինքի մէջ ապ-
րանք ունենալ 150

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԱՊԱՇԽԱՐՈՂ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՆ

ԴԱՍ Ա. Ե՞րբ մահացու մեղքեր 166
ԴԱՍ Բ. Ե՞րբ գլխաւոր առաքինութիւնք . . 179

ԵՐԵՍ

ԴԱՍ Գ. Եօթն առաքինութիւնները, եօթն մոլութիւններու դէմ են 206
ԴԱՍ Դ. Աղօթք և հայր մեր 217
ԴԱՍ Ե. Մեղաւորին պղծումը և ապաշխարութիւնը 230

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԼՈՒԾՈՒՄՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԴԺՕՒԱՐԻՆ ԽՆԴՐՈՑ

ԴԱՍ Ա. Եկեղեցական խնդրոց վրայ հարցումներ 248
ԴԱՍ Բ. Լուծումն աստուածաբանական խընդրոց 299
ԴԱՍ Գ. Երկնային հրեշտակաց վրայ . . . 320
ԴԱՍ Դ. Մեկնելի հարցումներ 327
ԴԱՍ Ե. Լուծումն բարոյական խնդրոց վրայ . 356
ԴԱՍ Զ. Բնական իրաց վրայ հարցումներ և անոնց լուծումը 388

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Համառօտ մեկնութիւն Ս. խորհրդոյ Պատարագի 411
Գիտելիք վեցերորդ մասին 421
Ողբ՝ի վերայ մանկանց 422
Ողբ՝ի վերայ Ղարիպին 424

3183